ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N-----Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 45-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին և 34-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» N45-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագիրը ենթակա է հրապարակման Երևանի պաշտոնական համացանցային կայքում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 45-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, 83-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը:

Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի հիմնական նպատակն է՝ նախանշել քաղաքային տնտեսության զարգացման ուղղությունները՝ հաշվի առնելով առկա հիմնախնդիրները, որոնք փաստաթղթում ներկայացված են ըստ առանձին ոլորտների: Ծրագրում առանձին բաժիններով ներկայացված են Երևանի ընդհանուր և Երևանի սոցիալ-տնտեսական վիճակի նկարագրությունը:

Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի նախագծի ձևաչափը ներկայացվել է Երևան քաղաքի ավագանու խմբակցություններին, որոնց կողմից դիտողություններ և առաջարկություններ չեն ստացվել:

Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի նախագծի ձևաչափը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից և Համայնքների Ֆինանսիստների Միավորման և Վորլդ Վիժն Հայաստան ծրագրի տեխնիկական աջակցությամբ 2014 թվականին մշակված համայնքի զարգացման ծրագրի մշակման և կառավարման մեթոդական ցուցումները:

Ծրագրի կառուցվածքում առանձին ներկայացված են քաղաքային տնտեսության ոլորտները և Երևանի վարչական շրջանները: Յուրաքանչյուր բաժին հիմնականում բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ «Վիճակի բնութագիր», «Հիմնախնդիրներ» և «Ծրագրերի անձնագրեր»:

Ծրագրերն ու միջոցառումները կազմվել են՝ հիմք ընդունելով մայրաքաղաքի զարգացման գերակայությունները, առկա հիմնախնդիրները և ֆինանսավորման հնարավորությունները: Ծրագիրն ուղղված է քաղաքային տնտեսության բոլոր ոլորտների զարգացմանը:

Ծրագրի նպատակն է ապահովել համակարգային բարեփոխումներ՝ նոր մոտեցումների կիրառմամբ՝ հաշվի առնելով քաղաքացու շահերի և իրավունքների պաշտպանությունը:

Ծրագրի իրականացման գործընթացում որպես գերակա սկզբունք որդեգրվել է Երևանի քաղաքապետարանի գործունեության թափանցիկության և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելու ապահովումը, մարդու իրավունքների, հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակության ժառանգության պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը, քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը և այլն:

Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է շարունակաբար լավացնել մայրաքաղաքի աղբահանության և սանմաքրման աշխատանքները:

Քաղաքաշինության ոլորտում նախատեսվում է պահպանել և զարգացնել միասնական մոտեցումների ձևավորումը:

Հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխումները, ոլորտի ամբողջական արդիականացումը և ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանեցումը, արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրումը 2019-2023թթ. հնգամյա ծրագրի գերակա ուղղություններից է:

Երևանի զարգացման ծրագրի գերակայություններից վերելակային տնտեսության ամբողջական արդիականացումը:

Նախատեսվում է խիստ վերահսկողության տակ պահել բնապահպանության ոլորտը՝ բացառելով հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատման արդյունքում կանաչ տարածքների ոչնչացումը: Նախատեսվում է նաև կանաչապատման շարունակական աշխատանքների իրականացում:

Կիրականացվեն նաև էներգախնայողությանը, էներգաարդյունավետությանը և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմանն ուղղված ծրագրեր, որոնք կնպաստեն քաղաքի էկոլոգիական վիճակի բարելավմանը, ֆինանսական ռեսուրսների խնայողությանն ու արդյունավետության բարձրացմանը:

Գերակա ուղղություններից է լինելու առողջապահության և սոցիալական ապահովության համակարգերի բարելավումը, Երևան քաղաքում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Հասցեական և նպատակային ծրագրեր կիրականացվեն մայրաքաղաքի զբոսաշրջային գրավչության բարձրացման նպատակով:

Երևանի զարգացման հնգամյա ծրագրի առանձին ոլորտ է հանդիսանում «Խելացի Երևան» ծրագիրը, որով կարևորվում է կառավարման օպտիմալացումն ու ծառայությունների որակի բարելավումը, նոր տեխնոլոգիաների լայն կիրառությանը:

Երևանի քաղաքային համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2019 թվականի նոյեմբերի 12-ի նիստի դրական եզրակացությամբ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) ներկայացվել է հանրային քննարկումների: Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ.45-Ն և Երևանի քաղաքապետի 2019 թվականի նոյեմբերի 13-ի հ.4263-Ա որոշումների համաձայն՝ 2019 թվականի նոյեմբերի 27-ը ներառյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ՝ հանրային բաց լսումների եղանակով: Հանրային քննարկումների արդյունքներն ամփոփվել են 2019 թվականի դեկտեմբերի 4-ին հրավիրված Խորհրդի նիստում: Խորհրդի անդամների կողմ քվեարկությամբ տրվել է դրական եզրակացություն՝ Նախագիծը սահմանված կարգով Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնելու համար:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 34-րդ հոդվածի 4-րդ մասը Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացվում «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 45-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 45-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի _____-ի N___-Ա որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Սիրելի համաքաղաքացիներ

Մեր սիրելի Երևանը, իր պատկառելի պատմությունով հանդերձ, մեր այսօրվա հպարտությունն ու երազանքների մարմնավորումն է: Մենք բոլորս՝ յուրաքանչյուրն իր տեղում, իր աշխատանքով, իր հնարավորությունների և կարողությունների սահմաններում, պարտավոր ենք կառուցել, շենացնել, հզորացնել և հետագա հազարամյակներին փոխանցել մեր քաղաքը:

Երևանի զարգացման գերակայությունները բազմաթիվ են: Որոշ խնդիրների լուծումը պահանջում է համակարգային բարեփոխումներ:

Մեզ համար քաղաքացու շահերի, իրավունքների պաշտպանությունը, կենցաղային և կենսական հարմարավետության ապահովումը մշտապես լինելու են ուշադրության կենտրոնում:

Առաջնային կարևորություն ունի քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը, լսելի դարձնելով հանրության հնարավորինս լայն շերտերի կարծիքը: Այդ նպատակով մենք նախաձեռնեցինք «Ակտիվ քաղաքացի» հարթակի ստեղծումը:

«Ակտիվ քաղաքացին» ժամանակակից օնլայն հարթակ է՝ քաղաքացիների հետ Երևանի քաղաքապետարանի արդյունավետ փոխգործակցությամբ նոր նախագծերի և գաղափարների հայտնաբերման, առաջարկների ներկայացման և քննարկման համար: Նպատակը՝ Երևանը դարձնել ավելի անվտանգ, ավելի առողջ, ավելի հարմարավետ ու ժամանակակից բնակավայր, իսկ զբոսաշրջիկների համար՝ հետաքրքիր և ցանկալի զբոսաշրջային ուղղություն:

Այս նպատակին հասնելու համար պետք է հետևողականորեն լուծել քաղաքային տնտեսությունում առկա բոլոր հիմնախնդիրները, ոլորտ առ ոլորտ, քայլ առ քայլ:

Արդեն իսկ կատարվել է զգալի աշխատանք՝ մայրաքաղաքի աղբահանության, և ընդհանրապես մաքրության խնդիրները լուծելու համար: Այս համատեքստում անհրաժեշտ է դիտարկել նաև աղբի տեսակավորման և վերամշակման ավանդույթի ստեղծումը:

Հաջորդ կարևորագույն խնդիրներից է հասարակական տրանսպորտի համակարգային, ամբողջական արդիականացումը, արդյունավետ բարեփոխումների իրականացումը, երևանցու համար արժանավայել տրասպորտային սպասարկման ապահովումը, որի ուղղությամբ նույնպես կատարվում են ամենօրյա աշխատանքներ:

Թերևս գրեթե բոլոր երևանցիներին առնչվող հաջորդ խնդիրը դեռ խորհրդային տարիներից ժառանգություն ստացած վերելակային տնտեսությունն է: Այն նույնպես մեր ուշադրության կենտրոնում է, և արդեն իսկ կա հստակ ճանապարհային քարտեզ՝ այս հարցում լուծումների համար:

Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների նկատմամբ վստահության բարձրացման և գործունեության թափանցիկության ապահովման համար:

Մեզ համար գերակա ուղղություններ են կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը, շենքային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերը, քաղաքաշինության ոլորտում միասնական մոտեցումների ձևավորումն ու ոլորտի կանոնակարգումը, մասնագիտական և

հանրային քննարկումների միջոցով խնդիրների բարձրաձայնումը, բնապահպանական ոլորտում հանրային կանաչ տարածքների պահպանումը և նոր կանաչ տարածքների ստեղծումը, ժամանակակից լուծումների կիրառմամբ թափառող կենդանիների հիմնախնդրի լուծումը:

Գերակա ուղղություններից են լինելու նաև առողջապահության և սոցիալական ապահովության համակարգերի բարելավումը, մայրաքաղաքի զբոսաշրջային գրավչության բարձրացման նպատակով ծրագրերի իրականացումը:

Քաղաքային տնտեսության կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել քաղաքային տնտեսության բոլոր ոլորտները:

Երևանը շարունակելու է ակտիվ համագործակցել իր քույր և գործընկեր քաղաքների հետ, ինչպես նաև իրականացնել միջազգային կառույցների հետ համատեղ Երևանի զարգացմանն ուղղված ծրագրեր:

Եվ գաղտնիք չէ, որ ցանկացած լուրջ և ծանրակշիռ քայլ, բացի գեղեցիկ գաղափարներից, պահանջում է նաև լուրջ ներդրումներ: Ըստ այդմ, մեզ համար գերակա ուղղություններից է ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը և այդ տեսանկյունից Երևանի քաղաքապետարանը կարևորում է քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում համայնք-մասնավոր հատված համագործակցությունն ու ընդլայնումը:

Լինելով համայն հայության քաղաքական, հոգևոր, գիտակրթական, մշակութային, մարզական ու տնտեսական կենտրոն, մայրաքաղաք Երևանը ստանձնել է նաև այդ բոլոր ուղղություններով բարեփոխումներ իրականացնելու պատասխանատվությունը:

Այս ամենում հաջողելու համար անհրաժեշտ է վստահ քայլերով և համախմբվածությամբ, մեր քաղաքի նկատմամբ սրտացավ և հոգատար վերաբերմունքով անմնացորդ տրվել մեր աշխատանքին, որի շնորհիվ միայն կարող ենք Երևանի զարգացումը դնել կայուն հիմքերի վրա:

Հայկ Մարության

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5
ԵՐԵՎԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5
1.1 ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7
1.2 ԵՐԵՎԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 16
ԳԼՈՒԽ 2.ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023ԹԹ. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20
ԳԼՈՒԽ 3. ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ 21
ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 21
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 28
ԱՐՏԱՔԻՆ ՋԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ 33
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 38
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 47
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 51
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ 59
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 67
ՄՇԱԿՈՒՅԹ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 70
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ 86
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ 94
ՏՐԱՆՍՊՈՐՏ 105
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 112
ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ 127
ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ 129
ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 129
ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 136
ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 149
ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 158
ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 166
ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 174
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 184
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 193
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 203
ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 211
ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 218
ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 228

ԳԼՈՒԽ 1. ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է ։ Գտնվում է Արարատյան դաշտով հոսող Արաքս գետի վտակ Հրազդան գետի ափին՝ծովի մակարդակից 900-ից մինչև 1300 մետր բարձրության վրա։

Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է 1918 թվականից և 13-րդն է Հայաստանի ողջ պատմության ընթացքում։ Բնակչության քանակով, որը կազմում է 1,081.8 մլն Հայաստանի խոշորագույն քաղաքն է։Երևանի բնակչության խտությունը կազմում է 4851 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա։ Երևանը զբաղեցնում է 223.0 կմ^2 տարածք։ Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն։

Երևանի անվանումը ծնունդ է առել ուրարտական Էրեբունի ամրոցի անվանումից, որից էլ սկիզբ է առել Երևան քաղաքը։ Երևանը 2801 տարեկան է։

Երևանը հանդիսանում է տարածաշրջանի մշակութային կենտրոններից մեկը։ Երևանում գործում են բազմաթիվ գրադարաններ, պատկերասրահներ, թատրոններ, կինոթատրոններ, թանգարաններ, օպերայի և բալետի թատրոնը և այլ մշակութային օջախներ։ Թատրոնները գրեթե ամեն օր ներկայացումներ են տալիս։ Ակտիվ է նաև Օպերայի և բալետի թատրոնը։

Երևանը հանդիսանում է Հայաստանի կրթական խոշորագույն կենտրոնը։ Մայրաքաղաքում կան բազմաթիվ կրթական օջախներ, մանկապարտեզներ, դպրոցներ (այդ թվում երաժշտական, գեղարվեստի, պարի և այլն)։ Կան բազմաթիվ պետական, մասնավոր և միջազգային ԲՈՒՀ-եր։

Երևանում է գտնվում Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրը, Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարությունները և պետական կառավարման մարմինները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների գերակշիռ մասը։ Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների գրասենյակները, օտարերկրյա պետությունների ներկայացուցչությունները, արտերկրյա ֆինանսական, հասարակական և մշակութային հաստատությունների հայաստանյան գրասենյակներ, Հայաստանում գործող բանկերն ու ֆինանսական հաստատությունները։

Երևանում է կենտրոնացած նաև ռադիոյի և հեռուստատեսության ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների կենտրոնական գրասենյակները։ Ներկայումս Հայաստանում տպագրվող շուրջ 200 պարբերականների և հանդեսների մեծ մասը նույնպես հրատարակվում է Երևանում։

Երևանում է գործում Հայաստանի միակ մետրոպոլիտենը։ Երևանի մետրոյի ուղիների ընդհանուր երկարությունը 12,1 կմ է, գործում է 10 կայարան։

Երևանը հանդիսանում է տարածաշրջանային փոխադրումների կարևորագույն տրանսպորտային և տարանցիկ հանգույց։ Երևանում է գտնվում Զվարթնոց միջազգային օդանավակայանը, որը տարվա ընթացքում ունենում է չվերթներ դեպի ավելի քան 40 ուղղություններ։ Երևանում է գործում Հայաստանի ամենախոշոր երկաթուղային կայարանը։

Հայաստան ժամանող զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երևանը հանդիսանում է առաջին հյուրընկալն ու հիմնական հանգրվանը։

Երևանի տնտեսությունը բազմաճյուղ է՝ գյուղմթերքի վերամշակումից մինչև տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաներ։ Երևանում տնտեսության արագ զարգացող

ճյուղերից է առևտրի և ծառայությունների ոլորտը: Երևանում է կենտրոնացված շինարարական հզորությունների զգալի հատվածը:

Երևանում են գտնվում բջջային և համացանցային կապի ոլորտում բարձրակարգ ծառայություններ մատուցող բոլոր խոշոր ընկերությունների կենտրոնական գրասենյակները:

Այսպիսով Երևանը իր սոցիալ-տնտեսական ցուցանիշներով հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության կենտրոնը:

Երևանի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ կատարվել է ավելի մանրամասն ուսումնասիրություն, որը ներկայացված է 1.2 «Երևանի սոցիալ-տնտեսական վիճակի նկարագրություն» ենթագլխում:

1.1 ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի բնակչությունը 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1,081.8, որոնց բացարձակ մեծամասնությունը էթնիկ հայեր են: Երևանում բնակվում են նաև ռուսներ, ուկրաինացիներ, վրացիներ, հրեաներ, իրանցիներ, եզդիներ, ասորիներ, քրդեր, հույներ և այլ ազգեր: Երևանը զբաղեցնում է 223.0կմ^2 տարածք: Երևանի բնակչության խտությունը կազմում է 4851 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա: Այս ցուցանիշով Երևանը ավելի առաջ է շատ Եվրոպական քաղաքներից, օրինակ՝ Բեռլին 3845 մարդ, Սանկտ Պետերբուրգ՝ 3719 մարդ, Կին՝ 3454 մարդ, Վարշավա՝ 3437 մարդ և այլն:

Զբաղեցրած տարածքով ամենամեծ վարչական շրջաններն են Էրեբունին՝ 4749 հա, Շենգավիթը՝ 4060 հա, Աջափնյակը՝ 2582 հա, Մալաթիա-Սեբաստիան՝ 2516 հա, իսկ Ավանը՝ 726 հա, Դավթաշենը՝ 647 հա, Նորք-Մարաշը ՝ 476 հա տարածքով ամենափոքր: Երևանի բնակչության մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն Շենգավիթ, Մալաթիա-Սեբաստիա, Էրեբունի,Նոր-Նորք վարչական շրջանները: Ամենափոքր տեսակարար կշիռն ունեն՝ Նորք-Մարաշը և Նուբարաշենը:

Գծապատկեր 1: Երևանի վարչական շրջանների տարածքների տեսակարար կշիռը 2019թ. դրությամբ



Գծապատկեր 2: Երևանի վարչական շրջանների բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ[1]



Երևան քաղաքում բնակչության շարունակական աճ է արձանագրվել: Մասնավորապես Երևանում 2013թ. նկատմամբ 2019թ. բնակչությունը աճել է շուրջ 15.3 հազ.-ով:

Գծապատկեր 3: Բնակչության թվաքանակի դինամիկան ըստ Երևանի վարչական շրջանների, հազ. մարդ[2]



1. ՀՀ ԱՎԾ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2019թվականի հունվարի 1-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2018:
2. ՀՀԱՎԾ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2019թվականի հուլիսի 1-իդրությամբ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2018, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-դեկտեմբերին:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության խոշորագույն արդյունաբերական կենտրոնը Երևանն է: 2018թ. հանրապետության արդյունաբերության 42.0%-ը բաժին է ընկել Երևանին:

Գծապատկեր 4: Արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ արտադրության բաժինների, % 2017թ.[3]



Թողարկված արտադրանքի ծավալը 2018թ. կազմել է 729 090.3 մլն դրամ: Երևան քաղաքի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքի մեջ զգալի բաժին է կազմում մշակող արդյունաբերությունը՝ 79,3 %, իսկ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունն ու բաշխումը, և հանքագործական արդյունաբերությունը՝ համապատասխանաբար՝ 17,7% և 0,3%: Ջրամատակարարումը, կոյուղու, թափոնների կառավարումը և վերամշակումը՝ 2.4%:

Երևան քաղաքի մշակող արդյունաբերության մեջ թողարկված արտադրանքի ընդհանուր ծավալում առավել մեծ տեսակարար կշռով առանձնանում է սննդամթերքի և խմիչքների արտադրությունը, պոլիգրաֆիական գործունեությունը, հիմնային մետաղների արդյունաբերությունը, ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը և այլն:

Երևան քաղաքի արդյունաբերական արտադրանքի ծավալը 2013 թվականից շարունակական աճ է գրանցել (Գծապատկեր 5):

Գծապատկեր 5: Երևան քաղաքի արդյունաբերական արտադրանքի ծավալը ընթացիկ գներով, մլն. դրամ[4]

3. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2018:
4. ՀՀ ԱՎԾ,ՀայաստանիՀանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2018, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-դեկտեմբերին:



Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը 2011-2018թթ. Երևանում ավելի բարձ է եղել միջին հանրապետականից: 2018թ. միջին հաշվով մեկ բնակչին ընկնող թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը Երևանում միջին հանրապետականին գերազանցել է 87954 դրամով: Բացի այդ, միջին հաշվով, Երան քաղաքի մեկ բնակչին ընկնող թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը 2011-2018թթ. մշտապես գրանցել է աճ:

Գծապատկեր 6: Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով ըստ ՀՀ և ք. Երևանի, դրամ[5]



	2011թ.	2013թ.	2015թ.	2018թ.
ք.Երևան	396271	474413.6	513847.9	673960.3
ՀՀ	330692.6	413526.6	442358.3	586006.3

5. ՀՀԱՎԾՀՀսոցիալ-տնտեսականվիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2017 թվականի հունվարի 1-իդրությամբ, 2010-2015թ. Վիճակագրական տարեգիրք:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի շինարարության ծավալները 2018թ. կազմել են ամբողջ հանրապետության ծավալի շուրջ 52.3%-ը (220,860.6 մլն ՀՀ դրամ):

Գծապատկեր 7: Շինարարության ծավալներն ըստ ՀՀ մարզերի և ք.Երևանի, 2018թ.%[6]



2018թ. Երևանում շահագործման հանձնված բնակելի շենքերի մակերեսը կազմել է ամբողջ հանրապետության շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի շուրջ 75.8%-ը (203 065 քմ):

Գծապատկեր 8: Շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը ք. Երևանում, %[7]



6. ՀՀ ԱՎԾ,Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2018, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-դեկտեմբերին:
7. 2018, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը2012, 2015, 2018 թվականի հունվար-դեկտեմբերին:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

Ծառայությունների մատուցման ոլորտում Երևանը հանդիսանում է առաջատար Հայաստանի Հանրապետությունում: Այս ոլորտը ամբողջ հանրապետությունում կայուն աճ է արձանագրում անկախությունից ի վեր:

Սակայն մատուցվող ծառայությունների 79.8%-ը բաժին է ընկնում հենց Երևանին, իսկ մնացած 20.2%-ը հանրապետության տասը մարզերին:

2018թ. Երևան ծառայությունների ծավալը կազմել է 1,443,269.9 մլն դրամ:

Գծապատկեր 9: Ծառայությունների ծավալը՝ ըստ ք. Երևանի և ՀՀ /մլն դրամ/[8]



Երևանի ծառայությունների ոլորտի առաջատար ուղղություններն են մշակույթը, զվարճություններն ու հանգիստը, կացության և հանրային սննդի կազմակերպումը, կրթությունը, առողջապահությունը և այլն:

Մեկ բնակչին ընկնող ծառայությունների մեծությամբ առաջատարը կրկին Երևանն է, որը միջին հանրապետականին գերազանցում է 2.2 անգամ:

Գծապատկեր10: Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը, դրամ, 2010-2018թթ.[9]



	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Երևան	607343	670268	792112	841917	886273	910971	948902	1088784	1337723
ՀՀ	242277	266902	320860	338424	368360	395694	422970	487838	594392

8. ՀՀ ԱՎԾ,Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2018, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-դեկտեմբերին:
9. ՀՀ ԱՎԾ,Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2018, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-դեկտեմբերին:

ԱՌԵՎՏՈՒՐ

Հայաստանի Հանրապետության մանրածախ առևտրի շրջանառության զգալի հատվածը բաժին է ընկնում կրկին Երևանին: Մասնավորապես՝ 2011թ. շուրջ 77%-ը, 2012թ. շուրջ 91%-ը, 2018թ. շուրջ 74,5%-ը:

Գծապատկեր 11: Երևան քաղաքի մանրածախ առևտրի ծավալի աճը, դրամ, 2012-2018թթ.10



Մեկ բնակչին ընկնող ծառայությունների մեծությամբ առաջատարը կրկին Երևանն է: 2018թ. Երևանի մեկ բնակչին ընկնող մանրածախ առևտրի շրջանառությունը հանրապետության միջինի նկատմամբ կազմել է 199.9%: 2018թ. Երևանի մեկ բնակչին ընկնող մանրածախ առևտրի շրջանառությունը կազմել է 950,062.9 ՀՀ դրամ:

Գծապատկեր12: Մանրածախ առևտրի գործող օբյեկտների ապրանքային պաշարները և դրանց ապահովվածությունն, ըստ ք.Երևանի և ՀՀ մարզերը, 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մլն դրամ[11]



10. ՀՀԱՎԾ,Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2018, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-դեկտեմբերին:
11. ՀՀԱՎԾ,Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2018, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-դեկտեմբերին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի տնտեսության ամենափոքր հատվածը հանդիսանում է գյուղատնտեսությունը: Սակայն այս ոլորտը յուրաքանչյուր տարի գրանցում է համախառն արտադրանքի աճ: Ընդ որում 2018թ.-ին 2011թ. նկատմամբ գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը կազմել է ավելի քան 86 %՝ ավելանալով 5.6 մլրդ ՀՀ դրամով: Այսինքն կարելի է փաստել, որ չնայած տնտեսության մեջ ունեցած փոքր հատվածին՝ գյուղատնտեսությունը արագ զարգացող ճյուղ է հանդիսանում:

Գյուղատնտեսության մեջ առաջատար ճյուղը կազմում է անասնաբուծությունը՝ շուրջ 68%, իսկ բուսաբուծությունը համապատասխանաբար՝ 32%:



Գծապատկեր 13: Երևան քաղաքի գյուղատնտեսության համախառն արտադրանք, մլրդ. դրամ[12]

12. 2010-2018թթ. վիճակագրական տարեգիրք:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԻՆԴԵՔՍՆԵՐ

«Ֆիչ Ռեյթինգս» (Fitch Ratings) միջազգային վարկանշային գործակալությունը 2018 թվականի նոյեմբերի 30-ին վերահաստատել է Երևան քաղաքի վարկանիշը՝ հանրային ֆինանսների բնագավառում այն կրկին սահմանելով «B+» մակարդակում «Դրական» կանխատեսմամբ:

2003թ-ից ի վեր ԱՄՆ-ի հեղինակավոր «Ռաթգրս» (Rutgers) համալսարանը հրապարակում է աշխարհի քաղաքների գնահատման ցանկը՝ Էլեկտրոնային կառավարման տեսանկյունից: 2014թ. ի վեր Երևանը վարկանիշային աղյուսակում շարունակում է առաջատարների շարքում լինել:

2019թ. «Մըրսըր» (Mercer) միջազգային խորհրդատվական ընկերությունը Երևանը դասակարգել է 170-րդ սանդղակում աշխարհի այն քաղաքների ցանկում, որոնք առավել հարմարավետ են ապրելու տեսանկյունից: “Quality of living” վարկանիշում ընդգրկված են աշխարհի 231 քաղաքներ: Երևանը այս ցուցանիշով առաջ է Մինսկից, Սանկտ Պետերբուրգից, Կիևից, Թբիլիսիից և Բաքվից:

Numbeo.com պորտալը հրապարակել է հանցավորության վարկանիշը (Crime Index 2019): Երևանը ներառվել է աշխարհի ամենաանվտանգ քաղաքների թոփ-20–ում

2019թ. Հայաստանի մայրաքաղաք Երևանը հայտնվել է Եվրոպայի ամենագեղեցիկ քաղաքների 20–յակում, որոնք անարդարացիորեն անտեսել են շատ զբոսաշրջիկներ: Վարկանիշը կազմել է ամերիկյան CNN հեռուստաընկերությունը:

Հայաստանը Doing Business-2020 թվականի վարկանիշային աղյուսակում զբաղեցրել է 47-րդ տեղը 190 երկրների շարքում:

1.2 ԵՐԵՎԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեն եկամուտների գծով կազմում է 83,077,572.0 հազ. ՀՀ դրամ, իսկ ծախսերի գծով՝ 84,346,812.0 հազ. ՀՀ դրամ:

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 68,668,058.8 հազար ՀՀ դրամ՝ ծրագրված 82,134,086.0 հազար ՀՀ դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 83.6 %: Ընդ որում՝ Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրված 72,276,808.7 հազար ՀՀ դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 72,449,035.8 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով 100.3 % կատարողական:

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 62,808,839.2 հազար ՀՀ դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 73.4 %-ը: Ընդ որում, 2018 թվականի փաստացի կատարված ծախսերի ծավալը պակաս է 2017 թվականի փաստացի կատարողականից 8,181,347.8 հազար ՀՀ դրամով:

Միաժամանակ բյուջետային տարվա ավարտին պարտքեր չեն թողնվել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են:

Աղյուսակ 1

Երևան քաղաքի բյուջեի ցուցանիշները 2016-2018թթ.

1	Բյուջեի եկամուտները, հազ. դրամ	
2	Բյուջեի ծախսերը, հազ.դրամ	

3	Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ, %	
4	Կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ, %	
5	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ, %	
6	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ, %	

7	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ, %	
8	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ, %	
9	Համայնքի աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսերի տեսակարար կշիռը բյուջեի ընդամենը ծախսերի մեջ, %	
10	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը, հազ. դրամ	

11	Բնակչության մեկ շնչին ընկնող սեփական եկամուտը, հազ. դրամ	
12	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային ծախսը, հազ. դրամ	

Տեղական ինքնակառավարման սկզբունքներից է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը:

Այդ նպատակով Երևանի պաշտոնական www.yerevan.am կայքում ամենօրյա թարմացման ռեժիմով գործում է Երևան քաղաքի տարեկան ինտերակտիվ բյուջեն, որը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր շահագրգիռ քաղաքացու առցանց տեղեկացված լինել քաղաքային տնտեսության ֆինանսական շրջանառության մասին: Իրականացվում է Երևանի ավագանու նիստերի առցանց հեռարձակումը www.yerevan.am կայքով: Արդեն իսկ կայացել է քաղաքի կարևորագույն խնդիրների՝ ներառյալ Երևանի բյուջեի, վերաբերյալ հանրային քննարկումների և բաց լսումների ինստիտուտը:

ԳԼՈՒԽ 2.ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023ԹԹ. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մայրաքաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավում:
2. Վերելակային տնտեսության արդիականացում:
3. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգի ամբողջական արդիականացման մեկնարկի ապահովում:
4. Զբոսաշրջիկների համար տեղանքների և տրանսպորտային ուղիների հասանելիությունը բարձրացնելու նպատակով օտար լեզուներով ուղեցույցների և էլեկտրոնային քարտեզների կազմում, համապատասխան փողոցների և զբոսաշրջային վայրերի նշաններով կահավորում, այդ թվում զբոսաշրջային ծառայություններ մատուցող ընկերությունների գովազդային վահանակների նույնաոճ կահավորում:
5. Երևան քաղաքի կանաչ տարածքների պահպանում և ավելացում, ոռոգման համակարգի արդիականացում, նոր ոռոգման ցանցերի կառուցում:
6. Հանգստի գոտիների ստեղծում, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացում, մայրաքաղաքի կանաչ ֆոնդի երիտասարդացում:
7. Առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացում և ծառայությունների որակի բարձրացում:
8. Բժշկական կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում:
9. Բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում:
10. Կայուն սոցիալական միջավայրի ապահովում, բնակչության առանձին նպատակային խմբերի համար տեղական սոցիալական ծրագրերի կազմում և իրագործում:
11. «Համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրում, սոցիալական ապահովության համակարգի բարելավում»:
12. Նախակրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում:
13. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացում, էներգախնայող համակարգերի ներդրում, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացում, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացում:
14. Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրագեկվածության բարձրացում:
15. Շենքերի և բակային տարածքների բարեկարգում և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում:
16. Բնակելի ֆոնդի վերանորոգում և պահպանում, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովում:
17. «Խելացի քաղաք» ծրագրի ներդրում, կառավարման օպտիմալացում և ծառայությունների որակի բարելավում:
18. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակույթի բոլոր ճյուղերում մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովում:
19. Երևանի և այլ քաղաքների միջև գործնական կապերի հաստատում ու պահպանում:
20. Քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորում՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և տեղական հանրաքվեների միջոցով:

21. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանում:

ԳԼՈՒԽ 3. ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Երևան քաղաքում գործում է թվով 8705 առևտրի, 2198 հանրային սննդի, 2818 կենցաղային ծառայության օբյեկտ, 12 սպառողական և 23 գյուղատնտեսական արտադրանքի շուկա, 20 հոգեհանգստի ծիսակատարության ծառայությունների իրականացման և մատուցման սրահներ:

Վերը նշված հանրային սննդի օբյեկտներից թվով 257-ի հետ կնքվել է հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն իրականացնելու պայմանագիր, որից 85.2%-ը Կենտրոն վարչական շրջանի տարածքում գործող հանրային սննդի օբյեկտների հետ, իսկ 14.8%-ը մնացած 11 վարչական շրջանների տարածքներում գործող օբյեկտների:

Երևան քաղաքում գործող հանրային սննդի օբյեկտների 42.4%-ը , հյուրանոցների 33.3%-ը, կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտների 37.6%-ը կենտրոնացված են Կենտրոն վարչական շրջանում, առևտրի օբյեկտների 61.2%-ը՝ Արաբկիր, Կենտրոն, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջաններում:

Գյուղատնտեսական արտադրանքի առևտրի շրջանառության մեծ ծավալն իրականացվում է խոշոր առևտրի օբյեկտներում և խանութներում, իսկ գյուղատնտեսական արտադրանքի շուկաները թերծանրաբեռնված են և կատարվող առևտրի շրջանառությունը հասնում է փոքր ծավալների:

Հիմնախնդիրներ

1. *Պիտանիության ժամկետներն անցած ապրանքների վաճառքը բացառելու նպատակով հսկողության ուժեղացում:*
2. *Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ օրենսդրական փոփոխությունների կատարում:*
3. *Շրջիկ առևտրի կանոնակարգում:*
4. *Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում (մայթերում, կանաչապատման համար նախատեսված տարածքներում, ճանապարհների բանուկ մասերին կից հատվածներում) կրպակների, տաղավարների և ժամանակավոր այլ շինությունների թվաքանակի կրճատման և ապամոնտաժման, դրանց հետագա գործունեության նպատակահարմարության և օրինականության վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն:*
5. *Առևտրի և ծառայությունների ոլորտում օրենսդրական դաշտի կարգավորում:*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

«Առևտրի, սպասարկումների և կենցաղային ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ձևավորում և ներկայացում, ինչպես նաև առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործունեության կանոնների և դրանց կիրառման լրացուցիչ պայմանների մշակում»

Ծրագրի նպատակը	Աշխատանքների կատարելագործում և արդյունավետ հսկողության իրականացում

Ծրագրի համառոտ նկարագրությունը	Առևտրի և սպասարկման ոլորտի առանձին օրենսդրական ակտերի ոչ կատարելագործված, դրանցում ոլորտի նկատմամբ սահմանված կանոնների ու ներկայացվող պահանջների թերի և վարչական որոշ իրավախախտումների համար սահմանված պատժաչափերի ցածր լինելը բացասաբար են անդրադառնում աշխատանքների արդյունավետության ու որակի վրա և ավելացնում ոլորտում իրականացվող գործառույթներից բխող ռիսկերը: Մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս հեղուկացված, սեղմված բնական գազերի և շինանյութերի վաճառքի կետերը ապահովում են մնացածների համեմատությամբ ավելի բարձր շահութաբերություն, ինչպես նաև օրենքով նախատեսված չէ կենցաղային սպասարկման օբյեկտների ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքի տեսակ, ուստի առաջիկայում առաջարկվելու է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում կատարել լրացումներ և սահմանել շինանյութերի վաճառքի և կենցաղային սպասարկման օբյեկտների ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքի տեսակներ: Առաջարկություններ կներկայացվեն նաև առևտրի և սպասարկման վերաբերյալ այլ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:				
Համագործակցություն	----				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Աշխատանքների կատարելագործում և արդյունավետ հսկողության իրականացում	Աշխատանքների կատարելագործում և արդյունավետ հսկողության իրականացում	Աշխատանքների կատարելագործում և արդյունավետ հսկողության իրականացում	Աշխատանքների կատարելագործում և արդյունավետ հսկողության իրականացում	Աշխատանքների կատարելագործում և արդյունավետ հսկողության իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականների ընթացքում				

«Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելում և արգելում, արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օրենսդրական փոփոխությունների կատարում»

Ծրագրի նպատակը	Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանություն
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Բացօթյա ապօրինի առևտուրը բերում է բազմաթիվ բացասական հետևանքներ: Առաջին հերթին բացօթյա ապօրինի առևտուրը վտանգում է սպառողների առողջությունը: Արևի, անձրևի ու ձյան ազդեցության, փոշու և մեքենաների արտանետումների հետևանքով գյուղատնտեսական մթերքները արագ որակազրկվում են, քիմիական պրոցեսների հետևանքով դրանցում առաջանում են թունավոր նյութեր և սպառնում բնակչության առողջությանը: Առողջապահության նախարարության կողմից արձանագրվել են բնակչության շրջանում թունավորման բազմաթիվ դեպքեր, որոնք առաջացել են փողոցներից գյուղմթերքներ գնելու և սպառելու հետևանքով: Բացօթյա ապօրինի առևտուրը առաջացնում է նաև փողոցներում հակասանիտարական վիճակ, խոչընդոտում հետիոտնի և տրանսպորտի

	երթևեկին, երբեմն ստեղծում ճանապարհատրասպորտային պատահարների առաջացման իրավիճակ: Առևտրի գործունեությունից առաջացած աղմուկի հետևանքով խանգարվում է մարդկանց հանգիստն ու անդորրը՝ առաջացնելով նրանց շրջանում դժգոհություններ: Առևտուր իրականացնելու համար անհրաժեշտ զանազան պարագաների տեղադրման հետևանքով աղճատվում է քաղաքի տեսքը՝ ստեղծելով գեղագիտական տեսանկյունից ոչ հաճելի պատկեր: Ուստի օրենսդրական պահանջներն ապահովելու, սպառողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու, նրանց վերը նշված բացասական հետևանքներից զերծ պահելու նպատակով առաջիկա 5 տարիների ընթացքում կտրուկ միջոցառումներ կձեռնարկվեն բացօթյա ապօրինի առևտրի արգելման ու կանխարգելման ուղղությամբ, ինչպես նաև առաջարկություններ կներկայացվեն բացօթյա ապօրինի առևտուրը կանխարգելելու վերաբերյալ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն ՀՀ ոստիկանության հետ:

Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում	Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում	Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում	Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում	Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում

Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականների ընթացքում

«Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում»

Ծրագրի նպատակը	Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանություն
Ծրագրի համառոտ նկարագրությունը	2011 թվականից սկսած Երևանի քաղաքապետարանի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության համագործակցության շնորհիվ մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը կանոնակարգելու, բացօթյա ապօրինի առևտուրը վերացնելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու, ազգաբնակչությանը թարմ ու որակյալ, մատչելի մթերքներով ապահովելու նպատակով Արաբկիր վարչական շրջանում, Կասյան փողոցի սկզբնամասում և Կենտրոն վարչական շրջանի «Մալիբու» սրճարանի հարևանությամբ հաջողությամբ գործունեություն են իրականացրել գյուղատնտեսական մթերքների սեզոնային տոնավաճառները, որտեղ առևտուր են իրականացնում միայն գյուղմթերք արտադրողները: Առաջիկա 5 տարիների ընթացքում Երևան քաղաքի մնացած վարչական շրջաններում պահանջարկ առաջանալու դեպքում աշխատանքներ կտարվեն գյուղմթերքների նոր շուկաների կազմակերպման և գործունեության իրականացման ուղղությամբ:
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ:

Ծրագրի	2019	2020	2021	2022	2023

անմիջական նպատակը	գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում	գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում	գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում	գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում	գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2029 թվականների ընթացքում:				

«Մասնավոր ներդրումների հաշվին գյուղատնտեսական արտադրանքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով դրանց տեղակայման վայրերի որոշում, քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցում»

Ծրագրի նպատակը	Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանություն, նոր աշխատատեղերի ստեղծում, բացօթյա ապօրինի առևտրի վերացում				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Մասնավոր հատված-քաղաքապետարան համագործակցության շնորհիվ բնակչության պահանջմունքները ապահովելու նպատակով աշխատանքներ կտարվեն մասնավոր ներդրումների հաշվին Երևան քաղաքում կառուցելու գյուղատնտեսական արտադրանքի փոքրածավալ նոր շուկաներ, որոնց կազմակերպման շնորհիվ կստեղծվեն նոր աշխատատեղեր, ինչպես նաև այն կնպաստի բացօթյա ապօրինի առևտրի վերացմանը:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն մասնավոր հատվածի հետ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	գյուղմթերքի փոքրածավալ շուկաների ստեղծում	գյուղմթերքի փոքրածավալ շուկաների ստեղծում	գյուղմթերքի փոքրածավալ շուկաների ստեղծում	գյուղմթերքի փոքրածավալ շուկաների ստեղծում	գյուղմթերքի փոքրածավալ շուկաների ստեղծում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականների ընթացքում:				

«Հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպման կանոնակարգում»

Ծրագրի նպատակը	Բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանություն

Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գործող հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպման հետևանքով երբեմն խոչընդոտվում է հետիոտնի երթևեկը, որն առաջացնում է քաղաքացիների դժգոհությունը: Ուստի առաջարկություններ կներկայացվեն հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպման վերաբերյալ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն ՀՀ ոստիկանության հետ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգում	Բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգում	Բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգում	Բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգում	Բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականների ընթացքում				

«Ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ հսկողության իրականացում և կանոնակարգում»

Ծրագրի նպատակը	Բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանություն				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Գալիք 5 տարիների ընթացքում հետևողական աշխատանքներ կտարվեն ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ հսկողության ուժեղացման և կանոնակարգման ուղղությամբ				
Համագործակցություն	---				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Ստորգետնյա անցումներում առևտրի նկատմամբ հսկողության իրականացում	Ստորգետնյա անցումներում առևտրի նկատմամբ հսկողության իրականացում	Ստորգետնյա անցումներում առևտրի նկատմամբ հսկողության իրականացում	Ստորգետնյա անցումներում առևտրի նկատմամբ հսկողության իրականացում	Ստորգետնյա անցումներում առևտրի նկատմամբ հսկողության իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականների ընթացքում				

«Համայնք–մասնավոր հատված համագործակցությամբ Երևան քաղաքում կենդանիների շուկաների կառուցում»

Ծրագրի նպատակը	Բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանություն, բացօթյա ապօրինի առևտրի վերացում				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երևան քաղաքում չկան կենդանիների շուկաներ, որը երբեմն պատճառ է հանդիսանում տարբեր փողոցներում և մայրուղիներում չմորթված և մորթված կենդանիների մսի վաճառքի կազմակերպմանը, որն առաջացնում է օրենսդրական պահանջների խախտում, ինչպես նաև հակասանիտարական վիճակ: Այն բացառելու նպատակով կկատարվեն ուսումնասիրություններ, կորոշվեն դրանց տեղակայման վայրերը և աշխատանքներ կտարվեն մասնավոր ներդրումների ներգրավմամբ դրանց կառուցման համար:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն մասնավոր հատվածի հետ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	կենդանիների շուկաների կառուցում	կենդանիների շուկաների կառուցում	կենդանիների շուկաների կառուցում	կենդանիների շուկաների կառուցում	կենդանիների շուկաների կառուցում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականների ընթացքում				

«Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում (մայթերում, կանաչապատման համար նախատեսված տարածքներում, ճանապարհների բանուկ մասերին կից հատվածներում) կրպակների, տաղավարների և ժամանակավոր այլ շինությունների թվաքանակի կրճատման և ապամոնտաժման, դրանց հետագա գործունեության նպատակահարմարության և օրինականության վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն և ապամոնտաժում»

Ծրագրի նպատակը	Բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանություն				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Չնայած վերջին տարիների ընթացքում Երևան քաղաքում իրականացվել են առևտրի և սպասարկման ոլորտի մեծ թվով կրպակների ապամոնտաժման աշխատանքներ, սակայն դեռևս ապամոնտաժման կամ արդիականացման կարիք ունեն Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում, փողոցներում և պողոտաներում տեղակայված կրպակների (տաղավարների) մի մասը: Մայրաքաղաքում քաղաքակիրթ առևտուր կազմակերպելու նպատակով առաջիկայում միջոցներ կձեռնարկվեն չգործող, լքյալ, հողի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժման ու արդիականացման ուղղությամբ: Առաջնահերթությունը կտրվի կանաչ տարածքներում և մայթերի վրա տեղադրված կրպակների ապամոնտաժմանը:				
Համագործակցություն	---				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Չգործող, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և	Չգործող, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և	Չգործող, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և	Չգործող, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և	Չգործող, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և

	սպասարկման կրպակների ապամոնտաժում, և առևտրի առանձին օբյեկտների արդիականացում	սպասարկման կրպակների ապամոնտաժում, և առևտրի առանձին օբյեկտների արդիականացում	սպասարկման կրպակների ապամոնտաժում, և առևտրի առանձին օբյեկտների արդիականացում	սպասարկման կրպակների ապամոնտաժում, և առևտրի առանձին օբյեկտների արդիականացում	սպասարկման կրպակների ապամոնտաժում, և առևտրի առանձին օբյեկտների արդիականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականների ընթացքում				

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտի գերակայությունը առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն է, սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավումը, գույքի արդիականացումը, վերազինումը:

Երևան քաղաքում բնակչությանը արտահիվանդանոցային և հիվանդանոցային անվճար բժշկական օգնություն և սպասարկման ծառայություններ են մատուցվում 112 առողջապահական կազմակերպությունների կողմից, որից 31-ը գործում է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ, որից 4-ը բժշկական կենտրոն են (այդ թվում՝ 1 մասնագիտացված հիվանդանոց, 3 ընդհանուր պրոֆիլի հիվանդանոց), 2-ը՝ դիսպանսեր, 1-ը՝ շտապբուժօգնության ծառայություն, 1-ը՝ գիտահետազոտական ինստիտուտ-մասնագիտացված հիվանդանոց, 1-ը՝ ծննդատուն և 22-ը՝ պոլիկլինիկա: Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններից 24-ը մատուցում է ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություն: Ստոմատոլոգիական ծառայությունը Երևան քաղաքում մատուցվում է 26 ստոմատոլոգիական պոլիկլինիկաների կողմից:

Երևանի ենթակայության բուժհաստատություններում կադրային հագեցվածությունը հետևյալն է. հիվանդանոցային բուժհաստատություններ՝ հաստիքների թիվը՝ 2063 դրույք, ֆիզիկական անձ՝ 2001 մարդ, պոլիկլինիկական բուժհաստատություններ՝ հաստիքների թիվը՝ 2716 դրույք, ֆիզիկական անձ՝ 3054 մարդ, դիսպանսեր ծառայություն մատուցող բուժհաստատություններ՝ հաստիքների թիվը՝ 85 դրույք, ֆիզիկական անձ՝ 88 մարդ:

Երևան քաղաքի ազգաբնակչությանը որակյալ բուժծառայությունների մատուցման և մատչելիության բարձրացման տեսանկյունից կարևոր հիմնախնդիր է հանդիսանում բուժհաստատությունների հագեցվածությունը: Երևանի ենթակայության պոլիկլինիկական բուժհաստատություններից 6-ը հագեցած են անհրաժեշտ բժշկական սարքավորումները, 16-ը՝ միջին հագեցվածության են, հիվանդանոցային ծառայություններից՝ 2-ը հագեցած են, 3-ը՝ միջին հագեցվածության են:

Շարունակական բնույթ ունեցող «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերում» ծրագրի շրջանակներում բուժհաստատությունները հագեցվել են 573 անուն նոր բուժսարքավումներով, այդ թվում՝ լաբորատոր ախտորոշիչ, գործիքային հետազոտությունների, ֆիզիոթերապևտիկ սարքավորումներ, բժշկական պարագաներ /վիրահատական սեղաններ, լամպ, գինեկոլոգիական աթոռներ և այլն/ և այլ անհրաժեշտ սարքավորումներ և պարագաներ: Ծրագիրը իրականացման արդյունքում ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններից սկսեցին օգտվել ոչ միայն սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձինք՝ պետական պատվերի շրջանակներում, այլ նաև վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություններից օգտվող քաղաքացիներ:

«Առողջապահական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերում» ծրագրի շրջանակներում արդիականացվել է «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ի գրասենյակային և տնտեսական կահույքը:

Երևանի ենթակայության բուժհաստատություններում աշխատող սոցիալապես անապահով բուժաշխատողների համար կազմակերպվում է վերապատրաստման գործընթաց, արդյունքում՝ վերապատրաստվել են թվով՝ 338 բժիշկ և 290 բուժքույր:

Համակարգչային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտությունները պետության կողմից երաշխավորված դժվարամատչելի հետազոտությունների ցանկում ներառված լինելու պատճառով հասանելի չեն հասարակության լայն շերտերի համար, ուստի սոցիալական լարվածությունը որոշ չափով մեղմելու նպատակով Երևանի

քաղաքապետարանի կողմից ձեռք է բերվել մագնիսա-ռեզոնանսային և կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն:

Հիմնախնդիրներ

1. *Բժշկական ծառայությունների որակի բարելավում:*
2. *Բժշկական հաստատությունների շենքային պայմանների բարելավումը:*
3. *Մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարձրացում:*
4. *Տեխնիկական հագեցում, այդ թվում՝ վերազինում ժամանակակից պահանջներին համապատասխանող բժշկական սարքավորումներով և պարագաներով, գույքի արդիականացում:*
5. *Վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական և ոչ բժշկական ծառայությունների ծավալի ավելացում, վերջիններից ստացված մուտքերից աշխատակիցներին լրավճարների տրամադրում:*
6. *Երևան քաղաքի բնակչության համար պետության կողմից երաշխավորված թանկարժեք և դժվարամատչելի հետազոտությունների անցկացման մատչելիության ապահովում:*
7. *Երևանի ենթակայության բուժհաստատություններում աշխատող բժիշկների, բուժքույրերի և դեղագետների վերապատրաստում:*

2019-2023թթ. նախատեսվող աշխատաքներ

«Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում»

Ծրագրի նպատակը	Բուժհաստատությունների տեխնիկական հագեցում, այդ թվում՝ վերազինում ժամանակակից պահանջներին համապատասխանող բժշկական սարքվորումներով և պարագաներով
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Վաղ շրջանում հիվանդությունների հայտնաբերման և դրանց հետագա բարդությունների կանխարգելման և արդյունավետ բուժման նպատակով նախատեսվում է ձեռք բերել լաբորատոր-գործիքային հետազոտություններ իրականացնող սարքավորումներ, այդ թվում՝ ռենտգեն ախտորոշիչ ապարատ, դժվարամատչելի հետազոտությունների իրականացման համար սարքավորումներ, իսկ արդյունավետ բուժման կազմակերպման նպատակով՝ ֆիզիոթերապևտիկ և այլ բժշկական սարքավորումներ: Արդյունքում կունենանք որակյալ, ավելի մատչելի և հասանելի բուժծառայություններ, իսկ բուժհաստատությունները կդառնան ավելի մրցունակ: Աչքի պաթոլոգիաների կանխարգելման, համալիր ախտորոշման և վերջնական արդյունք ապահովելու նպատակով նախատեսվում է Երևանի ենթակայության ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների ակնաբուժական կաբինետների հագեցում: Սիրտ-անոթային հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով նախատեսվում է հագեցնել ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների սրտաբանական ծառայությունների նյութատեխնիկական /ախտորոշիչ-գործիքային/ բազան:
Համագործակցություն	----
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան ենթակայության բուժհաստատություններ, Երևան քաղաքի բնակիչներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2019-2023 թվականներ

«Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում»

Ծրագրի նպատակը	Երևանի ենթակայության բուժհաստատությունների շենքային պայմանների բարելավում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Առողջապահության ոլորտի գերակա ուղղություններից է սահմանվել Երևանի ենթակայության առողջապահական հիմնարկների շենքային պայմանների բարելավումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երևանի ենթակայության բուժհաստատություններում կատարել շենքային պայմանների բարելավման, այդ թվում՝ տանիքների հիմնանորոգման, ընթացիկ վերանորոգման, սանհանգույցների հիմանորոգման, դռների և պատուհանների փոխարինման աշխատանքներ:
Համագործակցություն	---
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան ենթակայության բուժհաստատություններ, Երևան քաղաքի բնակիչներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2019-2023 թվականներ

«Բնակչությանը կոմպյուտերային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայության տրամադրում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի իրականացման հիմնական նպատակը Երևանի բնակչության համար կոմպյուտերային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայությունների տրամադրումն է:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Կոմպյուտերային /ԿՏ/ և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի /ՄՌՏ/ հետազոտությունները շատ կարևոր են առանձին հիվանդությունների ախտորոշման և արդյունավետ բուժման կազմակերպման համար: Նշված ծառայությունների ձեռքբերումը հնարավորություն կտա որոշ չափով մեղմել սոցիալական լարվածությունը, ինչպես նաև ապահովել առանձին խմբերում ընդգրկված անձանց համար նշված ծառայության սպառումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքի բնակիչների համար ձեռք բերել Կոմպյուտերային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտության ծառայություններ:				
Համագործակցություն	----				
Ծրագրի անմիջական նպատակ /քանակ/	2019	2020	2021	2022	2023
	ԿՏ-150 ՄՌՏ-100	ԿՏ-150 ՄՌՏ-100	ԿՏ-150 ՄՌՏ-100	ԿՏ-150 ՄՌՏ-100	ԿՏ-150 ՄՌՏ-100
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2019-2023 թվականներ				

«Բժշկական կադրերի վերապատրաստում»

Ծրագրի նպատակը	Երևանի ենթակայության բուժհաստատություններում աշխատող բժշկական կադրերի վերապատրաստում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	«Կադրերը կանխորոշում են ամեն ինչ» արտահայտությունը առավել տեղին է կարևորագույն ոլորտներից մեկի՝ առողջապահության առումով: Մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, նոր ծառայությունների բացման, ինչպես

	նաև մասնագետների սերնդափոխության սահունության ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել կադրերի վերապատրաստում՝ համագործակցելով Հայաստանյան առաջատար համալսարանների և բուժհաստատությունների հետ, ինչպես նաև կադրերի ներգրավում գրանտային համակարգում, գիտա-պրակտիկ կոնֆերանսների կազմակերպում տարբեր երկրների առաջատար մասնագետների մասնակցությամբ:				
Համագործակցություն	Հայաստանյան առաջատար համալսարաններ և բուժհաստատություններ				
Ծրագրի անմիջական նպատակ /անձ/	2019	2020	2021	2022	2023
	Բժիշկ -100 Բուժքույր-100	Բժիշկ -100 Բուժքույր-100	Բժիշկ -100 Բուժքույր-100	Բժիշկ -100 Բուժքույր-100	Բժիշկ -100 Բուժքույր-100
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2019-2023 թվականներ				

«Պետություն-Մասնավոր հատված համագործակցություն»

Ծրագրի նպատակը	Մասնավոր հատվածի ռեսուրսների ներգրավում՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների զարգացման նմապակով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախատեսվում է Պետություն-Մասնավոր հատված գործընկերության ամրացում՝ հավատարմագրային կառավարման իսնտիտուտի կիրառման միջոցով, որի նպատակն է մասնավոր հատվածի ռեսուրսների ներգրավմամբ ապահովել Երևանի քաղաքապետարանի ենթակայության հիվանդանոցային և արտահիվանդանոցային առողջապահական կազմակեր-պությունների զարգացում, նյութատեխնիկական բազայի վերազինում, հագեցում ժամանակից պահանջներին համապատասխանող բժշկական սարքավորումներով և պարագաներով, գույքի արդիականացում, հիմնանորոգում և ընթացիկ վերանորոգում, կադրերի վերապատրաստում:
Համագործակցություն	Մասնավոր հատված
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2019-2023 թվականներ

«Առողջ ապրելակերպի քարոզչության, սքրինինգային կամ այլ բժշկական ծրագրերի իրականացում»

Ծրագրի նպատակը	Առողջ ապրելակերպի քարոզչության իրականում և Երևան քաղաքի բնակչության շրջանում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծառայությունների բարելավում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Առողջ ապրելակերպի քարոզչության իրականում և Երևան քաղաքի բնակչության շրջանում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծառայությունների բարելավում՝ ներառյալ առաջնային կանխարգելումը, վաղ հայտնաբերումը, բուժումը՝ շեշտը դնելով սքրինինգային կամ այլ բժշկական ծրագրերին, ինչն էլ կնպաստի առաջնային օղակում տրամադրվող բուժօգնության որակի բարձրացմանը:

	Առողջ ապրելակերպի քարոզչության խրախուսման, առողջության պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված ծրագրերի՝ մասնավորապես ծխելու դեմ պայքարի քաղաքային ծրագրերի իրականացում: Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններում անվճար հիմունքներով մատուցվող խորհրդատվական ծառայությունների ավելացում, մասնավորապես՝ • «Առողջության դպրոցի» կազմակերպում/ներառյալ աուդիո-վիդեո հոլովակների ցուցադրում/, • «Ճարպակալման դպրոցի» կազմակերպում /ներառյալ աուդիո-վիդեո հոլովակների ցուցադրում/, • Մայրության դպրոցների կազմակերպում, • Կերակրող մայրերի և 0-5 տարեկան երեխաների սնուցման շարունակական բարելավման, կրծքով սնուցման խրախուսման, հղիների նախածննդյան խնամքի և շուրջ ծննդյան որակյալ բուժօգնության տրամադրման, պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի միջոցառումների շարունակականության ապահովում:Երեխաների բուժօգնության տրամադրման հարցում հատուկ ուշադրություն է դարձվելու որակի բարելավման և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներին՝ ներառյալ պատվաստումները և երեխայի առողջ աճի ու զարգացման ծրագրերի իրականացումը:
Համագործակցություն	Դեղագործական ընկերություններ, բժշկական ասոցիացիաներ, Երևան քաղաքի գլխավոր մասնագետներ և այլն:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2019-2023 թվականներ

ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ

Երևան քաղաքում գովազդային դաշտը կարգավորվում է հետևյալ նորմատիվ իրավական ակտերով՝ «Գովազդի մասին» օրենք և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N 37-Ն որոշում: Երևանի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար վճարվող տեղական տուրքի դրույքաչափերը սահմանվում են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 42-Ն որոշմամբ:

Երևան քաղաքում իրականացվում է շենք–շինություններին տեղադրված գովազդային մակերեսների և մեծ ու փոքր գովազդային վահանակների գույքագրում: Գովազդի մասով վարչական շրջանների աշխատանքների համակարգում և տուրքերի հավաքագրում:

Էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով իրականացվում է Երևան քաղաքում առկա գովազդային վահանակների հաշվառման, էլեկտրոնային կարգով թույլտվությունների տրամադրման աշխատանքներ, մշակված հայեցակարգի տեղայնացում, ինչպես նաև գովազդային վահանակների արդիականացում:

Երևան քաղաքի վարչական շրջանների տարածքում գովազդային գործունեություն է իրականացնում թվով 65 մասնագիտացված գովազդային կազմակերպություն: Քաղաքում տեղադրված գովազդային վահանակների թիվը 1762 է՝ ընդամենը 31.670 քմ. մակերեսով: Շենք-շինությունների վրա գովազդ տեղադրած տնտեսվարող սուբյեկտների թիվը կազմում է 8434՝ տեղադրված գովազդի ընդհանուր մակերեսը՝ 35.706,169 քմ:

Երևան քաղաքում տեղադրված է 2301 հատ «Երևան» գրվածքով նստարան և 1540 հատ ձուլվածքով աղբաման, որոնցից վերանորոգման կարիք ունեն համապատասխանաբար՝ 624-ը և 359-ը:

Առկա է 321 հատ կամարանցում, որոնցից վերանորոգված և նկարազադրված են թվով 200-ը: Երևան քաղաքում առկա են թվով 22 պանելային շենք, որոնք ունեն ֆասադային դեկորատիվ գունազարդում, ինչպես նաև թվով 2109 վերանորոգված և հատուկ նյութով երեսպատված մետաղյա սյուն:Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում իրականացվել է թվով 9-ը շենքի տանիքների ներկում: Հանրապետության հրապարակում տեղադրված է թվով 41 դիտահորերի դեկորատիվ թուջե կափարիչներ:

Հիմնախնդիրներ

1. *Գովազդային տարածքների հաշվառման, իրավական դաշտին համապատասխանեցման անհրաժեշտություն՝ Երևանի բյուջե համապատասխան մուտքերի ապահովում:*
2. *Շենքերի և շինությունների վրա տեղադրվող գովազդային վահանակների կանոնակարգման անհրաժեշտություն:*
3. *Էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման անհրաժեշտություն:*
4. *Արտաքին գովազդի դաշտի կառավարման օպտիմալացման անհրաժեշտություն:*
5. *Գովազդային վահանակների մրցութային կարգով տրամադրման աշխատանքներ:*
6. *Պատմամշակութային շենքերի գովազդային անձնագրերի մշակման շարունակականության ապահովման անհրաժեշտություն:*
7. *Տոնական ձևավորման հայեցակարգի և արտաքին ձևավորման գեղարվեստական բովանդակությանը վերաբերող ընդհանուր պահանջների մշակման անհրաժեշտություն:*
8. *Համայնք-մասնավոր հատված համագործակցության ընդլայնման անհրաժեշտություն:*
9. *Վարչական շրջանների բակային տարածքների գեղագիտական ձևավորման անհրաժեշտություն:*
10. *Ֆասադային հատվածների, կամարանցումների վերանորոգման, նկարազարդման անհրաժեշտություն:*
11. *Արտաքին ձևավորման միասնական չափանիշների ձևավորման անհրաժեշտություն բնակիչների մասնակցության ապահովմամբ:*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1.Նախատեսվում է իրականացնել գովազդային տարածքների հաշվառման, չափագրման, իրավական դաշտին համապատասխանեցմանն ուղղված աշխատանքներ՝ Երևանի բյուջե համապատասխան մուտքերի ապահովման նպատակով:
2. Նախատեսվում է մշակել արտաքին ձևավորման միասնական չափանիշներ՝ մասնագիտական խմբերի և բնակիչների մասնակցության ապահովմամբ:
3. Կիրականացվի կամարանցումների վերանորոգում և գունազարդում՝ Երևանի կամարանցումների պատշաճ և գեղեցիկ տեսքն ապահովելու նպատակով: Յուրաքանչյուր տարվա սկզբին կիրականացվի կամարանցումների գույքագրման աշխատանքներ, կսահմանվի դրանց վնասվածության աստիճանը, որի հիման վրա կիրականացվեն վերանորոգման և գունազարդման աշխատանքներ:
4. Կիրականացվեն բակային տարածքների գեղագիտական ձևավորման՝ նկարազադման աշխատանքներ բոլոր վարչական շրջանների բակային տարածքներին:
5. Նախատեսվում է իրականացնել փողոցների, այգիների կահավորման աշխատանքներ: Մասնավորապես, Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների գլխավոր փողոցնում, կենտորանական այգիներում, հրապարակներում կտեղադրվեն «Երևան» գրվածքով նստարաններ, ձուլվածքով աղբամաններ, զրուցարաններ, հայտարարությունների վահանակներ, քաղաքային միջավայրը ներկայացնող կառույցների վերաբերյալ կողմնորոշիչ միասնական ցուցանակներ:
6. Կիրականացվեն մետաղյա հենասյուների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով ներկման աշխատանքներ, որի շնորհիվ մետաղյա հենասյուները զերծ կմնան գրաֆիտից, տարատեսակ ներկերից ու սոսինձներից, թղթե աֆիշներ և հայտարարություններ կպցնելուց, նաև կպահպանվի սյան արտաքին մակերեսը կորոզիայից, խոնավության, ագրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից:
7. Կիրականացվեն արտաքին գովազդի դաշտի կառավարման օպտիմալացմանն ուղղված աշխատանքներ՝ արդյունավետության բարձրացման, բնակիչների կողմից ձևավորված կառավարման մարմնի միջոցով շենքերի արտաքին տեսքի պահպանման, տուրքերի հավաքագրման արդյունավետության բարձրացման, գովազդի տեղադրման թույլտվությունների ստացման ժամանակի կրճատման նպատակով:
8. Կիրականացվեն քաղաքային միջավայրը ներկայացնող կառույցների վերաբերյալ կողմնորոշիչ միասնական ցուցանակների տեղադրման աշխատանքներ, մասնավորապես՝ մշակութային կրթօջախների և տուն-թանգարանների դիմաց:

«Շենքերի գովազդային անձնագրերի մշակում և գովազդների համապատասխանեցում գովազդային անձնագրերին»

Ծրագրի նպատակը	Շենքերի վրա գովազդների կանոնակարգված տեղադրում, որը բխում է շենքի ճարտարապետական առանձնահատկություններից և խաղի հստակ կանոնների սահմանում նոր գովազդների տեղադրման համար:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Յուրաքանչյուր շենքի համար նախագծվում է գովազդի համար նախատեսված բոլոր տեղադիրները, գովազդի չափսերը, պատրաստման նյութը և տեսակը: Տնտեսվարողներին կտրվի խելամիտ ժամանակ իրենց գովազդները համապատասխանեցնելու գովազդային անձնագրի պահանջներին:				
Համագործակցություն	----				
Ծրագրի	2019	2020	2021	2022	2023

անմիջական նպատակ	100 Կենտրոն վ/շ շենքեր	100 Կենտրոն վ/շ շենքեր	100 Կենտրոն վ/շ շենքեր	150 վ/շ-ների գլխավոր փողոցների շենքեր	150 վ/շ-ների գլխավոր փողոցների շենքեր
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնք, համատիրություններ, տնտեսվարողներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023				

«Էլեկտրոնային թույլտվությունների տրամադրում»

Ծրագրի նպատակը	Գովազդի տեղադրման հստակ չափորոշիչների մասին տեղեկատվության տրամադրում ըստ առանձին շենքերի, թույլտվությունների ստացման ժամանակի կրճատում և հարմար եղանակ:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Արդեն իսկ ստեղծված էլեկտրոնային բազայի հիման վրա կստեղծվի կայք, որի միջոցով գովազդային կազմակերպությունները և տնտեսվարողները կտեսնեն յուրաքանչյուր շենքի գովազդային անձնագիրը և հնարավորություն կունենան էլեկտրոնային եղանակով ուղարկել հայտեր գովազդի հաստատման, տեղադրման թույլտվություն ստանալու համար: Հնարավորություն կտրվի նաև էլեկտրոնային եղանակով վճարել արտաքին գովազդի համար նախատեսված տեղական տուրքի գումարը:				
Համագործակցություն	----				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Նախագծման աշխատանքներ	Պիլոտային ծրագիր	Կայքի գործարկում	Կայքի գործարկում	Կայքի գործարկում
Ծրագրի հիմնական շահառուները	Գովազդային կազմակերպություններ և տնտեսվարողներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023				

«Ներդրումային ծրագրերի իրականացում՝ որպես փոխհատուցում գովազդային մակերեսների տրամադրման սկզբունքով»

Ծրագրի նպատակը	Քաղաքային գույքի և պոտենցիալ գովազդային տարածքների ավելացում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բնակչության հարմարավետ կենսակերպի ապահովման բազմաթիվ տարրեր, ինչպիսիք են օրինակ քաղաքային կահույքը, կանգառասրահները և վերգետնյա անցումները կարող են կառուցվել որպես փոխհատուցում գովազդային տարածքների տրամադրմամբ:				
Համագործակցություն	Մասնավոր ներդրողներ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Ներդրում-ների փաթեթների մշակում	Մրցույթներ ի հայտարա	Իրակա-նացում	Իրակա-նացում	Իրակա-նացում

		րում			
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնք, մասնավոր կազմակերպություններ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023				

«Գովազդային վահանակների մրցութային կարգով տրամադրման և տեղական տուրքերի և վճարների հավաքագրման նոր մեխանիզմի ներդրում»

Ծրագրի նպատակը	• Տուրքերի և վարձավճարների հստակ տարեկան պլանավորում • Տուրքերի հավաքագրման արդյունավետության և չափաբաժնի ավելացում • Գովազդային վահանակների կրճատում համայնքի եկամուտների ավելացմանը զուգահեռ • Գովազդային վահանակների տեղադիրների և տեսակի սահմանում ըստ համայնքի նպատակահարմարության և հաշվի առնելով փողոցների արտաքին տեսքը • Վահանակների տրամադրման արդար մեխանիզմի սահմանում • Ոչ արդյունավետ կառավարիչների փոխարինում արդյունավետ կառավարիչներով:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Այսօր գովազդային վահանակներ տնօրինող կազմակերպությունների գործունեությունից է կախված արտաքին գովազդից համայքի եկամուտների չափը: Սա դժվարություններ է ստեղծում համայնքի եկամուտների պլանավորման գործընթացում և հնարավորություն չի տալիս ավելի արդյունավետ կառավարիչների մուտք գործել շուկա: Հարկավոր է՝ • Նախապես սահմանել գովազդային վահանակների բոլոր պոտենցիալ վայրերը և տեսակները՝ ելնելով քաղաքի համար դրանց նպատակահարմարությունից • Բաժանել պոտենցիալ գովազդային տեղերը լոտերի և հայտարարել մրցույթ գովազդային կազմակերպությունների միջև				
Համագործակցություն	----				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Գովազդային տեղադիրների և գովազդի տեսակների սահմանում և քարտեզագրում	Նախապատ-րաստական աշխատանքներ և մրցութային լոտերի սահմանում	Մրցույթների հայտարարում	Իրականացում	Իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնք				
Ծրագրի սկիզբ և ավարտ,	2019-2023				

իրականացման ժամանակացույց	

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանության ոլորտում քաղաքային իշխանությունների քաղաքականության հիմնական նպատակը բնապահպանական անվտանգության ապահովումն է, այդ թվում մայրաքաղաքի կայուն և համաչափ զարգացման նպատակով շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների հետ կապված վտանգների գնահատումը, կանխատեսումն ու կանխարգելումը, ինչպես նաև կանաչ տարածքների պահպանությունը, բարելավումն ու ավելացումը:

Երևան քաղաքի օդային և հողային միջավայրը էականորեն տարբերվում է բնական վիճակից: Մթնոլորտում գազերի, փոշու և ծխի բարձր պարունակությունները, ինչպես նաև օդի և հողի ջերմային և ջրային ռեժիմների առանձնահատկությունները, քարե, բետոնե և մետաղական մակերևույթները, ասֆալտային ծածկույթը բացասաբար են ազդում բնակչության կենսունակության և առողջության վրա:

Երևան քաղաքը համարվում է հանրապետության բնակչության և տնտեսության առումով ամենակենտրոնացված քաղաքը և դեռևս խորհրդային տարիներից աչքի է ընկել օդային ավազանի աղտոտման բարձր մակարդակով: Անկախության առաջին տարիներին սոցիալ-տնտեսական ճգնաժամի արդյունքում ստեղծված արդյունաբերական կոլապսը համեմատաբար «լուծեց» Երևանի օդային ավազանի աղտոտման խնդիրները: Այս հանգամանքը բերեց քաղաքի երկրաքիմիական վիճակի որակական և քանակական ցուցանիշների որոշակի փոփոխությունների:

Ներկայումս Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա վնասակար ազդեցություն ունեցող մոտ 531 կազմակերպություն, օդի և հողի աղտոտման հիմնական պատճառներից են շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները: Երևան քաղաքում հաշվառված է շուրջ 600 000 ավտոմեքենա: Շրջակա միջավայրի վրա ոչ պակաս ազդեցություն ունի մայրաքաղաքի ջրային ավազանի էկոլոգիական վիճակը:

Նշված գործոնների ազդեցությամբ է պայմանավորված ածխաթթու գազի ավելացումը մոտ 10 անգամ: Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում հողերը բնութագրվում են աղտոտման գումարային գործակցի /ԱԳԳ/ բարձր մակարդակով:

Նման անցանկալի երևույթները մեղմելու և կանխելու առումով մեծ դերակատարություն ունեն կանաչ տնկարկները: Երևան քաղաքի անբարենպաստ կլիմայական և էկոլոգիական պայմաններում կանաչ տարածքներն ունեն սանիտարահիգիենիկ և միկրոկլիմայական պայմանները բարելավելու, գեղեցիկ գեղագիտական տեսք հաղորդելու նշանակություն:

Հաշվարկված է, որ 1,0հա կանաչապատ տարածությունը օրական կարող է կլանել 8,0կգ ածխաթթու գազ և այնքան թթվածին արտադրել, որը միանգամայն բավարար է 200 մարդու կանոնավոր շնչառություն ապահովելու համար:

Կանաչ տնկարկներն օդում զգալիորեն պակասեցնում են նաև վնասակար նյութերի (քլոր, ֆտոր, արճիճ, նիկել, մոլիբդեն, ցինկ և այլն) ընդհանուր քանակությունը:

Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6758,5հա, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է 867,5հա: Մեկ բնակչին բաժին ընկնող կանաչ տարածքը կազմում է 7,8քմ:

Քաղաքային միջավայրի էկոլոգիական պայմանների բարելավման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում Երևան քաղաքի կանաչապատման ներկայիս վիճակը, որը դեռևս բավարար չէ մայրաքաղաքի կանաչ տարածքի կազմակերպման համար ներկայացվող ժամանակակից պահանջներին:

Քաղաքային կանաչ տնկարկների ներկայիս վիճակը ցույց է տալիս անթրոպոգեն գործոնների ազդեցության բարձր աստիճանը (ուրբանիզացված տարածքներին բնորոշ), որը օրինաչափորեն հանգեցնում է բուսականության թուլացմանը, ժամանակից շուտ

ծերացմանը, հիվանդություններով և վնասատուներով վարակմանը և տնկարկների աստիճանական ոչնչացմանը:

Հիմնախնդիրներ

1. Խորքային հորերի ստեղծում, նոր ոռոգման ցանցերի կառուցում,
2. Տարբեր ստանդարտի գեղազարդ ծառաբույսերի որակյալ տնկանյութի աճեցում տեղական տնկարանում,
3. Թեք լանջերի կանաչապատում՝ հողի էրոզիայի դեմ կանխարգելիչ բուսատեսակներով,
4. Մայրաքաղաքի արվարձաններում և մերձակա տարածքներում բուֆերային գոտիների, անտառայգիների և ռեկրեացիոն այլ գոտիների ավելացում՝ հատկապես աբորիգեն ծառաբույսերի մասնակցությամբ,
5. Ծաղկային տարածքների նոր ժամանակակից ոճի ձևավորում, համաձայն դիզայներական ոճի, որը համահունչ է Երևան քաղաքին,
6. Գեղազարդ ծառերի և թփերի զանգվածային տնկանյութի աճեցման համար քաղաքային հզոր տնկարանի ստեղծում՝ շուրջ 25-30հա-ի վրա:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

«Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների բարելավում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել և ավելացնել յուրաքանչյուր բնակչին բաժին ընկնող կանաչ մակերեսը:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Մայրաքաղաքում նախատեսվում է հնգամյակի ընթացքում բարելավել և ավելացնել ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածը՝ նոր սիզամարգերի ստեղծման, ծառատունկի, ծաղկապատման շնորհիվ:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն բնապահպանական հասարակական կազմակերպությունների, բարձր որակավորում ունեցող մասնագետների հետ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	4.5 հա	4.5 հա	4.5 հա	4.5 հա	4.5 հա
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից, իսկ հնարավորության դեպքում նոր օպերատորի ներդրմամբ՝ իր իսկ միջոցներով:				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն, զբոսաշրջիկներ, հյուրեր, այցելուներ:				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023թթ.:				

«Երևան քաղաքի անտառապաշտպանիչ տարածքների հիմնում»

Ծրագրի նպատակը	Մայրաքաղաքում և արվարձաններում ստեղծել կանաչ տնկարկներով պաշտպանիչ շերտ, որը կնպաստի ընդհանուր էկոլոգիական վիճակի բարելավմանը:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Բուֆերային գոտու հիմնական նպատակն է մեղմացնել մայրաքաղաքը քամիների ազդեցությունից, փոշուց և վնասակար արտանետումներից: Բուֆերային գոտի հանդիսացող տարածքներում նախատեսվում է

	իրականացնել ծառերի սանիտարական էտման, ծառատնկման, նոր ոռոգման ցանցերի ստեղծման, ջրավազանների և պոմպակայանների ստեղծման և այլ աշխատանքներ: Ներկայումս ավարտված են Սարալանջի, Նուբարաշենի և Սիլիկյանի անտառպաշտպանիչ տարածքների հիմնման նախագծա-նախահաշվային աշխատանքները:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն տվյալ աշխատանքերի իրականացման համար մրցույթում հաղթած կազմակերպությունների հետ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	-	10 հա	7 հա	8,5 հա	-
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից:				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020-2022թթ.:				

«Ծիծեռնակաբերդի անտառպուրակի վերականգնում»

Ծրագրի նպատակը	Նախատեսվում է «Ծիծեռնակաբերդի» հուշահամալիրի կանաչ գոտու վերականգնում և նոր կանաչ տնկարկների հիմնում, քանի որ այդ տարածքը Երևան քաղաքի համար հանդիսանում է թթվածնի աղբյուր, բուֆերային գոտի և ունի էկոլոգիական մեծ նշանակություն /փոշեկլանիչ, քամեպաշտպան, քաղաքային կենսաբազմազանությանը նպաստող, ռեկրեացիոն և այլն/:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է ոռոգման ցանցի արդիականացում, հզոր պոմպակայանի ստեղծում, ծառերի առողջացման նպատակով բջջաշիվային էտ, և ծառատունկի աշխատանքներ: Կանաչապատված տարածքները կնպաստեն ազգաբնակչության առողջության բարելավմանը՝ ստեղծելով նրանց համար նաև զբոսանքի և հանգստի համար հարմարավետ պայմաններ:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն տարբեր մասնավոր կազմակերպությունների հետ, ովքեր ցանկություն կհայտնեն մասնակցել «Ծիծեռնակաբերդի» անտառպուրակի վերականգնմանը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	-	5-25 հա	5-25 հա	5-25 հա	5-25 հա
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից և մասնավոր կազմակերպությունների միջոցներով:				
Ծրագրի հիմնական շահառուները	Ազգաբնակչություն, այցելուներ և հյուրեր:				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020-2023թթ.:				

«Կանաչապատման նորագույն մոտեցումների կիրառում»

Ծրագրի նպատակը	Կիրառել կանաչ տարածքների ստեղծման և խնամքի կոնցեպտ լուծում:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Առաջնահերթ է ներդնել կաթիլային եղանակով ոռոգման համակարգ: Ստեղծել ծաղկանոցներ, որոնք համալրված կլինեն բազմամյա ծաղկասածիլներով: Որպես կոնցեպտ լուծում կիրառել ծաղկող թփերը՝ կանաչ ցանկապատեր ստեղծելու համար՝ նպատակ ունենալով բարելավել մայրաքաղաքի կանաչ զանգվածը (Հ. Հակոբյան, Ա. Խաչատրյան, Վ. Սարգսյան, Բեյրութի փողոցներ):				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն մասնագիտացված առաջատար կազմակերպությունների հետ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	-	12185 գծ. մ.	14262 գծ.մ.	6784 գծ. մ.	8373 գծ.մ.
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից:				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը:				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020-2023թթ.:				

«Կանաչ տարածքների խնամքի և ծառատնկման համար ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռքբերում»

Ծրագրի նպատակը	Կանաչապատ տարածքների որակյալ խնամքի և սպասարկման նորագույն մոտեցումներ, մատուցվող կանաչապատման ծառայությունների որակի բարձրացում:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նոր տեխնիկայի ձեռքբերումը հնարավորություն կընձեռնի մայրաքաղաքում ունենալ բարեկարգ սիզամարգեր, ծաղկանոցներ, բուժվախ, դեկորատիվ տեսքն ապահովված տնկիներ: Հնարավորություն կստեղծվի հատուկ տեխնիկայի միջոցով հանել նախկին տարիներից մնացած հատված կոճղերը և իրականացնել ծառատունկ այդ բնաբաժակներում: Ագրովերելակների ձեռքբերման միջոցով կիրականացվի ծերացած, վթարային և դեկորային տեսքը կորցրած ծառերի վերափոխման, վերատնկման և ձևավորման աշխատանքներ:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն մասնագիտացված ընկերության հետ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	-	1-3 հատ	1-3 հատ	1-3 հատ	1-3 հատ
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը, վարչական շրջանները				

Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020-2023թթ.:

«Այլընտրանքային (ուղղաձիգ) կանաչապատում»

Ծրագրի նպատակը	Կանաչապատման սակավ հնարավորությամբ տարածքներում կիրառել այլընտրանքային կանաչապատում՝ Երևան քաղաքի ինտենսիվ կառուցապատման պայմաններում կանաչապատման ոլորտում հույժ կարևոր միջոցառում հանդիսացող ուղղաձիգ կանաչապատման կիրառմամբ:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Մագլցող, փաթաթվող բույսերի տնկման միջոցով կիրառել ուղղաձիգ կանաչապատում, ստեղծել միայնակ կամ խմբակային եղանակով տնկարկներով կանաչ հատվածներ, ռոկարիաներ/քարե պարտեզ/: Ուղղաձիգ կանաչապատումը հնարավորություն է տալիս ոչ մեծ մակերեսի վրա ստանալ առավելագույն կանաչ զանգված, քանի որ վերոհիշյալ բույսերն աճում են և բազմանում շատ արագ՝ ստեղծելով գեղեցիկ դեկորատիվ պատկերներ: Այդ առումով նախատեսվում է ուղղաձիգ կանաչապատման էլեմենտների օգտագործում՝ մայրաքաղաքի տարբեր վերգետնյա հետիոտնային անցումներում (Հերացի, Արշակունյաց, Բագրատունյաց, Դավիթ Բեկի, Չարենցի), ինչպես նաև Մյասնիկյան պողոտայի զառիթափ լանջերին մագլցող թփերով թփապատում:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն լանդշաֆտային դիզայներների և լանդշաֆտային ճարտարապետության մասնագետների հետ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	-	50 ք.մ.	300-500 ք.մ.	300-500 ք.մ.	300-500 ք.մ.
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից:				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը:				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020-2023թթ.:				

«Կոմիտասի անվան այգու հիմնանորոգում»

Ծրագրի նպատակը	Վերակառուցել Կոմիտասի անվան զբոսայգին, այն համապատասխանեցնել ժամանակակից հանգստի գոտու և տեսարժան վայրի պահանջներին:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախատեսվում է իրականացնել այգու բարեկարգման, ինչպես նաև լայնածավալ կանաչապատման, դեկորատիվ բարձր որակ ունեցող տնկիների և ծաղկեպատման էլեմենտների կիրառմամբ աշխատանքներ:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն մրցույթում հաղթող ճանաչված, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	7 հա	7 հա	-	-	-
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝				

	Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը, զբոսաշրջիկներ, հյուրեր:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2020թթ.:

«Շների զբոսանքի համար զբոսայգիների ստեղծում»

Ծրագրի նպատակը	Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 24-ի N 312-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, Երևան քաղաքի բոլոր 12 վարչական շրջանների տարածքներում պետք է առանձնացվեն շների զբոսանքը կազմակերպելու համար վայրեր:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ներկայումս բոլոր վարչական շրջաններում քարտեզագրվել են թվով 19 զբոսայգիներ, նախատեսվում է այդ զբոսայգիներում իրականացնել զբոսայգիների ցանկապատման և կահավորման աշխատանքներ՝ միջազգային փորձին համապատասխան: Թափառող շների գլխաքանակի կառավարման համար կկիառվի բացառապես ստերջացման մեթոդը:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն մրցույթում հաղթող ճանաչված, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների, բնապահպանական հասարակական կազմակերպությունների հետ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	-	2զբ.	5 զբ.	5զբ.	7զբ.
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից:				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը:				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020-2023թթ.:				

«Նոր Արաբկիր» զբոսայգու բարեկարգում»

Ծրագրի նպատակը	«Նոր Արաբկիր» զբոսայգու պատշաճ տեսքն ապահովելու նպատակով իրականացնել ծառերի սանիտարական էտում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Զբոսայգում կիրականացվի ծառերի և թփերի սանիտարական էտում, մաքրում, չորուկների հեռացում, կոճղա-շիվային վերականգնման աշխատանքներ և ծառատունկ:
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն մրցույթում հաղթող ճանաչված, կազմակերպության հետ:

Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	-	1,8 հա	-	-	-
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից:				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի, Արաբկիր վարչական շրջանի բնակչությունը:				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020թ-ին:				

«Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և ոռոգման համակարգերի գույքագրում»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի կանաչ տարածքների և ոռոգման ցանցի գույքագրում, ԱՏՀ հենքով տվյալների բազայի ստեղծում:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երևան քաղաքի կանաչ տարածքների գույքագրման, քարտեզագրման միջով հնարավոր կլինի առավել օպերատիվ կերպով իրականացնել կանաչ տարածքների խնամքի և սպասարկման, նոր կանաչ տարածքների ստեղծման աշխատանքները:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն մրցույթում հաղթող ճանաչված, կազմակերպությունների, վարչական շրջանների համապատասխան ստորաբաժանումների հետ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	173.5 հա	173.5 հա	173.5 հա	173.5 հա	173.5 հա
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից:				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը:				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023թթ.:				

«Աբովյանի անվան և Սարյանի անվան պուրակների վերականգնում»

Ծրագրի նպատակը	Բարեկարգել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սարյանի անվան և Աբովյանի անվան պուրակները:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Կիրականացվի Աբովյանի անվան և Սարյանի անվան պուրակների բարեկարգման, կանաչ տարածքների խնամքի, նոր ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն մրցույթում հաղթող ճանաչված, կազմակերպությունների հետ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	-	1,3 հա	0,8 հա	-	-

Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020-2021թթ.:

«Աշտարակ-Դավթաշեն նոր կառուցված ճանապարհահատվածում կանաչապատման իրականացում»

Ծրագրի նպատակը	Կանաչապատել Աշտարակ-Դավթաշեն նոր կառուցված ճանապարհահատվածի հարակից տարածքները:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Կիրականացվի Աշտարակ-Դավթաշեն նոր կառուցված ճանապարհահատվածի հարակից տարածքներում ոռոգման ցանցի անցկացման, խոտի սերմի ցանքսի, ծառաթփատեսակների ծաղկասածիլների տնկման աշխատանքներ:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն մրցույթում հաղթող ճանաչված, կազմակերպության հետ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	-	4,5 հա	-	-	-
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից:				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն, հյուրեր, այցելուներ:				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020թ-ին:				

«Փարոսի անտառի վերականգնում»

Ծրագրի նպատակը	Վերականգնել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Փարոսի բլրի անտառային տարածքները:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Կիրականացվի Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Փարոսի բլրի վրա անտառային 30 հա տարածքի վերականգնման, տնկիների ոռոգման, պարարտացման, խնամքի աշխատանքներ:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանման հետ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	-	7,5 հա	7,5 հա	7,5 հա	7,5 հա
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից:				
Ծրագրի	Երևան քաղաքի բնակչություն:				

հիմնական շահառուները	
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020-2023թթ.:

«Ջրաշխարհի աջակողմյան լանջի 12 հա տարածքի անտառաշերտի վերականգնում»

Ծրագրի նպատակը	Ջրաշխարհի աջակողմյան լանջին ստեղծել կանաչ տնկարկներով պաշտպանիչ շերտ, որը կնպաստի ընդհանուր էկոլոգիական վիճակի բարելավմանը:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Բուֆերային գոտու հիմնական նպատակն է մեղմացնել մայրաքաղաքը քամիների ազդեցությունից, տնկվող տեսականին պետք է օժտված լինի փոշեկլանիչ և վնասակար արտանետումները կլանող հատկություններով: Այդ նպատակով բուֆերային գոտի հանդիսացող տարածքներում նախատեսվում է իրականացնել ծառերի սանիտարական էտում, ծառատնկում, նոր ոռոգման ցանցի ստեղծում և այլ աշխատանքներ:				
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն տվյալ աշխատանքերի իրականացման համար մրցույթում հաղթած կազմակերպությունների հետ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	-	12 հա	-	-	-
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է Երևան քաղաքի բյուջեից:				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը:				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020թ-ին:				

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Երևանը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային շուկայում կարևոր դեր և նշանակություն ունի, քանի որ այն հանդիսանում է պետության հիմնական մշակութային և զբոսաշրջային ենթակառուցվածքների կենտրոն, համայն հայության մայրաքաղաք, երկրի մարդկային ռեսուրսների հիմնական կրող: 2801-ամյա Երևանը Հայաստանի ամենամեծ քաղաքն է՝ երկրի տնտեսական, մշակութային կենտրոնը: Հայաստան ժամանող զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երևանը հանդիսանում է զբոսաշրջիկների առաջին հյուրընկալը և հիմնական հանգրվանը:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն՝ 2019 թվականի հունվար-հունիս ամիսներին ՀՀ այցելած միջազգային զբոսաշրջիկների թիվը զգալիորեն աճել է, եթե 2018 թվականի առաջին կիսամյակում ՀՀ է այցելել 685,979 զբոսաշրջիկ, ապա ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում այդ թիվը կազմել է 770,055:

Զբոսաշրջային ծառայությունների արագ աճող պահանջարկը վերջին տարիներին հանգեցրեց հյուրանոցների թվի աճին: 2019թ. առաջին կիսամյակի տվյալներով Երևանում գործում է 300 հյուրանոցային տնտեսության օբյեկտ: Մայրաքաղաքի հյուրանոցային տնտեսության օբյեկտները ապահովում են 10.882 ննջատեղեր: Շուկայում գործում են այնպիսի հյուրանոցային բրենդներ, ինչպիսիք են՝ «Արմենիա Մարիոթ», «Հայաթ Փլեյս», «Բեստ Վեստերն Կոնգրես», «Ռադիսոն Բլյու», «Դաբըլ Թրի Բայ Հիլտոն», «Դը Ալեքսանդր», իսկ 2019թ. բացվել են «Հոլիդեյ Ինն Էքսպրես», «Ramada by Wyndham Hotel & Suites» և «Ani Grand» հյուրանոցները: Երևանում 2020թ. կբացվի «Courtyard by Marriott» հյուրանոցը:

Երևան քաղաքում գործում են զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման երկու կենտրոններ, որոնք այցելուներին անվճար տրամադրում են Երևանի երկլեզու քարտեզներ, համայնքային թանգարանների, «Երևան Սիթի Տուր» էքսկուրսիոն ծրագրի, Կենդանաբանական այգու, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի էլեկտրոնային ծառայությունների, բնակիչների ընդունելության ժամանակացույցի, «Թեժ գիծ» ծառայության վերաբերյալ տեղեկատվական բրոշյուրներ:

Մայրաքաղաքի զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման կենտրոնները 2019 թվականի հունվարի 2-ից մինչև հոկտեմբերի 31-ը սպասարկել են 34.439 այցելու՝ աշխարհի 66 երկրից:

«Երևան Սիթի Տուր» պաշտոնական զբոսաշրջային ծրագրի հիմնական նպատակն է զբոսաշրջիկներին, մայրաքաղաքի հյուրերին և հանրությանը ծանոթացնել Երևանի պատմամշակութային հուշարձաններին և տեսարժան վայրերին: «Երևան Սիթի Տուր» երկժամանոց շրջագայության ընթացքում բազմալեզու համակարգը հնարավորություն է ընձեռում լսել հետաքրքիր մեկնաբանություններ Երևանի պատմության, մշակույթի, ճարտարապետության և քաղաքի մշակութային տարբեր արժեքների վերաբերյալ:

Երևանում էքսկուրսիոն ուղղությունը զարգացնելու նպատակով իրականացվել է զբոսաշրջային պաշտոնական երթուղու փոփոխություններ, մեկնարկել է նաև «Երևան Սիթի Տուր» զբոսաշրջային թեմատիկ նոր երթուղին դեպի Էջմիածին:

«Երևան Սիթի Տուր» պաշտոնական զբոսաշրջային երթուղին 2019թ. մայիս 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը սպասարկել է 5577 այցելու:

Հիմնախնդիրներ

1. *Երևանի զբոսաշրջային նկարագրի Հայաստանի սահմաններից դուրս պատշաճ ներկայացման բացակայություն:*
2. *Երևանի զբոսաշրջային գրավչություն ունեցող վայրերի վերաբերյալ տեղեկատվության սակավություն:*

3. *Զբոսաշրջիկների նախասիրությունների ուսումնասիրության և դրանց համապատասխան համակարգված միջոցառումների բացակայություն:*
4. *Սպասարկման ոլորտում ներգրավված մարդկային ներուժի շարունակական վերապատրաստման անհրաժեշտություն:*
5. *Զբոսաշրջության բնագավառում պետություն-մասնավոր հատվածի ակտիվ համակագործակցության ոչ բավարար մակարդակ:*
6. *Զբոսաշրջային ենթակառուցվածքների թերի զարգացվածություն:*
7. *Հանգստի և ռեկրեացիոն գոտիների ոչ պատշաճ մակարդակ:*
8. *Իրավական նորմերի ապահովում, համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծմամբ, որոնց շրջանակներում պարտադիր կլինեն զբոսաշրջային և ուղևորափոխադրող ծառայություններ մատուցող ընկերությունների հավատարմագրումը:*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

«Երևան քաղաքի զբոսաշրջային բրենդի մշակում»

Ծրագրի նպատակ	Ներկայացնել Երևան քաղաքը մեկ միասնական կերպարով և գաղափարախոսությամբ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է ծրագիրն իրականացնել բաց մրցույթների և հանրային քննարկումների միջոցով, որի արդյունքում կընդունվի լավագույն առաջարկը: Այս ծրագիրը հնարավորություն կտա շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ ձևավորել Երևանի՝ որպես կազմակերպված հանգստի, զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ քաղաքի նկարագիր և ճանաչելի դարձնել Երևանը միջազգային զբոսաշրջային շուկայում:
Համագործակցություն	----
Ծրագրի հիմնական շահառուները	Համաքաղաքացիներ, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2023թթ.

«Երևան քաղաքի հնավայրերի վերականգնում և արդիականացում»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի հնավայրերի և պատմամշակութային ենթակառուցվածքների վերակառուցում և արդիականացում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Այս ծրագրով նախատեսվումէ Շենգավիթ հնավայրի, Էրեբունի ամրոցի, Կարմիր բլուրի և Երևանի պատմական այլ հուշարձանները քաղաքային միջավայրում դարձնել գրավիչ՝ թեմատիկ զբոսաշրջային այցերի համար:
Համագործակցություն	----
Ծրագրի հիմնական շահառուները	Համաքաղաքացիներ և մայրաքաղաքի հյուրեր
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2023թթ.

«Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացում զբոսաշրջության ոլորտում»

Ծրագրի նպատակը	Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացում զբոսաշրջության ոլորտում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Սույն ուղղությունը ենթադրում է տարաբնույթ միջոցառումների մշակում և իրականացում մի շարք քույր և գործընկեր քաղաքների հետ, մասնավորապես գործարար հանդիպումների, ճանաչողական այցերի, զբոսաշրջության ոլորտում կառավարման փորձի փոխանակման, սպասարկման ոլորտի անձնակազմների վերապատրաստման, սեմինարների, կոնֆերանսների, կլոր-սեղաններիկազմակերպում, սոցիալական գովազդի փոխանակում՝ պետական և մասնավոր շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ:
Համագործակցություն	----
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան, համաքաղաքացիներ, մայրաքաղաքի հյուրեր
Ծրագրի սկիզբ և ավարտ,իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կրելու է շարունակական բնույթ, նախատեսվում է իրականացնել 2019-2023թթ:

«Երևան քաղաքում էքսկուրսիոն ուղղության զարգացում»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքում էքսկուրսիոն ուղղության զարգացում
Ծրագրի համառոտ նկարագրություն	«Երևան Սիթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական երթուղու կատարելագործում ու արդիականացում, որը մեծ հետաքրքրություն է առաջացնում ինչպես մայրաքաղաքի հյուրերի, այնպես էլ բնակիչների շրջանում: Պարբերաբար իրականացվում են տոն և հիշատակի օրերին նվիրված (ինչպես նաև առանձին դեպքերում) անվճար ակցիաներ՝ մասնակից դարձնելով երեխաներին, սոցիալապես անապահով խավերին և հաշմանդամություն ունեցող անձանց: Առաջիկայում նախատեսվում է զարգացնել walking tours (քայլող տուրեր), ոտքով տուրեր:
Համագործակցություն	----
Ծրագրի հիմնական շահառուները	Համաքաղաքացիներ և մայրաքաղաքի հյուրեր
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման Ժամանակացույց	Ծրագիրը կրելու է շարունակական բնույթ, նախատեսվում է իրականացնել 2019-2023թթ:

«Մարքեթինգային քաղաքականության իրականացում»

Ծրագրի նպատակը	Երևանի ճանաչելիության բարձրացում և հանրահռչակում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Կարևորելով Երևանի դերը՝ մեծ ուշադրություն է դարձվում մայրաքաղաքի հանրահռչակմանն ուղղված աշխատանքներին միջազգային հարթակներում: Սույն ուղղությունն իր մեջ ներառում է Երևանի մասին տեղեկատվության տրամադրում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան տարաբնույթ ամսագրերին և թերթերին, մայրաքաղաքի մասին հոդվածների պատրաստում, Երևանը որպես զբոսաշրջային արդյունք դիրքավորումը, գովազդումը ու ներկայացումը:
Համագործակցություն	Զբոսաշրջային ամսագրեր, զբոսաշրջային կազմակերպություններ,

ևն	գովազդային կազմակերպություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Երևանի մասին հոդվածների մշակում, տպագրում, ուղեգրքերի կազմում, գովազդային հոլովակների պատրաստում, լուսաբանում և տարածում:				
Ծրագրի հիմնական շահառուները	Զբոսաշրջիկներ, զբոսաշրջային կազմակերպություններ, հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, զբոսաշրջային ոլորտի ներկայացուցիչներ:				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման	Ծրագիրը կրելու է շարունակական բնույթ, նախատեսվում է իրականացնել 2019-2023թթ:				

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բազմաբնակարան շենքերի կառավարում

Երևանում առկա է 4878 բազմաբնակարան շենք, որից 4540-ի կառավարումն իրականացվում է 256 համատիրությունների կողմից, 167-ը՝ լիազորագրային կառավարիչների, 171-ը՝ վարչական շրջանների ղեկավարների:

Վերելակներ

Մայրաքաղաքի բարձրահարկ բազմաբնակարան շենքերի թվով 4428 վերելակները սպասարկվում և շահագործվում են վարչական շրջաններում կազմավորված վերելակային ծառայությունների ու համատիրությունների կողմից:

Տանիքներ

Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ տանիքների մակերեսը կազմում է 1236751քմ, որից 2012թ.-ից վերանորոգվել է 638609քմ, իսկ բազմաբնակարան բնակելի շենքերի թեք տանիքների մակերեսը՝ 2230745քմ, որից 2012թ.-ից վերանորոգվել է 359050քմ:

Շքամուտքեր

Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերն ունեն 12902 մուտքեր, որից 2012թ.-ից վերանորոգվել են 8590 մուտք և շքամուտք:

Հիմնախնդիրներ

1. *Վերելակային տնտեսության արդիականացման, կառավարման օպտիմալացման և միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ սպասարկման անհրաժեշտություն:*
2. *Ընդհանուր օգտագործման տարածքների, այդ թվում՝ հարթ և թեք տանիքների վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն:*
3. *3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի ամրացման անհրաժեշտություն:*
4. *Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների ոչ բավարար մակարդակ:*
5. *Բազմաբնակարանային ֆոնդի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործում. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» նոր օրենքի ընդունման անհրաժեշտություն:*
6. *Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների ընկալման և իրազեկվածության ցածր մակարդակ*

Կոշտ թափոնների կառավարում

Երևան քաղաքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի, բակային տարածքների և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 24.348.634քմ: Մայրաքաղաքի տարածքից օրական հավաքվում և տարբեր աղբավայրեր է տեղափոխվում շուրջ 1000-1300տ աղբ:

Մայրաքաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում է «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» հիմնարկի կողմից:

Նուբարաշենի քաղաքային աղբավայրը գործարկվել է 1950-ական թվականներին և գտնվում է մայրաքաղաքի կենտրոնից մոտ 9-10 կմ հեռավորության վրա՝ զբաղեցնելով շուրջ 52.3 հա տարածք:

Մայրաքաղաքի տարածքից Նուբարաշենի աղբավայր է տեղափոխվում տարեկան միջին հաշվով 290-320 հազ. տոննա կենցաղային աղբ: Այն ի սկզբանե չի նախագծվել և

կառուցվել որևէ ընդունված ստանդարտով որպես աղբավայր, չի համապատասխանում միջազգային /կամ որևէ/ տեխնիկական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշների և բացառապես հանդիսանում է որպես աղբի կուտակման վայր:

Աղբավայրում առկա չէ հիմքի մեկուսացում և չի կատարվում առաջացող մեթան գազի հավաքում: Աղբավայրը չունի ժամանակակից պահանջները բավարարող հոսքաջրերի հավաքման որևէ տեխնիկական համակարգ, որի պատճառով հոսքաջրերը հոսում են առկա աղբավայրից դուրս՝ առանց որևէ պաշտպանիչ արգելքների: Աղբավայրը չունի անհրաժեշտ ենթակառուցվածքներ հավաքվող աղբն ընդունելու համար: Հեռացվող թափոնները ուղղակիորեն բեռնաթափվում ու խառնվում են (հիմնականում առանց տոփանման) թափոնների հավաքագրման առաջնային գծում: Աղբավայրը ցանկապատված և առանձնացված չէ: Նվազագույն ընդունելի շահագործում իրականացնելու համար աղբավայրն ապահովված չէ անհրաժեշտ քանակությամբ և որակի մեքենա-մեխանիզմներով:

Քաղաքային աղբավայրում ջերմոցային գազերի արտանետումը, ինքնաբռնկման երևույթները կանխելու նպատակով 2009թ. Երևանի քաղաքապետարանը ճապոնական «Շիմիձու» ընկերության հետ կնքել է համաձայնագիր Նուբարաշենի թափոնակուտակիչում կենսագազի հավաքման և այրման ծրագրի իրականացման վերաբերյալ: Պայմանագրի գործողության ժամանակահատվածում մինչև 2023 թվականը, ըստ հաշվարկների, պետք է իրականացվի 512 հազար տոննա $C0_2$ գազին համարժեք արտանետումների սերտիֆիկացված կրճատում:

Հիմնախնդիրներ

1. *Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների անբավարար մակարդակ:*
2. *Երևանի հանրային տարածքների մաքրման, աղբահանության և ձնամաքրման նոր մեխանիզմների անհրաժեշտություն:*
3. *Բնակչության շրջանում աղբի տեսակավորման և տարբերակման մշակույթի ձևավորման անհրաժեշտություն:*
4. *Երևանի քաղաքային նոր աղբավայրի կառուցման անհրաժեշտություն:*
5. *Գործող աղբավայրերի մեկուսացման անհրաժեշտություն՝:*
6. *Մայրաքաղաքում աղբավերամշակման գործարանի կառուցման անհրաժեշտություն:*
7. *Չսահմանված վայրերում աղբ թափելու նկատմամբ վերահսկողության խստացման անհրաժեշտություն:*

Արտաքին լուսավորություն

Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցը կառուցվել և շահագործման է հանձնվել 1950-ական թվականներին: Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, էներգետիկ ճգնաժամի տարիներին, արտաքին ցանցը դադարեց գործել. 2000թ-ին լուսավորված էին Երևանի կենտրոնի մի քանի փողոցներ, և միայն 2003թ-ից հետո սկսվեցին իրականացնել արտաքին ցանցի վերականգնման աշխատանքներ: Տարեց տարի իրականացվող վերականգնողական աշխատանքների հետևանքով շահագործվող արտաքին լուսավորության ցանցի երկարությունը 2013թ-ին կազմեց 1337 կմ - 1387 օբյեկտ, 2018թ-ին՝ 1643 կմ – 2532 օբյեկտ, 2019թ-ի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1660 կմ – 2567 օբյեկտ:

Ներկայումս արտաքին լուսավորության ցանցի լուսատուների գերակշիռ մասը բարձր ճնշման նատրիումական լուսատուներն են, իսկ արդիական և էներգախնայող ԼԵԴ լուսատուները փոքր քանակ են կազմում: Արտաքին լուսավորության ցանցի միջին օրական միացման ռեժիմը տարեկան կտրվածքով կազմում է 7 ժամ 42 րոպե:

Վերջին տարիների ընթացքում կապիտալ ներդրումների հաշվին վերակառուցվել է արտաքին լուսավորության ցանցի զգալի մասը, սակայն դեռևս առկա են շուրջ 552

չլուսավորվող օբյեկտներ՝ փողոցներ, փողոցների հատվածներ, նրբանցքներ և բակային տարածքներ, որոնք ևս անհրաժեշտ է լուսավորել:

Ներկայումս Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցը գտնվում է դինամիկ զարգացման փուլում, ՄԱԿ-ի զարգացման հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվող Քաղաքային կանաչ լուսավորության ծրագրի շրջանակներում: ՎԶԵԲ-ի և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորություն» վարկային և դրամաշնորհային ծրագրի շրջանակներում գործող նատրիումական լուսատուները փոխարինվում են ավելի արդիական, էներգախնայող ԼԵԴ լուսատուներով, որոնք նպաստում են ֆինանսական միջոցների խնայողության, որը հետագայում ուղղվելու է Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների ֆինանսավորմանը: Արդիականացման արդյունքում ակնկալվում է նաև ջերմոցային գազերի արտանետումների զգալի կրճատում:

Հիմնախնդիրներ

1. *Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների և խաղահրապարակների լուսավորման անհրաժեշտություն:*
2. *Մալուխային ցանցի փոխարինման անհրաժեշտություն:*
3. *Կոռոզիայի ենթարկված հենասյուների փոխարինման անհրաժեշտություն:*
4. *Դիսպետչերական ծառայության ավտոմատացում, ինտելեկտուալ համակարգի և կառավարման համակարգի ներդրման անհրաժեշտություն:*
5. *Միջին օրական ռեժիմի ավելացման անհրաժեշտություն մինչև լուսաբաց:*
6. *Նոր տրանսպորտա-տեխնիկական միջոցների, սարքավորումների, գործիքների և այլ տեխնիկական միջոցների ներդրման անհրաժեշտություն:*
7. *Լուսային ժամանակակից և էներգաարդյունավետ խնայողական LED լուսատուների տեղադրման անհրաժեշտություն:*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Բազմաբնակարանային շենքերի կառավարման և սպասարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է ներգրավել մասնագիտացված ընկերություններ՝ ոլորտում ապահովելով մրցակցային դաշտ, մատուցել ծառայություններ և իրականացնել ընդհանուր սեփականության պատշաճ պահպանման աշխատանքներ:
2. Օրենսդրական փոփոխությունների միջոցով կներդրվի բազմաբնակարան շենքերի կառավարման նոր մոդել, որը կներառի գործառույթների հստակեցում, պատասխանատվության սահմանում և բնակչությանը հաշվետու լինելու մեխանիզմներ:
3. Կիրականացվեն բազմաբնակարան շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի նորոգման աշխատանքներ:
4. Նախատեսվում է իրականացնել առանց կոյուղատար համակարգի թաղամասերում դրանց կառուցումը:
5. Նախաձեռնել բազմաբնակարան շենքերի աղբամուղերի արդիականացման կամ դրանց փակման գործընթաց՝ ելնելով սանիտարահիգիենիկ, առողջապահական նկատառումներից:
6. Արտաքին լուսավորության համակարգում նախատեսվում է էներգախնայող և խելացի համակարգերի ներդրմամբ ապահովել բյուջեի ծախսերի խնայողություն:

«Բազմաբնակարան շենքի կառավարման ոլորտում ուսուցումների կազմակերպում և խորհրդատվության տրամադրում»

Ծրագրի նպատակը	Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների բարելավում

	Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ղեկավարների, աշխատակիցների համար սեմինարների կազմակերպում և բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերին իրազեկում				
Համագործակցություն	Հիմնադրամներ, հասարակական կազմակերպություններ և այլ կազմակերպություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
		Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների բարելավում Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում	Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների բարելավում Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում	Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների բարելավում Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում	Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների բարելավում Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում

Ծրագրի բյուջե	40 մլն. ՀՀ դրամ
Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուր	Երևանի բյուջե և/կամ այլ կազմակերպություն
Ծրագրի հիմնական շահառուներ	Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ղեկավարներ, աշխատակիցներ և բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերեր
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2020-2023թթ.

«Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների հիմնանորոգում՝ բնակիչների համար ապահով տանիքների ստեղծում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է բազմաբնակարան շենքերի վնասված հարթ և թեք տանիքների հիմնանորոգում ցինկապատ պրոֆիլավորված հարթ թիթեղներով և այլ անհրաժեշտ նյութերի օգտագործմամբ: Ծրագրով նախատեսվում է Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքներ				
Համագործակցություն	Վարչական շրջաններ, համատիրություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Տե՛ս վարչական շրջաններ:				
Ծրագրի հիմնական շահառուները	Բազմաբնակարան շենքերի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի				

«Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է ապահովել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերը պատշաճ վերանորոգված մուտքերով:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում, պատուհանների և դռների փոխարինում:				
Համագործակցություն	Վարչական շրջաններ, համատիրություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Տե՛ս վարչական շրջաններ:				
Ծրագրի հիմնական շահառուները	Բազմաբնակարան շենքերի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ,	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի				

իրականացման ժամանակացույց	

«Քաղաքային կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Նուբարաշենի և Աջափնյակի աղբավայրերի փակում և Նուբարաշենում նոր աղբավայրի կառուցում:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում նախատեսվում է Նուբարաշենի առկա աղբավայրին հարակից տարածքում կառուցել նոր աղբավայր, ինչպես նաև փակել Նուբարաշենի և Աջափնյակի գործող աղբավայրերը:				
Համագործակցություն	ՎԶԵԲ, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միավայրի գործընկերությունն (E5P)				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	-	մեկնարկ	Շին.	Շին.	Շին. ավարտ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2020-2023				

«Սանիտարական մաքրում և աղբահանություն»

Ծրագրի նպատակը	Աղբահանության և սանիտարական մաքրման բարձր որակի ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Շարունակաբար բարելավվելու են սանիտարական մաքրման և աղբահանության իրականացման աշխատանքները: Հսկողություն է իրականացվելու սանիտարական մաքրմանմ փողոցների, մայթերի, հրապարակների, բակային և ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանիտարական մաքրման, ինչպես նաև 4865 բազմաբնակարան շենքերից և մոտ 55000 մասնավոր տնատիրություններից իրականացվող աղբահանության աշխատանքների կատարման որակի նկատմամբ:
Համագործակցություն	-
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2019-2023

«Քաղաքային լուսավորություն»

Ծրագրի նպատակը	Երևանի քաղաքի արտաքին լուսավորության պատճաշ որակի ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագրով նախատեսվում է շուրջօրյա աշխատանքներ իրականացնել ուղղված՝ Երևան քաղաքի լուսավորության համակարգի պահպանմանը, շահագործմանը, արդիականացմանը և զարգացմանը:
Համագործակցություն	-

Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2019-2023

«28 փողոցների լուսավորության արդիականացման» ծրագիր

Ծրագրի նպատակը	Երևանի 28 փողոցների լուսավորության համակարգերի արդիականացում				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքի թվով 28 փողոցներում՝ • առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով, • փոխել/ամրացնել լուսավորության հենասյուները, • առկա վերգետնյա մալուխներն անցկացնել ստորգետնյա կապուղիներով, • ներդնել լուսավորության ցանցի կառավարման համակարգ:				
Համագործակցություն	ՎԶԵԲ, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միավայրի գործընկերությունն (E5P)				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	մեկնարկ	ավարտ	-	-	-
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2019-2020				

««ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագիր»

Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակն է բազմաբնակարան շենքերում նվազեցնել էներգետիկ սպառումը և դրա հետ փոխկապակցված ջերմոցային գազերի արտանետումները (տարեկան շուրջ 850 տոննա CO2)՝ վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման և էներգախնայողության միջոցառումների իրականացման միջոցով: Ծրագրի նպատակն է նաև՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցով կրճատել բնակիչների էներգետիկ ծախսերը, նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները և բարձրացնել հարմարավետության մակարդակը:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագրով նախատեսվում է շուրջ 90 բազմաբնակարան շենքերի տանիքներին տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգեր՝ ապահովելով տվյալ շենքերի վերելակների, ընդհանուր օգտագործման և բակային տարածքների էլեկտրաէներգիայի մատակարարումը, ինչպես նաև շքամուտքերում և բակային տարածքներում տեղադրել LED լուսատուներ: Ծրագիրը բաղկացած է 3 հիմնական բաղադրիչներից, որոնք ե - բազմաբնակարան շենքերում բացառապես վերականգնվող էներգիայի օգտագործմամբ էներգամատակարարման մոդելի ստեղծում՝ ընդհանուր օգտագործման և բակային տարածքների լուսավորության ապահովման և վերելակների շահագործման համար: - քաղաքային էներգետիկ պլանավորման և կառավարման (մոնիթորինգ, հաշվետվողականություն, տեղեկատվության վերլուծություն) համակարգի

	ստեղծում: - համատիրությունների, հանրային հատվածի և այլ համայնքների կարողությունների զարգացմանն աջակցության ապահովում:				
Համագործակցություն	ԵՄ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	-	90 բազմաբնակարան բնակելի շենք	-	-	-
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչներ				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2019-2020				

«Երևան քաղաքի վերելակների փոխարինում» ծրագիր

Ծրագրի նպատակը	Վերելակային տնտեսության արդիականացում, կառավարման օպտիմալացում և միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ սպասարկման ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	«Երևան քաղաքի վերելակների փոխարինում» ծրագրի իրականացման լայնածավալ աշխատանքները համակարգված մեխանիզմով իրագործելու նպատակով՝ ՀՀ փոխվարչապետի 2019 թվականի հուլիսի 26-ի N 470-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի ստեղծման նպատակն է. 1) Բազմաբնակարան շենքերի վերելակների փոխարինման ծրագրի մշակում: 2) Վերելակային տնտեսության կառավարման օպտիմալացման և միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ սպասարկման մեխանիզմների մշակում: 3) «Երևան քաղաքի վերելակների փոխարինում» ծրագրի իրականացման լայնածավալ աշխատանքները համակարգված մեխանիզմով իրագործում:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի բնակիչներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2019-2023

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը Հայաստանի Հանրապետությունում երկրի զարգացման ու հզորացման, ազգային անվտանգության ապահովման երաշխիք է: 21-րդ դարի մրցունակ պետության հիմքը մրցունակ կրթական համակարգի ստեղծումն է:

Գերակա խնդիր են մրցունակ կրթության ապահովումը և ազգային ու համամարդկային արժեքներով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ձևավորումը:

Դպրոցական բաժին

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ 2019-2020 ուսումնական տարվանից գործում է 152 հանրակրթական դպրոց՝ հիմնական՝ 140, միջնակարգ՝ 13, որից 1-ը՝ կրթահամալիր («Հակոբ Կոջոյան»): Ներառական կրթություն է իրականացվել 54 դպրոցում՝ 1072 աշակերտի համար: Հիմնական դպրոցների աշակերտների թիվը՝ 97217: Միջնակարգ դպրոցների աշակերտների թիվը՝ 1241:

2019 թվականի հունվարից Երևանի դպրոցներում սկսվել է համընդհանուր ներառման գործընթացը, որի արդյունքում Երևանի քաղաքապետարանի ենթակայության հատուկ դպրոցները վերանվանվել են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների:

Հատուկ կարիքներով երեխաներին ընդունելու նպատակով դասարաններում ստեղծվել է համապատասխան միջավայր, հարմարեցված սանհանգույցներ, թվով 76 դպրոցներում լուծվել է թեքահարթակների խնդիր:

Դպրոցներում ներդրվել է ֆինանսաձեռնարկատիրական կրթություն՝ սովորողների մեջ ձեռնարկատիրական մտածելակերպ խթանելու նպատակով:

Դպրոցներում ուսումնասիրվող հիմնական օտար լեզուներն են՝ ռուսերենը (ուսումնասիրվում է բոլոր դպրոցներում), անգլերենը՝ թվով 142, ֆրանսերենը՝ թվով 49 , և գերմաներենը՝թվով 8 դպրոցներում: Ուսումնասիրվում են նաև պարսկերեն, չինարեն, եզդիերեն, ասորերեն, իտալերեն, իսպաներեն: Ռուսերենով ուսուցմամբ դասարաններ են գործում Երևանի թվով 13 դպրոցներում:

2018-2019 ուսումնական տարվա «Հայոց լեզու և գրականություն» առարկայից իններորդ դասարանի կենտրոնացված ավարտական քննությանը մասնակցած Երևանի դպրոցների 10123 իններորդցիներից բարձր միավոր են հավաքել ընդամենը 288–ը, դրական միավորի շեմը չի հաղթահարել 257 մասնակից: Միավորների սանդղակում ամենաբարձր նիշը 12 և 13 միավոր ստացածներինն է՝ 9578 աշակերտ:

Խնդրի լուծման նպատակով կազմակերպվում են դասի ընթացքում հետաքրքիր մեթոդների կիրառմանը և նորագույն տեխնոլոգիաների նպատակային օգտագործմանն ուղղված գործընթացներ և դպրոցները համալրվում են էլեկտրոնային գրատախտակներով ու տեխնիկական այլ միջոցներով (առկա է 310 էլեկտրոնային գրատախտակ):

Անչափահասների հարցերով զբաղվող ՀՀ ոստիկանության բաժինների համագործակցությամբ՝ իրականացվում են պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկերի կանխարգելման, ինչպես նաև պարտուսից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և ուսուցման համակարգ վերադարձնելու ուղղությամբ աշխատանքներ: Շարունակվել են քույր քաղաքների համագործակցության ծրագրով նախատեսված միջոցառումները:

Երևանի քաղաքապետի կարգադրությամբ կազմակերպվում են ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաներ՝ Երևանի տարածքային և քաղաքային փուլեր:

Սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում կարևորվում է դպրոցականի գեղագիտական և բարոյական դաստիարակությունը, ազգային մտածողության զարգացումը: «Տարվա հոբելյարներ» շարքով իրականացվում են հայ նշանավոր և

համաշխարհային մեծության անհատների հոբելյաններին նվիրված միջոցառումներ (Հովհ.Թումանյան-150,Կոմիտաս-150, Ա.Պուշկին-220):

Առաջնային է դպրոցների նորոգման և գույքի նորացման խնդիրը: Առաջնահերթությամբ վերանորոգման կարիք ունեցող թվով 90 դպրոցներից թվով 13 դպրոցների վերանորոգման գործընթացը սկսված է և գտնվում է տարբեր փուլերում (հ.հ. 6,18,22,51,68,91,95,116,122,135,153,191 և «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրը):

Նախադպրոցական կրթություն

Երևանի ենթակայությամբ գործում է 161 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ մանկապատեզ, ուր հաճախում է շուրջ 30000 երեխա: Մանկապարտեզներում գործում է 972 խումբ: Թվով 77 նախադպրոցական ուսումնական հաստատություններում գործում է կրտսեր առաջին 80 խումբ:

Սոցիալապես անապահով ընտանիքների 120 երեխայի համար Երևանի հ.141 մանկապարտեզում իրականացվում է շուրջօրյա գործունեություն:

Թվով 8 մանկապարտեզներում իրականացվում է ներառական կրթություն՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար, որտեղ ներառված է 146 երեխա /վկայագրված/:

Թվով 23մանկապարտեզներում ձևավորվել են 20 նոր տարբեր տարիքային խմբեր: Նուբարաշեն վարչական շրջանում հիմնադրվել է «Արևամանուկ» ՀՈԱԿ, որը գործում է 4 խմբով:Երեխաների կրթադաստիարակչական գործընթացին մասնակցում է 4273 աշխատակից:

Հաստատության տնօրենները և մանկավարժական անձնակազմը, սահմանված կարգի համաձայն, վերապատրաստվել են ԿԱԻ-ի մասնագետների կողմից: Բուժքույրերը վերապատրաստվել են «Վորլդ Վիժն» և «Կարմիր խաչ» ընկերությունների կողմից կազմակերպված՝ «Առաջին բուժօգնության կանոնները» թեմայի շրջանակում:

«Մանկապարտեզ» էլեկտրոնային համակարգը օգտատերերի համար գործում է «առցանց», որի արդյունքում հերթագրված երեխայի ծնողը ունի հնարավորություն հետևելու երեխայի հերթին: Հերթագրված երեխաների թիվը շուրջ 12000 է:

Հանրակրթության վարչության նախադպրոցական բաժինը համագործակցում է տարբեր կազմակերպությունների հետ՝ իրականացնելով սեմինար-քննարկումներ և վերապատրաստման դասընթացներ՝«Սեյվ դը չիլդրն» ՀԿ-ի, «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» ԲԿ-ի, «ՀՕՖ» երեխաների աջակցության կենտրոնի, «Հույսի կամուրջ» ՀԿ-ի, «Կարմիր խաչի», ինչպես նաև ԱԻՆ-ի տեսչական մարմինների հետ:

Մանկապարտեզ հաճախող երեխաների հետ տարվող աշխատանքների իրականացման նպատակով հաստատություններում ստեղծված է համապատասխան միջավայր, որի կարևորագույն բաղադրիչներից է գույքային հագեցվածությունը:

Մանկապարտեզներն ապահովված են անհրաժեշտ գույքով.

Կոշտ գույք՝ խոհանոց - 1387, խմբասենյակ - 87958, անձնակազմ - 7522, կենցաղային տեխնիկա՝ սալօջախ - 233, սառնարան - 640, համակարգչային տեխնիկա՝ համակարգիչ-200, տպիչ- 144, սկաներ- 120:

Ընթացիկ տարիներին, օգտագործման արդյունքում, մանկապարտեզներում գույքը կրել է բնական մաշվածություն, որի հետևանքով առկա է փոփոխման անհրաժեշտություն:

Կոշտ գույք՝ խոհանոց - 295 հատ, խմբասենյակ - 13064 հատ, անձնակազմ - 3240 հատ, կենցաղային տեխնիկա՝ սալօջախ - 107 հատ, սառնարան - 37 հատ:

Մանկապարտեզներում առկա համակարգչային տեխնիկան թեև սարքին է, սակայն չի համապատասխանում իննովացիոն տեխնոլոգիաների պահանջներին:

Հիմնախնդիրներ

1. *Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման համար հանրակրթական ուսումնական հաստատությունների դպրոցական գույքի նորացում, շենքային պայմանների բարելավում, համապատասխանեցում միջազգային չափանիշներին:*
2. *Անհրաժեշտ քանակությամբ համակարգիչների, էլեկտրոնային գրատախտակների, տեխնոլոգիական այլ միջոցների առկայության ապահովում՝ դասավանդման ժամանակ նյութն առավել հետաքրքիր և մատչելի դարձնելու նպատակով:*
3. *Առողջ ապրելակերպի ոչ միայն որպես ուսումնական դասընթացի արդյունավետ կազմակերպման, այլ աշակերտի կենսաձև դարձնելու համարդպրոցների մարզադահլիճների և մարզահրապարակների արդիականացում:*
4. *Առաջին դասարանից մինչև տասներկուերորդ դասարան շաբաթական միջինը 5-8 ժամ հայոց լեզու և գրականություն ուսումնասիրող դպրոցականի բանավոր և գրավոր խոսքի անմիսթար վիճակի, ազգային մշակույթի, ժողովրդի անցած ճանապարհի մասին անբավարար իմացության հաղթահարում:*
5. *Ուսուցիչների նորարարական կարողությունների զարգացման, կրթական նորացող մեթոդաբանության յուրացման, նրանց մասնագիտական կատարելագործման նպատակով՝ վերապատրաստումների իրականացում:*
6. *Ուսուցչի վարկի և հեղինակության բարձրացման նպատակով՝ լավագույն փորձի հանրահռչակում, խրախուսման տարբեր միջոցներով նրա գործունեության գնահատում՝ առաջարկելով տված արդյունքի հիմքով աշխատավարձի վերանայում:*
7. *Ուսուցիչների և աշակերտների ինքնակրթությունը խթանելու նպատակով՝ դպրոցների գրադարանային ֆոնդի համալրում գեղարվեստական, մեթոդական և մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև էլեկտրոնային գրադարանների ստեղծում:*
8. *Դպրոցների համալրում լաբորատորիաներով, անհրաժեշտ նյութերով և համապատասխան սարքավորումներով, ինչպես նաև էլեկտրոնային լաբորատորիաների ներդրում:*
9. *Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկերի կանխարգելում, նման երեխաներին հայտնաբերում՝ ուսուցման համակարգ վերադարձնելու նպատակով:*
10. *Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների համապատասխանեցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների պահանջներին:*
11. *Աշակերտական ակումբների ստեղծում՝ ըստ վարչական շրջանների (մասնագիտական կողմնորոշում, գրական, բնապահպանական):*
12. *Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շինությունների և տարածքների քարտեզագրում:*
13. *Քարտեզագրման արդյունքում ստացված տվյալների հիման վրա՝ Երևան քաղաքի նախադպրոցական հաստատություններում հերթագրված, սակայն մանկապարտեզ չընդգրկված երեխաների ընդունելության խնդրի կարգավորում:*
14. *Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերից վարձակալությամբ կամ անհատույց տրված տարածքների պայմանագրերի վերանայում:*
15. *Մանկապարտեզների շենքերիհիմնանորոգում, բակային տարածքների բարեկարգում:*
16. *Մանկապարտեզների համալրում՝ համապատասխան գույքով:*
17. *Նոր խմբերի ձևավորում՝ չօգտագործվող տարածքների (խմբասենյակներ) շահագործմամբ:*
18. *Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով մանկապարտեզների մանկավարժական համակազմերի համալրում համապատասխան մասնագետներով:*
19. *Համընդհանուր ներառման ծրագրի շրջանակում՝ մասնագետների վերապատրաստում՝ համագործակցելով շահագրգիռ հասարակական*

կազմակերպությունների հետ՝ «Հույսի կամուրջ», «Վորլդ Վիժն», «Սեյվ դը Չիլդրեն» և այլն:

20. *Դաստիարակների աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու նպատակով նոր տեխնոլոգիաների ներդրում՝ապահովելով դաստիարակների վերապատրաստումը: Մեկ համակարգիչ՝ յուրաքանչյուր խմբում (980 խումբ):*
21. *Էլեկտրոնային առցանց հերթագրման գործընթացի՝ հասարակությանը հասանելի դարձնելու նպատակով հանրային իրազեկման արշավների կազմակերպում:*
22. *5-6 տարեկան՝ մանկապարտեզ չհաճախող երեխաների համար այլընտրանքային մոդելներով նախադպրոցական կրթության կազմակերպում՝ դպրոցների ազատ տարածքների հարմարեցմամբ, առանց քնի և մեկանգամյա սննդով:*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

«Մանկապարտզների գույքի թարմացում»

Ծրագրի նպատակը	Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացում, ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանում և ամրապնդում, երեխայի խնամք:				
Ծրագրի համառոտ նկարագիրը	Մանկապարտեզների գույքի նորացում. կոշտ գույք (երեխաների և աշխատակազմի համար), կենցաղային տեխնիկա, խոհանոցային սպասք:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Երեխաների համար բարենպաստ միջավայրի ապահովում				
Ծրագրի հիմնական շահառուները	Մանկապարտեզների սաներ, աշխատակիցներ, երեխաների ծնողներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականներին				

«Մանկապարտզների շենքերի նորոգում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակն է շենքերի վերանորոգմամբ երեխաների համար ստեղծել շենքերի և բակերի բարենպաստ պայմաններ՝ սանիտարահիգիենիկ նորմերի ապահովմամբ:				
Ծրագրի համառոտ նկարագիրը	Թվով 66 մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում:				
Համագործակցություն	Միջազգային կազմակերպություններ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Երեխաների համար բարենպաստ միջավայրի ապահովում. շենքերի հիմնանորոգում, նյութատեխնիկական բազայի թարմացում:				
Ծրագրի հիմնական շահառուները	Մանկապարտեզների սաներ, ծնողներ և հաստատության աշխատակիցներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականներին				

«Նախադպրոցական կրթության մատչելիություն»

Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակն է մեկնարկային հավասար պայմանների ապահովմամբ երեխաների սահուն անցումը դպրոց:

Ծրագրի համառոտ նկարագիրը	Նախադպրոցական անվճար կրթություն				
Համագործակցություն	Հիմնադրամներ, բարեգործական կազմակերպություններ:				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Շենքերի հիմնանորոգում, գույքի նորացում: Հերթագրված երեխաների ընդունելության հիմնախնդրի կարգավորում: Մանկապարտեզներում համընդհանուր ներառման գործընթացի իրականացում:				
Ծրագրի հիմնական շահառուները	Մանկապարտեզների սաներ, ծնողներ և հաստատության աշխատակիցներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականներին				

«Երևանի քաղաքապետարանի դպրոցներում մրցունակ կրթության ապահովման աջակցություն՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ»

Ծրագրի նպատակը	Ծրագրի իրականացման հիմնական նպատակը մրցունակ կրթության ապահովմանը միտված գործընթացների կազմակերպումն է:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Հետաքրքիր և բովանդակալից դասապրոցեսի համար ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակային կիրառում, «Հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարանի» և էլեկտրոնային ուսումնական այլ նյութերից օգտվելու հնարավորություն: Այդ նպատակով համապատասխան աշխատանքների կազմակերպում՝ դպրոցների խնայողությունները ուղղորդելու համակարգչային կաբինետների ստեղծմանը, էլեկտրոնային գրատախտակների, տեխնոլոգիական այլ միջոցների ձեռքբերմանը: «Կրթական համակարգում նախնական ինժեներական կրթության ներդրում» ծրագրի շրջանակում շարունակել «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ներդրման համագործակցությունը:				
Համագործակցություն	ԿՏԱԿ, կրթական ծրագրեր իրականացնող ՀԿ-ներ, «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկատիրական միություն» ՀԿ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Ծրագրիմեկնարկային փուլից հետո յուրաքանչյուր տարի դպրոցները համալրել ժամանակակից տեխնոլոգիական միջոցներով:				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներ,դպրոցականներ, մանկավարժներ, ծնողներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականներին				

«Դպրոցական շենքերի հիմնանորոգում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի իրականացման նպատակը Երևանի ենթակայության հանրակրթական դպրոցների շենքային պայմանները ժամանակակից կրթական պահանջներին համապատասխանեցումն է՝ մրցունակ կրթության ապահովման համար:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Գույքագրվել և ՀՀ քաղաքաշինության նախարարություն է ներկայացվել հանրակրթական դպրոցների անմխիթար վիճակում գտնվող շենքերի վերաբերյալ տեղեկատվություն: Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում կառուցվելու կամ ամրացվելու են պետական հանրակրթական դպրոցներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017թ. հ.805-Ն որոշման: Նշված որոշմամբ հաստատվել է «Հայաստանի

	Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ 23.07.2015թ. հ.797-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններով քաղաքապետարանի ենթակայության թվով 13 դպրոցների ցանկը, որոնք ենթակա են վերակառուցման կամ ամրացման (հ.հ.6,18,22,51,68,91,95,116,122,135,153,191 դպրոցները և «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրը): Երևանի հ.հ.154,87,24,33 դպրոցների վերանորոգումն իրականացվելու է սփյուռքահայ բարեգործների կողմից:
Համագործակցություն	Ասիական զարգացման բանկ, Սփյուռքահայ բարեգործներ

Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Հ.135 և153 դպրոցական շենքերի համապատասխանեցում ժամանակակից կրթական պահանջներին՝ մինչև 2020թվականը, ծրագրում ընդգրկված մյուս դպրոցների նախագծա-նախահաշվայինփաթեթները նախապատրաստական փուլում են(Ասիական բանկ): Երևանի հ.154 դպրոցի մարզական և հանդիսությունների դահլիճների վերանորոգում:				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարանի դպրոցների աշակերտներ, մանկավարժական համակազմ, դպրոցականների ծնողներ:				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականներին՝ նշված ժամանակահատվածում հիմնանորոգման ծրագրում ընդգրկված դպրոցների մասով:				

«Սովորողների արժեքային համակարգի ձևավորման աջակցություն»

Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակը դպրոցականի ազգային արժանապատվության գիտակցության զարգացումն է, ինչպես նաև ազգային արժեհամակարգով հայրենապաշտ քաղաքացու ձևավորմանը աջակցումը:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Դպրոցներում կիրականացվեն հայ ժողովրդի նշանավոր զավակներին նվիրված շաբաթներ, տարվա հոբելյարներին նվիրված միջոցառումներ, որոնցից կատարված ծաղկաքաղով կկազմակերպվի համաքաղաքային հանդիսություն: Ծրագրի նպատակի իրականացման համար, ըստ վարչական շրջանների, ստեղծվելու են աշակերտական ակումբներ. **<u>Մասնագիտական կողմնորոշում</u>**՝-կանցկացվեն ոչ ֆորմալ դասընթացներ՝ կիրառելով Հայաստանի մանուկների հիմնադրամի (COAF) մշակած մեթոդաբանությունը,որը 80-ից ավել դպրոցներում ներդրվել է «Սեյվ դը չիլդրեն» ՀԿ կողմից: Կազմակերպվելու են հանդիպումներ մասնագիտության մեջ հաջողած անձանց հետ՝ «Դասը վարում է մասնագետը» խորագրով: **<u>Գրական ակումբ</u>**- միտված է լինելու աշակերտների շրջանում ընթերցանության նկատմամբ հետաքրքրության, քննադատական և վերլուծական մտածողության խթանմանը: **<u>Բնապահպանական (էկո) ակումբ</u>**- դպրոցականների շրջանում բնապահպանական դաստիարակությանը միտված նախաձեռնողական ծրագրերի իրականացումն է՝հետևյալ ուղղվածություններով՝ ✓ աղբի տեսակավորման մասին գիտելիքների տարածումը և դպրոցներում կիրառության հնարավորությունների ստեղծումը, ✓ բիո էթիկայի սկզբունքների հանրայնացումը, ✓ «Լավագույն դպրոցական այգի» խրախուսական մրցույթի անցկացումը, ✓ հայրենաճանաչողական արշավների կազմակերպումը, ✓ արձակուրդների շրջանում ագրոտուրիզմի նախաձեռնումը և խթանումը:
Համագործակցություն	Հայաստանի գրողների միություն, «Երիտասարդները հանուն զարգացման» հիմնադրամ, «Հույսի կամուրջ» և կրթական ծրագրեր իրականացնող այլ ՀԿ-ներ,

	մշակութային համապատասխան օջախներ՝ համաձայնությամբ:				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Դպրոցականների արժեքային համակարգի ձևավորում, քաղաքացիական գիտակցության զարգացում:				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարանի դպրոցների աշակերտներ, մանկավարժական համակազմ, դպրոցականների ծնողներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականներ				

«Համագործակցություն, փորձի փոխանակում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի իրականացման նպատակը մանկավարժների մասնագիտական կարողությունների զարգացմանը, նորագույն մեթոդներին հասու լինելուն աջակցելն է:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մրցունակ կրթության ապահովման, կրթության որակի բարձրացման նպատակով իրականացվելու են ուսուցիչների նորարարական կարողությունների զարգացման, կրթական նորացող մեթոդաբանության յուրացման, նրանց մասնագիտական կատարելագործմանն ուղղված վերապատրաստումներ՝ համապատասխան բուհերի և կազմակերպությունների համագործակցությամբ(առկա են հուշագրեր): Արժևորելով մայրաքաղաքի վաստակաշատ մանկավարժների ներուժը՝ նախատեսվում է Երևանյան դպրոցներում և մանկապարտեզներում կազմակերպել «Վարպետաց դասեր»՝ նորարարական փորձով հայտնի մանկավարժների կողմից: Դպրոցների տնօրենների փորձի փոխանակման և «Լավագույն տնօրենի» փորձի մասայականացման գործընթացի կազմակերպում: Փորձի փոխանակման նպատակով շարունակվելու են ուսուցիչների և մանկապարտեզների դաստիարակների փոխայցելություններ Երևանի քույր քաղաքների կրթական հաստատություններ: Նախատեսվում է նաև Երևանի և Սփյուռքի դպրոցների միջև հեռուստակամուրջ՝ հայրենագիտության դասերի կազմակերպման, ինչպես նաև միջմշակութային կապերի ստեղծման նպատակով:				
Համագործակցություն	Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, կրթական ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպություններ, Երևանի քույր քաղաքների կրթական հաստատություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Մանկավարժների մասնագիտական կարողությունների արդիականացում:				
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներ, դպրոցականներ, մանկավարժական համակազմ, դպրոցականների ծնողներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականներին				

«Երևանի քաղաքապետարանի դպրոցներում համընդհանուր ներառականության համակարգի ներդրում»

Ծրագրի նպատակը	Յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան հարմարեցված միջավայրի ապահովմամբ կրթության ապահովում: Ներառված երեխաների ինտեգրում հասարակությանը:
Ծրագրի	Երևանի քաղաքապետարանի դպրոցներում 2019թ. հունվարից, համաձայն

<table>
<tr><td>համառոտ նկարագրություն</td><td colspan="5">Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2016թ. փետրվարի 18-ի «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի» հ.6 արձանագրային որոշման պահանջների, իրականացվում են համընդհանուր ներառման գործընթացներ:
Ծրագրի շրջանակում «Հույսի կամուրջ» ՀԿ-ի համագործակցությամբ իրականացվելու են հանրակրթական դպրոցների ուսուցիչների՝ ներառական կրթության տեսության և կիրառման հարցերով վերապատրաստումներ:
Դպրոցները կունենան ուսուցչի օգնականներ:
Նախատեսվել է դպրոցների սանհանգույցների հարմարեցում, դպրոցների՝ թեքահարթակով ապահովում:
Դպրոցների վերանորոգման ծրագրերում ներառված է շենքային պայմանների համապատասխանեցում հատուկ կարիքներով երեխաների պահանջներին:</td></tr>
<tr><td>Համագործակցու-թյուն</td><td colspan="5">«Հույսի կամուրջ» ՀԿ, ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն», «Դրամաշնորհային նախադպրոցական միկրոծրագրեր»</td></tr>
<tr><td rowspan="2">Ծրագրի անմիջական նպատակ</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td><td>2022</td><td>2023</td></tr>
<tr><td colspan="5">Թվով 70 դպրոցներում ներառված երեխաների ինտեգրում հասարակությանը</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="5">Երևանի դպրոցներում ներառված 372 երեխաներ, նրանց ընտանիքները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց</td><td colspan="5">Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականներին</td></tr>
</table>

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանը համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքների հետ և անդամակցում միջազգային 8 կազմակերպությունների («Քաղաքապետերը հանուն խաղաղության», «ԱՊՀ երկրների, մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային համաժողով», «Տեղական բնապահպանական նախաձեռնությունների միջազգային խորհուրդ», «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքների կազմակերպություն», «Ֆրանսախոս քաղաքապետերի միջազգային ասոցիացիա», «Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիա», «Սևծովյան մայրաքաղաքների ասոցիացիա», «Եվրոսիթիս» ասոցիացիա)՝ ստեղծելով պայմանագրային ծավալուն դաշտ և միաժամանակ իրականացնելով տարբեր համատեղ ծրագրեր: Երևան քաղաքը վերջին 5 տարիների ընթացքում ստորագրել է 18 հուշագրեր և համաձայնագրեր՝ այդ թվում նոր համագործակցություններ են կնքվել Խանտի Մանսիսկ (ՌԴ, 2014թ.), Աշխաբադ (Ղազախստան, 2014թ.), Ամման (Հորդանան, 2014թ.), Նովոսիբիրսկ (ՌԴ, 2014թ.), Կրասնոդար (ՌԴ, 2014թ.), Անտոնի (Ֆրանսիա, 2014թ.) և Վուլբրի (Ավստրալիա, 2017թ.) քաղաքների հետ:

Ժամանակակից աշխարհում քաղաքների ու առավել ևս խոշոր քաղաքների դերակատարումը մեծացել է և մերօրյա հիմնախնդիրների լուծումներն ու քաղաքային տնտեսության զարգացմանը միտված գործողություններն և ներկայացվող ծրագրերը պարտադրում են պրագմատիկ աշխատանքներ իրականացնել արտաքին կապերի ոլորտում:

Հիմնախնդիրներ

1. *Երևան քաղաքում ծրագրերի իրականացման նպատակով՝ երկկողմ և բազմակողմ համագործակցության իրականացում:*
2. *Միջազգային համագործակցության շրջանակներում հնարավոր ռեսուրսների ներգրավման ակտիվացում՝ Երևանի քաղաքային տնտեսության տարբեր բնագավառներում:*
3. *Արտերկրի մայրաքաղաքների և խոշոր քաղաքների հետ համաձայնագրերի ստորագրման անհրաժեշտություն՝ համագործակցության կոնկրետ ուղղություններով ու հստակ պայմանավորվածությունների ձեռքբերմամբ:*
4. *Երկկողմ, միջազգային և տարածաշրջանային կառույցներում Երևան քաղաքի ակտիվության ապահովում՝ մայրաքաղաքային գործառույթներից ելնելով*:

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

«Մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում»

Ծրագրի նպատակը	Մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում՝ համագործակցության համաձայնագրերի կնքում, թարմացում, առկա համաձայնագերերի շրջանակում կապերի ակտիվացում, Երևանի՝ իբրև մշակութային խոշոր կենտրոնի ներկայացում: Ծրագրի նպատակն է բարձրացնել Երևանի հանրաճանաչելիությունը, ներգրավել օտարերկրյա ներդրումներ, ինչպես նաև աջակցել զբոսաշրջության զարգացմանը:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝ - ստորագրել համագործակցության համաձայնագրեր Քաթարի մայրաքաղաք Դոհայի, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի, Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայի, Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Կահիրեի, ԻԻՀ Շիրազ, Ղրղզստանի մայրաքաղաք Բիշկեքի, Ղազախստանի մայրաքաղաք Նուր-Սուլթանի հետ:

	- ակտիվացնել համագործակցության կապերը արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում /Փարիզ, Լոս Անջելես, Վենետիկ, Ռիգա, Սոֆիա, Աթենք, Բեյրութ, Լիոն, Մարսել, Քեմբրիջ (ԱՄՆ) և այլն/, - թարմացնել համագործակցության համաձայնագրերը ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքի, Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ, - Երևանի քաղաքապետարանի և Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև կնքված համագործակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է անցկացնել Երևանի օրերը Սանկտ Պետերբուրգում, - աջակցել ներդրումային միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովմանը, գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպմանը, - ակտիվացնել Երևանի՝ տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքները, - ակտիվացնել կապերը Երևանի քաղաքապետարանի և գործընկեր քաղաքների տուրիզմի պատասխանատուների միջև, - իրականացնել եղբայրության պուրակներ և զբոսայգիներ հիմնելու ծրագրեր, - խրախուսել և ընդլայնել վարչական շրջանների և գործընկեր քաղաքների, ինչպես նաև խոշոր քաղաքների վարչական միավորների միջև համագործակցությունը, - տրամադրել տեղեկատվություն Երևանի գործընկեր քաղաքներին Երևանում անցկացվելիք միջոցառումների և փառատոնների վերաբերյալ:
Համագործակցություն	Քույր և գործընկեր քաղաքներ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան, քույր և գործընկեր քաղաքներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ.

«Միջազգային համագործակցությունների շրջանակներում համատեղ ծրագրերի մշակում և միջոցառումների իրականացում»

Ծրագրի նպատակը	Միջազգային համագործակցությունների շրջանակներում ծրագրերի իրականացում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝ - ակտիվացնել աշխատանքները սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական հաստատությունների հետ կոնկրետ ծրագրերի ներկայացման առումով, համագործակցել միջազգային և տարածաշրջանային կառույցների շրջանակներում, - ցուցաբերել ակտիվ մասնակցություն AIMF-ի ամենամյա գագաթաժողովներին, կազմակերպել փոխայցելություններ ֆրանսիական քույր և գործընկեր քաղաքների հետ և մշակել համատեղ ծրագրեր, - ցուցաբերել ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին, ինչպես նաև ապահովել հնարավոր ներգրավում Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերին, - ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ բանակցությունների վարում՝ տեխնիկական օժանդակության տրամադրման վերաբերյալ: - իրականացնել ԱՄՆ Լոս Անջելես քաղաքի հետ համատեղ ծրագրեր

	- իրականացնել Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի քաղաքի հետ համատեղ ծրագրեր - իրականացնել Հորդանանի Հաշիմյան Թագավորության մայրաքաղաք Ամմանի հետ համատեղ ծրագրեր, - իրականացնել ՀՀ մարզերի և ԱՀ շրջանների հետ համատեղ ծրագրեր
Համագործակցություն	Միջազգային կազմակերպություններ, նախաձեռնություններ և համագործակցության այլ հարթակներ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ.

«Համագործակցությունների շրջանակում քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների կարողությունների բարձրացում»

Ծրագրի նպատակը	Քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների կարողությունների բարձրացում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումների կազմակերպում և փորձագիտական աջակցություն, անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուների դասընթացների կազմակերպում: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն նաև փորձի փոխանակման ծրագրեր քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցությունների շրջանակում, որը կներառի - Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների փոխայցելություններ, - Երևանի քաղաքապետարանի և Լիոնի Մետրոպոլի միջև համագործակցություն, - Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցության շրջանակներում մասնագիտական սեմինարների և փորձի փոխանակման ծրագրի շարունակական իրականացում՝ ֆրանսիական առաջատար մասնագետների մասնակցությամբ:
Համագործակցություն	Միջազգային կազմակերպություններ, քույր և գործընկեր քաղաքներ, ինչպես նաև ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչություններ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ, քույր և գործընկեր քաղաքների քաղաքապետարանների աշխատակիցներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ.

ՄՇԱԿՈՒՅԹ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակույթը յուրաքանչյուր պետության և հասարակության հանրային կյանքի, առկա սոցիալ-տնտեսական գործընթացների և զարգացման հիմնական ցուցիչներից է:

Մշակութային կյանքի հագեցվածությամբ, դրա բազմազանությամբ, տարածքային համաչափ զարգացմամբ, սոցիալական, տարիքային տարբեր խմբերի համար հասանելիությամբ, ինչպես նաև մշակութային գործունեության բարենպաստ պայմանների և ենթակառուցվածքների առկայությամբ է մեծապես պայմանավորված հասարակության և երկրի հանրային կյանքի որակն ու մշակութային դիմագիծը:

Երևան համայնքի մշակութային միջավայրն ու մշակութային կյանքը կարևոր դերակատարություն ունեն համայնքային համակեցության ավանդույթների պահպանման և զարգացման, անհատի և հանրության ստեղծարարության և ստեղծագործ մտածողության խթանման, հոգևոր-մշակութային, սոցիալական և տնտեսական ներդաշնակ զարգացման գործընթացներում: ՀՀ պետական մշակութային քաղաքականությանը համապատասխան՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մշակութային կազմակերպություններն իրականացնում են մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, արվեստի ստեղծագործությունների ստեղծման և տարածման, մշակութային միջոցառումների իրականացման, ստեղծագործական ներուժի վերարտադրման պայմանների ապահովման և այլ գործառույթներ:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 72 մշակութային կազմակերպություն, այդ թվում՝ 5 թանգարան, 3 թատրոն, 19 գրադարան, 26 երաժշտական, արվեստի և կերպարվեստի դպրոցներ, 14 մանկապատանեկան ստեղծագործության, գեղագիտական զարգացման և մշակույթի տներ, 2 մանկական ֆիլհարմոնիաներ, «Երևան» փողային նվագախումբ, «Հայ Արտ» մշակութային կենտրոն և Երևանի կենդանաբանական այգի:

Հիմնախնդիրներ

1. *Փառատոների, ցուցահանդեսների, համերգային ծրագրերի, այլ մշակութային միջոցառումների կազմակերպմանն ուղղված աշխատանքների ակտիվացման անհրաժեշտություն:*
2. *Մշակութային ծրագրերի առավել ակտիվ հանրահռչակման, մշակութային կյանքին բնակչության ինտեգրման անհրաժեշտություն:*
3. *Երիտասարդ ստեղծագործողների ինքնադրսևորման համար նոր հարթակների ստեղծման անհրաժեշտություն:*
4. *Ոլորտում տեղեկատվական-հաղորդակցական, նորագույն տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման և կիրառման, ինչպես նաև մշակութային արժեքների թվայնացման գործընթացի խթանման անհրաժեշտություն:*
5. *Գրադարանային համակարգի գործունեության օպտիմալացման, ոլորտի հասանելիության ապահովման, ինչպես նաև միասնական տեղեկատվական շտեմարանի ստեղծման աշխատանքների իրականացման անհրաժեշտություն:*
6. *Գրադարաններում, թանգարաններում, թատրոններում գույքի և շենքային պայմանների բարելավման, նյութատեխնիկական բազայի արդիականացման, տեխնիկական-տեղեկատվական բազայի վերազինման և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման անհրաժեշտություն:*

7. *Թանգարանային նմուշների ամրակայման, վերականգնման աշխատանքների շարունակական իրականացում, ֆոնդապահոցներում և ցուցադրություններում առկա թանգարանային առարկաների անվտանգության ապահովման անհրաժեշտություն:*
8. *Թանգարաններում ֆոնդապահոցների ջերմախոնավային համակարգի ստեղծման և առկա համակարգերի բարելավման և վերազինման անհրաժեշտություն:*
9. *Վերականգնման արվեստանոցների՝ նյութերով և տեխնիկայով վերազինման անհրաժեշտություն:*
10. *Թանգարանային հավաքածուների և արխիվի գիտական հետազոտության և ուսումնասիրման, դրանց արդյունքների ներկայացման անհրաժեշտություն:*
11. *Թատրոնների խաղացանկերի համալրման անհրաժեշտություն:*
12. *Մշակութային կրթության ոլորտի հաստատությունների գործունեության բարելավման, արվեստի և երաժշտական դպրոցներում ուսուցման մատչելիության և հասանելիության ապահովման անհրաժեշտություն:*
13. *Երաժշտական և արվեստի դպրոցները անհրաժեշտ գույքով և երաժշտական գործիքներով համալրելու անհրաժեշտություն:*
14. *Կենդանաբանական այգու վերակառուցման և արդիականացման ծրագրի շարունակության ապահովման անհրաժեշտություն:*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

«Արտադպրոցական դաստիարակություն» ծրագիր (երաժշտական և արվեստի դպրոցներ)

Ծրագրի նպատակը	Մշակութային նախնական մասնագիտական կրթության իրականացում, արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն, ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում հետագա ուսման նախապատրաստում, մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցման իրականացում, բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի կազմակերպում, երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացում, օժտված և տաղանդավոր երեխաների և պատանիների բացահայտում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երաժշտական և արվեստի դպրոցներում դպրոցահասակ երեխաների մշակութային նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական դաստիարակության, երաժշտաարվեստի և արվեստների ուսուցման իրականացում:				
Համագործակցություն	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական տականդաստիարակության իրականացում	Նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական տականդաստիարակության իրականացում	Նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական տականդաստիարակության իրականացում	Նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական տականդաստիարակության իրականացում	Նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական տականդաստիարակության իրականացում
Ծրագրի	Երեխաներ				

հիմնական շահառուները	
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար –2023թ. դեկտեմբեր

«Արտադպրոցական դաստիարակություն» ծրագիր (մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական կենտրոններ)

Ծրագրի նպատակը	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում, սովորողների ազատ ժամանցի կազմակերպում, հետաքրքրությունների և նախասիրությունների զարգացման համար պայմաններ ստեղծում, մտավոր-հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացում, սպորտային, ռազմահայրենասիրական դաստիարակություն, բնապահպանական և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների ձևավորում, ապագա կիրք և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Արտադպրոցական դաստիարակության միջոցով դպրոցահասակ երեխաների համար լրացուցիչ կրթադաստիարակչական ուսուցման, ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ապահովում:				
Համագործակցություն	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երեխաներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր				

«Մշակութային միջոցառումների կազմակերպում»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի բնակչության լայն զանգվածների ընդգրկում պետական, ազգային և այլ միջոցառումներին, ազգային մշակութի և արվեստի հաղորդակցվելու մատչելիության ապահովում, մշակութային միջավայրի պահպանում և զարգացում, հայ և համաշխարհային հոգևոր-մշակութային արժեքների վրա խարսխված մշակութային արտադրանքի ստեղծման և ծառայությունների մատուցման գործընթացի խթանում, հանրության մշակութային պահանջներին համապատասխան մշակութային միջոցառումների մշակում և իրականացում:
Ծրագրի համառոտ նկարագրությու	Երևան քաղաքում պետական, ազգային տոների, մասնագիտական տոների, հիշատակի օրերի և այլ մասսայական միջոցառումների կազմակերպում և անցկացում՝ նվիրված Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին,

ն	Թատրոնի միջազգային օրվան, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան, Ջազի միջազգային օրվան, Պարի միջազգային օրվան, Թանգարանների միջազգային օրվան, Եվրոպական ժառանգության օրվան, «Վերջին զանգին», Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, Գրադարանավարի օրվան, հայ ականավոր գործիչների և մտավորականների հիշարժան և հոբելյանական տարեթվերին, Երևանի հիմնադրման՝ «Էրեբունի-Երևան» տոնակատարություն, ինչպես նաև Երևան քաղաքի մշակութային միջավայրի պահպանման, զարգացման, հանրահռչակման, երեխաների և պատանիների գեղարվեստական զարգացման, գեղագիտական դաստիարակության, երիտասարդության և տարբեր տարիքային խմբերի մշակութային ժամանցի կազմակերպման՝ Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոն, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոն, «Երևանյան ամառ», «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոն, «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոն, Երևանի օրերը Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում:				
Համագործակ-ցություն	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Երևան քաղաքում պետական, ազգային և այլ մասսայական միջոցառումների իրականացում	Երևան քաղաքում պետական, ազգային և այլ մասսայական միջոցառումների իրականացում	Երևան քաղաքում պետական, ազգային և այլ մասսայական միջոցառումների իրականացում	Երևան քաղաքում պետական, ազգային և այլ մասսայական միջոցառումների իրականացում	Երևան քաղաքում պետական, ազգային և այլ մասսայական միջոցառումների իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր				

«Արտադպրոցական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Երաժշտական և արվեստի դպրոցների գործունեության արդյունավետության բարձարցում, անհրաժեշտ գույքով՝ երաժշտական գործիքներով և համապատասխան պարագաներով ապահովում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախնական մասնագիտական կրթության ժամանակակից պահանջներին համապատասխան գույքով և երաժշտական գործիքներով ապահովում: Նախատեսվում է ձեռք բերել մոտ 150 անուն նոր գործիք:				
Համագործակցություն	–				
Ծրագրի անմիջական	2019	2020	2021	2022	2023
	Նախնական	Նախնական	Նախնական	Նախնական	Նախնակա

նպատակ	մասնագիտական մշակութային կրթության արդյունավետության բարձրացում	մասնագիտական մշակութային կրթության արդյունավետության բարձրացում	մասնագիտական մշակութային կրթության արդյունավետության բարձրացում	մասնագիտական մշակութային կրթության արդյունավետության բարձրացում	ն մասնագիտական մշակութային կրթության արդյունավետության բարձրացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երաժշտական և արվեստի դպրոցներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր				

«Արտադպրոցական դաստիարակություն» երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում»

Ծրագրի նպատակը	Ազգային, լարային և փողային նվագարանների զարգացման և տարածման գործընթացի համար ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսման վարձավճարի փոխհատուցման ավելացում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման կազմակերպում: Ծրագիրը գործում է 2007 թվականից, որի արդյունքում նշված դպրոցներում բացվել են ազգային նվագարանների նոր դասարաններ՝ խթանելով ազգային գործիքների պահպանմանը, զարգացմանը և տարածմանը, ինչպես նաև ծրագրի արդյունքում կարևորվում է դասական երաժշտական՝ լարային և փողային գործիքների պրոպանգադմանը:				
Համագործակցություն	ՀՀ ԿԳՄՍ և ՀՀ ֆինանսների նախարարություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվա-գարանների գծով ուսուցում	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվա-գարանների գծով ուսուցում	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվա-գարանների գծով ուսուցում	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվա-գարանների գծով ուսուցում	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվա-գարանների գծով ուսուցում
Ծրագրի հիմնական շահառուները	Երեխաներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր				

«Գրադարանային ծառայություն»

Ծրագրի նպատակը	Բնակչության գրադարանային տեղեկատվության սպասարկում, ազատ ժամանցի կազմակերպում, հայ և համաշխարհային գրականության հանրահռչակում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բնակչության գրադարանային տեղեկատվության տրամադրում և սպասարկում, գիտության և մշակույթի լուսաբանում ու մասսայականացում, գիտատեխնիկական գիտելիքների տարածում, գեղագիտական դաստիարակություն, կրթական համակարգի օժանդակում, համաշխարհային և հայ գրականության, պատմության, մշակույթի և այլ արժեքների տարածում, բնակչության ազատ ժամանցի կազմակերպում:				
Համագործակցություն	ՀՀ ԿԳՄՍ, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Բնակչության գրադարանային տեղեկատ-վության սպասարկում	Բնակչության գրադարանայի ն տեղեկատ-վության սպասարկում	Բնակչության գրադարանայ ին տեղեկատ-վության սպասարկում	Բնակչության գրադարանայի ն տեղեկատ-վության սպասարկում	Բնակչու թյան գրադար անային տեղեկա տ-վության սպասար կում
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր				

«Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ»

Ծրագրի նպատակը	Մշակութային ժառանգության պահպանման և հանրահռչակման գործընթացի խթանում, Երևանի՝ որպես մշակութային հարուստ ժառանգություն և ավանդույթներ ունեցող քաղաքի տեղորոշում և հանրահռչակում, մշակութային զբոսաշրջության խրախուսում, բնակչությանը մշակութային արժեքներին ծանոթացում, ցուցադրությունների կազմակերպում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երևանի պատմամշակութային ժառանգությունը, հայկական կենցաղն ու մշակույթը, անցյալի և ներկայի արվեստի ստեղծագործությունները, ականավոր գործիչների կյանքն ու գործունեությունը ներկայացնող ցուցադրությունների կազմակերպում, բնագավառին առնչվող գիտական, կրթական գործունեության իրականացում, թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրություն, թանգարանային ֆոնդերի համալրում, թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրությունների իրականացում, նոր ցուցադրությունների կազմակերպում՝ ընդգրկելով պետական, ազգային տոներին, հիշարժան տարեթվերին նվիրված այլ միջոցառումներ և ցուցադրություններ:				
Համագործակցություն	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Բնակչության թանգարանայի ն արժեքներին	Բնակչության թանգարանային արժեքներին	Բնակչության թանգարանայ ին	Բնակչության թանգարանայի ն արժեքներին	Բնակչության թանգարանային արժեքներին

	ծանոթացում և հանրահռչակում	ծանոթացում և հանրահռչակում	արժեքներին ծանոթացում և հանրահռչակում	ծանոթացում և հանրահռչակում	ծանոթացում և հանրահռչակում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր				

«Թատերական ներկայացումներ»

Ծրագրի նպատակը	Ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, հին բեմադրությունների վերականգնում, նոր բեմադրությունների ներկայացում, ժամանակակից թատերգության ներկայացում, հայ և համաշխարհային հեղինակների բարձրարժեք ստեղծագործութ-յունների բեմականացում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բնակչությանն ազգային թատերարվեստի լավագույն նմուշների ներկայացում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, թատրոնների խաղացանկերի համալրում՝ յուրաքանչյուր թատերաշրջանի ընթացքում 10 նոր և վերականգնված ներկայացմամբ, ստեղծագործական կազմերի համալրում, ազգային թատերարվեստի լավագույն նմուշների ներկայացում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, ներկայացումների որակի բարձրացում, համապատասխան բեմերի, լուսային և ձայնային տեխնիկայի վերազինման աշխատանքների իրականացում, մասնակցություն հանրապետական և միջազգային փառատոներին:				
Համագործակցություն	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Բնակչության լայն զանգվածի համար դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում	Բնակչության լայն զանգվածի համար դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում	Բնակչության լայն զանգվածի համար դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում	Բնակչության լայն զանգվածի համար դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում	Բնակչության լայն զանգվածի համար դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր				

«Կենդանաբանական այգու ցուցադրություններ»

Ծրագրի նպատակը	Վայրի կենդանիների պահպանում, վերացող կենդանիների բազմացում և ցուցադրում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է Երևանի կենդանաբանական այգում վայրի կենդանիների պահպանում, Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացում ու ցուցադրում:Այգում աշխատանքներ են տարվում կենդանիների բնական աճի ավելացման, նոր կենդանիների ձեռքբերման և փոխանակման միջոցով նոր տեսականիով ապահովելու նպատակով: Այգին նաև զբոսանքի և ժամանցի յուրատեսակ վայր է, որը հնարավորություն է ընձեռում այցելուներին ծանոթանալու վայրի բնաշխարհին, իրականացնում է մշակութային-լուսավորչական գործառույթ՝այցելուներին տալիս է ինչպես բնապահպանական դաստիարակություն, այնպես էլ ձևավորում է շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար և մարդասիրական վերաբերմունք:				
Համագործակցություն	ՀՀ շրջակա նախարարություն, արտերկրի կենդանաբանական այգիներ, միջազգային շահագրգիռ կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ:				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Վայրի կենդանիների պահպանում, վերացող կենդանիների բազմացում և ցուցադրում	Վայրի կենդանիների պահպանում, վերացող կենդանիների բազմացում և ցուցադրում	Վայրի կենդանիների պահպանում, վերացող կենդանիների բազմացում և ցուցադրում	Վայրի կենդանիների պահպանում, վերացող կենդանիների բազմացում և ցուցադրում	Վայրի կենդանիներ ի պահպանում, վերացող կենդանիներ ի բազմացում և ցուցադրում
Ծրագրի հիմնական շահառուները	Այցելուներ և զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր				

«Կենդանաբանական այգու հիմնանորոգման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Ժամանակակից չափանիշներին համապատասխան այգու հիմնանորոգում և վերակառուցում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Տարիների ընթացքում իրականացվել և շարունակվում է իրականացվել կենդանաբանական այգու վերակառուցման ծրագիրը՝ վերակառուցվել է խոշոր կատվազգիների ազատավանդակը, կառուցվել է լեմուրների կղզին, իրականացվել է լճակի և կղզու վերանորոգում, կառուցվել է ներառական խաղահրապարակը, տոմսարկղը և կենդանաբուծական կլինիկան, վերանորոգվել են ջրագծերը և էլեկտրական մալուխները, իրականացվել է այգու տարածքում սիզամարգերի տեղադրում: Նախատեսվում է այգու արդիականացման գործընթացի շարունակություն, նոր ազատավանդակների կառուցում և տարածքի ընդլայնում, առկա ջրային ռեսուրսների վերամշակման և վերօգտագործման կենտրոնի ստեղծում, կենտրոնացված ջեռուցման համակարգի ներդրում, կերախոհանոցի կառուցում, այգու սահմանագծով պարսպապատում:
Համագործակցություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, հասարակական կազմակերպություններ, միջազգային շահագրգիռ կազմակերպություններ
Ծրագրի հիմնական	Այցելուներ և զբոսաշրջիկներ

շահառուները	
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր

«Երաժշտարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպում»

Ծրագրի նպատակը	Երաժշտարվեստի բնագավառում հասարակության հոգևոր պահանջների ձևավորում ու բավարարում, ազգային երաժշտական կատարողական արվեստի պահպանում, տարածում և զարգացում, համերգային ծրագրերի կազմակերպում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է համերգային ծրագրերի կազմակերպում, օժտված երեխաների ստեղծագործական, կատարողական ձեռքբերումների, դեբյուտային ստեղծագործական աշխատանքների ներկայացում, միջոցառումների և մրցույթների, այդ թվում՝ համաքաղաքային, հանրապետական, միջազգային մրցույթների, փառատոների կազմակերպում և միջազգային մրցույթներին, փառատոներին մասնակցության ապահովում:				
Համագործակցություն	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Ժամանակակից արվեստի բնագավառում հասարակության հոգևոր պահանջների ձևավորում ու բավարարում	Ժամանակակից արվեստի բնագավառում հասարակության հոգևոր պահանջների ձևավորում ու բավարարում	Ժամանակակից արվեստի բնագավառում հասարակության հոգևոր պահանջների ձևավորում ու բավարարում	Ժամանակակից արվեստի բնագավառում հասարակության հոգևոր պահանջների ձևավորում ու բավարարում	Ժամանակակից արվեստի բնագավառում հասարակության հոգևոր պահանջների ձևավորում ու բավարարում
Ծրագրի հիմնական շահառուները	Երեխաներ, երիտասարդների, Երևան քաղաքի բնակչություն				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր				

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 40 մարզական կազմակերպություններ և «Երևանի սպորտ կոմիտե» ՀՈԱԿ-ը, որոնք առաջնորդվում են «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի № 1428-Ն և 2015 թվականի հուլիսի 16-ի № 789-Ն որոշումներով: Մարզական 41 կազմակերպություններում աշխատում են 871 աշխատակիցներ: Գործում են 36 մարզաձևերի ուսումնամարզական խմբեր, որոնցում ընդգրկված են 10.015 երեխաներ:

Երևան համայնքի կողմից յուրաքանչյուր տարի իրականացվում են 63 առողջարարական, զանգվածային ու մարզական միջոցառումներ, որոնք միտված են ազգաբնակչության առողջ ապրելակերպի խթանմանն, Երևան քաղաքի ուժեղագույն մարզիկների բացահայտմանը և հավաքական թիմերի ձևավորմանը:

Երևան քաղաքում գործում են մարզական 4 միություններ, 12 մարզական ակումբներ, 16 լողավազաններ, ֆուլբոլի 11 մարզադաշտեր, թենիսի 24 կորտեր, 4 հրաձգարաններ, 5 ստադիոններ, 37 մարզադահլիճներ, 1 նետաձգարան, 1 աթլետիկական մանեժ, 1 հեծանվահրապարակ, թիավարության ու վինդսերֆինգի 3 ջրամբարներ, մարզամշակութային 2 կենտրոններ, հավաքական թիմերի ուսումնամարզական 1 կենտրոն, 1 ձիարշավարան, 137 փոքր դաշտեր և տարբեր գերատեսչական ենթակայության 60 մարզադպրոցներ: Երևան համայնքի ենթակայությամբ գործում են 40 մարզադպրոցներ: Յուրաքանչյուր տարի անցկացվում են 40 մարզաձևերի Երևան քաղաքի առաջնություններ, առողջարարական, հանրային, Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար 8 մարզաձևերից կազմված բակային փառատոն և ըմբշամարտի միջազգային մրցաշար:

2016 թվականից սկսած Երևանի քաղաքապետարանն իրականացնում է արտադպրոցական /մարզական/ կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման և շենք շինությունների նորոգման ծրագրեր:

41 մարզական կազմակերպություններից միայն երկուսն ունեն թեքահարթակներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար:

Հիմնախնդիրներ

1. *Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի զարգացման, մասսայականացման, բնակության և հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար համապատասխան պայմանների ստեղծման, առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման անհրաժեշտություն:*
2. *Ազգաբնակչության լայն զանգվածների համար մարզական ակումբներից, մարզաբազաներից՝ մասնավորապես աթլետիկական վազքուղիներից, լողավազաններից ու մարզադահլիճներից օգտվելու մատչելիության ապահովում:*
3. *Պետական, համայնքային, հասարակական ու մասնավոր մարզական կազմակերպությունների փոխգործակցության արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն:*
4. *Տարածաշրջանային և միջազգային մարզական շարժումների հետ համագործակցության հաստատման և ընդլայնման անհրաժեշտություն:*
5. *Հաշմանդամություն ունեցող մանուկների և պատանիների համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծման անհրաժեշտություն:*

Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Երիտասարդության հարցերի ոլորտի միակ իրավական նորմատիվային փաստաթուղթը երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգն է, որը

սահմանում է երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտները, քաղաքականության սկզբունքները, իրականացման նպատակներն ու հիմնական ուղղությունները: Մայրաքաղաքի երիտասարդական կյանքի զարգացման գործում ակտիվ մասնակցություն ունեն հասարակական կազմակերպությունները, բուհերի ուսանողական խորհուրդները:

Հիմնախնդիրներ

1. *Մայրաքաղաքի երիտասարդների սոցիալ-տնտեսական գործունեության, զբաղվածության ապահովմանն ուղղված միջոցառումների անցկացման անհրաժեշտություն:*
2. *Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խրախուսման անհրաժեշտություն:*
3. *Համապատասխան ընկերությունների համագործակցությամբ՝ Երևանի և Սփյուռքի դպրոցների միջև կկազմակերպվի հեռուստակամուրջ՝ հայրենագիտության դասերի կազմակերպման, ինչպես նաև միջմշակութային կապերի զարգացման նպատակով:*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

«Արտադպրոցական դաստիարակություն»

Ծրագրի նպատակը	Առողջ ապրելակերպի արմատավորում ու ներդաշնակ ֆիզիկական զարգացման իրականացում, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ ֆիզիկապես առողջ սերնդի դաստիարակում, ընտրված մասնագիտությունների գծով ազգային ու համաշխարհային մարզական փորձի փոխանցումը մարզվողներին ու նրանց մարզական ընդունակությունների կատարելագործում, ուսումնամարզական գործընթացում ընդգրկված մարզիկ մարզուհիների նախապատրաստումը համապատասխան միջին ու բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելուն, ֆիզկուլտուրային առողջարարական ու մարզական մասնագիտական կրթության և դաստիարակության ընդունված ձևերի իրականացում, Երևան քաղաքի ու Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի համար բարձրակարգ մարզիկների նախապատրաստում, հանրակրթական դպրոցների հետ սերտ կապի հաստատում և արտադասարանական աշխատանքներին ու ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներին օժանդակում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Արտադպրոցական դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի սերմանում, Երևանի ու Հայաստանի հավաքական թիմերի համալրում բարձրակարգ մարզիկներով:
Համագործակցություն	ՀՀ այլ մարզերի համապատասխան ստորաբաժանումների, հասարակական կազմակերպությունների /ֆեդերացիաներ/, լիազոր մարմնի /ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն/, Երևանի քույր քաղաքների հետ
Ծրագրի հիմնական շահառուները	Պատանի մարզիկներ /երեխաներ/
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր

«Սպորտային միջոցառումների կազմակերպում»

Ծրագրի նպատակը	Առողջ ապրելակերպի արմատավորում ու ներդաշնակ ֆիզիկական զարգացման իրականացում, մայրաքաղա-քում տարբեր մարզաձևերի մասսայականացում և

	զարգացում, պատանեկան թիմերի սպորտային վարպետության բարձրացում, ուժեղագույն թիմերի և մարզիկների ի հայտ բերում՝ ՀՀ առաջնություններին մասնակցելու և Երևանի ու հանրապետության հավաքական թիմերը համալրելու նպատակով, հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրում հասարակությանը սպորտի միջոցով
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համաքաղաքային զանգվածային առողջարարական մարզական ու երիտասարդական 64 միջոցառումների կազմակերպում, 35 մարզաձևերից Երևան քաղաքի առաջնությունների անցկացում, Երևան քաղաքի հավաքական թիմերի ձևավորում ու հանրապետական և միջազգային մրցումներին ու մրցաշարերին հավաքականների մասնակցության ապահովում
Համագործակցություն	ՀՀ այլ մարզերի համապատասխան ստորաբաժա-նումների, հասարակական կազմակերպությունների /ֆեդերացիաներ/, լիազոր մարմնի /ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն/, Երևանի քույր քաղաքների հետ
Ծրագրի հիմնական շահառուները	Տարբեր տարիքային խմբերի մարզիկներ, հաշմանդամություն ունեցող անձինք
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր

«Արտադպրոցական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերում»

Ծրագրի նպատակը	Մարզական կազմակերպությունների աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ գույքով ապահովում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մարզական կազմակերպությունները ժամանակակից պահանջներին համապատասխան գույքով և մարզագույքով ապահովում
Համագործակցություն	ՀՀ-ում գրանցված շահագրգիռ կազմակերպություններ
Ծրագրի հիմնական շահառուները	Մարզական կազմակերպություններ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր

«Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ»

Ծրագրի նպատակը	Հասարակական կյանքին երիտասարդների մասնակցության խթանում, իրավաքաղաքական իրազեկվածության բարձրացում, աշխատանքային, սոցիալական խնդիրների ուսումնասիրում, առաջարկությունների, ծրագրերի քննարկում: Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի, հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության, համամարդկային և ազգային մշակույթի նկատմամբ բարձրաճաշակ պատկերացումների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքներ: Արդյունավետ համագործակցություն մայրաքաղաքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների, հաշմանդամություն ունեցող երիտասարդներին աջակցող կազմակերպությունների, ուսանողական խորհուրդների, սփյուռքի և հանրապետության մարզերի երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային երիտասարդական կառույցների հետ

Ծրագրի համառոտ նկարագրություն	Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի, համամարդկային և ազգային մշակույթի նկատմամբ գիտակցության բարձրացում, հայրենասիրության ձևավորում, ակտիվ մասնակցություն հասարակական կյանքին
Համագործակցություն	Հասարակական կազմակերպությունների, Բուհերի ուսանողական խորհուրդների, երիտասարդ կամավորականների, միջազգային կառույցների, մարզային կազմակերպությունների, քույր քաղաքների երիտասարդական կառույցների հետ
Ծրագրի հիմնական շահառուները	Երիտասարդներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականաց-ման ժամանակացույց	2019թ. հունվար մինչև 2023թ. դեկտեմբեր

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտն ակտիվ բարեփոխումների ենթարկվող ոլորտ է, վերջին տարիներին ընդունվել են նոր իրավական ակտեր, որոշներն էլ փոփոխությունների ընթացքի մեջ են, որոնք ուղղված են ոլորտում առկա խնդիրների կարգավորմանը, երեխաների իրավունքների իրացման նոր հնարավորությունների ստեղծմանը: Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով նշված իրավական ակտերը, իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բացահայտման, խնդիրների գնահատման և դրանց լուծմանն ուղղված գործառույթներ՝ նախապատվություն տալով երեխայի լավագույն շահերի գերակայությանը և ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանը:

ՀՀ կառավարության 13.06.2019թ. ի. 751-Ն որոշմամբ հաստատված խնամատարության նոր կարգը հնարավորությունների լայն շրջանակ է ստեղծում հաստատություններում խնամվող երեխաների այլընտրանքային խնամքի կազմակերպման համար: Ներդրված մասնագիտացված խնամատարության համակարգը հնարավորություն է ստեղծում հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքը ընտանիքներում կազմակերպելու համար: Ճգնաժամային և արձակուրդային խնամատար ինստիտուտի միջոցով արագ արձագանքման մեխանիզմ է ներդրվում խնամքի հաստատություն երեխայի մուտքը կանխարգելելու, ինչպես նաև փաստացի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորման ապահովման նպատակով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքով ամրագրված նոր պահանջների համաձայն իրականացվում է վերահսկողություն Երևան քաղաքում որդեգրողների, խնամատար ծնողների, խնամակալների կամ հոգաբարձուների ընտանիքներում դաստիարակության հանձնված երեխաների խնամքի նկատմամբ, ինչը նպաստում է երեխայի իրավունքների ոտնահարման կանխարգելմանը:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության» ՀՀ օրենքով սահմանված երաշխիքներ տալու և արտոնություններից օգտվելու նպատակով 2006թ.-ից իրականացվում է երեխաների հաշվառման գործընթաց: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներից ստացված տեղեկատվության հիման վրա իրականացվում է նշված երեխաների տարածքային հաշվառում և ներկայացնում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու նպատակով:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում հաշտեցման վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո Երևանի քաղաքապետարանն իր լիազորությունների շրջանակներում աջակցում է ընտանիքում բռնության դեմ պայքարին և այդ բնագավառում համագործակցում է ոստիկանության, սոցիալական աջակցության տարածքային բաժինների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների և շահագրգիռ այլ կառույցների հետ:

ՀՀ ոստիկանության, վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ համատեղ պարբերաբար իրականացվում են շրջայցեր փաստացի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, կրթությունից չարամտորեն խուսափող, վարքային խնդիրներ ունեցող, անօթևան, մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հայտնաբերման և նրանց տեղավորման նպատակով:

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքների արդյունավետության բարձրացման, երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության, հատուկ դեպքերի քննարկման նպատակով բաժինը պարբերաբար մասնակցում է հանձնաժողովի նիստերին, կազմակերպում է հանդիպում-քննարկումներ, ըստ անհրաժեշտության, տալիս է իրավական պարզաբանումներ և մեթոդական աջակցություն:

Հիմնախնդիրներ

1. *Խնամատարության նոր տեսակների վերաբերյալ հանրային իրազեկում և խրախուսում, առանց ծնողական խնամքի մնացած, հաշմադամություն ունեցող երեխաներին խնամատար ընտանիքներ տեղավորման ապահովում:*

2. Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համատեքստում նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների համար ծնողավարման հմտությունների ուսուցման ապահովում:

3. Երևան քաղաքի վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների համար պարբերաբար վերապատրաստումների իրականացում, շահագրգիռ կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության մեխանիզմների մշակում:

4. Առանց ծնողական խնամքի մնացած, ծննդյան վկայական չունեցող, հակասոցիալական վարք դրսևորող, մուրացիկությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության, կրթական համակարգում ընդգրկման և կրթության շարունակականության ապահովման, փաստաթղթերի ձեռքբերմանն ուղղված բազմամասնագիտական ծառայությունների տրամադրման անհրաժեշտություն:

5. Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանության ապահովում, նման իրավիճակներում նրանց հայտնվելու կանխարգելում:

6. Սոցիալական տարբեր խմբերի երեխաներին և նրանց ընտանիքներին քաղաքային կրթամշակութային միջոցառումներին ընդգրկման, հասարակության մեջ ինտեգրման ապահովման անհրաժեշտություն:

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

«Ծնողավարման հմտությունների ուսուցում»

Ծրագրի նպատակը	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ընտանիքում ապրելու իրավունքի իրացում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Աջակցության կենտրոններում, խնամակալական ընտանիքներում գտնվող երեխաների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համար «Ծնողավարման հմտություններ» թեմայով սեմինարիների կազմակերպում և անցկացում:
Համագործակցություն	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, աջակցության կենտրոնների, համապատասխան մասնագետների հետ:
Ծրագրի հիմնական շահառուները	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ծնողներ կամ օրինական ներկայացուցիչներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2020թ. 1-ին եռամսյակ, մինչև մարտի 30 /2021-2023 դեռևս նախատեսված չէ/

«Երևան քաղաքի վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների վերապատրաստում»

Ծրագրի նպատակը	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքների արդյունավետության բարձրացում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների համար պարբերաբար վերապատրաստումների իրականացում:
Համագործակցություն	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, համապատասխան մասնագետների հետ:

Ծրագրի հիմնական շահառուները	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2020թ. 3-րդ եռամսյակ, մինչև սեպտեմբերի 30 /2021-2023 դեռևս նախատեսված չէ/

«Երեխաների ընդգրկում քաղաքային կրթամշակութային միջոցառումներին»

Ծրագրի նպատակը	Սոցիալական տարբեր խմբերի երեխաներին քաղաքային կրթամշակութային միջոցառումներին ընդգրկում, հասարակության մեջ ինտեգրում, ազգային արվեստին և մշակույթին ծանոթացում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Սոցիալական տարբեր խմբերի երեխաների թանգարաններ, թատրոններ այցելության, քաղաքային city tour-ի կազմակերպում, Երեխաների պաշտպանության օրվան, ամանորին նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպում:
Համագործակցություն	Երևանի մանկատներ, աջակցության կենտրոններ, հատուկ դպրոցներ, թատրոններ, թանգարաններ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի մանկատների, աջակցության կենտրոնների, հատուկ դպրոցների երեխաներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2020թ. /2021-2023 դեռևս նախատեսված չէ/

«Խնամատար ինստիտուտի կայացում և խրախուսում»

Ծրագրի նպատակը	Խնամատար ընտանիքների թվի ավելացում, որպես կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների հաստատություններում խնամքի կազմակերպման այլընտրանք, հաստատություններում երեխաների թվի նվազում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Խնամատարության նոր տեսակների վերաբերյալ իրազեկում, Երևան քաղաքում բնակվող խնամատար ընտանիքների խրախուսում, երեխաների թանգարաններ այցելության կազմակերպում, ընտանիքների հետ առկա խնդիրների քննարկում և լուծման տարբերակների մշակում
Համագործակցություն	Ընտանիքում առաջ եկած խնդիրների տեսակից ելնելով համապատասխան կառույցներ, թանգարաններ
Ծրագրի հիմնական շահառուները	Խնամատար ընտանիքներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2020թ. 2-րդ եռամսյակ, մինչև մայիսի 30 /2021-2023 դեռևս նախատեսված չէ/

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Երևան քաղաքում առկա են շուրջ 1100 փողոցներ՝ ընդհանուր 955 կմ երկարությամբ:

Փողոցների և հրապարակների ընդհանուր մակերեսը կազմում է 15 201 300 քմ, իսկ մայթերի, բակային տարածքների և կամուրջների հետ միասին՝ մոտ 24 348 648 քմ:

Հաշվի առնելով, որ տարեկան մայրաքաղաք են ներմուծվում մեծ քանակությամբ ավտոմեքենաներ և փողոցներում երթևեկում են ծանր տրանսպորտային միջոցներ, որից մաշվում և քայքայվում է փողոցների ասֆալտբետոնե ծածկը, յուրաքանչյուր տարի անհրաժեշտություն է առաջանում իրականացնել փողոցների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև կառուցել նոր փողոցներ, անցուղիներ և տրանսպորտային հանգույցներ:

Մայրաքաղաքը առավել բարեկեցիկ և հարմարավետ դարձնելու նպատակով վերանորոգման աշխատանքներ են կատարվում նաև բակային տարածքներում:

Իրականացվում են մայթերի, եզրաքարերի և հենապատերի վերանորոգման աշխատանքներ՝ վերանորոգվում կամ փոխարինվում են նորով մայթերի բետոնե սալիկները, բետոնե և բազալտե եզրաքարերը, վերականգնվում են հենապատերը: Ներկայումս Երևան քաղաքում հաշվառված է հենապատերի վերանորոգման և հիմնանորոգման կարիք ունեցող, ինչպես նաև նոր հենապատերի կառուցման անհրաժեշտություն ունեցող մոտ 100 հասցե:

Որպես մայրաքաղաքի այցեքարտ կարևորվում են կամուրջների և կամրջային կառույցների արտաքին տեսքն ու հուսալիությունը, շենքերի ճակատային հատվածների պատճաշ վիճակը, որի ապահովման համար կատարվում են կամուրջների պահպանման, ընթացիկ նորոգման, շենքերի ճակատային պատերի նորոգման, լվացման և վթարային շքապատշգամբների վերանորոգման աշխատանքներ:

Գերակա խնդիր է հանդիսանում նաև մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ հարմարավետ պայմաններ ստեղծելը, որի նպատակով անհրաժեշտ է մեծացնել նոր հանգստի գոտիների, այգիների և պուրակների ստեղծման, բակային տարածքների և խաղահրապարակների կահավորման աշխատանքների ծավալները:

Ոլորտի գերակայություններից է կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական և առողջապահական հաստատություններում հիմնանորոգման աշխատանքների, էներգախնայողության ապահովումը:

Մայրաքաղաքում շահագործվում են թվով 37 ջրային կառույցներ՝ շատրվաններ, ջրավազաններ, ինչպես նաև 2200 ցայտաղբյուրներ, որոնք բնորոշ են մայրաքաղաքին և յուրահատուկ տեսք ու թարմություն են տալիս: Դրանց շահագործման նպատակով Երևանի քաղաքապետարանի ծրագրերով յուրաքանչյուր տարի նախատեսվում են պահպանման և ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Մայրաքաղաքում բնակիչների և հյուրերի անվտանգ և հարմարավետ տեղաշարժը ապահովելու նպատակով ըստ անհրաժեշտության կառուցվում են հետիոտնային անցումներ, վերանորոգվում և շահագործման բարենպաստ պայմաններ են ստեղծվում առկա անցումներում:

Նոր անցումների ստեղծման վայրերն ընտրվում են ուսումնասիրության և մասնագիտական քննարկումների արդյունքում, հաշվի առնելով նաև քաղաքացիների առաջարկները:

Երևան քաղաքում առկա է թվով 66 անցում՝ 27 վերգետնյա և 39 ստորգետնյա, որից մեծ մասը բավարար վիճակում են, մի շարք գետնանցումներում, որտեղ անհրաժեշտ են վերանորոգման աշխատանքներ քաղաքապետարանի ծրագրերով կատարվում են երեսապատման, աստիճանների նորոգման, հարդարման, ջրամեկուսացման, ջրահեռացման

և լուսավորության աշխատանքներ: Վերանորոգման աշխատանքներ են իրականացվում նաև անցումներում գործող վարձակալող սուբյեկտների կողմից:

Երևանի զարգացման ծրագրերով և մասնավոր հատվածի հետ համագործակցության արդյունքում հենաշարժողական խնդիրներ և սահմանափակ կարողություններ ունեցող քաղաքացիների համար մատչելի պայմաններ ապահովելու, նրանց տեղաշարժը դյուրին և ապահով դարձնելու նպատակով մայրաքաղաքի փողոցների խաչմերուկներում, բանուկ մասերում, հասարակական վայրերում և հանգստի գոտիներում կառուցվում են թեքահարթակներ: Թեքահարթակի կառուցման անհրաժեշտությունը որպես պարտադիր պայման նշվում է բազմաբնակարան, բազմաֆունկցիոնալ և հասարակական տիպի շենքերի նախագծային աշխատանքների համար տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքներում, իսկ օբյեկտների շինարարական աշխատանքների ավարտից հետո, հանձնաժողովի կողմից կազմված հանձնման-ընդունման, հետագայում նաև փաստագրման ակտերը հաստատվում են միայն թեքահարթակների առկայության դեպքում: Թեքահարթակների կառուցման տեղերը որոշելու նպատակով քննարկումներ են անցկացվում հաշմանդամություն ունեցող անձանց շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ:

Մայրաքաղաքի փողոցների մի շարք հասցեներում տեղադրվել են հատուկ դեղին գույնի անհարթություններով, նախազգուշացնող բետոնե սալիկներ:

Երևանի քաղաքապետարանն իրականացնում է ՀՀ կառավարության 20.04.2002թ. h.438 որոշման համաձայն Երևանի սեփականություն հանդիսացող 401 հուշարձանների պահպանումը, սպասարկումն ու պատվանդանների նորոգման աշխատանքները:

Երևանի քաղաքապետարանի տարեկան ծրագրերի շրջանակներում պարբերաբար կատարվում են հուշարձանների լվացման, պատվանդանների վերանորոգման և տարածքների բարեկարգման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ

1. Քաղաքային նշանակության մայրուղիների պատշաճ որակի ապահովում,
2. Երևան քաղաքի փողոցների բարեկարգում, հիմնանորոգում,
3. Հուսալի և ժամանակակից ճանապարհների կառուցում,
4. Հողային ծածկույթով (գրունտային) ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում,
5. Բակային տարածքների բարեկարգում,
6. Մայթերի բարեկարգում,
7. Քանդված և վնասված հենապատերի բացառում, հիմնանորոգում, անվտանգության ապահովում, նոր հենապատերի կառուցում,
8. Հետիոտնի առավել մեծ կուտակումներ առաջացնող խաչմերուկներում ստորգետնյա և վերգետնյա հետիոտնային անցումների կառուցում,
9. Կամրջայինկառույցների հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, շահագործման բարելավում,
10. Առկա հանգստիգոտիների բարեկարգում և նորերի ստեղծում,
11. Շենքերի ճակատային հատվածների մաքրում, լվացում, ներկում,
12. Վթարային պատշգամբների նորոգում,
13. Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական և առողջապահական հաստատությունների շենքերում վերանորոգման աշխատանքների իրականացում:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

1. Նախատեսվում է վերագործարկել բոլոր չգործող շատրվաններն ու նախաձեռնել նորերի կառուցումը: Կիրականացվի ջրային կառույցների շահագործման և պահպանման աշխատանքներ Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում առկա 37 ջրային կառույցներում: Շահագործվում և սպասարկվում են մայրաքաղաքի շատրվանները, ջրավազանները, Երևանյան ջրամբարը, Հրազդան

գետի վրա բարաժները, Գետառ, Ջրվեժ, Ողջաբերդ գետերը: Միաժամանակ կգույքագրվեն առկա հանգստի գոտիներում շատրվանների կառուցման հնարավորությունները և կկառուցվեն նորերը: Կիրականացվի նաև ցայտաղբյուրների վերանորոգում և նորերի կառուցում:

2. Նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի փողոցներում աղբամանների հարմարեցված հարթակների կառուցման աշխատանքներ՝ փողոցների պատշաճ վիճակի, աղբահանության ծառայության մատուցման, բնակչության և փողոցային երթևեկության անվտանգության ապահովման նպատակով: Կկառուցվեն մայրաքաղաքի փողոցների մայթերին տեղադրված և քաղաքացիների ազատ տեղաշարժին, ինչպես նաև երթևեկությանը խոչընդոտող աղբամանների տեղադրման համար հարմարեցված հարթակներ:

«Ասֆալտբետոնբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում»

Ծրագրի նպատակը	-Հուսալի և ժամանակակից ճանապարհներ -Ավտոմեքենաների խցանումների բացառում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երևան քաղաքում առկա են 1000-ից ավելի փողոցներ՝ ընդհանուր 955 կմ երկարությամբ, իսկ փողոցների և հրապարակների ընդհանուր մակերեսը կազմում է 15200 հազ.քմ: Հաշվի առնելով, որ տարեկան մայրաքաղաք են ներմուծվում մեծ քանակությամբ ավտոմեքենաներ և փողոցներում երթևեկում են մինչև 60տ ծանրություն ունեցող տրանսպորտային միջոցներ, որից մաշվում և քայքայվում է փողոցների ասֆալտբետոնե ծածկը, յուրաքանչյուր տարի անհրաժեշտություն է առաջանում իրականացնել փողոցների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև կառուցել նոր փողոցներ: Մայրաքաղաքը առավել բարեկեցիկ և հարմարավետ դարձնելու նպատակով վերանորոգման աշխատանքներ են կատարվում նաև բակային տարածքներում: Բացի այդ իրականացվում են մայրաքաղաք մտնող մայրուղիների, հրապարակների և վերանորոգման կարիք ունեցող այլ տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ:				
Համագործակցություն	----				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	753000քմ	760500քմ	790600քմ	830000քմ	871500քմ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ և հյուրեր				
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգում (գրունտային)»

Ծրագրի նպատակը	Երկրորդական փողոցների պատշաճ վիճակի ապահովում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Հողային ծածկույթով (գրունտային) ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում				
Համագործակցություն	----				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	5000քմ	6000քմ	7000քմ	8000քմ	9000քմ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Մայթերի վերանորոգում և բարեկարգում»
(սալիկապատում և եզրաքարերի վերանորոգում)

Ծրագրի նպատակը	Փողոցների պատշաճ վիճակի և արտաքին տեսքի ապահովում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Հարմարավետություն և անվտանգություն ապահովող շինարարական աշատանքների իրականացումից բացի բարեկարգման ծրագրերը ենթադրում են նաև մայրաքաղաքին հարիր արտաքին տեսքի ապահովում: Կատարվում են մայթերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես. վերանորոգվում կամ փոխարինվում են նորերով մայթերի ձևավոր բետոնե, բազալտե և տրավերտինե սալիկները, վերանորոգվում և տեղադրվում են նոր բետոնե և բազալտե եզրաքարեր:				
Համագործակցություն	----				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
Մայթերի սալիկների վերանորոգում	10900քմ	11000 քմ	12000 քմ	13000 քմ	14000 քմ
Եզրաքարերիվերանորոգում	3500գծմ	5000գծմ	6000գծմ	7000գծմ	8000գծմ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ և հյուրեր				
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Հենապատերի վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Փողոցների պատշաճ վիճակի և անվտանգության ապահովում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երևան քաղաքում հաշվառված է հենապատերի վերանորոգման և հիմնանորոգման կարիք ունեցող, ինչպես նաև նոր հենապատերի կառուցման անհրաժեշտություն ունեցող մոտ 50 հասցե: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բացառել քանդված և վնասված հենապատերի առկայությունը մայրաքաղաքում, կատարել քայքայված հենապատերի ընթացիկ նորոգման աշխատանքներ և անհրաժեշտության դեպքում՝ հիմնանորոգման և նոր հենապատերի կառուցման աշխատանքներ:				
Համագործակցություն	----				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	20 հատ	20 հատ	25 հատ	30 հատ	35 հատ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները				
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Թեքահարթակների կառուցում»

Ծրագրի նպատակը	Հենաշարժողական խնդիրներ, սահմանափակ կարողություններ ունեցող և սայլակավոր քաղաքացիների համար մատչելի պայմանների ապահովում
Ծրագրի համառոտ	Երևանի զարգացման ծրագրերով և մասնավոր հատվածի հետ

նկարագրություն	համագործակցության արդյունքում հենաշարժողական խնդիրներ և սահմանափակ կարողություններ ունեցող քաղաքացիների համար մատչելի պայմաններ ապահովելու, նրանց տեղաշարժը դյուրին և ապահով դարձնելու նպատակով մայրաքաղաքի փողոցների խաչմերուկներում, բանուկ մասերում, հասարակական վայրերում և հանգստի գոտիներում կառուցվում են թեքահարթակներ: Թեքահարթակի կառուցման անհրաժեշտությունը որպես պարտադիր պայման նշվում է բազմաբնակարան, բազմաֆունկցիոնալ և հասարակական տիպի շենքերի նախագծային աշխատանքների համար տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքներում, իսկ օբյեկտների շինարարական աշխատանքների ավարտից հետո, հանձնաժողովի կողմից կազմված հանձնման-ընդունման, հետագայում նաև փաստագրման ակտերը հաստատվում են միայն թեքահարթակների առկայության դեպքում: Թեքահարթակների կառուցման տեղերը որոշելու նպատակով քննարկումներ են անցկացվում հաշմանդամություն ունեցող անձանց շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ: Առ այսօր մայրաքաղաքում կառուցվել է շուրջ 2564 թեքահարթակ, որից 2174-ը կառուցվել է Երևանի քաղաքապետարանի ծրագրերով, իսկ 390-ը՝ մասնավոր ընկերությունների կողմից: Մայրաքաղաքի փողոցների մի շարք հասցեներում տեղադրվել են նախազգուշացնող բետոնե սալիկներ:
Համագործակցություն	Համագործակցություն մասնավոր հատվածի և հաշմանդամություն ունեցող քաղաքացիների շահերը պաշտպանող մի քանի հասարակական կազմակերպությունների հետ:

Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	250 հատ	150 հատ	50 հատ	-	-

Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

«Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում և պահպանում»

Ծրագրի նպատակը	Մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ հարմարավետ պայմաններ ստեղծելը հանդիսանում է գերակա խնդիր, որի լուծման նպատակով իրականացվում են նոր հանգստի գոտիների, այգիների, պուրակների ստեղծման, բակային տարածքների ու խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման աշխատանքներ:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երևանի համաչափ զարգացման նպատակով նախատեսվում է իրականացնել նոր հանգստի գոտիների ստեղծման, առկա զբոսայգիների վերակառուցման և բարեկարգման աշխատանքներ: Նախատեսվում է գործող զբոսայգիների բարեկարգում և տարածքների ընդարձակում, վերակառուցում և ժամանակակից պահանջներին համապատասխանող կանաչապատման աշխատանքներ:
Համագործակցություն	----

Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	1 հատ	2 հատ	2 հատ	2 հատ	2 հատ

Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

«Մինի - ֆուտբոլի դաշտերի կառուցում»

Ծրագրի նպատակը	Բակերի բարեկարգում, երիտասարդ սերնդի ակտիվ հանգստի կազմակերպում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ակտիվ հանգստի կազմակերպման և առողջ ապրելակերպի խթանման նպատակով մեծ ուշադրություն է հատկացվում բակերի բարեկարգման աշխատանքներին, որում ներառված են նաև մինի ֆուտբոլի դաշտերի կառուցումը: Այժմ մայրաքաղաքում շահագործվում են շուրջ 132 մինի ֆուտբոլի դաշտեր: Վարչական շրջաններից ստացվել են ընդհանուր թվով 84 դաշտերի արհեստական խոտածածկի վերանորոգման առաջարկներ: Բակային տարածքներում արհեստական խոտածածկով մինի-ֆուտբոլի դաշտերի կառուցման ծրագիրը նախատեսվում է շարունակել:				
Համագործակցություն	----				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	-	10 հատ	10 հատ	5 հատ	5 հատ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները				
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Բազմաբնակարան շենքերի բարեկարգման աշխատանքներ»

Ծրագրի նպատակը	Բազմաբնակարան շենքերի պատշաճ վիճակի և բնակիչների անվտանգության ապահովում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բազմաբնակարան շենքերի շքապատշգամբների վերանորոգման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների շնորհիվ ապահովվում է մայրաքաղաքի պատշաճ տեսքն ու բնակիչների անվտանգությունը: Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի պատշգամբների քայքայված հատվածների նորոգման, վերականգնման և բազքիքների ներկման աշխատանքներ: Երևանի դյուրին տեսքի ապահովմանն են ուղղված նաև շենքերի ճակատային պատերի ընթացիկ նորոգման, մաքրման և լվացման աշխատանքները:				
Համագործակցություն	----				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
Ֆասադների վերանորոգում	5 հատ	10	10 հատ	10 հատ	10 հատ
Պատշգամբների վերանորոգում	150 հատ	150 հատ	150 հատ	150 հատ	150 հատ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական և մարզական հաստատությունների հիմնանորոգում»

Ծրագրի նպատակը	Նախադպրոցական, արտադպրոցական և մարզական հաստատություններում հիմնանորոգման, ջեռուցման ապահովման, տանիքների վերանորոգման աշխատանքների իրականացում և նպաստավոր պայմանների ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի շրջանակներում ըստ անհրաժեշտության իրականացվում են տանիքների, ճաշարանների, սանհանգույցների վերանորոգում, հին դռների և լուսամուտների փոխարինման, ներքին հարդարման աշխատանքներ, ջրագծերի, կոյուղագծերի,

	ջեռուցման և էլեկտրալուսավորության համակարգերի վերանորոգում:				
Համագործակցություն	----				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
Մանկապարտեզներ	21				
Արտադպրոցական, մարզական	-	1			
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակչություն				
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում»

Ծրագրի նպատակը	Առողջապահական հիմնարկների բարեկարգ վիճակի ապահովում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երևանի քաղաքապետարանի ծրագրերով կատարվում են Երևան համայնքի ենթակայության պոլիկլինիկաների ներքին վերանորոգման, ջեռուցման համակարգերի կառուցման, տանիքների և լուսամուտների փոխարինման աշխատանքներ:				
Համագործակցություն	----				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	6 հատ	8 հատ			
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները				
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Երևան քաղաքի ջրային կառույցների շահագործման և պահպանման ծառայություններ»

Ծրագրի նպատակը	Մայրաքաղաքի արտաքին տեսքի, հանգստի գոտիներում զովության ապահովում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Շահագործվում և սպասարկվում են մայրաքաղաքի շատրվանները, ջրավազանները, Երևանյան ջրամբարը, Հրազդան գետի վրա բարաժները, 25,5կմ երկարությամբ Գետառ, Ջրվեժ, Ողջաբերդ գետերը				
Համագործակցություն					
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	37 հատ	37 հատ	37 հատ	37 հատ	37 հատ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը				
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023 թթ., յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի				

«Երևան քաղաքի կամուրջների, ուղեանցերի, տրանսպորտային հանգույցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայություններ»

Ծրագրի նպատակը	Մայրաքաղաքի պատշաճ տեսքի, անխափան երթևեկության ապահովում, բնակչության տեղաշարժի անվտանգություն				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Կամուրջների և կամրջային կառույցների դեֆորմացիոն կարերի, ջրահեռացման խողովակների մաքրում, հենարանների և թռիչքային կառուցվածքների զննում, վնասվածքների դեպքում՝ վերանորոգում, բազրիքների, եզրաքարերի, լուսավորության սյուների և այլ էլեմենտների նորոգում, ներկում, երթևեկելի մասի և մայթերի նորոգում, մաքրում				
Համագործակցություն	-				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	40 հատ	40 հատ	40 հատ	40 հատ	40 հատ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը				
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023 թթ., յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի				

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պաշտպանության համակարգը կյանքի տարբեր փուլերում ապահովում է՝ սոցիալական ռիսկերի առաջացման կանխարգելումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց աջակցումը, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և աղետների հետևանքով առաջացած ռիսկերը հաղթահարելու միջոցառումների իրականացումը:

Երևան քաղաքն առանձնանում է սոցիալական խնդիրների լուծման ծավալով, հրատապությամբ, շահառուների առանձնահատկություններով, սոցիալական պաշտպանության մարմինների ու կազմակերպությունների բազմազանությամբ:

ՀՀ կառավարության 2019-2023թթ. ծրագիրը նոր առաջնահերթություններ է նախանշել սոցիալական պաշտպանության ոլորտում, որն ուղղված է քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավմանը, սոցիալական իրավունքների լիարժեք և արդյունավետ իրացմանը՝ հիմնված հավասար հնարավորությունների և աշխատանքի քաջալերման սկզբունքի վրա: Այս առաջնահերթությունների իրականացման համար Երևան քաղաքում անհրաժեշտ է ստեղծել երեխաների և սոցիալական պաշտպանության արդյունավետ կառավարման համակարգ և հստակ արտացոլել այն Երևանի զարգացման գերակայություններում թե՛ քաղաքականության, թե՛ իրականացման, թե՛ ֆինանսական միջոցների տրամադրման տեսանկյունից: Հաշվի առնելով ինտեգրված սոցիալական ծառայությունների բարեփոխումները, ապակենտրոնացմանն ուղղված գործընթացները, ինչպես նաև համայնքի սոցիալական աշխատողի ինստիտուտի կայացումը, անհրաժեշտ է վերանայել Երևան քաղաքի սոցիալական պաշտպանության համակարգը, ինչպես նաև հստակեցնել համայնքին վերապահված լիազորությունների տիրույթը, դարձնելով այն ավելի արդյունավետ, կարիքների վրա հիմնված և համահունչ սոցիալական պաշտպանության կառավարության նպատակներին:

Երևանի քաղաքապետարանի պատվերով ձևավորված փորձագիտական թիմի կողմից՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի ու Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունների աջակցությամբ, հետազոտություն իրականացվեց 2019թ. հուլիս-նոյեմբեր ամիսներին, որի նպատակն էր աջակցել Երևան քաղաքի երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում համակարգի բարեփոխումներին՝ առաջարկելով գործուն մեխանիզմներ ուղղված Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջաններում կառավարման կառուցվածքային անցնցում փոփոխություններին, տեղական մակարդակում նշված համակարգի արդյունավետության բարելավման, ինչպես նաև համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի կայացմանը: Հետազոտության բազմաշերտ ծածկույթը, ծավալը և համապարփակ մոտեցումներն աննախադեպ են Երևան քաղաքի համար՝ համայնքում համակարգային բարեփոխումների և սոցիալական պաշտպանության ոլորտի արդիականացման տեսանկյունից և հիմք են ծառայել Երևանի զարգացման ծրագրի սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնախնդիրների և ծրագրերի սահմանման համար:

Երևանի քաղաքապետարանը պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում իրականացնում է սոցիալական համալիր ծառայությունների կազմակերպումն ու իրականացումը, առանձնացված ստորաբաժանում հանդիսացող տարածքային մարմինների՝ սոցիալական աջակցության տարածքային բաժինների (ՍԱՏԲ) միջոցով: Հրատապ առաջնահերթություններից է համայնքում սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրումը և զարգացումը, ինչպես նաև սոցիալական աշխատողների կողմից կարիքների գնահատման հիման վրա՝ անհատական սոցիալական ծրագրերի կազմման և վարման արդյունքում տեղական սոցիալական ծրագրերի մշակումը և իրականացումը: Այսպիսով կարևորվում է համապատասխան գործիքակազմի, ֆինանսական, մոնիթորինգի և գնահատման մեխանիզմների ձևավորումը, որը ներկայումս

գրեթե բացակայում է: Այս գործընթացների համար նաև խիստ կարևոր է պետական մարմինների, Երևանի քաղաքապետարանի, միջազգային և հասարակական կազմակերպությունների ու մասնավոր հատվածի համագործակցությունը, ինչպես նաև ժամանակակից և արդյունավետ տեղեկատվական ու մարդկային ռեսուրսների կառավարման համակարգերի առկայությունը:

Այսպիսով սոցիալական պաշտպանության բարեփոխումները Երևան համայնքում օրակարգային են, որի շուտափույթ լուծումն ու սոցիալական ծառայությունների տրամադրման դերակատարների լիազորությունների հստակեցումը և տարանջատումը խիստ կարևոր են:

Հասարակության սոցիալական իրավիճակի բնութագիրը լավագույնս տրվում է հասարակության սոցիալական բևեռացվածության և աղքատության ցուցանիշների միջոցով, որոնք բազմաչափ երևույթներ լինելով, ի ցույց են դնում սոցիալական հիմնախնդիրների ամբողջ առանցքը:

Համաձայն ՀՀ ՎԿ-ի՝ Երևան համայնքում 2019թ հունվարի 1-ի դրությամբ բնակվում է 1.081.874 բնակիչ որից՝ տղամարդ՝ 499.686, կին՝ 582.188, երեխաներ՝ 232.877 (տղաները – 122.355, աղջիկները 110.522) իսկ կենսաթոշակառուների թիվը կազմում է 175.735:

Երևան քաղաքում աղքատության մակարդակը կազմում է 22.4%, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 1%: Երեխաներն ավելի խոցելի են և՛ ընդհանուր, և՛ ծայրահեղ աղքատության ռիսկերի նկատմամբ՝ համապատասխանաբար 26.9% և 1.7%: Հարկ է նշել նաև, որ հաշվի առնելով բազմաչափ աղքատությունը, ինչը հիմնված է զրկանքների առկայության վրա, օրինակ՝ բնակարանային պայմանների բացակայություն, որակյալ ծառայությունների անմատչելիություն կամ կրթության հնարավորությունների բացակայություն, ընտանիքները և երեխաները դառնում են ավելի խոցելի և պահանջում են թիրախավորված լուծումներ իրենց ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքն ապահովելու համար:

Աղքատության վրա ազդող գործոններն ուղղակի կապ ունեն աղքատության մակարդակի և տնային տնտեսությունում երեխաների թվի հետ՝ որքան շատ է երեխաների քանակը, այնքան բարձր է աղքատության մակարդակը և աղքատության ու ծայրաստիճան աղքատության մեջ հայտնվելու ռիսկը: Մշտական ուշադրության ներքո են կարիքավոր անչափահաս երեխաներ ունեցող, ինչպես նաև բազմազավակ ընտանիքները: Միայն ավելի քան 7000 ընտանիքներ, որոնք ունեն անչափահաս շուրջ 12.000 երեխաներ և բազմազավակ շուրջ 500 ընտանիքներ հաշվառված են Անապահովության գնահատման համակարգում՝ ԱԳՀ, ստանում են պետական նպաստներ, ինչն անշուշտ բավարար չէ այդ ընտանիքներում աղքատության հաղթահարման և երեխաների բավարար կենսապայմանների ապահովման համար: Ուստի անհրաժեշտ է համապատասխան ծրագրերի միջոցով լրացուցիչ ուշադրության և հոգածության ներքո պահել այդ ընտանիքներին: Մեծ խնդիր է համայնքում կացարանի տրամադրումը, որի բացակայությունը աղքատության հիմնական պատճառներից է:

Չնայած աղքատության մեղմացմանն ուղղված սոցիալական աջակցության համակարգի առկայությանը, հիմնականում նպաստառու ընտանիքների պարագայում աջակցությունը կրել է երկարաժամկետ բնույթ՝ չհանգեցնելով կյանքի որակի փոփոխության: Ավելին, ձևավորվել է վերարտադրվող աղքատության մշակույթը, որը խոչնդոտել է քաղաքացիների ակտիվությանն ու նախաձեռնությանը, հաճախ ձեռնպահ պահել աշխատանքային գործունեության մեջ ներգրավվելուց՝ նույնիսկ այդ հնարավորության առկայության պարագայում:

Այս իրավիճակում Երևան համայնքում տարիներ շարունակ իրականացվող սոցիալական քաղաքականության արդյունավետությունը բավարար չի եղել, մասնավորապես՝ ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների համակարգը, ինչպես նաև դրամական և բնաիրային աջակցությունն ուղղված է եղել ոչ թե աղքատության հաղթահարմանը, այլ մեղմացմանը:

Նշված իրավիճակը հետևանք է նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում սոցիալական աշխատողների հաստիքների ոչ բավարար առկայության: Ստեղծված իրավիճակը հանգեցնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքների կարիքների ոչ բավարար գնահատման՝ նվազեցնելով տրամադրվող սոցիալական ծառայությունների արդյունավետությունն ու որակը: Ծառայության կարիք ունեցող մարդը ստիպված է դիմել մի շարք տարբեր կառույցներ և գրասենյակներ՝ արդյունքում հաճախ չստանալով անհրաժեշտ ծառայությունը բավարար որակով, փոխարենը ստանալով անվերջ ուղղորդումներ դեպի տարբեր կազմակերպություններ:

Սոցիալական պաշտպանության ոլորտում կարևորվում է համագործակցությունը, մասնավորապես՝ Երևան համայնքը տարաբնույթ սոցիալական ծրագրեր է իրականացրել, մասնագիտացված հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում: Սակայն իրականացված ծրագրերի հասցեականությունը և համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ պետք է ներդնել տեղական սոցիալական ծրագրեր կազմելու և դրանք պատվիրակելու մեխանիզմներ, ինչպես նաև քարտեզագրել Երևան համայնքում սոցիալական պաշտպանության ոլորտում սոցիալական ծրագրեր իրականացնող դերակատարներին:

Աղքատության հաղթահարման լավագույն և արժանապատիվ միջոցը աշխատանքն է: Սակայն, գործազրկության մակարդակը 2018թ. տվյալներով՝ կազմել է մայրաքաղաքի աշխատունակ տարիքի բնակչության շուրջ 18.5%-ը: Աշխատաշուկայում կան զբաղվածության ապահովման դժվարություններ, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց և երիտասարդների շրջանում: Բացակայում է պետական-մասնավոր հատվածների միջև, այդ թվում՝ աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների հետ գործակալության գործընկերային և փոխշահավետ համագործակցությունը:

Հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմում է 57.307 անձ (տղամարդ-29.641, կին-27.666), երեխաներ 2.394 (տղաները – 1.652, աղջիկները - 741): Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ապահովման ուղղություններն են՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և արժանապատվությունը, նրանց լիակատար ներառումը հասարակության մեջ, մատչելի պայմանների, որակյալ ծառայությունների առկայությունը և դրանցից օգտվելու հնարավորությունները: Ուշադրության կարիք ունեն նաև ԼՂՀ պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով, մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողները, ինչպես նաև հայրենական մեծ պատերազմի մասնակիցները և նրանց հավասարեցված անձանց, որոնք ընդգրկվել և ընդգրկվելու են սոցիալական նշանակության մի շարք ծրագրերում:

Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում գործող սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգը բավարար չէ և տարեցներին տրամադրվող սոցիալական ծառայությունները Երևան համայնքում բաշխվել են անհամաչափորեն: Խնամքի կարիք ունեցող տարեցներին մատուցվող սոցիալական և առողջապահական ծառայությունների որակը եղել է ոչ բավարար և անմատչելի: Տարեցների իրազեկվածությունը սեփական իրավունքների և գործող ծառայությունների վերաբերյալ եղել է ցածր: Բացակայել են համայնքային մակարդակներում որոշումների կայացմանը տարեցների մասնակցության ապահովման մեխանիզմները: ԱԳՀ-ում հաշվառված են 4.649 միայնակ տարեցներ, որոնք մշտական հոգածության և ուշադրության կարիք ունեն և քայլեր են ձեռնարկվում արժանապատիվ ծերության ապահովման նպատակով տարեցների ժամանակակից ցերեկային կենտրոնների ստեղծման ուղղությամբ:

Կառավարության առաջնահերթություններին համընթաց՝ ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները մեղմելու նպատակով անհրաժեշտ է

մշակել և համայնքում կյանքի կոչել ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության նոր ծրագրեր:

Երևանում նաև բնակվում են սիրիական հակամարտության հետևանքով և այլ երկրներից ՀՀ ներգաղթած անապահով և կարիքավոր շուրջ 4.500 ընտանիքներ:

Սոցիալական կարևորագույն խնդիր է նաև անօթևանների հետ տարվող աշխատանքում առաջացող դժվարությունները՝ օրենսդրական բացերի և ծառայությունների կազմակերպման հետ կապված տեխնիկական խնդիրների պատճառով: Այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում Երևան համայնքի, ՀՀ ԱՍՀ նախարարության, ՀՀ ոստիկանության և «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ԲՀ-ի (որը ՀՀ-ում միակ նմանատիպ ծառայություններ տրամադրողն է) համատեղ ջանքերով: Չնայած տարվող աշխատանքներին՝ դեռևս չլուծված են մնում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անօթևան անձանց խնդիրները:

Արդիական խնդիր է նաև արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում ընտանիքներին աջակցության տրամադրումը:

Հիմնախնդիրներ

1. *Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության արդյունավետ կառավարման համակարգի ներդրման՝ ներառյալ սոցիալական աշխատանքի, տեղական սոցիալական պլանավորման, սոցիալական ծառայությունների մոնիթորինգի և գնահատման գործառույթների ուժեղացման, ինչպես նաև համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով՝ թվայնացման և ֆինանսավորման անհրաժեշտություն:*
2. *Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավման ուղղությամբ նպատակային ծրագրերի, ինչպես նաև ծառայությունների պատվիրակման մեխանիզմների մշակման, կազմակերպման և իրականացման անհրաժեշտություն:*
3. *Համագործակցության շրջանակներում բնակչության զբաղվածության խթանում՝ սոցիալական գործընկերության և ձեռներեցության միջոցով:*
4. *Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության, սոցիալական ներառմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:*
5. *Արժանապատիվ ծերացմանն ուղղված քաղաքականության իրականացման անհրաժեշտություն՝ ներառյալ որակյալ սոցիալական ծառայությունների ընդլայնում:*
6. *Ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները մեղմելու, ավելին՝ բարելավելու նպատակով՝ քաղաքականության իրականացման անհրաժեշտություն, բազմազավակ, երիտասարդ, և այլ խմբերին պատկանող ընտանիքների աջակցության՝ թիրախային ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:*
7. *Հայրենադարձ և փախստական ընտանիքների համար, հասարակական ինտեգրման նպատակով թիրախային ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:*
8. *Անօթևանների աջակցության նպատակով սոցիալական ծառայությունների տրամադրման մեխանիզմների մշակման և իրականացման անհրաժեշտություն:*
9. *Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:*
10. *Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի կազմակերպման և իրականացման անհրաժեշտություն:*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման համակարգի ներդրում

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման նպատակով նոր համակարգի ներդրում՝ ներառյալ սոցիալական աշխատանքի, տեղական սոցիալական պլանավորման, սոցիալական ծառայությունների մոնիթորինգի և գնահատման գործառույթների ուժեղացման, ինչպես նաև համակարգի թվայնացման միջոցով:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երեխաների և սոցիալական պաշտպանության արդյունավետ կառավարման համակարգի ներդրման նպատակով անհրաժեշտ է՝ 1. Համակարգի ներդրման ճանապարհային քարտեզի մշակում և օրենսդրական գործառույթային, մարդկային ռեսուրսների կառավարման փոփոխությունների իրականացում, հաշվի առնելով բոլոր ռիսկերը, 2. Երևան համայնքի սոցիալական կարիքների գնահատում, 3. վարչական շրջանների աշխատակազմերի համապատասխան բաժիններում սոցիալական աշխատողի և հոգեբանի հաստիքի ներդրում՝ Երևան համայնքի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա, 4. սոցիալական աշխատողների մասնագիտական վերապատրաստում, 5. տեղական սոցիալական պլանավորման, ինչպես նաև տեղական սոցիալական ծրագրերի ընթացակարգերի և գործիքակազմի մշակում և տեղայնացում՝ ներառյալ ֆինանսավորման մեխանիզմներ, 6. համակարգի աշխատանքների արդյունավետ կառավարման համար համակարգի թվայնացում (էլեկտրոնային համակարգի ստեղծում և ներդրում), 7. համայնքի, ինչպես նաև այլ կազմակերպությունների կողմից իրականացված սոցիալական ծառայությունների մոնիթորինգի և գնահատման գործառույթների մեխանիզմների մշակում և ներդրում, 8. ծառայությունների պատվիրակման ընթացակարգի մշակում և տեղայնացում, 9. համայնքային ծառայողների, ինչպես նաև սոցիալական աշխատողների մասնագիտական վերապատրաստումների իրականացում, շարունակական իրազեկումների կազմակերպում, 10. սոցիալական աշխատանքի սուպերվիզիայի մեխանիզմների մշակում և տեղայնացում, 11. համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, Երևան համայնքում սոցիալական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների քարտեզագրում և էլեկտրոնային համակարգի մեջ ներառում, 12. Երևան համայնքի երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացմանը միտված աշխատաժողովների կազմակերպում:				
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ և այլն:				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Երևան համայնքի երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտի	Հետազոտության արդյունքում առաջարկվող Երևան համայնքի	Համակարգի տեղայնացման ընթացքում առաջացած և վերհանված խնդիրների	Համակարգի միջանկյալ գնահատում՝ իրականացվող աշխատանքների	Համակարգի ամբողջական ներդրում և շարունակական շահագործում

	հետազոտություն	երեխաների և սոցիալական պաշտպանության նոր համակարգի ներդրման փուլ, (անցումային տարի)	ուսումնասիրություն և լրամշակում	արդյունավետությունը բարձրացնելու նպատակով	
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական պաշտպանության ոլորտի աշխատակիցներ և Երևան համայնքում սոցիալական ծրագրեր իրականացնող կազմակերպություններ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականներին				

Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր

Ծրագրի նպատակը	Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավման ուղղությամբ նպատակային ծրագրերի, ինչպես նաև ծառայությունների պատվիրակման կազմակերպումը և իրականացումը (առաջնային թիրախ՝ 1-ծայրահեղ աղքատ ընտանիք, 2-աղքատ ընտանիք)։				
Ծրագրի համառոտ նկարագրություն	1. Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավման ուղղությամբ նպատակային ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ է՝ 1.1 Սոցիալական աջակցության ձևերի ընդլայնում՝ զարգացնելով անհրաժեշտ ծառայությունները և ոչ դրամական աջակցությունը։ Սոցիալական աջակցության ծառայությունները պետք է խթանեն անապահով ընտանիքների կարողությունների զարգացումը՝ նրանց ինքնաբավ դարձնելուն ուղղված և արժանապատիվ ու սեփական վաստակ ունեցող ընտանիք ձևավորելու համար, 1.2 Իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքի կարիքների գնահատում, 1.3 Անհատական սոցիալական ծրագրերի մշակում, 1.4 Տեղական սոցիալական ծրագրերի մշակում և իրականացում, 1.5 Վերը նշված երկու կետերը ապահովելու նպատակով ծառայությունների պատվիրակում, ինչպես նաև կամավոր լիազորությունների շրջանակում ավագանու հաստատած կարգի համաձայն աջակցության տրամադրում, 2. Ելնելով հասարակության սոցիալական բևեռացվածության և աղքատության մեղմացման, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներից ոչ ոքի չանտեսելու սկզբունքներից՝ նախատեսվում է իրականացնել միջոցառումներ տոնական և հիշատակի օրերին։				
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ և այլն:				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	-	Երևան համայնքի կարիքավոր բնակիչների կենսամակարդակի բարելավում	Երևան համայնքի կարիքավոր բնակիչների կենսամակարդակի բարելավում	Երևան համայնքի կարիքավոր բնակիչների կենսամակարդակի բարելավում	Երևան համայնքի կարիքավոր բնակիչների կենսամակարդակի բարելավում

Ծրագրի հիմնական շահառուները	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք կամ ընտանիքները
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020-2023թվականներին

Համագործակցության շրջանակներում սոցիալական գործընկերություն և ձեռներեցություն

Ծրագրի նպատակը	Համագործակցության շրջանակներում բնակչության զբաղվածության խթանում՝ սոցիալական գործընկերության և ձեռներեցության միջոցով:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքիների հետ աշխատող սոցիալական աշխատողների կողմից կարիքների գնահատման արդյունքում ներկայացվում են այն ընտանիքները, որոնք ցանկություն ունեն զբաղվել ընտանեկան ձեռնարկատիրությամբ, իրականացնել ծառայությունների մատուցում կամ սպասարկում: Այս ամենը միտված է լինելու անհատական զարգացմանը, կարիերայի պլանավորմանն ու կառավարմանը, ձեռնարկատիրական գործունեության ապահովմանը: Տվյալ շահառու խմբի հետ անհատական աշխատնքի արդյունքում նրանց առաջարկվում է տարբեր ծրագրեր՝ հաշվի առնելով մարդու պահանջմունքների փոփոխման և կարիքների բավարարման բնականոն գործընթացը: Այն իր մեջ ներառում է երկաստիճան զարգացման գաղափարը: Առաջին աստիճանը ենթադրում է շահառու խմբերի առանձնահատկությունների քարտեզագրում, կարողությունների մակարդակի գնահատում, կրթության և/կամ վերապատրաստման անհրաժեշտության արձանագրում և դրա արդյուքնում զբաղվածության խնդրի լուծում: Երկրորդ աստիճանը ենթադրում է շահառուների ձեռներացության հմտությունների զարգացում, ոլորտային ունակությունների բացահայտում, բիզնես գաղափարի գեներացմանն ու բիզնես մոդելի մշակմանն աջակցություն, ինքնազբաղվածության և/կամ ընտանեկան ձեռնարկության հիմնմանն ու զարգացմանն աջակցություն: Վերոնշյալ երկաստիճան ծրագրերը կօգնեն աղքատությունը փոխակերպել տնտեսական զարգացման: Կարևոր պայման է լինելու, որ գործունեության ընթացքում բոլոր այս փուլերի տրամաբանական կապը պահպանվի, և հիմքում դրված լինի շարունակականության և կենսունակության ապահովումը:				
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ, մասնավոր ընկերություններ, գործատուներ՝ որոնք իրականացնում են սոցիալ-տնտեսական ծրագրեր և տրամադրում դրամաշնորհներ ինքնազբաղվածության, սոցիալական գործընկերության և ձեռներեցության սկսելու համար:				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	-	Զբաղվածության խթանում	Զբաղվածության խթանում	Զբաղվածության խթանում	Զբաղվածության խթանում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ, համագործակցող կազմակերպություններ և այլն				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020-2023 թվականներին				

Սոցիալական ծառայությունների տրամադրում և պատվիրակում

Ծրագրի նպատակը	Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների տրամադրում՝ պատվիրակման միջոցով:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	*Ծառայությունների տրամադրումը կիրականացվի բացառապես ծառայությունները մատուցող կազմակերպությունների հետ մրցակցային սկզբունքով, համապատասխան մրցութային կարգով՝ տեղական սոցիալական ծրագրերի և կարիքների գնահատման հիման վրա ու պատվիրակման միջոցով:* *1. Աուտիզմ ունեցող դեռահասների և երիտասարդների համար ցերեկային կենտրոն:* *2. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցության ցերեկային կենտրոն:* *3. Մտավոր և հոգեկան խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ:* *4. Տեսողական խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում:* *5. Տնային պայմաններում խնամքի ծառայություններ տարեցներին:* *6. Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ:* *7. Տարեցների շուրջօրյա խնամք (փոքր տներ):* *8. Անօթևան մարդկանց համար գիշերակաց տներ:* *9. Շուրջօրյա խնամքի ծառայություններ մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար:* *10. Շուրջօրյա խնամքի ծառայություններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար»* *11. Տնային խնամքի ծառայություններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար:* *12.* Կարիքի գնահատման արդյունքում սոցիալական աջակցության և ծառայությունների տրամադրում (ուղղորդում, խորհրդատվության տրամադրում, օգնականի և այլ ծառայություններ):				
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ և այլն:				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Ուսումնասիրությունների փուլ	Որակյալ և հասանելի ծառայությունների մատուցում	Որակյալ և հասանելի ծառայությունների մատուցում	Որակյալ և հասանելի ծառայությունների մատուցում	Որակյալ և հասանելի ծառայությունների մատուցում
Ծրագրի հիմնական շահառուները	Տարբեր սոցիալական խմբեր				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականներին				

Բազմազավակ, երիտասարդ, և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն

Ծրագրի նպատակը	Ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված քաղաքականության իրականացման նպատակով, աջակցություն բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին՝ թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով:
Ծրագրի համառոտ նկարագրություն	1. Բազմազավակ ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակում և իրականացում: 2. Վերը նշված ընտանիքներին աջակցության նպատակով վերապատրաստումների իրականացում (տնտեսավարում, ծնողավարության հմտություններ և այլն): 3. Վերը նշված ընտանիքներին աջակցության նպատակով վերապատրաստումների

	իրականացում (տնտեսավարում, ծնողավարության հմտություններ և այլն)։ 4. Համապատասխան կարիքների առկայության դեպքում ավագանու կողմից հաստատված կարգի համաձայն համայնքի կամավոր լիազորությունների շրջանակում սոցիալական աջակցության տրամադրում:				
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ և այլն:				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	-	Ժողովրդագրական իրավիճակի բարելավում	Ժողովրդագրական իրավիճակի բարելավում	Ժողովրդագրական իրավիճակի բարելավում	Ժողովրդագրական իրավիճակի բարելավում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բազմազավակ, երիտասարդ և նորաստեղծ ընտանիքների անդամներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020-2023 թվականներին				

Հայրենադարձ և փախստական ընտանիքների համար աջակցության ծրագրեր

Ծրագրի նպատակը	Հայրենադարձ և փախստական ընտանիքների հասարակական ինտեգրում՝ թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	1. Հայրենադարձ ընտանիքներին բնակարանների վարձակալության մասնակի փոխահատուցում: 2. Փախստական ընտանիքների կարիքի գնահատման արդյունքում սոցիալական ծառայությունների տրամադրում: 3. Փախստական ընտանիքներին ձմռան ամիսներին առաջացած խնդիրների լուծման նպատակով՝ կոմունալ վարձավճարների մասնակի փոխհատուցում: 4. Համապատասխան կարիքների առկայության դեպքում ավագանու կողմից հաստատված կարգի համաձայն համայնքի կամավոր լիազորությունների շրջանակում սոցիալական աջակցության տրամադրում:				
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ, մասնավոր ընկերություններ, գործատուներ և այլն:				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Նախադեպը ունեցող օրինակների ուսումնասիրություն, համապատասխան ընթացակարգերի մշակում	ԿԴԻՀ-ում հայրենադարձ և փախստական ընտանիքներ	ԿԴԻՀ-ում հայրենադարձ և փախստական ընտանիքներ	ԿԴԻՀ-ում հայրենադարձ և փախստական ընտանիքներ	ԿԴԻՀ-ում հայրենադարձ և փախստական ընտանիքներ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքում բնակություն հաստատած հայրենադարձ և փախստական ընտանիքներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականներին				

Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն

Ծրագրի նպատակը	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակում և իրականացում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համապատասխան կարիքների առկայության դեպքում ավագանու կողմից հաստատված կարգի համաձայն համայնքի կամավոր լիազորությունների շրջանակում սոցիալական աջակցության տրամադրում:				
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ, մասնավոր ընկերություններ, գործատուներ և այլն:				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	-	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում աջակցություն	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում աջակցություն	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում աջակցություն	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում աջակցություն
Ծրագրի հիմնական շահառուները	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձիք և ընտանիքներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2020-2023թվականներին				

Ինտեգրված սոցիալական ծառայությունների կազմակերպում և իրականացում

Ծրագրի նպատակը	Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումներին աջակցելը:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	1. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրագործում՝ 1.1 կարիքավոր բնակչության հայտնաբերման, հաշվառման, ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով անձի (ընտանիքի) սոցիալական կարիքների գնահատման, սոցիալական գործի կազմման (այդ թվում և էլեկտրոնային եղանակով), պետական նպաստների նշանակման կազմակերպում և իրականացում, 1.2 սոցիալական պաշտպանության ոլորտում անձի իրավունքների և դրանց իրականացման, սոցիալական աջակցության շրջանակներում տրամադրվող ծառայությունների մատուցում, 1.3 բազմամասնագիտական աշխատանքային խմբերի (աջակցող ցանցի) համագործակցությամբ սոցիալական դեպքի վարման գործընթացի կազմակերպման, տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհուրդների գործունեության ապահովում: 2. Սոցիալական ոլորտում բարեփոխումների արդյունքում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման աջակցություն:				
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ և այլն:				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	սոցիալական, ընտանեկան նպաստի,	սոցիալական, ընտանեկան նպաստի,	սոցիալական, ընտանեկան նպաստի,	սոցիալական, ընտանեկան նպաստի,	սոցիալական, ընտանեկան նպաստի,

	հրատապ օգնության տրամադրում, ինչպես նաև սոցիալական դեպքի վարում	հրատապ օգնության տրամադրում, ինչպես նաև սոցիալական դեպքի վարում	հրատապ օգնության տրամադրում, ինչպես նաև սոցիալական դեպքի վարում	հրատապ օգնության տրամադրում, ինչպես նաև սոցիալական դեպքի վարում	հրատապ օգնության տրամադրում, ինչպես նաև սոցիալական դեպքի վարում
Ծրագրի հիմնական շահառուները	Սոցիալապես անապահով /անձիք/ ընտանիքներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2019-2023 թվականներին				

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Երևան քաղաքի հանրային տրանսպորտի համակարգը ներառում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն», «Երևանի էլեկտրատրանսպորտ», «Երևանի ավտոբուս», «Երևանտրանս» ՓԲ ընկերությունները և թվով 51 մասնավոր կազմակերպություններ, որոնք պայմանագրային հիմունքներով կանոնավոր ուղևորափոխադրումներ են իրականացնում Երևանի ներհամայնքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներում:

Երևան քաղաքի ավտոբուսային հավաքակազմը համալրված է տարբեր մակնիշների, տարբեր երկրների թողարկման 652 ավտոբուսներով, որոնցից 269-ը՝ «ՀԻԳԵՐ» մակնիշի, 189-ը՝ «Բոգդան», 147-ը՝ «Հունդայ», 32-ը՝ «ՊԱԶ» և 15-ը՝ «Ջիջիանգ»: Ավտոբուսների միջին տարիքը կազմում է մոտ 9.2 տարի:

Թվով 652 ավտոբուսներից 372-ը գտնվում է Երևանի ենթակայության «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հաշվեկշռում: Այդ ավտոբուսներից 83-ը (79 հատ «Բոգդան» մակնիշի և 4 հատ «ՊԱԶ» մակնիշի) տեխնիկապես անսարք են, դրանց վերականգնումը նպատակահարմար չէ, ենթակա են խոտանման և դուրս գրման:

Մայրաքաղաքում փաստացի գործում են 40 ավտոբուսային երթուղիներ, որոնցում օրական միջին հաշվով շահագործվում է 400-410 միավոր շարժակազմ:
Ավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր ծավալում կազմում է մոտ 42.5%:

«ՀԻԳԵՐ» մակնիշի ավտոբուսներից 25-ը կահավորված են հատուկ վերելակային հարմարանքով՝ հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար: Տեղադրված վերալակային հարմարանքներից թվով 15 ներկայումս անսարք վիճակում է: «ՀԻԳԵՐ» մակնիշի թվով 128 ավտոբուսների ուղեսրահներում կույր հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտից օգտվելու մատչելիության ապահովման նպատակով տեղադրված են կանգառների անվանման ավտոմատ հայտարարման սարքեր, որոնցից 77-ը գտնվում են անսարք վիճակում:

Մայրաքաղաքում փաստացի գործում է 67 միկրոավտոբուսային երթուղի, որոնք համալրված են 1168 միավոր շարժակազմով: Բացառությամբ մեկ «ՖՈՐԴ» մակնիշի միկրոավտոբուսի, դրանք բոլորը «ԳԱԶԵԼ» մակնիշի են, միջին տարիքը կազմում է մոտ 11,5 տարի: Միկրոավտոբուսների զգալի մասը իրենց փաստացի վիճակով չեն բավարարում կանոնավոր ուղևորափոխադրումների և ուղևորների սպասարկման որակին ներկայացվող պահանջներին: Սահմանված կարգի համաձայն, 15 տարին լրացած միկրոավտոբուսները ենթակա են պարտադիր փոխարինման և այդ տեսանկյունից 2004թ. թողարկման թվով 39 միկրոավտոբուսների շահագործումը մինչև 2019թ. ավարտը կդադարեցվի, իսկ 2005թ. թողարկման թվով 397 միկրոավտոբուսները՝ մինչև 2020թ. ավարտը: Չնայած վերջին տարիներին միկրոավտոբուսների քանակի զգալի կրճատմանը (2012թ. համեմատ՝ ավելի քան 1200 միավորով), դրանցով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր ծավալում կազմում է մոտ 45.4%:

Միկրոավտոբուսների ընդհանուր վիճակը գնալով վատթարանում է, դրանց փոխարինումը ավտոբուսներով այլընտրանք չունի, ինչը և նախատեսվում է իրականացնել Երևանի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի ընդհանուր համատեքստում:

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա է տարբեր մակնիշների թվով 79 տրոլեյբուս, այդ թվում՝ «Շկոդա» մակնիշի՝ 34 հատ «ՌԵՆՈ» մակնիշի՝ 9 հատ, «ԼԻԱԶ» մակնիշի՝ 36 հատ:Տրոլեյբուսների միջին տարիքը կազմում է մոտ 23.5 տարի, իսկ «Ռենո» մակնիշի տրոլեյբուսներինը՝ 41 տարի: Տրոլեյբուսային հավաքակազմը ընդհանուր առմամբ հնացած է, 25 հատ «Շկոդա» մակնիշի և 5 հատ «Ռենո» մակնիշի տրոլեյբուսներ տեխնիկապես անսարք են և ենթակա են խոտանման ու դուրս գրման: Փաստացի

սպասարկվում է 5 տրոլեյբուսային երթուղի, օրական գիծ է դուրս բերվում միջին հաշվով 40-42 միավոր շարժակազմ, ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը կազմում է 2.7%:

«ԼԻԱԶ» մակնիշի տրոլեյբուսներից 2-ը կահավորված է թեքահարթակով՝ հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար:

Երևանի մետրոպոլիտենում շահագործվում է 10 կայարան (վերանորոգված է միայն մեկը), առկա է 45 վագոն, որոնց միջին տարիքը կազմում է մոտ 31.5 տարի: Վագոններից հիմնանորոգված է 26-ը, թվով 24 շարժասանդուղքներից հիմնանորոգված է 10-ը:

Մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» և «Զորավար Անդրանիկ» կայարանների միջև ընկած հատվածում նախատեսված մոտ 930մ երկարությամբ դրենաժային թունելի 502.2մ երկարությամբ հատվածը դեռևս ենթակա է կառուցման:

Վերջին հինգ տարիներին մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումներում արձանագրվել է կայուն աճի միտում (2014թ. համեմատ՝ մոտ 2.9 մլն-ով): Արդյունքում, ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր ծավալում ևս աճել է և կազմում է 9.1%:

Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների շրջանակներում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ հայտարարված միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Դաբլյու Վայ Ջի Ինտերնեյշնլ Լիմիթիդ» խորհրդատվական կազմակերպությունը լավագույն միջազգային փորձի, հստակ հաշվարկների և չափորոշիչների հիման վրա մշակել է Երևանի հանրային տրանսպորտի նոր արդյունավետ երթուղային ցանց, ինչը ենթադրում է միասնական էլեկտրոնային տոմսային համակարգերի ներդրման հնարավորություն, զեղչային համակարգի կիրառում, նոր ժամանակակից շարժակազմերի (ավտոբուս, տրոլեբուս) ձեռքբերում՝ բացառելով միկրոավտոբուսները, հասարակական տրանսպորտի մնացած ձևերի արդյունավետ փոխհամագործակցություն, ուղևորների սպասարկման որակի զգալի բարձրացում և այլն:

Մայրաքաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման գործընթացի շրջանակներում թույլատրվել է թվով 45 կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղեր, ինչպես նաև կազմակերպվել է 155 հատ թեթև մարդատար տաքսի-ավտոմոբիլների կայանատեղ:

Մայրաքաղաքում սահմանված են հասարակական տրանսպորտի 856 կանգառներ, որոնցից միայն 348-ն են կահավորված կանգառասրահներով, մնացածը՝ միայն կանգառանշաններով:

Մայրաքաղաքի թվով 4 խաչմերուկներ (Աճառյան փողոցում՝ 3 խաչմերուկ և Էջմիածնի խճուղի-Երևանյան փողոց խաչմերուկ) կահավորված են «Խելացի» լուսացուցային օբյեկտներով:

Հետիոտների անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով մայրաքաղաքի թվով 13 չկարգավորվող հետիոտնային անցումներում տեղադրվել են հետիոտնային կանչի լուսացույցներ, ևս 17 անցումներ նախատեսվում է կահավորել 2019թ. ընթացքում:

Հիմնախնդիր

1. *Հասարակական տրանսպորտի ոչ արդյունավետ գործող երթուղային ցանցը, որը չի բավարարում մայրաքաղաքի կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացին ներկայացվող առկա պահանջներին:*
2. *Միասնական սակագնային և տոմսային համակարգի բացակայություն:*
3. *Ավտոբուսային և տրոլեյբուսային հավաքակազմերը համալրված չեն:*
4. *Հասարակական տրանսպորտի շարժակազմի տեսականու և դրանց տեխնիկական չափանիշների ոչ բավարար վիճակ:*
5. *Հասարակական տրանսպորտի կառավարման արդյունավետ մոդելի բացակայություն:*

6. *Կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացում սպասարկման համար գանձվող վճարի շրջանառության թափանցիկության բացակայություն:*
7. *Միկրոավտոբուսների տեսակարար մեծ կշիռ:*
8. *Ուղևորների տրանսպորտային սպասարկման որակի ոչ բավարար մակարդակ:*
9. *Վերգետնյա էլեկտրատրանսպորտի տնտեսության ոչ բավարար վիճակ:*
10. *Երևանի մետրոպոլիտենի սահմանափակ հնարավորություններ, առկա է գծի ընդլայնման, շարժակազմի, տնտեսության և ենթակառուցվածքների վիճակի բարելավման անհրաժեշտություն:*
11. *Կանգառների արդյունավետ տեղաբաշխման, դրանց բարեկարգման և կահավորման անհրաժեշտություն:*
12. *Հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցների մատչելիության և որակի սպասարկման ոչ բավարար մակարդակ:*
13. *Ոչ ժամանակակից տրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում առաջացող բնապահպանական խնդիրներ:*
14. *Ճանապարհային երթևեկության կազմակերպման վիճակի բարելավման անհրաժեշտություն:*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

«Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի ներդրում. նոր քաղաքային ավտոբուսների (հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված) ներկրման գործընթացի իրականացում»

Ծրագրի նպատակը	Նոր երթուղային ցանցի ստեղծում՝ գործող երթուղային ցանցի արդյունավետության բարձրացման նպատակով, միասնական տոմսային համակարգի ներդրում, ուղևորների սպասարկման որակի և անվտանգության աստիճանի բարձրացում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Գործող երթուղային ցանցը հաստատվել է Երևանի քաղաքապետի 30.03.2012թ. հ.2911-Ա որոշմամբ, այն լրամշակվել, վերախմբագրվել է 2015 թվականին: Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների շրջանակներում, կարևորելով երթուղային ցանցի արդյունավետության ու ուղևորների սպասարկման որակի բարձրացումը, անհրաժեշտություն է առաջացել ստեղծել նոր երթուղային ցանց և նոր միասնական տոմսային համակարգ, բացառել միկրոավտոբուսների շահագործումը՝ դրանք փոխարինելով միջին և մեծ տեղատարողության քաղաքային ավտոբուսներով: Նախատեսվում է նաև տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ ապահովել երթուղիների, չվացուցակների, տրանսպորտային միջոցի գտնվելու վայրի և ժամանման իրական ժամանակի վերաբերյալ տեղեկությունների առցանց հասանելիությունը:				
Համագործակցություն	–Ասիական զարգացման բանկ -ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն -ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն -ՀՀ էկոնոմիկային նախարարություն -ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն -ՀՀ ճանապարհային ոստիկանություն -ՀՀ հանրային խորհուրդ -ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ -Բարձրագույն ուսումնական հաստատություններ -Հասարակական կազմակերպություններ				
Ծրագրի	2019	2020	2021	2022	2023

անմիջական նպատակ	նոր երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի մշակում	նոր օպերատորի ներգրավում, ավտոբուսների ներկրում	Նոր երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի ներդրում, ավտոբուսների ներկրում		
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2021 թվականներ				

«Հասարակական տրանսպորտի կանգառների կահավորում»

Ծրագրի նպատակը	Հասարակական տրանսպորտի կանգառների կահավորում կանգառասրահներով՝ ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի ավելի քան 850 կանգառներից միայն 348-ում են տեղադրված կանգառասրահներ: Ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է շարունակել կանգառների կահավորման աշխատանքները: Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում նախատեսվում է նոր կանգառների սահմանում, դրանց քանակը հասցնելով շուրջ 1200-ի: Այն կանգառներում, որտեղ քաղաքաշինական տեսանկյունից խնդիրներ չկան, համայնք-մասնավոր ներդրող համագործակցության արդյունքում կտեղադրվեն նոր, ժամանակակից կանգառասրահներ:				
Համագործակցություն	ՀՀ ճանապարհային ոստիկանություն				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	-	-	50 հատ	50 հատ	30 հատ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021-2023 թվականներ				

«Մետրոպոլիտենի վագոնների արդիականացում»

Ծրագրի նպատակը	Ուղևորների անվտանգության ապահովում, հարմարավետության և սպասարկման որակի բարձրացում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երևանի մետրոպոլիտենի վերականգնման ծրագրի I և II փուլերով արդեն իսկ հիմնանորոգվել և արդիականացվել են թվով 18 վագոններ: Առաջիկա 4 տարում նախատեսվում է արդիականացնել մետրոպոլիտենի 19 վագոն՝ 6 գլխամասային, 13 միջանկյալ: Ծրագրի շրջանակում ձեռք կբերվեն գնացքի 60 և կնորոգվեն 26 անվազույգեր,կիրականացվեն վագոնների ընդհանուր վերանորոգում:				
Ծրագրի	2019	2020	2021	2022	2023

անմիջական նպատակ, վագոն հատ	2	8	6	3	-
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2022թ.թ.				

«Մետրոպոլիտենի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում»

Ծրագրի նպատակը	Երևանում մետրոպոլիտենի աշխատանքի որակի, հուսալիության և անխափան աշխատանքի ապահովում, էներգահամակարգի հուսալիության, ազդանշանային և կապի համակարգերի, շարժասանդուղքների աշխատանքի հուսալիության բարձրացում, ուղևորների անվտանգության ապահովում, տեխնոլոգիական–տնտեսական գնացքների նորացում, մետրոպոլիտենի գիշերային ժամերին կատարվող աշխատանքների հուսալիության և անվտանգության ապահովում, կայարանների և համալիրների վերանորոգում և պատճաշ տեսքի ապահովում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Վերոնշյալ նպատակներն իրականացնելու համար նախատեսվում են. 1. Դեպոյի վերանորոգման արտադրամասի վերանորոգում: 2.Ազդանշանային և հեռահաղորդակցության համակարգի արդիականացում՝ թվային վերահսկման սարքով հագեցած ազդանշանային բլոկավորման համակարգի փոխարինում: 3.Կարգավարական կապի,թունելային կապի համակարգերի արդիականացում: 4. 6 կվ մալուխների փոխարինում, 825 Վ մալուխների փոխարինում, մետրոպոլիտենի բաց հատվածի լուսավորության հիմնանորոգում,գծային և փոքր մեխանիզացիայի արկղերի, հեռակառավարման բաժանիչների վահանակների փոխարինում և արդիականացում, ռելեական պաշտպանության համակարգի արդիականացում, ՀՔԵ –ների վերանորոգում և արդիականացում: 5. Նախատեսվում է գերավազքով աշխատող թվով 16 շարժասանդուղքների վերանորոգում: 6. Նախատեսվում է օդափոխման համակարգի արդիականացում՝ օդափոխիչների փոխարինում և դրանց միացում թվային վերահսկման համակարգին: 7.Թունելային հակահրդեհային և ջրամատակարարման խողովակաշարերի նորոգում: 8. Նախատեսվում է ուղեգծերի սպասարկման և վերանորոգման աշխատանքներ՝ ռելսերի, զանազան պահեստամասերի ձեռքբերում, ռելսերի, փայտակոճերի փոխարինում: 9. Նախատեսվում է Մարշալ Բաղրամյան կայարանի նախասրահի վերանորոգում,Սասունցի Դավիթ, Զորավար Անդրանիկ կայարանների գծային պատերի հիմնանորոգում, կայարանների արտաքին տեսքի բարելավում: 10. Նախատեսվում է ձեռք բերել նոր ավտոդրեզին, նորոգել և արդիականացնել շահագործվող ավտոդրեզինները, նորոգել մեխանիկական արտադրամասը, ավտոդրեզինների կայանատեղին, բեռնատար ավտոմեքենայի ձեռքբերում:				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Ծրագրով նախատեսված տարեկան աշխատանքներ	Ծրագրով նախատեսված տարեկան աշխատանքներ	Ծրագրով նախատեսված տարեկան աշխատանքներ	Ծրագրով նախատեսված տարեկան աշխատանքներ	Ծրագրով նախատեսված տարեկան աշխատանքներ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ				

Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ.

«Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման որակի և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում»

Ծրագրի նպատակը	Ապահովել վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման բարձրորակ, մատչելիություն և անվտանգ փոխադրում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Վերգետնյա էլեկտրատրանսպորտի անխափան աշխատանքը և ուղևորափոխադրումների անվտանգությունը ապահովելու համար անհրաժեշտ է վերակառուցել ֆիզիկապես և բարոյապես մաշված հպակային ցանց: Հաշվի առնելով պղնձալարերի մաշվածությունը և դրանից առաջացող բարդությունները, նախատեսվում է հին և մաշված հպակային ցանցի լարերը փոխարինել նորերով: Քաղաքային ենթակայանները սնուցող բարձր և արտածման ցածր լարման մալուխները նույնպես հնամաշ են և հաճախ են շարքից դուրս գալիս, որի արդյունքում էականորեն տուժում է աշխատանքի կազմակերպման որակը, խաթարվում են երթևեկության միջակայքերը, արդյունքում ձախողվում է ազգաբնակչության անխափան և որակյալ սպասարկումը վերգետնյա էլեկտրատրանսպորտով: Էլեկտրատրանսպորտի բնականոն շահագործման համար կենսականորեն անհրաժեշտ է իրականացնել քարշի ենթակայանները սնուցող մալուխային ցանցի հնամաշ մալուխների փուլային փոխարինում նորով: Նախատեսվում է նաև. 1.Կառուցել նոր (3000մերկարությամբ) հպակային ցանց տրոլեյբուսային հ.2 երթուղու ուղեգիծը երկարացնելու նպատակով (Արտաշիսյան փողոցից մինչև նախկին Ժող. Տնտեսության նվաճումների ցուցահանդես): 2.Կառուցել տրոլեյբուսի նոր (6500մերկարությամբ) հպակային ցանց (Կոմիտաս փողոցից մինչև Դավիթաշեն):				
Համագործակցություն					
Ծրագրի անմիջական նպատակ/ հպակային ցանցի վերանորոգում	2019	2020	2021	2022	2023
	–	15000 մ	15000 մ	15000 մ	15000 մ
Ծրագրի անմիջական նպատակ/ մալուխների վերանորոգում	2019	2020	2021	2022	2023
	–	2125մ	2125մ	2125մ	2125մ
Ծրագրի անմիջական նպատակ/ նոր հպակային ցանցի կառուցում	2019	2020	2021	2022	2023
	–	3000մ	3250մ	3250մ	–
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2020-2023 թվականներ				

«Վերգետնյա էլեկտրատրանսպորտի սպասարկման համար նոր ենթակայանների կառուցում»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքում վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների պահանջարկի ապահովում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է կառուցել տրոլեյբուսի հպակային ցանցը Կոմիտաս փողոցից մինչև Դավիթաշեն սնուցող քարշի նոր ենթակայան (200 քմ մակերեսով) և Արտաշիսյան փողոցից մինչև նախկին Ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդես սնուցող քարշի նոր ենթակայան (200 քմ մակերեսով):				
Համագործակցություն					
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	–	-	200 քմ	200 քմ	–
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021-2022թվականներ				

«Նոր տրոլեյբուսների ձեռքբերում»

Ծրագրի նպատակը	Բավարարել Երևանի բնակչության ուղևորափոխադրումների պահանջարկը վերգետնյա էլեկտրատրանսպորտով՝ապահովելով անվտանգ և մատչելի փոխադրումներ էկոլոգիապես մաքուր տրանսպորտի միջոցով և պահպանելով շրջակա միջավայրը աղտոտումից, ինչպես նաև նվազեցնել քաղաքային տրանսպորտի այլ տեսակների աշխատանքների ծանրաբեռնվածությունը: Այդ ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել նոր շարժակազմ:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտի համակարգն իր կազմում ներառում է երկու հավաքակայան, որտեղ առկա են թվով 79 տրոլեյբուսներ, որոնցից մեկը՝ տեխ. օգնության: Ներկա դրությամբ ընկերության կողմից սպասարկվում է 5 երթուղիներ: Տրոլեյբուսների մոտ 54%-ը շահագործման մեջ են 30 տարուց ավելի և ֆիզիկապես ու բարոյապես մաշված են: Նոր երթուղային ցանցի ներդրմամբ պայմանավորված, բնակչությանը անխափան, անվտանգ և որակյալ տրանսպորտային սպասարկում ապահովելու համար անհրաժեշտ է ձեռք բերել նոր տրոլեյբուսներ: Շարժակազմի նորացումն ու քանակական աճը կնպաստեն նոր երթուղիների բացմանը, բնակչության ավելի լայն զանգվածի ներգրավմանը, որն էլ ոչ միայն կթեթևացնի քաղաքային տրանսպորտի ծանրաբեռնվածությունը, այլ կօգնի նաև լուծել սոցիալական և էկոլոգիական մի շարք խնդիրներ: Նախատեսվում է ձեռք բերել թվով 50 նոր տրոլեյբուսներ:				
Համագործակցություն	ՎԶԵԲ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	–	-	70տրոլեյբուս	30տրոլեյբուս	-
Ծրագրի հիմնական շահառուները	Վերգետնյա էլեկտրատրանսպորտի ծառայություններից օգտվող քաղաքացիներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2020-2022 թվականներ				

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի քաղաքաշինական զարգացմանն ուղղված ծրագրերն իրականացվում են Երևանի 2005-2020թթ. գլխավոր հատակագծում ամրագրված հիմնական դրույթների համաձայն:

ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի N2330-Ն որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագիծը:

ՀՀ կառավարության 2006թ. սեպտեմբերի 7-ի N1402-Ն որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի 2006-2020թթ. իրականացման հիմնական միջոցառումների ծրագիրը: Նշված ծրագրով ընթացել են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կազմման աշխատանքները՝ հիմանականում վարչական շրջանների տարածքների գոտևորման նախագծերը, այլ ծրագեր, միջոցառումներ ու նախագծանախահաշվային փաստաթղթեր:

2019-2020 թթ. մշակվում է Նոր Նորք վարչական շրջանի գոտևորման նախագիծը:

Մշակման ենթակա են Նուբարաշեն վարչական շրջանի, Մալաթիա-Սեբաստիա և Էրեբունի վարչական շրջանների առանձին տարածքների գոտևորման նախագծերը:

Միաժամանակ պետք է նշել, որ Երևան քաղաքի որոշակի տարածքների համար առկա գոտևորման նախագծերի գործածության ընթացքում պարզ է դարձել, որ դրանց հետևողական կենսագործման մեխանիզմների կիրառության արդյունավետությունը բավարար չէ ծագած խնդիրների լուծման համար: Դրանց իրագործման փոփոխությունների հաշվառումն ու կազմումը չի կատարվում: Ուստի, թե ռազմավարական փաստաթուղթ հանդիսացող գլխավոր հատակագծի նախագիծը, և թե մանրամասն պայմանները սահմանող գործադրական /օպերատիվ/ փաստաթուղթ՝ գոտևորման նախագծերը ունեն փոփոխության՝ այսինքն կատարելագործման, վերանայման և արդիականացման կարիք:

Երևան քաղաքի քաղաքաշինական գործընթացների կանոնակարգման համար կարևորվում է քաղաքաշինության բնագավառի մի շարք նորմատիվատեխնիկական փաստաթղթերի վերանայումը:

Հիմնախնդիրներ

1. *Հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատման արդյունքում հանրային շահի ոտնահարում,*
2. *Ապօրինի շինարարությունը բացառելու նպատակով անհրաժեշտ խիստ վերահսկողություն,*
3. *Երևանի քաղաքաշինական նոր ռազմավարության (City Development Strategy) մշակման անհրաժեշտություն,*
4. *Երևան քաղաքում կիրառվող տարածական պլանավորման (քաղաքաշինական ծրագրային) փաստաթղթերի համակարգը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և մշակված նախագծերի գործող համակարգի վերանայմամբ, գոտևորման նոր սկզբունքներն ընդունելով, Երևան քաղաքի միասնական գոտևորման հատակագծի կազմում /զոննինգ/ ծագած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված առաջնահերթ մշակման գոտիներ առանձնացնելու սկզբունքով,*
5. *Երևանի քաղաքաշինական կադաստրի համակարգի ձևավորման անհրաժեշտություն,*
6. *Երևան քաղաքի տրանսպորտի, ճանապարհափոխադրողային ցանցի, դրա հետ անմիջական կապ ունեցող ենթակառուցվածքների հետ կապված խնդիրների վերհանում և ճանապարհափոխադրողային ցանցի համալիր սխեմայի մշակում,*
7. *Քաղաքաշինական ծրագրերի և դրանց առաջնահերթությունների վերաբերյալ հանրային լայն քննարկումների և հասարակական հարցումների իրականացում*
8. *Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառի ծրագրերում ընգրկված թեմաների վերաբերյալ հայեցակարգային մրցույթների կազմակերպում,*

9. *Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման լիարժեք մատչելիության բացակայություն,*
10. *Վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղերի անբավարարություն,*
11. *Ստորգետնյա անցումների պատշաճ տեսքի և անվտանգության ապահովման անհրաժեշտ մակարդակի բացակայություն,*
12. *Քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային շենքերում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հիմնախնդրի առկայություն,*
13. *Քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով համայնք-մասնավոր հատված համագործակցության զարգացմանն ուղղված քայլերի իրականացման անհրաժեշտություն,*
14. *Երևանի ներդրումային վարկանիշի ձևավորման ուղղությամբ աշխատանքներ՝ Երևան քաղաքում գոյություն ունեցող խարխուլ բնակելի ֆոնդի վերացման և վերակառուցման ուղղությամբ ծրագրային աշխատանքների իրականացում,*
15. *Երևան քաղաքի առանձին հատվածների կառուցապատման հատակագծերի և վերակառուցման քաղաքաշինական և ներդրումային ծրագրերի մշակում,*
16. *Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման կարգավորման համար ընդունվելիք օրենքով նախատեսվող անհրաժշտ իրավական և նախագծային փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն,*
17. *Երևան քաղաքում անավարտ, չիրացված, փաստացի չօգտագործվող, անբարեկարգ և նմանատիպ անշարժ գույքերի պատշաճ օգտագործումը ապահովելու նպատակով, ընդհուպ՝ նշված գույքերի մասով հանրային գերակա շահ ճանաչելու և ներդրումային այլ ծրագրերում օգտագործելու գործընթացի իրականացում,*
18. *Երևան քաղաքի վարչատարածքային սահմանների, Երևանի քաղաքամերձ գոտու տարածքների հատակագծային կազմակերպման՝ քաղաք մտնող մայրուղիների կանոնակարգմանն ուղղված աշխատանքների իրականհացում՝ Երևան քաղաքին հարակից համայնքների հետ,*
19. *Երևան քաղաքի վարչատարածքային սահմաններում առկա գերեզմանների տարածքների, նաև նոր գերեզմանատների հնարավոր տեղակայման վայրերի առանձնացման, դրանց սահմանների, համապատասխան սանիտարական պաշտպանիչ գոտիների ստեղծման և հարակից տարածքներում կառուցապատումների նկատմամբ հատուկ ռեժիմներ սահմանելու հետ կապված խնդիրների առկայություն,*
20. *Մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածների ներդաշնակեցման և շենքերի արտաքին տեսքի վերանայման լուծումների իրականացման անհրաժեշտություն,*
21. *Երևանի զբոսաշրջության զարգացմանն ուղղված քաղաքաշինական միջոցառումների կազմակերպման անհրաժեշտություն:*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

Քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային շենքերում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հիմնախնդիրների լուծում՝ օգտագործելով սոցիալական բնակարանաշինության ոլորտում համայնք-մասնավոր հատված համագործակցության հնարավորությունները:

Երևան քաղաքի տրանսպորտի, Ճանապարհափոխոցային ցանցի, դրա հետ անմիջական կապ ունեցող ենթակառուցվածքների հետ կապված խնդիրների վերհանում և Ճանապարհափոխոցային ցանցի համալիր սխեմայի մշակում.

- ✓ Երևան քաղաքի Ճանապարհափոխոցային ցանցի մինչև 2030 թվականը զարգացման համալիր սխեմայի մշակում «Երևաննախագիծ» ՓԲԸ (2019-2020թթ.),
- ✓ Երևան քաղաքի ռազմավարական զարգացման առանցքային ոլորտի՝ տրանսպորտի ենթակառուցվածքների և կառավարման խնդիրների հետ նախատեսվող լուծումներն ու ծրագրերը, Երևանի Ճանապարհային ցանցի հետագա ընդլայնման ու բարելավման,

հասարակական տրանսպորտի կողմից ճանապարհների օգտագործման, ինչպես նաև այլընտրանքային տրանսպորտի ձևերի ներմուծման ռազմավարության հետ կապված հարցերը՝ /ավտոբուսների նոր ցանցի մոդելի ներդրում և հասարակական տրանսպորտի արդիականացում՝ էլեկտրականությամբ աշխատող միջոցների կիրառմամբ/,

- ✓ Աջափնյակում մետրոպոլիտենի նոր կայարանի առաջարկը,
- ✓ Նորքի զանգվածը քաղաքի կենտրոնի հետ կապ ստեղծող նոր (բազմամոդուլ) ճոպանողու ծրագիր,
- ✓ Քաղաքային նշանակության մայրուղիների պատշաճ որակի ապահովման, ճանապարհափողոցային ցանցի ընդլայնման, ժամանակակից չափանիշներին համապատասխանող ճանապարհների և դրանց երկայնքով արդիականացված ստորգետնյա ենթակառուցվածքների և ժամանակակից էներգախնայող լուսավորության համակարգերի կառուցումը,
- ✓ անընդհատ երթևեկություն ապահովելու նպատակով տարբեր մակարդակների վրա տրանսպորտային հանգույցների և նոր ուղեբաժանքների կառուցումը,
- ✓ գոյություն ունեցող ճանապարհների ծանրաբեռնվածության թեթևացման խիստ անհրաժեշտությունից ելնելով ավտոկայանատեղերի կառուցում,
- ✓ հետիոտնի անվտանգ շարժման կազմակերպման ապահովում՝ հետիոտն ուղիների, առկա ստորգետնյա անցումների բարեկարգում, արդիականացում,լուսավորում դրանք հարմարեցնելով բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիության համար և նոր միջազգային ստանդարներին համապատասխան հետիոտն անցումների կառուցում և անվտանգ շահագործում:

Նախատեսվում է քայլեր ձեռնարկել բացառելու հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատումը և դրա արդյունքում հանրային շահի ոտնահարումը:

Նախատեսվում է մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով մշակել քաղաքի զարգացման ռազմավարություն (City Developmetn Strategy), որն ուղղված կլինի ենթակառուցվածքների զարգացմանը, բնակչության բոլոր շերտերի կարիքների և կենսական պահանջմունքների բավարարմանը, քաղաքի կայուն և համաչափ զարգացմանը, տրանսպորտի և քաղաքային այլ ենթակառուցվածքների կարգավորմանը, կնպաստի քաղաքացի-քաղաքապետարան կապի ամրապնդմանն ու քաղաքացիների անմիջական մասնակցությանը քաղաքային կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ որոշումների կայացմանը և լուծմանը:

Ապօրինի շինարարությունը բացառելու նպատակով նախատեսվում է իրականացնել խիստ վերահսկողություն՝ նպատակ ունենալով կարգավորել ոլորտում առկա խնդիրները: Հսկողության խստացմանը զուգահեռ անհրաժեշտ է իրականացնել նաև հանրային լայն իրազեկում՝ ապօրինի շինարարության և հողազավթումների իրավական անխուսափելի հետևանքների վերաբերյալ: Կբացառվի ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացը՝ նոր կառուցվող ապօրինի կառույցների նկատմամբ:

«Երևանի էներգաարդյունավետության ծրագիր»

Ծրագրի նպատակը	Նախատեսվում է Երևանի 48 մանկապարտեզներում իրականացնել էնրգաարդյունավետության մեծացմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև իրականացնել սեյսմիկ զինվածության մակարդակի բարձրացում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	48 մանկապարտեզներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները. • առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով, • տեղադրել օդափոխման համակարգ • փոխել ջուր/կոյուղու համակարգը • վերակառուցել ջեռուցման համակարգը կամ տեղադրել նոր համակարգ • փոխել էլեկտրահաղորդման գծերը • տեղադրել արևային պանելներ

	• իրականացնել սեյսմիկ ամրացում
Համագործակցություն	ԵՆԲ, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերություն (E5P), Կանաչ կլիմայի հիմնադրամ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնք
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	Շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2020 թվականին: Ծրագիր ընախատեսվում է ավարտել 2022 թվականին:

«Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի մշակում՝ մինչև 2030 թվականը զարգացման հեռանկարով»

Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Երևանի 2005-2020թթ. գլխավոր հատակագծի մեջ քաղաքի զարգացման նոր ուղղությունների ընդգրկումը, գործողության ժամկետի մինչև 2030թ. երկարացումը, քանի որ գլխավոր հատակագծի իրագործման ժամկետն ավարտվում է 2020թ.:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Գլխավոր հատակագծի ճշգրտման և լրամշակման աշխատանքներ՝ • Երևանի 2005-2020թթ. Գլխավոր հատակագծի իրագործման գործողության ժամկետի մինչև 2030թ. երկարացում, • Երևանի մինչև 2030թ. քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունների հստակեցում, • քաղաքի համաչափ զարգացման ուղղությունները, • Կայուն զարգացման «ՌԻՕ+20» գագաթաժողովի որոշումների իրագործմանն ուղղված «Կայուն քաղաքներ և կանաչ ճարտարապետություն» միջոցառումների պլանավորում, • Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման կարգավորմանն ուղղված օրենքով նախատեսվելիք միջոցառումներ, • Երևանի ճանապարհափողոցային ցանցի մինչև 2030թ. զարգացման հիմնական ուղղությունները և այլ:				
Համագործակցություն	ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմիններ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Երևանի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի մշակման առաջադրանքի մշակում և հաստատում	Երևանի մինչև 2030թ. քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունների հստակեցում, Գլխավոր հատակագծի հայեցակարգի մշակում	Երևանի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի մշակում՝ մինչև 2030 թվականը զարգացման հեռանկարով	Գլխավոր հատակագծի փորձաքննության, համաձայնությունների և հաստատման գործընթաց	
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	2019-2022թթ.				

«Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցի մինչև 2030 թվականը

զարգացման համալիր սխեմայի մշակում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է քաղաքի ճանապարհափոխադրողային ցանցի մինչև 2030 թվականը զարգացման համալիր սխեմայի կազմումը, Երևանի Գլխավոր հատակագծի իրագործման ընթացքի ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած անհրաժեշտ փոփոխությունների և լրացումների կատարումը:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երևանի ճանապարհափոխադրողային ցանցի բարելավման ուղղությամբ կարևորվում է երեք հիմնական ուղղություններ՝ ա. քաղաքի կենտրոնի բեռնաթափում, բ. քաղաքի կենտրոնի ճանապարհափոխադրողային ցանցի բարելավում, գ. Երևանը շրջանցող մայրուղային ճանապարհների կազմակերպում:				
Համագործակցություն	ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմիններ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Երևանի Գլխավոր հատակագծի իրագործման և ճանապարհատրանսպորտային ցանցի զարգացման ընթացքի ուսումնասիրություն և վերլուծություն	Ճանապարհափոխադրողային ցանցի զարգացման համալիր սխեմայի մշակում			
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	2019-2020թթ.				

«Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտևորման նախագծի մշակում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է մշակել Երևանի Նոր-Նորք վարչական շրջանի գոտևորման նախագիծը, որը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է, և որով կսահմանվեն նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով: Նախագծային տարածքը՝ 1 449,8 հա:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախագիծըտարածականզարգացման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթուղթ է և հիմք է քաղաքաշինական նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման, շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար: Նախագիծը բաղկացած է գրաֆիկական և տեքստային մասերից:				
Համագործակցություն	ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմիններ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Գոտևորման նախագծի մշակում(սկսվել է)	Գոտևորման նախագծի մշակում,	Նախագծի փորձաքննություն, համաձայնեցումներ, հաստատում		
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան, քաղաքաշինական գործունեության սուբյեկտներ				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման	2019-2020թթ.				

ժամակակացույց	

«Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտևորման նախագծի մշակում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է մշակել Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտևորման նախագիծը, որը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է, և որով կսահմանվեն նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով: Նախագծային տարածքը՝ 1 724,0 հա:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախագիծը տարածական զարգացման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթուղթ է և հիմք է քաղաքաշինական նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման, շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար: Նախագիծը բաղկացած է գրաֆիկական և տեքստային մասերից:				
Համագործակցություն	ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմիններ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Գոտևորման նախագծի մշակման առաջադրանքի հաստատում	Գոտևորման նախագծի մշակում, հասարակության իրազեկում	Նախագծի փորձաքննություն, համաձայնեցումներ, հաստատում		
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան, քաղաքաշինական գործունեության սուբյեկտներ				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	2019-2021թթ.				

«Երևան քաղաքի քաղաքաշինական կադաստրի ստեղծում և ներդրում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Երևան քաղաքի քաղաքաշինական կադաստրի ստեղծումը և ներդրումը:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Քաղաքաշինական կադաստրի ստեղծման և ներդրման ուղղությամբ տեխնիկական նախագծի մշակում				
Համագործակցություն	ՀՀ քաղաքաշինության կոմիտե, ՀՀ կադաստրի կոմիտե, ՀՀ կառավարման այլ համապատասխան մարմիններ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
		Քաղաքաշինական կադաստրի ստեղծման և ներդրման ուղղությամբ տեխնիկական նախագծի մշակում			
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան, ՀՀ կառավարման մարմիններ, կազմակերպություններ, քաղաքաշինական գործունեության սուբյեկտներ				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	2020թ.				

«Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի չմշակված հատվածների գոտևորման նախագծի մշակում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է մշակել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի չմշակված որոշ հատվածների գոտևորման նախագիծը, որը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է, և որով կսահմանվեն նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով: Գոտևորման նախագծով ապահովված տարածքը՝ 1205,5 հա, չմշակված նախագծային տարածքը՝ 1 310,5 հա:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախագիծը տարածական զարգացման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթուղթ է և հիմք է քաղաքաշինական նպատակներով հողամասերին (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման, շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար: Նախագիծը բաղկացած է գրաֆիկական և տեքստային մասերից:				
Համագործակցություն	ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմիններ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
		Գոտևորման նախագծի մշակման առաջադրանքի հաստատում	Գոտևորման նախագծի մշակում, հասարակության իրազեկում	Նախագծի փորձաքննություն, համաձայնեցումներ, հաստատում	
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան, քաղաքաշինական գործունեության սուբյեկտներ				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	2020-2022թթ.				

«Երևանի Էրեբունի վարչական շրջանի չմշակված հատվածների գոտևորման նախագծի մշակում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է մշակել Երևանի Էրեբունի վարչական շրջանի չմշակված որոշ հատվածների գոտևորման նախագիծը, որը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է, և որով կսահմանվեն նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով: Գոտևորման նախագծով ապահովված տարածքը՝ 1097,2 հա, չմշակված նախագծային տարածքը՝ 3 752,8 հա:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախագիծը տարածական զարգացման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթուղթ է և հիմք է քաղաքաշինական նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման, շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար: Նախագիծը բաղկացած է գրաֆիկական և տեքստային մասերից:				
Համագործակցություն	ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմիններ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
			Գոտևորման նախագծի	Գոտևորման նախագծի	Նախագծի փորձաքննություն,

			մշակման առաջադրանքի հաստատում	մշակում, հասարակության իրազեկում	համաձայնեցումնե, հաստատում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան, քաղաքաշինական գործունեության սուբյեկտներ				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	2021-2023թթ.				

«Երևանի Մոնթե Մելքոնյան փողոցի արևմտյան հատվածի կառուցապատման կարգավորման նախագծի և Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքի գոտևորման և կառուցապատման էսքիզային նախագծերի մշակում»

Ծրագրի նպատակը	Նախատեսվում է մշակել Երևանի Մոնթե Մելքոնյան փողոցի արևմտյան հատվածի կառուցապատման կարգավորման նախագիծ և Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքի (Պասկևիչի բլուրից հարավ) գոտևորման և կառուցապատման էսքիզային նախագծեր, տվյալ գոտիներում միջավայրի կազմակերպման նպատակով:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Մոնթե Մելքոնյան փողոցի արևմտյան հատվածի նախագծային տարածքը կազմում է 83,8 հա, Իսակով - Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքը՝ մոտ 64 հա:				
Համագործակցություն	ՀՀ քաղաքաշինության կոմիտե				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
		կառուցապատման կարգավորման նախագծի և գոտևորման ու կառուցապատման էսքիզային նախագծերի մշակում			
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ				
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	2020թ.				

«Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանի էսքիզային առաջարկ «Սասունցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» մետրոյի կայարանների միջև՝ Սուրմալու տոնավաճառի հարևանությամբ»

Ծրագրի նպատակը	Երևանում էլեկտրական հասարակական տրանսպորտի, էկոլոգիապես մաքուր, անվտանգ տրանսպորտային միջոցի մետրոպոլիտենի գոյություն ունեցող ցանցի զարգացման ալտերնատիվ հնարավորություն, Էսքիզային նախագիծը ենթադրում է «ՍասունցիԴավիթ» և «ԶորավարԱնդրանիկ» կանգառների միջև հեռավորության նվազեցում, տրանսպորտային խնդիրների թեթևացում, ավտոմեքենաների կրճատում, մարդկային հոսքերի կառավարում, հասանելիության հեշտացում, մետրոյի զարգացում, շրջակա միջավայրի տնտեսական էֆեկտ և շահութաբերություն:
Ծրագրի	Նախագծվող կայարանը նախատեսվում է «ՍասունցիԴավիթ» և

համառոտ նկարագրությունը	«ԶորավարԱնդրանիկ» կայարանների միջնամասում, Փեթակ և Սուրմալու առևտրի կենտրոնների հատվածում, որտեղ առկա է մարդկային և տրանսպորտային մեծ հոսքեր: Գոյություն ունեցող ցանցի օգտագործումը նոր կայարանի համար ապահովում է առաջարկի իրականացման մատչելիությունը: Նոր կայարանը իրենից ներկայացնում է թեթև, մեկ հարկանի շինություն, որն ինքն իրենով հանդիսանում է նաև ծածկ մետրոյի հարթակների համար: Շինության պարզ, ուղղանկյուն ֆորման կազմակերպված է տարբեր մեծության, ձևի և տարածական որակ ունեցող ծավալների հերթականությամբ, որոնք միմյանց կապված են նեղ կամուրջներով: Կանգառի նման կազմակերպման միջոցով զուգահեռներ են անցկացվում մետրոյի համակարգի հետ, ինչը իրենից ներկայացնում է տարբեր որակներ ունեցող կայարանների ցանց՝ բնորոշ քաղաքային տարբեր միջավայրերի, և դրանք միմյանց կապող թունելները: Կայարանի ծավալները հիմնավորվում են տարբեր կոմերցիոն և հասարակական ֆունկցիաներով: Կոմերցիոն օգտագործման միջոցով կայարանը կդառնա եկամտաբեր, ինչը պակաս կարևոր գործոն չէ նախագիծը կյանքի կոչելու համար: Դիտարկելով կայարանի սպասասրահի միջավայրը, ուղևորների դիտակետից, ընկալվում է վերգետնյա շինության ծավալատարածական հորինվածքը:
Համագործակցություն	Երևանի մետրոպոլիտեն, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնքը և բնակիչները, ՀՀ պետական կառավարման մարմինները, մասնավոր ներդրողները
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	2019-2022թթ.

«Երևան քաղաքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցուն և Երվանդ Քոչարի փողոցին հարող տարածքի (Կորի փողոցի մոտ՝ Կրիվոյ թաղամաս) բնակելի, հասարակական, հյուրանոցային համալիրի շինարարության կառուցապատման ներդրումային ծրագիր»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի կետրոնում գոյություն ունեցող խարխուլ բնակելի ֆոնդի վերացման և վերակառուցման ուղղությամբ ծրագրային աշխատանքների իրականացմանն ուղղված քայլեր՝ Տարածքի կառուցապատման արդյունքում նախատեսվում է ունենալ համաքաղաքային նշանակության ժամանակակից չափորոշիչներին համապատասխանող բազմաֆունկցիոնալ համալիր, որը կներառի հասարակական օբյեկտներ, գործարար և առևտրի կենտրոններ, հյուրանոցային, մարզական համալիր,ավտոկայանատեղիներ, բնակելի շենքեր, կանաչ գոտիներ:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երևան քաղաքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցուն և Երվանդ Քոչարի փողոցին հարող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 3,7 հա: Նշված տարածքը պայմանականորեն բաժանված է 3 լոտերի (13 650, 13 031 և 10 245 ք. մ): Ներկա պահին տարածքում գտնվում են բազմաթիվ հին բնակելի շինություններ, որոնք հանրության գերակա շահերի ապահովման նպատակով նախատեսվում է օտարել և տարածքը վերակառուցել: Ներդրողի/կառուցապատողի հետ մտադրությունների մասին հուշագրի ստորագրման հիման վրա քաղաքապետարանը կարող է ներդրողի պատվերով կազմակերպել օտարվող հողամասերի և շենք/շինությունների գնահատման գործընթացը, ի վերջո հանձնելով կառուցապատողին ազատ շինարարական հրապարակը: Նշված տարածքում առաջարկվում է կառուցել՝ 1. Ստորգետնյա ավտոկայանատեղի ընդհանուր՝ 41 630 քմ մակերեսով, 2. Առևտրային տարածքներ ընդհանուր՝ 9 760 քմ մակերեսով, 3. Հասարակական տարածք ընդհանուր՝ 2450 քմ մակերեսով, 4. Մանկապարտեզ կամ այլ մանկական նախադպրոցական կրթության

	տարածք ընդհանուր՝ 1 750 քմ մակերեսով 5. Գրասենյակային տարածքներ՝ 6 330 քմ մակերեսով 6. Բնակելի տարածքներ՝ 58 020 քմ մակերեսով 7. Հյուրանոց՝ 15 600 քմ մակերեսով: Նախատեսվող շինարարական և կառուցապատման աշխատանքների ընդհանուր մակրերեսը կազմում է 135 540 ք.մ: **1. Բնակեի շենքերի կառուցում** Տվյալ տարածքում նախատեսվում է կառուցել 13 մասնաշենք, որից 11 շինություն նախատեսված է իբրև բնակելի շենքեր, շենքերի հարկայնությունը՝5-15 հարկանի(58 020 ք.մ ընդհանուր մակերեսով),13 մասնաշենքերի -1-ից -3 հարկերում ներառված կլինեն ավտոկայանատեղիներ, ընդհանուր 971 մեքենաների համար: Նախատեսվում են նոր բնակելի շենքերին հարող բակային կանաչապատ տարածքներ, խաղահրապարակներ և մանկակական զբոսայգիներ: Բնակելի շենքերի առաջին հարկերում և հարակից տարածքներում միաժամանակ նախատեսվում է բիզնես կենտրոնների, սպասարկման սրահների, սրճարանների և ռեստորանների կառուցում: **2. Գործարար -առևտրային և ժամանցի բազմաֆունկցիոնալ համալիրների կառուցում** Նախատեսվում է տարածքում ստեղծել գործարար-առևտրային և ժամանցի բազմաֆունկցիոնալ համալիրներ, որոնք իրենց մեջ ներառելու են՝ գործարար-առևտրային և հասարակական տարածքներ, գրասենյակային տարածքներ: Գործարար-առևտրային և ժամանցի բազմաֆունկցիոնալ համալիրների կառուցման համար նախատեսված է (18 540 ք.մ ընդհանուր մակերես): **3.Մանկապարտեզի կամ այլ մանկական նախադպրոցական կրթության տարածք** Նախատեսվում է տարածքում ստեղծել ժամանակակից չափորոշիչներին համապատասխան մանկապարեզ, մանկական և երիտասարդական ուսումնական կենտրոն: Նախատեսվաում է մանկապարտեզի և այլ մանկական նախադպրոցական կրթության տարածքի համար տրամադրել 1 750 քմ ընդհանուր մակերես: **4. Հյուրանոցային համալիրի կառուցում** Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 14 հարկանի հյուրանոցային համալիրի կառուցում, որը իր մեջ կներառի 3 հարկանի ստորգետնյա ավտոկայանատեղի: Հյուրանոցային համալիրի ընդհանուր մակերեսը կկազմի 15 600 ք.մ:
Համագործակցություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ՝ Կադաստրի կոմիտե, քաղաքաշինության կոմիտե, մասնավոր ներդրողներ, Երևան համայնքի բնակիչներ և այլն
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնք և տվյալ վերակառուցվող թաղամասի բնակիչները, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	Ծրագրի տևողությունը 5տարի: Ծրագրի սկիզբը 2019 թվականից սկսած շարունակական՝ կախված ներդրումների ներգրավվման տեմպերից մինչև 2023 թվական:

«Երևանի քաղաքի Աջափնյակ թաղամասի Հալաբյան փողոցի մոտ մետրոպոլիտենի նոր կայարանի և դրան կից բազմաֆունկցիոնալ բարձրահարկ կառույցներով, ստորգետնյա ավտոկայանատեղով, բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի իրականացման ներդրումային ծրագիր»

Ծրագրի նպատակը	Երևանում էլեկտրական հասարակական տրանսպորտի, էկոլոգիապես մաքուր, անվտանգ տրանսպորտային միջոցի զարգացմամբ քաղաքի շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցման ապահովում, կենտրոնի տրանսպորտային հոսքերի անագել կազմակերպման համար բեռնաթափում, նաև քաղաքի վարչական շրջանների համաչափ զարգացման համար կարևոր խթան, դրանց գրավչության բարձրացմանն ուղղված քայլ, հնարավորինս ժամանակի կորստի կրճատմամբ շրջանները միմյանց կապող հնարավորություն

Ծրագրի համառոտ նկարագրությունը	Մետրոպոլիտենի համակարգի ընդլանմամբ՝ նոր զարգացման սխեմայի կազմում: Ցանցը կտարածվի դեպի քաղաքի հյուսիս-արևմտյան հատված՝ Աջափնյակ վարչական շրջան և կմեկնարկեն դրա շինարարության առաջին փուլի աշխատանքները: Արաբկիր համայնքից այն կապվելու է Աջափնյակ համայնքի հետ Հալաբյան-Աբելյան փողոցների խաչմերուկի մոտ: Նոր կայարանի ավելացումն առավել արդյունավետ կդարձնի մետրոյի աշխատանքը: Դեպի Աջափնյակ ուղեգիծ կառուցելու դեպքում կշահագործվի փորված թունելներից մեկը, որը Մերգելյան ինստիտուտից տանում է դեպի Հրազդանի ձախ ափ: Երևանի մետրոպոլիտենի կառուցվող կայարանը պետք է միանա այժմ գործող վերջին՝ «Բարեկամություն» կայարանին: Հալաբյան-Աբելյան փողոցների խաչմերուկի մոտ Թումոյի տարածքի հարևանությամբ գտնվող տարածքում կայարանի հետ նախատեսվում է կից բազմաֆունկցիոնալ բարձրահարկ կառույցներով, ստորգետնյա ավտոկայանատեղով, բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի կառուցում՝ **1. Բազմաֆունկցիոնալ բարձրահարկ կառույցներ** Կառույցների մակերեսներ և հարկայնություն 1. 1340քմ x 28 հարկ = 37520 քմ 2. 1300 քմ x 13 հարկ = 16900 քմ **2. Ստորգետնյա ավտոկայանատեղի** 11680 քմ - մոտ 600 ավտոմեքենա Վերգետնյա ավտոկայանատեղի - 2000քմ -մոտ 100 ավտոմեքենա **3.Բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի** 49000 քմ (չի ներառում կայանատեղների մակերեսը)
Համագործակցություն	Երևանի մետրոպոլիտեն, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնքը և բնակիչները, ՀՀ պետական կառավարման մարմինները, մասնավոր ներդրողները
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	Ծրագրի սկիզբը 2019 թվականից սկսած շարունակական՝ կախված ներդրումների ներգրավվման տեմպերից

«Երևան քաղաքի Նոր-Նորքի զանգվածը կենտրոն վարչական շրջանի հետ կապող տրանսպորտային միջոցի նոր (բազմամոդուլ) ճոպանուղու՝ ստեղծման ներդրումային ծրագիր»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի արդիականացման՝ էլեկտրականությամբ աշխատող միջոցների կիրառմամբ այլընտրանքային տրանսպորտի ձևերի ներմուծման ռազմավարությանն ուղղված, տրանսպորտային հոսքերի բեռնաթափման, գոյություն ունեցող ճանապարհների ծանրաբեռնվածության թեթևացման նպատակով նոր (բազմամոդուլ) ճոպանուղու ներդրման միջոցով քաղաքի համայնքների միջև լրացուցիչ օդային կապի ստեղծում, քայլ դեպի կանաչ քաղաք, միաժամանակ զբոսաշրջային գրավչության բարձրացում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նոր Նորքի զանգվածը քաղաքի կենտրոնի հետ կապվելու է բազմամոդուլ ճոպանուղու միջոցով: Այն կունենա կայարաններ
Համագործակցու	ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ

թյուն	
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնքի բնակիչներ, մայրաքաղաքի հյուրեր և զբոսաշրջիկներ, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	Ծրագրի սկիզբը 2019 թվականից սկսած շարունակական՝ կախված ներդրումների ներգրավվման տեմպերից

« Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի կառուցում (Բաբաջանյան-Աշտարակ և Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածներ)»

Ծրագրի նպատակը	Նախատեսվում է կառուցել Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի երկու ճանապարհահատվածները՝ Բաբաջանյան-Աշտարակ և Արգավանդ-Շիրակ
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատված – 9.4 կմ Արգավանդ-Շիրակ ճանապարհահատված – 2.7 կմ
Համագործակցություն	Ասիական զարգացման բանկ, ՀՀ կառավարություն
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնք, Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	2017 թվականի դեկտեմբերի 11-ին կնքվել է Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր, որը նախատեսվում է ավարտել 2020 թվականին: 2019 թվականի հուլիսի 16-ին կնքվել է Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր, որը նախատեսվում է ավարտել 2021 թվականին:

«Հին Երևան պատմաճարտարապետական միջավայր»,«Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցում», « Կոնդ թաղամասի վերակառուցման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի կենտրոնում գոյություն ունեցող բնակելի խարխուլ ֆոնդի վերացում, բնակչության կենսամիջավայրի, բնակարանային պայմանների բարելավում, թաղամասերի կապիտալ վերակառուցում՝ ինժեներական հաղորդակցուղիների բարելավում: 1.«Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծում», 2.«Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցում», 3.« Կոնդ թաղամասի վերակառուցման ծրագիր»
Ծրագրի համառոտ նկարագրություն	1.Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն Գլխավոր պողոտայի՝ Փ.Բուզանդ, Եզ. Կողբացու, Արամի փողոցներով պարփակված տարածքում նախատեսվում է իրականացնել «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրը և հնարավորություն է ստեղծվում կորցված և քանդված պատմության և մշակույթի հուշարձանների տեղափոխման եղանակով տարածքում վերստեղծել քաղաքաշինական գեղագիտական միջավայր, 2. Տարածքը կհանդիսանա որպես ճարտարապետական մեկ համալիր՝ պահպանելով ներդաշնակ կառուցապատում, ժամանակակից պահանջներին համապատասխան փողոցներ և մայթեր, ինչպես նաև տարածքում առկա բնակարանային ֆոնդին մի քանի անգամ գերազանցող նոր բնակարանային ֆոնդի կառուցում, կառուցվող նոր փողոցները կստեղծեն այլընտրանքային երթևեկության ճանապարհներ, ինչպես նաև կառուցվող ստորգետնյա ավտոկայանատեղերը հնարավորություն կընձեռեն նվազեցնելու Երևան քաղաքի կենտրոնում փողոցների ծանրաբեռնվածությունը: Բացի այդ հիմնովին նորացվելու են ինժեներատեխնիկական ենթակառուցվածքները, որոնք այժմ գտնվում են

	անբավարար վիճակում 3. Կոնդում նախնական ուսումնասիրությունների համաձայն թաղամասում առկա է մոտ իրացման ենթակա 130,000 քմ մակերեսով երրորդ անձանց պատկանող հողամաս, որը ծանրաբեռնված է իրացման ենթակա մոտ 68.000 քմ մակերեսով շինություններով: Նշված տարածքի նկատմամբ գերակա հանրային շահ ճանաչելու արդյունքում հնարավոր կլինի մասնավոր միջոցների հաշվին տարածքն ազատել, ինչի արդյունքում նոր հնարավորություն կստեղծվի իրականացնել խորհրդանշական և պատմական նշանակություն ունեցող թաղամասի ստեղծում: Իրացման աշխատանքներ նախատեսվում է իրականացնել 5 տարվա ընթացքում, ֆինանսական միջոցների առկայության դեպքում նաև ավելի շուտ:
Համագործակցություն	1. «Ի ԷՄ ԱԻ» ՓԲԸ, «Սերգե Ագոպիգ Դեր Սահագույան» ՍՊԸ, «Սթարլայն» ՍՊԸ 2. «Սիթի Սենթի Դիվելըփմենթ» ՓԲԸ և ընկերությունից առանձնացման եղանակով ստեղծված 17 ընկերություն 3. Մասնավոր ներդրողներ
Ծրագրի հիմնական շահառուները	Քաղաքացի, ներդրողներ և Երևանի քաղաքապետարան
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	1.Համաձայն ՀՀ Կառավարության 2018թ. դեկտեմբերի 27-ի հ. 1528-Ն որոշման Գույքերի օտարման աշխատանքներ մինչև 2020թ. հունվարի 1-ը Քաղաքաշինական ծրագրի ավարտ 2024թ. մայիսի 15-ը 2. Համաձայն ՀՀ Կառավարության 22.03.2018թ. հ.332-Ն որոշման Գույքերի օտարման աշխատանքներ մինչև 2023թ. հունվարի 1-ը Քաղաքաշինական ծրագրի ավարտ 2024թ. դեկտեմբերի 31 3.Կոնդում ներկայումս իրականացվում է տարածքի ուսումնասիրություն, առկա գույքային այլ խնդիրների լուծման աշխատանքներ: Դրանք արդյունավետ կազմակերպելու նպատակով կայացվել է Երևանի քաղաքապետի 12.07.19թ. Կոնդ թաղամասի նախատեսվող վերակառուցման, կառուցապատման աշխատանքների հետ կապված խնդիրների լուծման հանձնաժողով ստեղծելու մասին հ.695-Ա կարգադրություն

«Ծովակալ Իսակովի պողոտան Արշակունյաց պողոտային միացնող ավտոմայրուղու կառուցում»

Ծրագրի նպատակը	Ավտոմայրուղու կառուցում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ավտոմայրուղին հանդիսանում է Լենինգրադյան փողոց–Ծովակալ Իսակովի պողոտա կառուցված ավտոմայրուղու (Մոնթե Մելքոնյան) շարունակությունը, որն անցնելով նախատեսվող «Երևանի-Բերդ» նախագծային թաղամասի եզրով և Հրազդան գետի վրայով՝ միանում է Արշակունյաց պողոտային: Նախագծով նախատեսված է լրացնել Իսակով պողոտայի հանգույցի թևերը, որով կապահովվի երթևեկության ուղղությունների բոլոր կապերը: Մայրուղու երկու հատվածների ամբողջականությունը հանդիսանում է մայրաքաղաքի կենտրոնի երթևեկության բեռնաթափման տարանցիկ լուծումներից մեկը:
Համագործակցություն	Մասնավոր ներդրում
Ծրագրի հիմնական շահառուները	Քաղաքացի, ներդրող և Երևանի քաղաքապետարան
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Երևանի քաղաքապետի 12.07.2013թ. հ. 3506-Ա որոշմամբ ավտոմայրուղու կառուցման պատվիրատու է ճանաչվել «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ը, Երևանի քաղաքապետի 18.07.19թ. հ.2491-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ ծրագիրը համակարգելու նպատակով:

«Մալաթիա-Սեբաստիա, Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ հատվածի ճանապարհային ցանցի և ինժիներական ենթակառուցվածքների կառուցում»

Ծրագրի նպատակը	Թաղամասի կառուցապատման կանոնակարգման համար Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ տարածքի ներթաղամասային և մայրուղային փողոցների և ինժիներական ենթակառուցվածքների կառուցում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մալաթիա-Սեբաստիա, Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ տարածքի բնակելի և հասարակական կառուցապատման, ճանապարհային և ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, կապ, տնտեսական-կենցաղային կոյուղի, հեղեղատար կոյուղի, ոռոգման ջրամատակարարում, գազամատակարարում, Էլեկտրամատակարարում, արտաքին լուսավորություն) նախագծանախահաշվային փաստթղթերի կազմման, փորձաքննության եզրակացության տրամադրան աշխատանքներ և շինարարության իրականացում
Համագործակցություն	Մասնավոր ներդրում
Ծրագրի հիմնական շահառուները	Կառուցապատողներ և Երևանի քաղաքապետարան
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2020 թվական

«Երևան քաղաքի Կասկադ համալիրի տարածքում թանգարանի և հարակից հատվածի կառուցապատման ներդրումային ծրագիր»

Ծրագրի նպատակը	Կասկադ ճարտարապետական-կոթողային համալիրը հասցնել ավարտուն տեսքի: Կասկադ-համալիրի նախահեղինակը ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանն է, նրա նպատակն էր քաղաքի հյուսիսային և կենտրոնական հատվածները միմյանց կապել՝քաղաքի պատմականորեն բնակելի և մշակութային կենտրոնները ջրվեժների ու պարտեզների հսկայական կանաչ տարածքով: Այդ գաղափարը մոռացության է տրվել, հետագայում ճարտարապետ Ջիմ Թորոսյանիկողմից կյանքի է կոչվել նոր գաղափարներով խորհրդային տարիներին, որի շինարարությունը ընդհատվել է երկրաշարժի տարիներին: Ամերիկահայ գործարար, բարերար Ջերարդ Գաֆէսճեանը համագործակցելով Երևանի քաղաքապետարանի և ՀՀ կառավարության հետ նախաձեռնել է համալիրի վերականգնումը և հիմնվել է Գաֆէսճեան արվեստի կենտրոնը /2002-2009թթ/: Այն ներկայացնում է ցուցադրություններ և բազմազան կրթական, մշակութային և համերգային ծրագրեր և միջոցառումներ բոլոր տարիքային խմբերի համար: Համալիրն ամբողջական տեսքի բերելու անհրաժեշտություն
Ծրագրի համառոտ նկարագրությունը	**Համալիրի ներկա վիճակի նկարագրություն՝** Այս համալիրը աստիճանավոր անցումների, շատրվանների ու ծաղկանոցների մի համակարգ է, որը Երևանի կենտրոնը միացնում է Հաղթանակի զբոսայգու հետ: Այն ունի հինգ մակարդակ, որոնցից յուրաքանչյուրում տեղադրված են համաշխարհային ճանաչում ունեցող քանդակագործների աշխատանքները, խաչքարեր և հարթաքանդակներ: Ամենավերևում բացվում է հիասքանչ տեսարան' Երևանի համայնապատկերը, որտեղից երևում է քաղաքն ամբողջությամբ:Համալիրի վերևում է գտնվում Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի հուշարձանը, իսկ ներքևում Ալեքսանդր Թամանյանի արձանն է: Նախատեսվում է Կասկադ համալիրը բերել ամբողջական տեսքի, նաև լանդշաֆտի կազմակերպման միջոցով այն բարեկարգել, կանաչապատել և այդպիսով դարձնել առավել ակտիվ հանրային գոտի, դրան հաղորդելով նաև զբոսաշրջային գրավչություն, հաշվի առնլով առկա տեղանքը, շրջապատն ու բացվող

	տեսարանները, ամրապնդել ու ընդգծել հիմնական ժառանգված քաղաքաշինական սկզբունքները, որպես քաղաքի կենտրոնի հատակագծային կառուցվածքի կազմավորման հիմնական առանցի վրա առկա դոմինանտային և վայր, և կառույց, Երևանի ճարտարապետական համալիրների, հրապարակների, կանաչ ու ջրային տարածքների համակարգի հիմնական բաղկացուցիչ մաս: Այդ նպատակով մշակվել են առաջարկներ 1.Կասադի վերակառուցման համար **Գաֆեսջյան հիմնադրամի պատվերով «David Hotson Architects»-ի կողմից առաջարկը** առկա է, որը անհրաժեշտության դեպքում կներկայացվի: Նախատեսվել է նոր մշակութային և հանգստի տարածքների ստեղծմամբ հանրային գոտիների ընդլայնում նաև կոմերցիոն հատվածների ներմուծում: Կապերը կիրականացվեն աստիճաններով և շարժասանդուղքներով: **2.«Կասկադի վերնամասում թանգարանի ընդլայնման և 2000 տեղով համերգային դահլիճի էսքիզային առաջարկ» /առկա է ալբոմը/ «Տարբերակ» ճարտարապետական արվեստանոցի նախագծային խմբի կողմից առաջարկվում է՝** **Նախագծի նկարագրություն** Հիմնական գաղափարն այն է, որպեսզի մարդը կասկադով տեղաշարժվելիս հանգիստ ճեմելու հնարավորություն ունենա, մինչդեռ ներկա պահին մարդը աստիճաններով միապաղաղ տեղաշարժվում է՝ առանց շեղվելու հիմնական առանցքից, որը բավականին հոգնեցուցիչ է: Փորձել է արվել ստեղծել նոր առանցքներ՝ առաջացնելով նոր դիտակետեր: Թեքահարթակների միջոցով առաջացել է ավելի հանգիստ տեղաշարժվելու, ճեմելու հնարավորություն: Շինությունն ունի երեք մակարդակ:Ստորին հարկերում տեղակայված է համերգասրահ 2000 հանդիսատեսի համար, որն ունի երեք մուտք (դիտահարթակի վրայից, Սարալանջի փողոցի կողմից, Կասկադի աստիճանների և շարժասանդուղքների վրայից): Երկրորդ մակարդակում՝ ուղղանկյուն ծավալների մեջ շարունակվում է թանգարանը, իսկ վերին մասում՝զիգզագաձև ճեմուղին է, որը կասկադի աստիճանները կապում է գոյություն ունեցող դիտահարդակի հետ: Ձախ հատվածում կասկադի գոյություն ունեցող աստիճանները և ստորգետնյա շարժասանդուղքները շարունակվում են մինչև վերևի դիտահարթակ, տալով հնարավորություն ավելի արագ տեղաշարժվել:
Համագործակցություն	Գաֆէսճեան արվեստի կենտրոն, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ,
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնք, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ, Երևան համայնքի բնակիչներ, Երևան այցելող հյուրեր և զբոսաշրջիկներ, Գաֆէսճեան արվեստի կենտրոն
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	Ծրագրի սկիզբը 2019 թվականից սկսած շարունակական՝ կախված ներդրումների ներգրավվման տեմպերից

ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ

Հաշվի առնելով ժամանակի պահանջները, այժմ դժվար է պատկերացնել քաղաքային տնտեսության որևիցե ոլորտ, ուր իրենց հետքը չեն թողել տեխնոլոգիական զարգացումներն ու նորարարական լուծումները, ինչի արդյունքում քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում ավելի արդյունավետ կազմակերպվում և իրականացվում է քաղաքային ենթակառուցվածքների զարգացման գործընթացը:

Երևանի քաղաքապետարանի ենթակառուցվածքներում արդեն իսկ քաղաքային տնտեսության բազմաթիվ ոլորտներ թվայնացված են, ավտոմատացվել են գործառույթներ, ներդրվել կառավարման, վերահսկման, տեղեկատվական և անվտանգության համակարգեր:

Այսօր, քաղաքապետարանի կողմից տրամադրվող ծառայությունների գերակշիռ մասը մեր քաղաքացիները կարողանում են ստանալ նաև էլեկտրոնային եղանակով Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքից, և կարող ենք փաստել, որ դրանցից օգտվողների թիվը օրեցօր աճում է:

2019 թվականին Մակի զարգացման ծրարգրերի գրասենյակի աջակցությամբ մշակվեց քաղաքային տնտեսության ոլորտների թվային տրանսֆորմացիայի «ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔ» ռազմավարական ծրագիրը, ինչը ուղենիշ է հանդիսանալու ներդրվող համակարգերի, առաջնահերթությունների և դրանց կառուցվածքային սկզբունքների համար:

Երևան քաղաքում կառուցապատման, տրանսպորտի, արտադրությունների և ծառայությունների օրեցօր ավելացումը, տեղեկատվության փոխանակման ծավալների և արագության նոր պահանջները, և ընդհանրապես քաղաքային կյանքի ինտենսիվության բարձրացումը նոր խնդիրներ է առաջ բերում, որոնց լուծման համար անհրաժեշտ են նորարարական մոտեցումներ և դրանց իրագործման ռազմավարություն:

Աշխարհում ընթացող տեխնոլոգիական զարգացումները մարտահրավերներ են նետում՝ առաջ բերելով նոր պահանջներ ինչպես նաև ռիսկեր: Այս միտումը, բնորոշ լինելով զարգացող քաղաքներին, նկատելի է նաև Երևանում:

Հիմնախնդիրներ

1. *Թվայնացման արդյունքում առաջացող կիբեր անվտանգության ապահովում:*
2. *Տեխնոլոգիական համակարգերի մատակարար ընկերություններից առաջացող կախվածություն:*
3. *Ոլորտի մասնագետների սղություն և դրանց պահանջարկի անընդհատ մեծացող տեմպեր:*
4. *Անձնական տվյալների պաշտպանություն:*
5. *Քաղաքային տնտեսության ոլորտների աշխատակիցների տեխնոլոգիական գիտելիքների պակասի հետևանքով անհրաժեշտ ՏՏ համակարգի տեխնիկական պահանջների մշակման անկարողություն:*

«ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔ»

Ծրագրի նպատակը	Ժամանակի պահանջներին համահունչ զարգացման, քաղաքի դիմակայունության և անվտանգության բարձրացման, ռեսուրսների խնայողության, էկոհամակարգի բարելավման, տրամադրվող ծառայությունների որակի և քաղաքացիների կենսամակարդակի բարձրացման, ինչպես նաև ներդրումներ ներգրավելու նպատակով անհրաժեշտ է քաղաքային ենթակառուցվածքնում իրականացնել թվային տրանսֆորմացիա՝ համաձայն մշակված ռազմավարության:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	«ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔ» ծրագրով նախատեսվում է քաղաքային տնտեսության բոլոր ոլորտներում ներդնել գործառույթների ավտոմատացման, տեղեկատվական, վերահսկման, կառավարման համակարգեր, տրամադրել էլեկտրոնային

	ծառայություններ, ներդնել քաղաքի անվտանգությանն ու դիմակայունության բարելավմանն ուղղված համակարգեր, նորարարական տեխնոլոգիաների կիրառումով բարելավել քաղաքի էկոլոգիան, զարգացնել ենթակառուցվածքները, ստեղծել քաղաքի միասնական կառավարման, և ծառայությունների վերահսկման կենտրոն, ապահովել առկա համակարգերից և բանացանցից անհրաժեշտ տվյալների մեկտեղումը և դրանց տարածաժամանակային վերլուծությունը՝ որոշումների ընդունման գործընթացների աջակցության նպատակով:
Համագործակցություն	ՄԱԶԾ (UNDP), «ՋԻ ԱՅ ՋԵԹ» (GIZ) GmbH), Համաշխարհային Բանկ (World BANK), Գործընկեր քաղաքներ, Ընկերություններ:
Ծրագրի անմիջական նպատակը	Կառավարման կենտրոնի ստեղծում, կառավարման կենտրոնի իտեգրում առկա համակարգերի և առկա բանացանցի հետ: Քաղաքային տնտեսության բոլոր ոլորտների գործառույթների ավտոմատ կառավարման համակարգերի ստեղծում:
Ծրագրի հիմնական շահառուներ	Երևանի քաղաքապետարան, Քաղաքացիներ, Իրավաբանական անձիք, Զբոսաշրջիկներ:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2020-2023

ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Աջափնյակ վարչական շրջանի փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 116,76գծմ, ասֆալտբետոնե ծածկի ընդհանուր մակերեսը՝ 1700473քմ, որից ասֆալտապատված է 1450473քմ, ասֆալտապատման ենթակա է 325000քմ: Բակային տարածքների ընդնաահուր մակերեսը կազմում է 870000քմ, վերանորոգված է 290000քմ, վերանորոգման ենթակա է՝ 580000քմ, տեղադրված գույքի ընդհանուր թիվը կազմում է՝ նստարան՝ 1838 հատ, աղբաման՝ 649 հատ, զրուցարան՝ 96 հատ, մարզական գույք՝ 235 հատ, խաղային գույք՝ 228հատ: Լուսավորված է 75760գծմ փողոց, չլուսավորված՝ 25000գծմ: Եզրաքարերի ընդհանուր երկարությունը կազմում է 163464գծմ, որից վերանորոգված է ՝ 24410գծմ, վերանորոգման ենթակա՝ 139054գծմ Հենապատերի ընդհանուր մակերեսը կազմում է 6820քմ, վերանորոգված է՝ 3620քմ, վերանորոգման ենթակա է՝ 600քմ, թեքահարթակների ընդհանուր քանակը՝ 274 հատ:

Վարչական շրջանում առկա է թվով 439 բազմաբնակարանային շենք: Հարթ տանիքների ընդհանուր մակերեսը կազմում է 109148,1քմ, որից վերանորոգված է 19825քմ, վերանորոգման ենթակա է 12550քմ, թեք տանիքների ընդհանուր մակերեսը կազմում է 229269քմ, որից վերանորոգված է 24340քմ, վերանորոգման ենթակա է 104000քմ: Վերելակների թիվը կազմում է 345 հատ, վերանորոգված է 111-ը, վերանորոգման ենթակա է՝ 234-ը,մուտքերի ընդհանուր թիվը կազմումէ 1264, որից վերանորոգված է 584 մուտք, վերանորոգման ենթակա է 512 մուտք:

Կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 668,44քմ, սիզամարգերի ընդհանուր մակերեսը՝ 29,0քմ, ծաղկային մակերեսը՝ 1,5քմ, ծառատնկված վայրերի մակերեսը կազմում է 666,34քմ, ծառերի քանակը՝ 96000 հատ, զբոսայգիներ՝ 17.6քմ, պուրակներ՝ 0,5քմ, անտառպուրակներ 4,72քմ: Ոռոգման ցանցի ընդհանուր մակերեսը կազմում է 38000գծմ, որից նորոգված է 12000գծմ, նորոգման ենթակա է 26000գծմ:

Վարչական շրջանում գործում է 16 մանկապարտեզ,20 հանրակրթական դպրոց՝4 ավագ, 1 միջնակարգ և 15 հիմնական, 3 ԲՈՒՀ, 1 արհեստագործական ուսումնարան, 2 մասնավոր վարժարան, 1 արտադպրոցական կազմակերպություն՝ ՄՊՄԿ, 2 երաժշտական դպրոց, 1 արվեստի դպրոց, 2 գեղագիտական դաստիարակության կենտրոն, 1 մշակութային կենտրոն, 1 գրադարանային կենտրոնացված համակարգ /3մասնաճյուղով/, 1 մանկապատանեկան համալիր մարզադպրոց, 1 շախմատի դպրոց և 4 գիտահետազոտական ինստիտուտ: Մարզադպրոցը չունի դահլիճ, շենքային պայմանները խիստ անբավարար են, շենքը նախատեսված է միայն վարչական աշխատակազմի համար և վերանորոգված չէ:

Աջափնյակ վարչական շրջանում բնակվում են՝ Հայրենական պատերազմի 6 վետերան, 938 միայնակ տարեց, զոհված ազատամարտիկների 130 ընտանիք, վիրավոր ազատամարտիկների 83 ընտանիք, բազմազավակ անապահով 49 /4 և ավելի երեխա ունեցող նպաստառու/ ընտանիք, սիրիահայ 51 ընտանիք, սոցիալապես անապահով 2174 ընտանիք, հաշմանդամություն ունեցող 647 մարդ, տեղահանված 8 փախստական:

Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինը համագործակցում է «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի, «Արևամանուկ» ԲՀԿ-ի, «Լուսինե» ԲՀԿ-ի, «UOU մանկական գյուղեր» ՀԲՀ-ի, «Սկարպ» առողջական կենտրոն ՀԿ-ի, «Օրրան» ԲՀԿ-ի, «Էմպատիա» հոգեբանական ՀԿ-ի հետ:

Հիմնախնդիրներ

1. *Աղբավայրի մեկուսացման անհրաժեշտություն*

2. *Փողոցների, այգիների, բակային տարածքների մաքրման, աղբահանության և ձնամաքրման աշխատանքների կազմակերպման անհրաժեշտություն:*
3. *Կոյուղագծերի հիմնանորոգման անհրաժեշտություն:*
4. *Թեքահարթակների կառուցման անհրաժեշտություն*
5. *Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման անհրաժեշտություն:*
6. *Վերգետնյա և ստորգետնյա անցումների ոչ բավարար քանակ:*
7. *Բոլոր մանկապարտեզների բավարար շենքային պայմանների բացակայություն:*
8. *Վերելակային տնտեսության արդիականացման անհրաժեշտություն:*
9. *Կանաչ տարածքների, հանգստյան գոտիների ոչ բավարար մակարդակ:*
10. *Համատիրությունների գործունեության խիստ վերահսկման անհրաժեշտություն:*
11. *Դպրոցների ճաշարանների վերահսկման անհրաժեշտություն:*
12. *Ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի և վարչական շրջանի ենթակայության հիմնարկների շենքային պայմանների ոչ բավարար մակարդակ*
13. *Գյուղատնտեսական նշանակության շուկայի և ստորգետնյա ավտոկայանատեղի անհրաժեշտություն:*
14. *Նորաստեղծ թաղամասերի (Լուկաշին, Վ-3, Սիլիկյան, Փիրումյան, Գ-1 և Գ-3) ենթակառուցվածքների ստեղծում (ջրագծեր, կոյուղագծեր, եզրաքարեր, ճանապարհներ, արտաքին լուսավորություն և գազաֆիկացում):*
15. *Նոր ոռոգման համակարգերի ստեղծում (Սիլիկյան, Լուկաշին, Գ-1, Ջանիբեկյան, Բաշինջաղյան, Լևոնյան, Եղիազարյան, Խ.Խաչատրյան, Առաքելյան, Մարտիրոսյան և այլ փողոցներ):*
16. *Նոր հեղեղատար համակարգի կառուցում (Արզումանյան, Բաշինջաղյան 1-ին և Բեկնազարյան փողոցներ):*
17. *Բազմաբնակարան շենքերի երեսպատման սալիկների ամրացման աշխատանքներ (Նորաշեն թաղամասի թվով 31շենքեր և Բաշինջաղյան 188, 192, 196 և 198 շենքեր):*
18. *Վթարային բազմաբնակարան շենքերի ամրացման կամ քանդման աշխատանքներ:*
19. *Նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքներ:*
20. *Ստորգետնյա ավտոկայանատեղիների ստեղծում:*
21. *Բազմաբնակարան շենքերի բակային տարածքներում գտնվող ավտոտնակների ապամոնտաժում:*
22. *Վարչական շրջանի տարածքում առկա կիսակառույց շենքերի կառուցում (Նազարբեկյան 48շ և Չառուշի 14/3 մասնավոր շենք):*
23. *Վարչական շրջանի տարածքում գտնվող գերեզմանատների սահմանազատում (պարսպապատում):*
24. *Մարզադպրոցի շենքային պայմանները խիստ անբավարար են, չունի դահլիճ, շենքը նախատեսված է միայն վարչական աշխատակազմի համար, վերանորոգված չէ, ունի հիմնանորոգման կարիք, պարապմունքներն անցկացվում են հանրակրթական դպրոցներում:*
25. *Հերթեր և կուտակումներ ,,Մանկապարտեզ,, էլեկտրոնային հերթագրման համակարգում:*
26. *Վարչական շրջանի թվով մանկապարտեզների վերանորոգման անհրաժեշտություն:*

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր.

«Ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման և պահպանման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում և պահպանում՝ քաղաքացիների անվտանգությունն ու անխափան երթևեկությունն ապահովելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն	Տարեկան ծրագրերի շրջանակում կատարվում է վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վիճակի գույքագրում, կազմվում են հասցեական սխեմաներ՝ անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար: Աշխատանքները ներառում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդում, խճե հիմքի իրականացում և ասֆալտ-բետոնե ծածկի իրականացում:Աշխատանքները ներառում են դիտահորերի և անձրևորսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում: Նոր թաղամասերի կառուցմանը զուգընթաց առաջանում է նոր փողոցների կառուցման և ասֆալտապատման անհրաժեշտությունը:				
Համագործակցություն					
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Վերանորոգման ենթակա ա/բ ծածկի վերանորոգում 10000քմ	Վերանորոգման ենթակա ա/բ ծածկի վերանորոգում 13000քմ	Վերանորոգման ենթակա ա/բ ծածկի վերանորոգում 13000քմ	Վերանորոգման ենթակա ա/բ ծածկի վերանորոգում 15000քմ	Վերանորոգման ենթակա ա/բ ծածկի վերանորոգում 17000քմ
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ.ապրիլ-հոկտեմբեր յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Ոռոգման ցանցի անցկացման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանում ոռոգման ցանցի շարունակական ավելացում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նոր կառուցվող կանաչ տարածքները կպահպանվեն միայն կանոնավոր և ժամանակակից ոռոգման ցանցի կառուցման դեպքում, հատկապես նորակառույց թաղամասերում՝ դրանց ավելացմամբ, իսկ գոյություն ունեցող 46.11 հա տարածքի ոռոգման ցանցը /35.2կմ./ անհրաժեշտ է արդիականացնել:				
Համագործակցություն					
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	1 կմ նորի կառուցում	3.0 կմ նորի կառուցում	3.0 կմ նորի կառուցում	3.0 կմ նորի կառուցում	3.5կմ նորի կառուցում
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019 -2023թթ. մարտ- հոկտեմբերյուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում՝ բնակիչների համար բարենպաստ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ տանիքների վերանորոգում, որի մեջ մտնում է վնասված հատվածների իզոգամներով նորոգում: Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված 439բազմաբնակարան շենքերից 166-ը հարթ տանիքով բարձրահարկ շենքեր են՝ 137.200քմ մակերեսով: Շրջանում առկա 16 մանկապարտեզների հարթ տանիքների ընդհանուր մակերեսը կազմում է 14.200քմ:				
Համագործակցություն	Համատիրություն				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Վերանորոգել 3300 քմ հարթ տանիք	Վերանորոգել 3300 քմ հարթ տանիք	Վերանորոգել 3300 քմ հարթ տանիք	Վերանորոգել 3500 քմ հարթ տանիք	Վերանորոգել 3500 քմ հարթ տանիք
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. մարտ-սեպտեմբեր յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի				

«Բազմաբնակարան շենքերի լանջավոր տանիքների վերանորոգման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի լանջավոր տանիքների վերանորոգում և հիմնանորոգում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան բնակելի շենքերի լանջավոր տանիքների վերանորոգումը կատարվում է հիմնականում վնասված ազբոհերցաքարերը նորերով փոխարինմամբ, իսկ առավել մեծ վնասվածություն ունեցող տանիքները ամբողջությամբ քանդվում և կառուցվում է նորը: Նպատակահարմար ենք համարում մասնակի վերանորոգման համար հատկացվող ազբոհերցաքարերի փոխարեն յուրաքանչյուր տարի հատկացվեն 7000-14000քմ ալիքավոր թիթեղ:Վարչական շրջանում առկա 272 թեք լանջավոր բնակելի շենքերի մակերեսը կազմում է 278.156քմ.:				
Համագործակցություն	Համատիրություններ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	6900քմ	13800քմ	13800քմ	13800քմ	13800քմ
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. Յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի				

«Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի նորոգում՝ բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովման նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ մուտքերի վերանորոգում, որը ներառում է թեքահարթակների կառուցում, սալապատում, պատերի և առաստաղի, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում, վնասված ապակիների փոխարինում նորերով: Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված է 1325 շքամուտք: Վերանորոգման կարիք ունեն 350մուտք:				
Համագործակցություն	Համատիրություններ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	Վերանորոգվելու է 70 մուտք	Վերանորոգվելու է 70 մուտք	Վերանորոգվելու է 70 մուտք	Վերանորոգվելու է 70 մուտք	Վերանորոգվելու է 70 մուտք
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019 -2023թթ. մարտ-նոյեմբերի յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝համաձայն սահմանված ժամանակացույցի				

«Եզրաքարերի վերանորոգման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների, մայթերի եզրաքարերի վերանորոգում՝ ճանապարհահատվածների բարեկարգման նպատակով:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի և մասնավոր տնատիրությունների, փողոցների, այգիների, բակային տարածքների աղբահանության իրականացում և սանիտարական մաքրում: Ձմռան ամիսներին փողոցներից, բակերից, այգիներից ձյան շերտի և մերկասառույցի հեռացում:				
Համագոր ծակցություն	-				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	720 հազ. Քմփողոցների, այգիների, բակերի, բազմաբնակարան շենքերի և տնատիրությունների սանմաքրում, աղբահանություն	720 հազ. Քմփողոցների, այգիների, բակերի, բազմաբնակարան շենքերի և տնատիրությունների սանմաքրում, աղբահանություն	720 հազ. Քմփողոցների, այգիների, բակերի, բազմաբնակարան շենքերի և տնատիրությունների սանմաքրում, աղբահանություն	720 հազ. Քմփողոցների, այգիների, բակերի, բազմաբնակարան շենքերի և տնատիրությունների սանմաքրում, աղբահանություն	720 հազ. Քմփողոցների, այգիների, բակերի, բազմաբնակարան շենքերի և տնատիրությունների սանմաքրում, աղբահանություն
Ծրագրի հիմնական շահառուները	Ավան վարչական շրջանի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ,	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի				

իրականացման ժամանակացույց	

ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դավթաշեն վարչական շրջանի փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 71.2կմ: Ասֆալտ-բետոնե ծածկի ընդհանուր մակերեսը՝ 531000քմ, որից ասֆալտապատված տարածքը՝ 500000քմ, իսկ ասֆալտապատման ենթակա՝ 31000 քմ: Բակային տարածքների ընդհանուր թիվը կազմում է 68 հատ, որից վերանորոգվածը է 32 բակային տարածք, վերանորոգման ենթակա՝ 36: Վարչական շրջանում տեղադրված նստարանների ընդհանուր թիվը կազմում է 842 հատ, աղբամաններինը՝ 575, զրուցարաններինը՝ 127, մարզական գույքինը՝306, խաղային գույքինը՝149: Եզրաքարերի երկարությունը 130000 գծմ է, որից վերանորոգված է՝ 2000գծմ, իսկ վերանորոգման ենթակա է՝ 15000գծմ: Դավթաշեն վարչական շրջանում հենապատերը 10-ն են, որից 4-ը վերանորոգված է, 6-ը՝ վերանորոգման ենթակա: Թեքահարթակների ընդհանուր քանակը կազմում է 37, վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել և ենթակա են անհապաղ վերանորոգման:

Վարչական շրջանում առկա է թվով 193 բազմաբնակարան շենք, որից 5-ը նորակառույց են: Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքները կազմում են 115000քմ, որոնք տարիների ընթացքում գրեթե բոլորը վերանորոգվել են, սակայն կապված պիտանելիության ժամկետի հետ, ենթակա են վերանորոգման շուրջ 15000քմ հարթ տանիք, թեք տանիքներ ունեն թվով 2 բազմաբնակարան շենքեր, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2000քմ, որտեղ վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել և ենթակա են անհապաղ վերանորոգման: Վերելակային տնտեսությունում առկա են 415 վերելակներ որից 20-ը նորակառույց շենքերում են տեղադրված, իսկ մնացած 395 վերելակներում կապիտալ վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել և ենթակա են կապիտալ հիմնանորոգման: Բազմաբնակարան շենքերի մուտքերը թվով 380 են, որից վերանորոգվել են թվով 210 մուտք, իսկ 2019թ դրությամբ վերանորոգման ենթակա են 170-ը:

Դավթաշեն վարչական շրջանի կանաչ տարածքների, սիզամարգերի և ծաղիկների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 16.7 հա:

Դավթաշեն վարչական շրջանում գործում է թվով 6 դպրոց /4 հիմնական, 1 միջնակարգ և 1 ավագ/, 5 մանկապարտեզ, 1 գրադարան /հ. 40/, 1 շախմատի դպրոց, 1 հանդբոլի դպրոց, 1 արվեստի դպրոց /Ավետ Տերտերյանի անվան/:

Վարչական շրջանում բնակվում է Հայրենական պատերազմի թվով 3 վետերան, միայնակ, անժառանգ, անկողնային, սոցիալապես անապահով թվով 52 տարեցներ, 29 զոհված ազատամարտիկների և 29 վիրավոր, հաշմանդամություն ունեցող ազատամարտիկների սոցիալապես անապահով ընտանիքներ, չորս և ավել երեխաներ ունեցող, բազմազավակ, սոցիալապես անապահով թվով 87 ընտանիք, սիրիահայ փաստացի բնակվող 23 ընտանիք, բազմազավակ, բազմանդամ, հաշմանդամություն ունեցող, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ ընտանիքներ, արցախյան պատերազմի մասնակիցների ընտանիքներ, միայնակ անկողնային, անժառանգ տարեցներ, վետերաններ, ԱԳՀ –ում հաշվառված նպաստառու թվով՝ 1300 ընտանիքներ: Արցախյան ազատամարտի մասնակիցների, ԵԿՄ անդամների՝ սոցիալապես անապահով ընտանիքների թիվը կազմում է 121: Վրաչական շրջանում բնակվող սոցիալապես անապահով հաշմանդամություն ունեցող չափահասների և անչափահասների թիվը 85 է:

Վարչական շրջանում բնակվում են թվով 3 տեղահանված փախստական ընտանիքներ, որոնք հաշվառված են ԱԳՀ –ում:

Հիմնախնդիրներ

1. *Նոր ճանապարհների կառուցման անհրաժեշտություն՝ մասնավորապես. Սասնա Ծռեր-Աղաբաբյան փողոցները կապող հատված, Տ. Պետրոսյանի վերջնամասից 2-րդ թաղամասի ետնամասով Աղաբաբյան փողոց տանող շրջանցիկ հատված,*
2. *Փողոցների, այգիների, բակային տարածքների մաքրման, աղբահանության և ձնամաքրման աշխատանքների բարձր մակարդակով կազմակերպման անհրաժեշտություն,*
3. *Մելքումովի սեփական սեկտորի 1-ին և 2-րդ թաղամասերի վերին հատվածի, Զոր 2-րդ և 3-րդ թաղամասի, գյուղի սեփական սեկտորի տարածքում ջրահեռացման համակարգի ստեղծման, արտաքին լուսավորության անցկացման, ինչպես նաև գրունտային ճանապարհների ասֆալտապատման անհրաժեշտություն,*
4. *Ոռոգման ցանցի արդիականացման անհրաժեշտության,*
5. *Վերելակների վերանորոգման անհրաժեշտություն,*
6. *Կանաչ տարածքների ընդլայնման, ծառերի տնկման, հանգստյան գոտիների ստեղծման անհրաժեշտություն,*
7. *Համատիրությունների գործունեության խիստ վերահսկման անհրաժեշտություն,*
8. *Դպրոցների ճաշարանների վերահսկման անհրաժեշտություն,*
9. *Տանիքների վերանորոգման անհրաժեշտություն,*
10. *Վերգետնյա և ստորգետնյա անցումների ոչ բավարար քանակ,*
11. *Դավթաշեն վարչական շրջանի սեփական սեկտորում կառուցել նոր մանկապարտեզ,*
12. *Դավթաշեն վարչական շրջանում աշխատակազմի համար վարչական շենքի կառուցում,*
13. *Անվտանգությունից ելնելով դպրոցների և մանկապարտեզների հարակից ճանապարհներում կառուցել նոր մայթուղիներ:*

2019-2023 թվականներին նախատեսվող աշխատանքներ

«Սոցիալական ծրագրեր»

Ծրագրի նպատակը	Սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ֆինանսական աջակցության տրամադրում, սննդի և կենցաղային տեխնիկայի տրամադրում, բարեգործական ճաշկերույթների կազմակերպում, երեխաների համար սննդի և նվերների տրամադրում, երեխաների համար էքսկուրսիաների կազմակերպում, հաշմանդամություն ունեցող անձանձ համար միջոցառումների կազմակերպում, Մեծ հայրենական և Արցախյան պատերազմի մասնակիցների համար միջոցառումների կազմակերպում, զինծառայողներին նվերների տրամադրում, կանանց համար միջոցառումների կազմակերպում և այլն:
Ծրագրի հիմնական շահառուները	Սոցիալապես անապահով ընտանիքներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ.

«Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագիր

Ծրագրի նպատակը	Բնակչության հանգստի պատշաճ կազմակերպման, երեխաների ընդգրկվածության մեծացման, բակային ընկերասիրության, տոն և հիշատակի օրերին համատեղ անցկացման նպատակով վարչական շրջանում մշակութային միջոցառումների իրականացում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը ներառում է ինչպես տոն և հիշատակի օրերին նվիրված պարտադիր միջոցառումները, այնպես էլ ընթացքում տարատեսակ համերգներ, միջոցառումներ, բակային խաղեր, մրցումներ և այլն: Դավթաշեն վարչական շրջանում ըստ ժամանակացույցի որպես պարտադիր ծրագիր իրականացվում են մշակութային միջոցառում (Հայոց բանակի օր, Տեառն ընդառաջ, Կանանց միջազգային օր, Զատիկ, Մայրության և գեղեցկության օր, 1915թ. Հայոց Մեծ եղեռն ի զոհերի հիշատակի օր, Հաղթանակի տոնակատարություններ, Վերջին զանգ, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Խաղող օրհնության օր, Բակային ժամանցային միջոցառումներ, Գիտելիքի օր, ՀՀ անկախության օր, ՈՒսուցչի օր, «Էրեբունի-Երևան» տոնակատարություն, Ամանորյա միջոցառումներ, մանկապարտեզների սաների քաղցրավենիքի բաշխում): Ինչպես նաև 2020թ ավելացվել են միջոցառումների ցանկը, որոնք հետևյալն են՝ Կրթության միջազգային օր, Սուրբ Սարգսի տոն, Գրքի տոն, Մայրենի լեզվի օր, Գարնանամուտ, Բուն բարեկենդանի տոն, Թատրոնի միջազգային օր, Թռչնի փառատոն 2020, Պարի միջազգային օր, Աշխատանքի օր, Հայրենական մեծ պատերազմի 75-ամյակ, Ընտանիքի միջազգային օր, Հայաստանի Հանրապետության տոն, Մարզաառողջարարական ճամբար /շապիկ, գլխարկ, նվերներ/, Երաժշտության միջազգային օր, Նավասարդ, Տարեցների միջազգային օր, Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օր: Լրացուցիչ ծրագրերով, համագործակցությամբ ևս իրականացվելու են միջոցառումներ:				
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարանի ենթակա կազմակերպություններ (Դավթաշեն վարչական շրջան ՀՈԱԿ-ներ և ՊՈԱԿ-ներ)				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների իրականացում	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների իրականացում	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների իրականացում	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների իրականացում	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակիչներ, ՀՈԱԿ-ներին ՊՈԱԿ-ների սաներ և աշակերտներ, վարչական շրջանի հյուրեր				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019 -2023 թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Սպորտային միջոցառումների կազմակերպում» ծրագիր

Ծրագրի նպատակը	Դավթաշեն վարչական շրջանում սպորտային միջոցառումների, հուշամրցումների կազմակերպում ու անցկացում

Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է նպաստել Դավթաշեն վարչական շրջանի բնակչության շրջանում սպորտի մասսայականացմանը, ինչպես նաև ապահովել երեխաների ակտիվ մասնակցությունը սպորտային միջոցառումներին, խրախուսել առողջ ապրելակերպը: Դավթաշեն վարչական շրջանում իրականացվում է՝ ՀՀ անկախության տոնին նվիրված մարզական խաղեր, ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկ. 1-6րդ դասարաններ, Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին նվիրվծ հուրշամրցաշար, Մարզահամերգային տոնահանդես՝ մանկապարտեզի սաների մասնակցությամբ, «Առողջ սերունդ պաշտպանված հայրենիք» բակային փառատոն, ՀՀ Նախագահի լավագույն մարզական ընտանիք, «Նախազորակոչային և զորակոչային տարիքի» երիտասարդների հանրապետական խաղեր, իսկ 2020թ ավելացվել է ևս 2 միջոցառում՝ Սպորտլանդիա 1-3, 4-7-րդ դասարանների աշակերտների միջև, Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն				
Համագործակցություն	Դավթաշեն վարչական շրջանի ենթակա ՀՈԱԿ-ների և ՊՈԱԿ-ների հետ:				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Սպորտային 7 միջոցառումների կազմակերպում, ֆիզիկական դաստիարակության զարգացում	Սպորտային 9 միջոցառումների կազմակերպում, ֆիզիկական դաստիարակության զարգացում	Սպորտային 9 միջոցառումների կազմակերպում, ֆիզիկական դաստիարակության զարգացում	Սպորտային 9 միջոցառումների կազմակերպում, ֆիզիկական դաստիարակության զարգացում	Սպորտային 9 միջոցառումների կազմակերպում, ֆիզիկական դաստիարակության զարգացում
Ծրագրի հիմնական շահառուները	Դավթաշեն վարչական շրջանի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի ըստ կնքված պայմանգրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի				

«Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահանում» ծրագիր

Ծրագրի նպատակը	Դավթաշեն վարչական շրջանի ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում: Տարվա ընթացքում ասֆալտ-բետոնե ծածկի վրա առաջացող փոսերի, անհարթությունների վերանորոգում՝ ճանապարհի անխափան երթևեկությունն ապահովելու համար				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Տարեկան ծրագրերի շրջանակում կատարվում է Դավթաշեն վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վիճակի գույքագրում: Գույքագրման արդյունքում կազմվում են հասցեական սխեմաներ՝ անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար: Աշխատանքները ներառում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդում, առաջացած շին. աղբի բարձում, տեղափոխում (թափոնատեղի), խճե հիմքի իրականացում (մինչև 10%) և 3-4սմ ասֆալտ-բետոնե ծածկի իրականացում: Աշխատանքները ներառում են դիտահորերի և անձրևորսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում:				
Համագործակցություն					
Ծրագրի	2019	2020	2021	2022	2023

անմիջական նպատակ	Վերանորոգման ենթակա, գույքագրված ա/բ ծածկի վերանորոգում 2450քմ	Վերանորոգման ենթակա, գույքագրված ա/բ ծածկի վերանորոգում	Վերանորոգման ենթակա, գույքագրված ա/բ ծածկի վերանորոգում	Վերանորոգման ենթակա, գույքագրված ա/բ ծածկի վերանորոգում	Վերանորոգման ենթակա, գույքագրված ա/բ ծածկի վերանորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Դավթաշեն վարչական շրջանի բնակիչները				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Եզրաքարերի վերանորոգում» ծրագիր

Ծրագրի նպատակը	Դավթաշեն վարչական շրջանի ճանապարհների, մայթերի եզրաքարերի վերանորոգում՝ ճանապարհահատվածների բարեկարգման նպատակով:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը ներառում է Դավթաշեն վարչական շրջանի ճանապարհների, մայթերի բազալտե եզրաքարերի վերանորոգում և փոխարինում, որը ներառում է հին վնասված եզրաքարերի փոխարինում:				
Համագործակցություն					
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Վերանորոգման ենթակա, գույքագրված տարածքների եզրաքարերի վերանորոգում	Վերանորոգման ենթակա, գույքագրված տարածքների եզրաքարերի վերանորոգում	Վերանորոգման ենթակա, գույքագրված տարածքների եզրաքարերի վերանորոգում	Վերանորոգման ենթակա, գույքագրված տարածքների եզրաքարերի վերանորոգում	Վերանորոգման ենթակա, գույքագրված տարածքների եզրաքարերի վերանորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Դավթաշեն վարչական շրջանի բնակիչները				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Վերելակների հիմնանորոգման» ծրագիր

Ծրագրի նպատակը	Բնակիչների անվտանգությունը ապահովելու նպատակով ունենալ անխափան աշխատող վերելակային տնտեսություն: Մշտական հսկողություն սահմանել վերելակների անվտանգության և անխափան աշխատանքն ապահովելու ուղղությամբ:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերում առկա են մարդատար և բեռնատար 415 վերելակներ: Կիրականացվեն վերելակների հիմնանորոգման աշխատանքներ՝ վերելակների շարքից դուրս եկած դետալների և հանգույցների փոխարինում նորով, խցերի փոխարինում կամ նորոգում, ճոպանների փոխարինում, շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով:

Համագործակցություն	Համատիրություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Վերելակների վերանորոգում	Վերելակների վերանորոգում	Վերելակների վերանորոգում	Վերելակների վերանորոգում	Վերելակների վերանորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Դավթաշեն վարչական շրջանի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի				

«Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում» ծրագիր

Ծրագրի նպատակը	Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում, առկա խնդիրների վերացում, բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված հարթ տանիքների հիմնանորոգում իզոգամով, պատերի ամրացում: Կիրականացվի հինվնասված շերտի քանդում, ցեմենտահարթեցնող շերտի իրականացում, նոր իզոգամի տեղադրում, օդափոխության խողովակների վրա մետաղական ծածկի տեղադրում:				
Համագործակցություն	Համատիրություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Հարթ տանիքների հիմնանորոգում	Հարթ տանիքների հիմնանորոգում	Հարթ տանիքների հիմնանորոգում	Հարթ տանիքների հիմնանորոգում	Հարթ տանիքների հիմնանորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի				

«Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում» ծրագիր

Ծրագրի նպատակը	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում, առկա խնդիրների վերացում, բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված թեք տանիքների հիմնանորոգում: Կկատարվի նաև պատերի ամրացում:				
Համագործակցություն	համատիրություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
		Թեք տանիքների հիմնանորոգում			

Ծրագրի հիմնական շահառուները	Դավթաշեն վարչական շրջանի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

«Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում» ծրագիր

Ծրագրի նպատակը	Դավթաշեն վարչական շրջանի բնակիչների՝մեծահասակների և փոքրերի համար հանգստի և խաղերի համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում, միջբակային տարածքների լուսավորում, կանաչապատում, ինչպես նաև խաղահրապարակների թարմացում և ընդարձակում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը նախատեսում է բակային տարածքների կապիտալ և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ բակերում մայթերի եզրաքարերի վերանորոգում, նստարանների, զրուցատաղավարների, աղբամանների տեղադրում: Ծրագիրը ներառում է նաև երեխաների համար խաղահրապարակներում սպորտային մարզագույքի, մանկական խաղերի տեղադրում, հնացած և վնասված խաղերի վերանորոգում և նորերով փոխարինում: Բակերն ավելի գեղեցիկ ու հարմարավետ դարձնելու նպատակով կստեղծվեն նոր սիզամարգեր, կիրականացվի ծառատունկ, ծաղկապատում, ջրագծերի վերականգնում:				
Համագործակցություն	Համատիրություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Նոր բակային տարածքների կառուցում	Նոր բակային տարածքների կառուցում	Նոր բակային տարածքների կառուցում	Նոր բակային տարածքների կառուցում	Նոր բակային տարածքների կառուցում
Ծրագրի հիմնական շահառուները	Դավթաշեն վարչական շրջանի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի				

«Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում» ծրագիր

Ծրագրի նպատակը	Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի նորոգում՝ բնակիչների համար բարեկարգ պայմաններ ապահովելու համար:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը ներառում է Դավթաշեն վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ մուտքերի վերանորոգում, որը ներառում է թեքահարթակների կառուցում, սալապատում, պատերի և առաստաղի, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում, վնասված ապակիների փոխարինում նորով: Դավթաշեն վարչական շրջանում հաշվառված է 380 շքամուտք: Վերնորոգված է 210-ը և կարիք ունի վերանորոգման 170 մուտք:				
Համագործակցություն	Համատիրություններ				
Ծրագրի	2019	2020	2021	2022	2023

անմիջական նպատակ	Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի հիմնական վերանորոգում	Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի հիմնական վերանորոգում	Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի հիմնական վերանորոգում	Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի հիմնական վերանորոգում	Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի հիմնական վերանորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Դավթաշեն վարչական շրջանի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի				

«Կանաչ տարածքների հիմնում և պահպանում» ծրագիր

Ծրագրի նպատակը	Դավթաշեն վարչական շրջանի կանաչ տարածքների սիզամարգերի և ծաղիկների խնամում, հնձում և բարելավում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Դավթաշեն վարչական շրջանի 22 հա կանաչ տարածքները մաքրված են պատահական աղբից:				
Համագործակցություն					
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Կանաչ տարածքների հիմնում և պահպանում	Կանաչ տարածքների հիմնում և պահպանում	Կանաչ տարածքների հիմնում և պահպանում	Կանաչ տարածքների հիմնում և պահպանում	Կանաչ տարածքների հիմնում և պահպանում
Ծրագրի հիմնական շահառուները	Դավթաշեն վարչական շրջանի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի				

ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Էրեբունի վարչական շրջանում հիմնական և մասնակի նորոգման ու բարելավման կարիք ունի վարչական շրջանին պատկանող ճանապարհային ցանցը՝ ընդ. մակերեսը՝ 1371647,4 քմ, որից վերանորոգվել է 528658 քմ: Ասֆալտապատման /վերանորոգման/ կարիգ ունեն 50 000 քմ մակերեսով փողոցներ և 792988 քմ մակերեսով գրունտային ճանապարհ: Այս ոլորտի հետ կապված բարդությունը պայմանավորված է սողանքային տարածքների մակերեսի մեծությամբ, որի հետևանքով ավելանում են ոչ միայն վթարային շենքերի, այլ նաև ճանապարհների վթարային հատվածների թիվը: Վարչական շրջանի եզրաքարերի ընդհանուր երկարությունը 163800 գծմ է՝ վերանորոգվել է 65520 գծմ, վերանորոգման ենթակա՝ 98280 գծմ: Կառուցվել են նաև թեքահարթակներ՝ ընդհանուր թվով 198 հատ: Հենապատերի ընդհանուր մակերեսը 14000 քմ՝ վերանորոգվել է 4200 քմ, վերանորոգման ենթակա՝ 9800 քմ: Ջրային կառույցների պահպանման և շահագործման, այդ թվում նաև՝ հեղեղատար ցանցի և գետերի հուների 5400 գծմ մաքրման համար տարվում են ամենամյա աշխատանքներ:

Էրեբունի վարչական շրջանի հարթ տանիքների ընդ. Մակերեսը կազմում է 65129քմ, վերանորոգվել է 26051քմ , իսկ 39077քմ ենթակա է վերանորոգման: Թեք լանջավոր տանիքների ընդ. մակերեսը 169077քմ է, վերանորոգվել է 50723,1քմ, իսկ 118353,9քմ ենթակա է վերանորոգման, շենքերու առկա է ընդհանուր թվով 783 մուտք, վերանորգվել է 234-ը, իսկ 549-ը ենթակա են վերանորոգման:

Շրջակա միջավայրի, մարդու կենսագործունեության համար առավել վճռական դեր խաղացող գործոններից մեկը կանաչ զանգվածի առկայությունն է: Բնապահպանական այս կարևոր գործոնը կարգավորելու համար նախատեսվում է վերականգնել և ընդլայնել վարչական շրջանի կանաչ տարածքները, որի համար անհրաժեշտ է մշտապես և անխափան գործող ոռոգման ցանց: Վարչականշրջանում գործում է ընդհանուր 11000 գծմ ոռոգման ցանց, իսկ վերանորոգման ենթակա է՝ 500 գծմ:

Էրեբունի վարչական շրջանի տարածքում գործում է 21 պետական հանրակրթական դպրոց (2 ավագ, 16 հիմնական, 3 միջնակարգ), 3 մասնավոր և Երևանի ենթակայության 12 մանկապարտեզ: Վարչական շրջանը ունի նաև 4 գրադարան: Վարչական շրջանում առկա է մեկ մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն, մեկ արվեստի դպրոց, մեկ երաժշտական դպրոց, մեկ մարզադպրոց և մեկ շախմատի դպրոց:

Էրեբունի վարչական շրջանի սոցիալական խմբերում ընդգրկված միայնակ տարեցները թվով 372-ն են, բազմազավակ՝ 4 և ավելի երեխա ունեցող անապահով ընտանիքներիի թիվը կազմում է 46, սիրիահայ ընտանիքների թիվը՝ 55: Սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում հաշվառված սոցիալապես անապահով ընտանիքները 2106 են, որից 1702-ը՝ նպաստառու, 404-ը՝ ոչ:

Տեղահանված փախստական ընտանիքների քանակը կազմում է 129 (395հոգի), հաշմանդամություն ունեցող անձինք՝ 769, որից 66-ը՝ երեխաներ: Զոհված ազատամարտիկների ընտանիքների թիվը կազմում է 157, արցախյան պատերազմի վիրավոր և մասնակիցների թիվը՝ 177, իսկ հայրենական պատերազմի մասնակիցները՝ 8:

Հիմնախնդիրներ

1.Ոռոգման ցանցի հիմնական և մասնակի վերանորոգման, կոյուղագծերի և նստած դիտահորերի նորոգման, ինչպես նաև շենքերի խմելու ջրի և կոյուղագծերի հիմնանորոգման անհրաժեշտություն,

2.Բազմաբնակարան շենքերի տակ ստորերկրյա ջրերի վերացման նպատակով դրենաժային համակարգի կառուցման անհրաժեշտություն,

3.Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների և վթարային պատշգամբների վերանորոգման անհրաժեշտություն,
4.Վթարային շենքերի ամրացման կամ բնակչության տեղափոխման անհրաժեշտություն,
5.Հանգստի նոր գոտիների ստեղծման, կանաչ տարածքների ընդլայնման, բակային նոր տարածքների բարեկարգման, միջբակային տարածքների լուսավորման և ասֆալտապատման անհրաժեշտություն,
6.Աղբահանության և սանմաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավման անհրաժեշտություն,
7. Հենապատերի վերանորոգման /հիմնանորոգում/ անհրաժեշտություն,
8. Կոյուղագծերի կառուցման անհրաժեշտություն,
9. Հի. 67, 72, 73, մանկապարտեզների հիմնավերանորոգման անհրաժեշտություն,
10. Չորս նոր մանկապարտեզի կառուցման անհրաժեշտություն,
11.Նոր բազմաֆունկցիոնալ սպորտդպրոցի կառուցման անհրաժեշտություն,
12.Կրպակների և խանութների արտաքին տեսքի արդիականացմանն ուղղված միջոցառումների իրականացման անհրաժեշտություն,
13.Էրեբունի վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչներին անվճար պրոֆիլակտիկ ստուգման և բժշկական խորհրդատվության տրամադրման պարբերական ակցիաների կազմակերպում,
14.Առաջնային ուշադրություն և հոգածություն սոցիալապես անապահով բնակիչների առողջական և սոցիալական խնդիրների լուծման հարցում, արտոնությունների տրամադրման և աջակցության հատուկ ծրագրերի շարունակականություն,
15.Օժանդակություն տեղաշարժման սահմանափակ կարողություններով կարիքավոր բնակիչներին՝ սայլակների ձեռք բերման ուղղությամբ,
16.Թեքահարթակների կառուցման անհրաժեշտություն,
17.Քաղաքաշինական միջավայրի բարելավման և արդյունավետ հողօգտագործման ապահովման անհրաժեշտություն,
18.Գոյություն ունեցող բնակֆոնդի սեյսմիկ անվտանգության բարձրացման անհրաժեշտություն,
19.Բազմաբնակարան շենքերի կրող կոնստրուկցիանարի հետազոտման և անհրաժեշտության դեպքում վերակառուցման անհրաժեշտություն,
20.Նոր ճանապարհների կառուցման անհրաժեշտություն,
21.Ներբակային տարածքների բարեկարգման ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն,
22.Ընդհանուր քաղաքաշինական մոտեցման մշակման, շինարարական թույլտվությունների տրամադրման ընդհանուր հայեցակարգի մշակման անհրաժեշտություն՝ ելնելով տեղանքից եվ գոյություն ունեցող շինություններից:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

«Ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման և պահպանման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Էրեբունի վարչական շրջանի բակային տարածքների, փողոցների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի մասնակի վերանորոգում: Ճանապարհների անխափան երթևեկությունն ապահովելու համար տարվա ընթացքում ասֆալտ-բետոնյա ծածկի վրա առաջացող փոսերի, անհարթությունների վերանորոգում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Տարեկան ծրագրերի շրջանակում կատարվում է Էրեբունի վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի գույքագրում: Գույքագրման արդյունքում կատարվում են վնասված, վթարված,

	ձևախախտված ծածկի քանդման, առաջացած շինաղբի բարձման, տեղափոխում (թափոնատեղի), խճե հիմքի իրականացման աշխատանքներ: Ինչպես նաև դիտահորերի և անձրևնորսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում: Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի Մուշական թաղ.,Ջրաշեն թաղ., Վարդաշենի փող., Սարի Թաղի փողոցներ, Նոր Արեշի փողոցներ, Բեռնակիրների փող., Գաջեգործների փող. և մայթեր, Ռոստովյան փող. և մայթեր, Ս.Դավթի փող. մայթեր, Ս.Դավթի նրբանցքներ, Աճեմյան փող. և մայթեր, Էրեբունու փող. և մայթեր, Գլինկայի փող. և մայթեր, Ազատամարտիկների փող. և մայթեր, խ.Դոնի փող. և մայթեր, Ռոստովյան փող. և մայթեր, Դ.Բեկի փող. և մայթեր, Կուստոյի նրբ. մայթերի, Արին Բերդի փող. և նրբ., Արցախի պող. և մայթեր, Տ.Մեծի պող, և նրբանցքներ, հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ:				
Համագործակցություն					
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	91 000 քմ	91 000 քմ	92 000 քմ	92 000 քմ	92 000քմ
Ծրագրի հիմնական շահառուները	ՀՀ բնակիչներ և հյուրեր				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019 մարտ-2023 հոկտեմբեր յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում՝ բնակիչների կենսապայմանների բարելավում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Էրեբունի վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ տանիքների վնասված հատվածների իզոգամներով վերանորոգում: Մասնավորապես նախատեսվում է օժանդակություն բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին՝ Ս.Դավթի փող., Գլինկայի փող., Արցախի պող., Խ.Դոնի փող., Ավանեսովի փող., Էրեբունու փող., Մուրացանի փող., Աթոյան փող. և անց., Ազատամարտիկների փող., Գլինկայի փող., Ռոստովյան փող., Նոր Արեշի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման համար:				
Համագործակցություն					
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	4 500 քմ	4 500 քմ	4 500 քմ	4 500 քմ	4 500 քմ
Ծրագրի հիմնական	Էրեբունի վարչական շրջանի բնակիչներ				

շահառուները	
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019 մարտ-2023 հոկտեմբեր յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

«Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Վերանորոգել բազմաբնակարան շենքերի թեք տանիքները՝ բնակիչների բնակարանները և աստիճանավանդակները մթնոլորտային տեղումներից պահպանելու համար:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Էրեբունի վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ թեք տանիքների վնասված հատվածների թիթեղյա կամ կղմինդրե ծածկերով վերանորոգում: Մասնավորապես նախատեսվում է օժանդակություն բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին՝ Նուբարարշենի խճ., Էրեբունու փող., Արցախի պող. , Գ.Նժդեհի փող., Վարդաշենի փող., Մ.Խորենացու փող., Աթոյան անց. և Նոր Արեշի շենքերի թեք տանիքների հիմնանորոգման համար:				
Համագործակցություն					
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	1590 քմ	2390 քմ	2390 քմ	2390 քմ	2390 քմ
Ծրագրի հիմնական շահառուները	Էրեբունի վարչական շրջանի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019 մարտ-2023 հոկտեմբեր յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Վերելակների հիմնանորոգման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Վերելակային տնտեսության հիմնահարցի լուծման ուղղված աշխատանքների իրականացում, Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների նորոգում և հիմնանորոգում, վերելակային տնտեսության արդիականացում՝ բնակիչների անվտանգության ապահովման նպատակով:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է վարչական շրջանի Ազատամարտիկների փող., Արցախի պող., Աթոյան անց., Խ.Դոնի փող., Ս.Դավթի փող. Տ.Մեծի պող., Գլինկայի փող., Նոր Արեշի բազմահարկ շենքերի վերելակների հիմնանորոգում և առանձին հատվածների ընթացիկ նորոգում:				
Համագործակցություն					
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	13 հատ	13 հատ	13 հատ	13 հատ	13 հատ

Ծրագրի հիմնական շահառուները	Էրեբունի վարչական շրջանի բնակիչներ և հյուրեր
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019 մարտ-2023 դեկտեմբեր յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

«Բազմաբնակարան շենքերում բարեկարգման աշխատանքների իրականացման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի և աստիճանավանդակների պատշաճ տեսքի ապահովում՝բնակիչների հարմարավետ կյանքի, բարենպաստ պայմանների ապահովման նպատակով:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Էրեբունի վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ մուտքերի վերանորոգում, որի մեջ մտնում են՝ թեքահարթակների պատրաստում, սալապատում, պատերի և առաստաղների, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում, վնասված ապակիների փոխարինում նորով: Մասնավորապես նախատեսվում է օժանդակություն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին՝ Տ.Մեծի պող., Արցախի պող., Խ.Դոնի փող., Գաջեգործների փող., Արցախի պող., Ազատամարտիկների փող., Մուրացանի փող., Ավանեսովի փող., Էրեբունու փող., Նոր Արեշի փող., Գլինկայի փող,Գ.Նժդեհի փող. բազմաբնակարան շենքերի մուտքերի և աստիճանավանդակների վերանորոգման համար:				
Համագործակցություն					
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	41 մուտք	41 մուտք	41 մուտք	41 մուտք	41մուտք
Ծրագրի հիմնական շահառուները	Էրեբունի վարչական շրջանի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019 մարտ- 2023 հոկտեմբեր յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Կանաչ տարածքների հիմնման և պահպանման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Բնակիչների համար հանգստի պատշաճ պայմաններ իստեղծման նպատակով նախատեսվում է Էրեբունի վարչական շրջանի տարածքում ստեղծել նոր կանաչ տարածքներ, պահպանել և բարեկարգել առկա կանաչապատ տարածքները ինչպես նաև բարելավել էկո համակարգը:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Էրեբունի վարչական շրջանի անբարեկարգ կամ նորոգման կարիք ունեցող տարածքների բարեկարգում, մասնավորապես՝ կանաչ տարածքների

	վերականգնում (բուսահողի թարմացում, կանաչապատում, ծառատունկ, ծաղկային հատվածի ավելացում),ոռոգման ցանցի մոնտաժում կամ վերագործարկում: Ծրագիրը ներառում է նաև նոր կանաչ տարածքների ստեղծում և պահպանում՝ ապահովելով կանաչ տարածքների մաքրությունը, ծառերի երիտասարդացման աշխատանքների կազմակերպում, կանաչ տարածքների բուժանյութերով մշակում:				
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	7 հա	8 հա	8 հա	8 հա	8 հա
Ծրագրի հիմնական շահառուները	ՀՀ բնակիչներ և հյուրեր				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019 հունվար-2023 դեկտեմբեր յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Հուշարձանների վերանորոգման և պահպանման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Էրեբունի վարչական շրջանի տարածքում զբոսաշրջության և համաչափ զարգացման, ինչպես նաև պատմամշակութային արժեքների պահպանման նպատակով վարչական շրջանում գտնվող հուշարձանների և մշակութային արժեքների պահպանում և վերանորոգում:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Մասնավորապես՝Սասունցի Դավթի արձանի, Գաջեգործների փողոցում գտնվող Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի, Լուսաղբյուր, Արգիշտի և այլ հուշարձանների արտաքին տեսքի պահպանում և դրանց շրջակա տարածքի բարեկարգում:				
Համագործակցություն					
Ծրագրիանմիջակ աննպատակը	2019	2020	2021	2022	2023
	5 հուշարձան	7 հուշարձան	7 հուշարձան	7 հուշարձան	7 հուշարձան
Ծրագրի հիմնական շահառուները	ՀՀ բնակիչներ և հյուրեր				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019 մարտ-2023 հոկտեմբեր յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Մշակութային և սպորտային միջոցառումների իրականացման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Ծրագրի իրականացման նպատակը Էրեբունի վարչական շրջանում մշակութային միջոցառումների իրականացումն է՝ բնակչության հանգստի պատշաճ կազմակերպման, երեխաների ընդգրկվածության մեծացման, բակային ընկերասիրության, տոն և հիշատակի օրերի համատեղ անցկացման միջոցով, ինչպես նաև սպորտային միջոցառումների, հուշամրցումների կազմակերպումը և

	անցկացումը:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է ինչպես տոն և հիշատակի օրերին նվիրված պարտադիր միջոցառումները, այնպես էլ ընթացքում տարատեսակ համերգներ, միջոցառումներ, բակային խաղեր, մրցումներ, սպորտլանդիաներ և այլն: Էրեբունի վարչական շրջանում ըստ ժամանակացույցի որպես պարտադիր ծրագիր իրականացվում են շուրջ 18 մշակութային միջոցառում Հայոց բանակի օր, Տեառնընդառաջ, Բարեկենդան, Կանանց միջազգային օր, Սուրբ Զատիկ, Մայրության և գեղեցկության օր, Քաղաքացու օր, Հաղթանակի տոնակատարություններ, Առաջին Հանրապետության օր, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Գիտելիքի օր, ՀՀ անկախության օր, ՈՒսուցչի օր, ՀՀ Սահմանադրության ընդունման օր, Երևանյան ամառ միջոցառումներ, Վարդավառին նվիրված միջոցառում, «Էրեբունի-Երևան» տոնակատարություն, Ամանորյա միջոցառումներ: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է նպաստել Էրեբունի վարչական շրջանի բնակչության շրջանում սպորտի մասսայականացմանը, ինչպես նաև ապահովել բնակչության ակտիվ մասնակցությունը սպորտային միջոցառումներին, խրախուսել առողջ ապրելակերպը: Լրացուցիչ ծրագրերով, համագործակցությամբ ևս իրականացվելու են տարաբնույթ միջոցառումներ:
Համագործակցություն	
Ծրագրի հիմնական շահառուները	Էրեբունի վարչական շրջանի բնակիչներ և հյուրեր
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019 հունվար-2023 դեկտեմբեր յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

«Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն»

Ծրագրի նպատակը	Ծրագիրն ուղղված է Էրեբունի վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն ցուցաբերելուն:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարներում (տրանսպորտային ծախսեր), սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին պարենային աջակցություն, մասնավորապես՝ Ամանորի միջոցառումների շրջանակում սոցիալապես անապահով ընտանիքներին սննդի փաթեթների տրամադրում, Սուրբ Զատիկի, Ընտանիքի օրվա կապակցությամբ բազմազավակ ընտանիքներին աջակցություն, Գիտելիքի օրվա կապակցությամբ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին գրենական պիտույքների տրամադրում, Փախստականների միջազգային օր:
Համագործակցություն	-
Ծրագրի հիմնական շահառուները	Էրեբունի վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչներ

Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019 հունվար-2023 դեկտեմբեր յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Կենտրոն վարչական շրջանը, զբաղեցնելով 1335 հա տարածք, սահմանակից է Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին: Վարչական շրջանի բնակչությունը կազմում է 125,4 հազ.մարդ:

Կենտրոն վարչական շրջանի բնակելի 807 շենքերի և անհատական բնակելի 8300 տների կառավարումն իրականացվում է 42 համատիրությունների և 28 լիազորագրային կառավարման միջոցով: Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 106,0 կմ է: Վարչական շրջանում հաշվառված է 825 վերելակ, առկա է 425 բակային տարածք, որտեղ կան 120 մարզասարքեր և 114 զրուցատաղավարներ: Կենտրոն վարչական շրջանում «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ կողմից սպասարկվում է 45 հա կանաչ տարածք, հաշվի առնելով բակային տարածքների անբարեկարգ վիճակը, որը կազմում է 27 հա կանաչ տարածք, ծաղկային մակերես՝ 1.7 հա, 36 000 հատ ծառ, որից բակային տարածքներում՝ 13 500 հատ, զբոսայգիների ընդհանուր կանաչ տարածքների մակերեսը՝ 37.58 հա, պուրակներում կանաչ տարածքների մակերեսը՝ 5.6 հա, ոռոգման ցանցի մակերեսը 76 000 գծմ է, որից բակային տարածքներում՝ 28 500 գծմ: Նորոգման ենթակա է 12 000 գծմ ոռոգման խողովակ, որից՝ 14 300 գծմ բակային տարածք: Կենտրոն վարչական շրջանում առկա են 22 զբոսայգիներ, 18 հա հանգստյան գոտիներ, 49 հա կանաչապատ տարածքներ, 120 հա մերձակա անտառային գոտի, ոռոգմանցանցի երկարությունը 50,1 կմ է:

Կենտրոն վարչական շրջանի ենթակայությամբ գործում է 21 մանկապարտեզ, 9 կրթական-մշակութային հաստատություն, 1 թատրոն, 5 մշակութային կենտրոն, 34 մանկապարտեզ, 6 ավագ և 25 հիմնական դպրոց, 2 միջնակարգ մասնագիտական ուսումնարան, 23 ԲՈՒՀ, 2 մարզադպրոց, 31 թանգարան և ցուցասրահ, 4 գրադարան, 7 արվեստի և երաժշտական դպրոց: Գործում է 2 մարզադպրոց և 1 շախմատի դպրոց: «Երևանի Կենտրոնի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ը իր գործունեությունն իրականացնում է «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության մարզաբազայում (մարզադաշտ և փակ մարզասրահ)՝ վարձակալական հիմունքներով: Աթլետիկա մարզաձևի սկզբնական պատրաստության խմբերը ուսումնամարզական պարապմունքներն անց են կացնում Խ. Աբովյանի անվան հ.2 հիմնական դպրոցի և հ.132 դպրոցի մարզադահլիճներում և մարզահրապարակներում: Ձյուդո և ըմշամարտ մարզաձևերը մարզումներն անց են կացնում «Օլիմպիական ապագա» մարզաբազայում՝ վարձակալական հիմունքներով: «Երևանի Կենտրոնի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ը իր գործունեությունն իրականացնում է Մաշտոցի 5/2 հասցեում տեղակայված 195 մ² տարածքում: Տարածքն իր չափերով բավարարում է գեղարվեստական մարմնամարզության սկզբնական պատրաստության խմբերի մարզումներին և թաեքվանդո մարզաձևի խմբերի պարապմունքներին: Գեղարվեստական մարմնամարզության ուսումնամարզական և մարզական կատարելագործման խմբերը իրենց մարզումներն անց են կացնում Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոցի մարզադահլիճում: Մարզադպրոցի բասկետբոլի խմբերը մարզումներն անց են կացնում Ա. Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոցի մարզադահլիճում: Ազատ ոճի ըմբշամարտի խմբերն իրենց մարզումներն անց են կացնում «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության մարզադահլիճում: Ցատկացանցի խմբերը մարզվում են ՀՀ ցատկացանցի ազգային ֆեդերացիայի կողմից վարձակալած «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի մարզադահլիճում:

Վարչական շրջանում բնակվում են 31 ՀՄՊ վետերաններ, 1051 միայնակ տարեցներ, 90 զոհված ազատամարտիկների և 73 զինհաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքներ, 19 բազմազավակ անապահով ընտանիքներ, 32 կարիքավոր սիրիահայ

ընտանիքներ, 152 Արցախյան պատերազմի մասնակիցներ, 740 սոցիալապես անապահով հաշմանդամություն ունեցող մարդիկ, 5 տեղահանված փախստական ընտանիքներ և 4450 սոցիալապես անապահով ընտանիքներ: Վարչական շրջանում գործում է 29 առողջապահական կազմակերպություն, Գերմանական Կարմիր Խաչի բարեգործական ճաշարանը:

Հիմնախնդիրներ

1. *Ասֆալտ-բետոնե ծածկի վերականգնման, մայթերի մասնակի և կապիտալ վերանորոգման անհրաժեշտություն:*
2. *Վերելակային տնտեսության արդիականացման, բազմաբնակարան շենքերի շքամուտքերի, վթարային պատշգամբների, հարթ և թեք տանիքների վերանորոգման ահրաժեշտություն:*
3. *Ոռոգման ցանցի և ջրագծերի վերանորոգման և արդիականացման անհրաժեշտություն, նոր ոռոգման ցանց է անհրաժեշտ Դեմիրճյան փողոցում (սնուցվող աղբյուր Բաղրամյան պողոտա), Պարոնյան-Պռոշյան փողոցները (սնուցվող աղբյուր Բաղրամյան պողոտա), Թումանյան փողոց (սնուցվող աղբյուր Մաշտոցի պողոտա), Սարյան փողոց (սնուցվող աղբյուր Մաշտոցի պողոտա), Ալեք Մանուկյան փողոցը (Սայաթ-Նովա պողոտայից դեպի ԵՊՀ, սնուցվող աղբյուր Ա. Մանուկյան փողոցից):*
4. *Տիգրան Մեծ պողոտայում անհրաժեշտ է կառուցել նոր խորքային պոմպ, որի շնորհիվ կոռոգվեն Տիգրան Մեծ և Արշակունյաց պողոտաները, Ագաթանգեղոս փողոցը ինչպես նաև Սուրբ Գրիգոր Լուսավորիչ փողոցից մինչև Ֆրանսիայի դեսպանատան հարակից տարածք:*
5. *Հիմնանորոգման ենթակա են հհ. 1, 3, 5, 11, 14, 15, 17,19, 20 և 21 մանկապարտեզները, իսկ մասնակի վերանորոգման՝ 7, 8, և 12 մանկապարտեզները:*
6. *Բ. Կանաչյանի անվան արվեստի դպրոցի դասասենյակների ավելացման անհրաժեշտություն:*
7. *Ք. Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի դասասենյակների ավելացման անհրաժեշտություն, բնակելի շենքի անձրևատարի, կոյուղու և խմելու ջրի խողովակների անսարք լինելու պատճառով տուժած 2 դասասենյակների և 2 դահլիճների վերանորոգման անհրաժեշտություն:*
8. *ՄՍԳԴԿ շենքային պայմանների բարելավում, նոր պատուհանների տեղադրում, նոր ձայնային սարքավորումների ձեռքբերման անհրաժեշտություն: «Երևանի Կենտրոնի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց»-ը ունի համապատասխան գույքի և մարզաբազայի կարիք:*
9. *«Երևանի Կենտրոնի մանկապատանեկան համալիր մարզադպրոց»-ի զբաղեցրած 195 մ² տարածքն ունի հիմնանորոգման անհրաժեշտություն:*
10. *Թեքահարթակների ստեղծման անհրաժեշտություն:*
11. *Արտաքին լուսավորության արդիականացման (Ֆասադային գեղարվեստական լուսավորություն) և վթարային հենասյուների փոխարինման անհրաժեշտություն:*
12. *Բակային և միջբակային տարածքների բարեկարգման, կանաչապատման և լուսավորման, ասֆալտապատման անհրաժեշտություն՝ հաշվի առնելով բնակիչների կարիքներն ու ցանկությունները, տարածքային առանձնահատկությունները:*
13. *Հանգստի գոտիների ստեղծման, այգիների (Օղակաձև զբոսայգու 6-րդ հատված) բարեկարգման և կանաչապատման, խաղահրապարակների ստեղծման անհրաժեշտություն, այգիների և հանրային զբոսայգիների մասնակցային կառավարման ներդրում:*
14. *Վերգետնյա և ստորգետնյա անցումների վերանորոգման և նորերի կառուցման անհրաժեշտություն:*

15. *Տրանսպորտային հոսքերի բեռնաթափման անհրաժեշտություն:*
16. *Տրանսպորտային նոր հանգույցների և զոնաների (հեծանվային մայրուղիներ, հեծանվուղիներ, street work out) ստեղծման անհրաժեշտություն:*
17. *Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների հիմնանորոգման և ընթացիկ նորոգման, գույքի նորացման անհրաժեշտություն:*
18. *Սոցիալապես խոցելի խմբերի համար տարաբնույթ ծրագրերի իրականացման անհրաժեշտություն (առաջին անգամ ճաշարանի և անօթևանների համար նախատեսված կացարանների կառուցում):*
19. *Բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավման, բնակիչների հետ հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն:*

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

«Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում, եզրաքարերի վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի անմիջական նպատակը քաղաքացիների անվտանգության ու բարեկեցության ապահովումն է: Կիրականացվեն ասֆալտապատման աշխատանքներ շրջանի այն թաղամասերում և փողոցերում, որտեղ առկա են առաջնահերթ խնդիրներ:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ կիրականացվեն մի շարք հասցեներում, ինչպես նաև այն հասցեներում, որտեղ կլինի ընթացիկ վերանորոգման անհրաժեշտություն: Կտարվեն մշտական աշխատանքներ՝ պահպանելու ասֆալտբետոնե ծածկը: Կիրականացվեն փոսալցման աշխատանքներ:				
Համագործակցություն	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	4000քմ	9000 քմ	9000 քմ	9000 քմ	10000քմ
Ծրագրի հիմնական շահառուները	Քաղաքացիները				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թ.թ.				

«Եզրաքարերի վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Քաղաքացիների անվտանգության ու բարեկեցության ապահովումն է, ինչպես նաև՝ քաղաքին պատշաճ տեսք հաղորդելը: Կիրականացվեն եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ այն հասցեներում, որտեղ առկա է անհրաժեշտություն:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ՝ մաշված եզրաքարերի ապամոնտաժում և նոր եզրաքարերի տեղադրում: Այն հասցեներում ևս, որոնք ընդգրկված են ասֆալտապատման ծրագրում, ասֆալտապատմանը զուգահեռ կիրականացվեն եզրաքերերի վերանորոգման աշխատանքներ:				
Համագործակցություն	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	1050գմ	1100գմ	1150գմ	1200գմ	1250գմ
Ծրագրի հիմնական շահառուները	Քաղաքացիները				
Ծրագրի սկիզբ և	2019-2023թ.թ.				

ավարտ, իրականացման ժամանակացույց	

«Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է՝ ապահովել քաղաքացիների ժամանցը և հանգիստը:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Կիրականացվեն ցանկապատ կամ ինքնակամ զավթված տարածքների ցանկապատերից ազատում, ապամոնտաժում, կտեղադրվեն մանկական խաղեր, աղբամաններ ու նստարաններ, կստեղծվեն ասֆալտապատ անցուղիներ: Տարածքներում կիրականացվեն կանաչապատման, ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ: Արդեն բարեկարգված բակային տարածքներում ու խաղահրապարակներում կիրականացվի կանաչապատ տարածքների խնամք, գույքի ընթացիկ վերանորոգում:				
Համագործակցություն	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	5 բակ	10 բակ	7 բակ	7 բակ	7 բակ
Ծրագրի հիմնական շահառուները	Քաղաքացիները				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թ.թ.				

«Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Քաղաքացիների բարեկեցության, անվտանգության, որակյալ կյանքի ապահովում:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Վարչական շրջանում նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում: Կկատարվեն հարթ տանիքների իզոգամի մասնակի նորոգում կամ հին, վնասված իզոգամի փոխարինում նորով: Թեք տանիքների դեպքում կիրականացվի տանիքի ծածկանյութի (ազբոշիֆեր կամ թիթեղ) փոխարինում նորով, իսկ հիմնանորոգման ընթացքում՝ փայտյա կարկասի փոխարինում:				
Համագործակցություն	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	7360 քմ	7370 քմ	7380 քմ	7400 քմ	7500 քմ
Ծրագրի հիմնական շահառուները	Քաղաքացիները				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թ.թ.				

«Վթարային պատշգամբների վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Քաղաքացիների բարեկեցության, անվտանգության, շենքի ճարտարապետական տեսքի ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Վթարային պատշգամբների վերանորոգում կամ հիմնանորոգում: Ցեմենտ-ավազի շաղախով ամրացում ու ներկում, անհրաժեշտության դեպքում, կրող տարրերի փոխարինում նորով, վերանորոգում:

Համագործակցություն	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2022
	12 հատ	30 հատ	25 հատ	25 հատ	25 հատ
Ծրագրի հիմնական շահառուները	Քաղաքացիները				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թ.թ.				

«Մուտքերի վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Քաղաքացիների բարեկեցության, որակյալ կյանքի ապահովում:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Մուտքերի վերանորոգում՝ դռների տեղադրում, պատերի հարթեցում և ներկում, ապակեպատում, պատուհանների տեղադրում, շքամուտքի հարթակի բետոնապատում, բազրիքների տեղադրում, աստիճանավանդակի նորոգում:				
Համագործակցություն	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	180 մուտք	160 մուտք	160 մուտք	120 մուտք	120 մուտք
Ծրագրի հիմնական շահառուները	Քաղաքացիները				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թ.թ.				

«Շենքերի գեղարվեստական լուսավորում» (վարչական շրջանի գլխավոր փողոցներ)

Ծրագրի նպատակը	Քաղաքացիների բարեկեցությունը, քաղաքի պատշաճ գեղագիտական տեսքը ապահովելն է, ինչես նաև ընդգծել շենքերի ճարտարապետական տեսքը:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Վարչական շրջանի գլխավոր փողոցների շենքերի գեղարվեստական լուսավորման աշխատանքների իրականացում, նեոնային լույսերի տեղադրում:				
Համագործակցություն	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ				
Ծրագրի անմիջական նպատակը	2019	2020	2021	2022	2023
	450 հատ	475հատ	600հատ	600հատ	600հատ
Ծրագրի հիմնական շահառուները	Քաղաքացիները				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թ.թ.				

«Վերելակների հիմնանորոգում» (այդ թվում՝ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերում առկա բոլոր բեռնատար վերելակները)

Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2020-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի:				

«Նուբարաշեն վարչական շրջանում մշակութային միջոցառումների անցկացում»

Ծրագրի նպատակը	Մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների զանգվածային միջոցառումների կազմակերպմամբ բնակչությանը մասնակից դարձնելու այդ միջոցառումներին և նրանց համար տոնական ու հիշարժան դրաձնելու այդ օրերը, ինչպես նաև նրանց մեջ արմատավորելու մշակութային արժեքները, ժողովրդական ավանդույթները, ազգային տոնակատարությունները, եկեղեցական տոները և

	ապահովելու ազգային մշակույթին հաղորդակցվելու մատչելիությունը:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը նախատեսում է վարչական շրջանում բնակչության տարբեր շերտերի համար ՀՀ տոն և հիշատակի օրերին նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպումը և անցկացումը: Ծրագրի շրջանակում 2019թ. կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ Հայոց բանակի օր, Տեառնընդառաջի տոն, Կանանց միջազգային օր, Մայրության, գեղեցկության և սիրո տոն, Ցեղասպանության զոհերի հիշատակի օր, Հաղթանակի և խաղաղության տոն, Վերջին զանգ, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Երևանյան ամառ եռամսյա մշակութային ծրագիր, Գիտելիքի, գրի և դպրության օր, ՀՀ անկախության տոն, Ուսուցչի և Գրադարանավարի օր, Ամանորի և Սուրբ Ծննդյան տոն, 2020-2023թթ. ընթացքում նախատեսվում է ավելացնել հետևյալ միջոցառումները՝ Նուբարաշենի հիմնադրման օր, Աշխատավորի օր, Հանրապետության տոն Բարեկենդանի տոնակատարություն, Սահմանադրության օր:				
Համագործակցություն	ՀԿ-եր, ժողովրդական և ժամանակակից երգի-պարի համույթներ, ՀՈԱԿ-ներ, ՊՈԱԿ-ներ, Արարատյան Հայրապետական Թեմ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում՝ 13 մշակութային միջոցառումներ	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում՝ 14 մշակութային միջոցառումներ	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում՝ 15 մշակութային միջոցառումներ	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում՝ 16 մշակութային միջոցառումներ	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում՝ 17 մշակութային միջոցառումներ
Ծրագրի հիմնական շահառուները	Նուբարաշեն վարչական շրջանի բնակիչներ, հյուրեր				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի:				

«Կրթական միջոցառումների կազմակերպում»

Ծրագրի նպատակը	Կրթական միջոցառումների կազմակերպմամբ մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորում, ազգային և համամարդկային արժեքները պահպանող, արժանապատիվ և կրթված երիտասարդների դաստիարակում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի շրջանակներում Նուբարաշեն վարչական շրջանում կիրականացվեն հետևյալ միջոցառումները. Պոեզիայի միջազգային օր, Մայրենիի օր, Ֆրանկոֆոնիայի օրերը Հայաստանում, Հուշարձանների պահպանության օր, Թանգարանների միջազգային օր, Վերջին զանգ, անապահով դպրոցահասակ երեխաների հանգստի կազմակերպում Հանքավանի առողջարարական ճամբարներում, Գիտելիքի օր, Ուսուցչի օր: Կկազմակերպվեն միջոցառումներ գրողների հոբելյանական տարելիցներին նվիրված, հանդիպումներ ժամանակակից գրողների հետ, գրքի շնորհանդեսներ, ազգային մշակույթին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող ծրագրերի

	շրջանակում դպրոցահասակների այցերի կազմակերպում թանգարաններ և պատմամշակութային վայրեր:
Համագործակցություն	ՀԿ-եր, ՊՈԱԿ-ներ, անհատներ, ժողովրդական երգի-պարի համույթներ, Արարատյան հայրապետական թեմ
Ծրագրի հիմնական շահառուները	Դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաներ, մանկավարժներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

«Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում»

Ծրագրի նպատակը	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացում, դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում, նրանց ֆիզիկական որակների բարելավում: Ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման խթանում: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում, շնորհալի պատանիների հայտնաբերում և ընդգրկում մանկապատանեկան մարզադպրոցներում, վարչական շրջանի բնակիչների ներգրավածություն սպորտային կյանքին, մարզաառողջարարական ծրագրերին, առողջ ապրելակերպի սերմանում, ֆիզիկապես պատրաստված երիտասարդության ձևավորում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի շրջանակներում 2019թ. վարչական շրջանում կիրականացվեն օրացույցային պլանով նախատեսված հետևյալ սպորտային միջոցառումները. 1. Անկախության 28-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 28-րդ մարզական խաղեր / վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, սեղանի թենիս, ֆուտբոլ, ֆուտզալ, աթլետիկա մարզաձևեր/ 2. ՀՀ հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների սպորտլանդիա մարզական միջոցառում 3. Ազգային ժողովի գավաթի խաղարկության խաղեր 1-6-րդ դասարանցիների միջև / Թեթև աթլետիկա/ 4. ՀՀ նախագահի մրցանակի համար Լավագույն մարզական ընտանիք հանրապետական մրցույթ փառատոն 5. Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք համաքաղաքային ամենամյա ավանդական բակային փառատոն / վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ, հանբոլ, հեծանվավազք, աթլետիկա, մարզատրամաբանական խաղեր/ 6. Նուբարաշեն վարչական շրջանի շախմատի բաց առաջնություն: Պարգևատրման ցերեկույթ 7.Նախազորակոչային և զորակոչային տարիքի դպրոցականների ռազմամարզական խաղեր 2020-2023թթ. ընթացքում նախատեսվում է ավելացնել հետևյալ սպորտային միջոցառումները՝ Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն, ՀՀ հանրակրթական դպրոցների սովորողների հանրապետական չորրորդ ուսումնամարզական խաղեր, ՀՀ Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա մարզական միջոցառում, վարչական շրջանում ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի, սեղանի թենիսի, բազկամարտի, շախմատի, ձյուդոյի մրցումների, սպորտլանդիաների, տոնական հեծանվաշքերթների կազմակերպում:
Համագործակցություն	ՊՈԱԿ-ներ, ՀՈԱԿ-ներ, ՀՀ մարզերի դպրոցներ, ՀԿ-ներ
Ծրագրի հիմնական	Նուբարաշեն վարչական շրջանի բնակիչներ, հյուրեր

շահառուները	
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

«Սոցիալական ապահովության ծրագրեր»

Ծրագրի նպատակը	Նպատակն է վարչական շրջանում իրականացնել սակավ ապահովված ընտանիքներին դրամական, նյութական, պարենային աջակցությունների տրամադրում, սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական խնդիրների լուծում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Սոցիալական ծառայությունների իրականացվող միջոցառումների մեջ կազմակերպվում են տարբեր ծրագրեր որտեղ ներառվում են սոցիալապես անապահով ընտանիքներ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք, բազմազավակ ընտանիքներ, բազմանդամ ընտանիքներ, հաշմանդամություն ունեցող անձինք, միայնակ անժառանգ տարեցներ, զոհված ազատամարտիկների ընտանիքներ, ծնողազուրկ երեխաներ: 1. Զոհված, հաշմանդամություն ունեցող զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 60 դպրոցահասակ երեխաների հանգստի կազմակերպումը մարզաառողջարանային «Լուսաբաց» ճամբարում: 2. Առողջապահության ոլորտում, պետպատվերի շրջանակներում պետության կողմից երաշխավորված, անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը սոցիալապես անապահով, հատուկ խմբերում չընդգրկված սոցիալապես անապահով կարիքավոր անձանց: 3. Ամանորի կապակցությամբ սոցիալապես անապահով անձանց աջակցություն, ծնողազուրկ անապահով բազմազավակ ընտանիքներին սննդի և քաղցրավենիքի փաթեթների տրամադրում: 4. Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների հուղարկավորության կազմակերպում: 5. Սոցիալապես անապահով ընտանիքների հայտնաբերում, կարիքի գնահատում: 6. 2020-2023թթ. նախատեսվող՝ Հաղթանակի օրվա կապակցությամբ ֆինանսական աջակցություն տրամադրվի վարչական շրջանի զոհված ազատամարտիկների ընտանիքներին, Արցախյան պատերազմի 1-ին, 2-րդ խմբի զինհաշմանդամություն ունեցողներին և Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին: 7. 2020-2023թթ. նախատեսվող՝ Սոցիալապես խիստ անապահով, անապահով բազմազավակ, ծնողազուրկ, գործազուրկ ընտանիքներին ցուցաբերել դրամական օգնություն սոցիալական խնդիրների մասնակի լուծման նպատակով: 8. 2020-2023թթ. նախատեսվող՝ Սոցիալապես անապահով երեխաներին դպրոցական պայուսակի և գրենական պիտույքների տրամադրում: 9. 2020-2023թթ. նախատեսվում է նշել՝ • Սուրբ Հարության կամ Զատկի տաղավար տոնը, • Տարեցների միջազգային օրը, • հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրը, • Ընտանիքի միջազգային օրը
Համագործակցություն	«Նուբար»սոցիալ-մշակույթային հիմնադրամ, «Առաքելություն Հայաստան»բարեգործական Հ/Կ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հ/կ, «Լենա» հ/կ, «Առդա» բարեգործական հիմնադրամ, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ, «Շողիկ» հայկական բարեգործական հ/կ, Օգնենք կարիքավոր ընտանիքներին հ/կ, «Սատար» հաշմանդամություն ունեցող անձանց հ/կ, անհատ

	բարերարներ, Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման կենտրոն ՊՈԱԿ, Կարմիր խաչի ընկերություն:
Ծրագրի հիմնական շահառուները	Նուբարաշեն վարչական շրջանի սոցիալապես անապահով, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, զինհաշմանդամություն ունեցողներ, զոհված ազատամարտիկների ընտանիքներ, բազմազավակ ընտանիքներ, միայնակ տարեցներ, ծնողազուրկ երեխաներ, հաշմանդամություն ունեցող անձինք:
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. պայմանգրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանը զբաղեցնում է 470 հա տարածք, որը կազմում է Երևան քաղաքի ընդհանուր տարածքի 2.1%-ը: Այն սահմանակից է Կենտրոն, Էրեբունի և Նոր-Նորք վարչական շրջանների հետ: Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի բնակչության թիվը կազմում է 11300 մարդ:

Վարչական շրջանում առկա են թվով 11 բնակելի շենքեր, որոնք կառուցված են մասնավոր ներդրումների հաշվին և 2134 անհատական բնակելի տներ: Վարչական շրջանի բնակելի ֆոնդի զգալի մասը կազմում են սեփական տնատիրությունները, որով շրջանն առանձնանում է այլ վարչական շրջաններից:

Նորք-Մարաշ վարչական շրջանում առկա է 2 հասարակական հանգստի վայր (այգի), 8 մարզական խաղահրապարակ:

Վարչական շրջանի փողոցների թիվը 25 է, որոնց երկարությունը կազմում է շուրջ 22.5կմ: Բոլոր փողոցների ընդհանուր մակերեսը կազմում է 438309քմ, որից ասֆալտապատ մակերեսը՝ 424057քմ, գրունտային ծածկույթով մակերսը՝ 14252քմ:

Նորք-Մարաշ վարչական շրջանի գործող ոռոգման ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 15800գծմ, որը հիմնականում սպասարկում է անհատական տնատիրությունների կանաչ տարածքների ոռոգումը, իսկ հասարակական նշանակության ոռոգվող կանաչ տարածքների ծավալը կազմում է 1.2 հա: Վարչական շրջանի հասարակական նշանակության կանաչապատ տարածքների մակերեսը կազմում է 1.2հա: Նշված տարածքները ապահովված են ոռոգման միասնական ցանցով: Գործող ոռոգման ցանցի երկարությունը կազմում է մոտ 15800գծմ:

Վարչական շրջանում գործում է 4 մանկապարտեզ, որտեղ հաճախում է շուրջ 400 երեխա: Բոլոր հաստատությունները հիմնանորոգված են, ապահովված են կենտրոնացված ջեռուցման համակարգերով: Վարչական շրջանում գործում է 3 հանրակրթական դպրոց, 1 գերատեսչական ավագ դպրոց, որտեղ հաճախում է շուրջ 952 երեխա, և 2 հատուկ նշանակության դպրոցներ՝ «Լսողության խանգարումներ ունեցող երեխաների գիշերօթիկ» և «Թիվ 2 օժանդակ» դպրոցները, որտեղ հաճախում է շուրջ 262 երեխա: Գործում է 1 գրադարան՝ շուրջ 23.800 գրքային ֆոնդով, որը գտնվում է ֆիզիկապես մաշված վիճակում:

Վարչական շրջանում է գործում մեկ մարզադպրոց «Նորք-Մարաշի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ը, ուր հաճախում է մոտ 250 երեխա, մեկ երաժշտական դպրոց՝ «Ռ. Անդրեասյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ը, ուր հաճախում է մոտ 155 երեխա: Վարչական շրջանում գործում է 1 շախմատի դպրոց՝ «Նորք-Մարաշի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ը, որտեղ հաճախում է շուրջ 90 երեխա: Նորք-Մարաշ վարչական շրջանում •ործում են հետևյալ 6 առողջապահական հիմնարկները՝

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնը /սրտաբանական/, Վնասաքաբանության, օրթոպեդիայի և վերական•նողական կենտրոնը, «Նորք» ինֆեկցիոն հանրապետական կենտրոնը, «Հովարդ Կարագյոզյան» մանկական ատամնաբուժական կենտրոնը, «Սբ. Մարիամ» առողջապահական կենտրոնը, թիվ 5 պոլիկլինիկան:

Վարչական շրջանում գործում են Մանկան տունը, Նորքի տուն-ինտերնատը /ծերանոց/:

Նորք-Մարաշ վարչական շրջանում բնակվում են Հայրենական Մեծ պատերազմի 2 վետերան, Արցախյան պատերազմի մասնակից 58 ազատամարտիկ, զոհված

ազատամարտիկի 6 ընտանիք, հաշմանդամ (ցմահ) - 50 մարդ, երկկողմանի ծնողազուրկ 2 երեխա, փախստականներ Սիրիայից՝ 5 ընտանիք:

Հիմնախնդիրներ

1. *Գործարար միջավայրի բարելավում*
2. *Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում,*
3. *Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդության ներգրավմամբ,*
4. *Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն,*
5. *Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում,*
6. *Համայնքում բնակարանային շինարարության խթանում,*
7. *Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում, կանաչապատում, աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովում,*
8. *Նորք-Մարաշ վարչական շրջանի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում,*
9. *Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում,*
10. *Զբոսաշրջության զարգացման խթանում,*
11. *Առողջապահության զարգացում,*
12. *Համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում:*

2019-2023թթ նախատեսվող ծրագրեր

«Ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման և պահպանման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ասֆալտ բետոնե ծածկի ընթացիկ՝ փոսային, ճաքալցման և հիմնանորոգման աշխատանքներ:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի բնակիչների հարմարավետ տեղաշարժման համար կատարվող բարեկարգման աշխատանքներ , ինչպես նաև կատարված աշխատանքների պատշաճ մակարդակով պահպանում:				
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	11250 քմ	11250 քմ	11250 քմ	11250 քմ	11250 քմ
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն և զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Հետիոտն անցումների կառուցման և վերանորոգման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Նորք-Մարաշ վարչական շրջանի փողոցների բարեկարգում, հետիոտն անցորդի հարմարավետության, երթևեկության կանոնների ապահովման անվտանգություն:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագրով նախատեսվում է իրականացնել Նորք-Մարաշ վարչական շրջանի Ա.Արմենակյան, Գ.Հովսեփյան, Նորքի 5փող. մայթերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ՝ 5400գծմ ընդամենը ծավալով, մայթերի ասֆալտե ծածկույթի ընթացիկ և կապիտալ նորոգում, եզրաքարերի նորոգման աշխատանքներ՝ բնակչության հարմարավետ երթևեկությունն ապահովելու համար:				
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	1080 գծմ	1080 գծմ	1080 գծմ	1080 գծմ	1080 գծմ
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Հենապատի հիմնանորոգման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Նորք-Մարաշ վարչական շրջանի փողոցների բարեկարգում, հենապատերի վերանորոգում և ամրացում, հետիոտն անցորդի հարմարավետության, երթևեկության կանոնների ապահովման անվտանգություն:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագրով նախատեսվում է իրականացնել Նորք-Մարաշ վարչական շրջանի Ա.Արմենակյան փողոցի սկզբնամասի և Նաիրի հյուրանոցից դեպի Հին Նորք տանող ճանապարհատվածի հենապատերի հիմնանորոգման աշխատանքներ:				
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
		87.5 գծմ	50.0գծմ		
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Ոռոգման ցանցի հիմնանորոգման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Կանաչապատ տարածքների պահպանում և խանամք, ոռոգման ջրի կորուստների հնարավորինս նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ըստ ծրագրի նախատեսվում է Նորք-Մարաշ վարչական շրջանի Ա.Արմենակյան և Գ.Հովսեփյան փող. ոռոգման ցանցի հիմնանորոգում՝ ընդամենը 5000գծմ ծավալով, հասարարական հանգստի վայրերի /այգիների/ և խաղահրապատակների կանաչապատ տարածքների խնամք և պահպանում:
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան

Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	1000 գծմ	1000 գծմ	1000 գծմ	1000 գծմ	1000 գծմ
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Հասարակական հանգստի վայրերի կառուցման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Բնակչության համար հասարակական նշանակության հանգստի գոտիների ստեղծում՝ կանաչ տարածքների ավելացման միջոցով, առողջ ապրելակերպի քարոզում՝ բակային խաղահրապարակներում մարզական խախերի տեղադրման միջոցով:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Այգիների, հանգստի գոտիների,պուրակների ստեղծում, հիմնադրում, կանաչ պարածքների ընդլայնում: Մարզական խաղահրապարակների կառուցում՝ հավասարաչափ բաշխված ըստ թաղամասերի, հարմարեցված ըստ տնատիրության տարածքների:				
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	2 օբյեկտ	2 օբյեկտ	2 օբյեկտ	2 օբյեկտ	2 օբյեկտ
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Ախտահանման և միջատազերծման /դեռատիզացիա/ ծրագիր»

Ծրագրի նպատակը	Ախտահանման և միջատազերծման ծառայություններ:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Դեռատիզացիոն և դիսենկցիոն ծառայությունների իրականացում, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում, բնակիչների, մանկապարտեզների, դպրոցների սաների անվտանգության և ապահովում, վարչական շրջանի տարածքում գտնվող աղբամանների շրջակայքի սանիտարական նորմերի ապահովում: Տաք սեզոնին սողունների վերացում, վնասազերծում:				
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	192.000քմ	192.000քմ	192.000քմ	192.000քմ	192.000քմ
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգման և վերանորոգման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Նախադպրոցական կրթության պայմանների բարելավում, զարգացում, ձեռքբերված գույքի և վերանորոգված հաստատությունների պատշաճ խնամք:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում և պահպանում, կրթական և անվտանգության պատշաճ պայմանների ապահովում երեխաների համար, հաստատությունների բակերի խնամք (սեզոնին համապատասխան), հաստատությունների բակերում տեղադրված սպորտային գույքի ավելացում և պահպանում:				
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	2 օբյեկտ	2 օբյեկտ	2 օբյեկտ	2 օբյեկտ	2 օբյեկտ
Ծրագրի հիմնական շահառուները	Մանկապարտեզ հաճախող երեխաներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Արտադպրոցական դաստիարակության ծրագիր»

Ծրագրի նպատակը	Մարզադպրոց հաճախող սաների հաճախման գրավչության, առողջ ապրելակերպի ապահովման ինչպես նաև երաժշտական դպրոցի կրթական պայմանների բարելավման և խմբերի ավելացման նպատակ ունի վերոնշյալ ծրագիրը:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Մարզադպրոցի և երաժշտական դպրոցի գույքի փոխարինում ժամանակակից գույքով, նոր գույքի ձեռքբերում, երաժշտական գործիքների պահպանում, պարային խմբերի հագուստների ձեռք բերում: Մարզական դպրոցի սաների և բնակիչների առողջ ապրելակերպի, մարզումներ իրականացնելու համար անհրաժեշտ մարզագույքի ապահովում:				
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
		5 միավոր	10 միավոր	10 միավոր	5 միավոր
Ծրագրի հիմնական շահառուները	Մարզադպրոցի սաներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Մշակութային միջոցառումների իրականացման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Մշակութային կյանքի ապահովում, պետական, ազգային ու ավանդական տոների պահպանում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	ՀՀ պետական, ազգային և եկեղեցական տոների կազմակերպում և անցկացում՝ բնակչության ներգրավմամբ, բնակիչների մասնակցություն ազգային տոներին՝Հայոց բանակի օր, Տեառնընդառաջի տոնակատարություն, Բարեկենդանի տոնակատարություն, «Կանանց տոն-Մարտի 8»

	տոնակատարություն, Ապրիլի 7 «Մայրության և գեղեցկության տոն», Սբ. Զատկի տոնակատարություն, Եղեռնի տարելիցին նվիրված միջոցառումներ, «Հաղթանակի և խաղաղության տոն - Մայիսի 9» տոնակատարություն, Համբարձման տոնակատարություն, Հայաստանի առաջին հանրապետություն տոն, Երեխաների իրավունքների պաշտպանության օր, «Ցտեսություն մանկապարտեզ» տոնակատարություն, ՀՀ Պետական խորհրդանիշների և Սահմանադրության օր, «ՈՒրախ ամառ, երջանիկ մանկություն», Երևանյան ամառ, Բակային ճամբարների կազմակերպում, Գիտելիքի գրի և դպրության օր, ՀՀ Անկախության տոն, Նորք-Մարաշի վերածնության օր, Ուսուցչի օր, Թարգմանչաց տոն, Ամանորյա տոնակատարություն				
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	22 միջ	22 միջ	22 միջ	22 միջ	22 միջ
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Սպորտային միջոցառումների իրականացման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Առողջ ապրելակերպի քարոզում				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում՝ բնակչության տարբեր տարիքային խմբերի մասնակցությամբ, վարչական շրջանի երիտասարդ ընտանիքների ընդգրկում սպորտային ծրագրերին: Նախատեսվում են անցկացնել հետևյալ միջոցառումները՝ ՀՀ անկախության տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային մարզական խաղեր , «Առողջ սերունդ» պաշտպանված հայրենիք համաքաղաքային բակային ավանդական փառատոն , ՀՀ ազգային ժողովի գավաթի խաղարկություն , Երեխաների պաշտպանության միջազգային օր, Շախմատի Երևան քաղաքի , Լավագույն մարզական ընտանիք , Շախմատի օլիմպիադա , Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդների հանրապետական ռազմամարզական խաղեր , Մասնակցություն լայնամասշտաբ սպորտային միջոցառումներին, «Կաշվե գնդակ» ֆուտբոլի առաջնություն, Ըմբշամարտի հուշամրցաշար կազմակերպում, Սպորտային բաց առաջնությունների մասնակցություն:				
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	12 միջ	12 միջ	12 միջ	12 միջ	12 միջ
Ծրագրի հիմնական ահառուները	Բնակչություն				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Կանաչ տարածքների հիմնման և պահպանման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Կանաչ տարածքների հիմնում, պահպանում, էկո համակարգի բարելավում՝ բնակչության կենսամակարդակի բարձրացման նպատակով:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախատեսվում է կանաչ տարածքների մշակում, խնամքի պատշաճ իրականացում, կանաչապատ և ծաղկային տարածքների ընդլայնում ու պահպանում, ծառատունկ, սիզամարգերի ստեղծում և բարեկարգում:				
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	1.2 հա	1.5 հա	1.7 հա	1.9 հա	2.0 հա
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Սոցիալապես անապահով ընտանիքների աջակցության ծրագիր»

Ծրագրի նպատակը	Սոցիալապես անապահով ընտանիքներին աոցիալական աջակցության, բուժ. օգնության ծառայություններից օգտվելու հնարավորության տրամադրում, սոցանապահով և այլ սոցիալական խմբերին պատկանող երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարներում: Սոցանապահով 2-5 դասարան դպրոց հաճախող երեխաներին դպրոցական պարագաներով ապահովում, երեխաների համար կրթական անհրաժեշտ պարագաներով ապահովում: Սոցանապահով ընտանիքների համերգների և թատրոնների ներկայացումների տոմսերի տրամադրում : Սոցանապահով ընտանիքներին տոնական օրերին աջակցության բնամթերային աջակցության տրամադրում ՝ ավանդական տոնը նշելու նպատակով				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ֆինանսական աջակցության տրամադրում սոցիալապես առավել խոցելի խմբերին, հաշմանդամ ընտանիքներին աջակցություն, բազմազավակ ընտանիքներին աջակցություն, թոշակառուներին աջակցություն: Թաղման ծախսերի մասնակի աջակցության տրամադրում սոցիալապես անապահով քաղաքացիների համար: Սոցանապահով ընտանիքներին, վարչական շրջանի հաշմանդամություն ունեցող բնակաիչների անվճար բուժ օգնության միջնորդագրերի տրամադրում: Երեխաների ամառային հանգստի կազմակերպման նպատակով տրանսպորտային ծառայությունների ձեռքներում, երեխաների համապատասխան հագուսների ձեռք բերում, վարչական շրջանի երեխաների ամառային հանգստի ապահովում: Դպրոցական պայուսակների և գրենական պիտույքների ձեռքբերում՝ վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար:				
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան, Առողջապահության նախարարություն, Անհատ բարերարներ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	1125 ընտ. 310 մարդ	1125 ընտ. 310 մարդ	1125 ընտ. 310 մարդ	1125 ընտ. 310 մարդ	1125 ընտ. 310 մարդ
Ծրագրի հիմնական շահառուները	Սոցիալապես անապահով ընտանիքներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ,	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

իրականացման ժամանակացույց	

ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նոր Նորք վարչական շրջանը գտնվում է Երևանի հյուսիսարևելյան հատվածում, սահմանակից է Ավան, Կենտրոն, Էրեբունի, Նորք-Մարաշ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին, արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին: Բնակչությունը կազմում է 131.7 հազ. մարդ, տարածքը կազմում է 1411.0 հա, որը Երևան քաղաքի ընդհանուր տարածքի 15.4% է: Փողոցների և ճանապարհների երկարությունը 87.4 կմ է: Վարչական շրջանում ասֆալտբետոնե ծածկը կազմում է 1547.8քմ, որից ասֆալտապատված է 500.000քմ, իսկ ասֆալտապատման ենթակա է 400.000քմ, եզրաքարերի ծավալը՝ 174,2 գծմ, որից վերանորոգված է 5000գծմ, վերանորոգման ենթակա է 7000գծմ, առկա է 95 հենապատ որից 3-ը վերանորոգված է, իսկ 12-ն ունի վերանորոգման կարիք: Վարչական շրջանում առկա է 98 թեքահարթակ:Վարչական շրջանի բակային տարածքները 338-ն են, որից 100.000քմ վերանորոգված է, իսկ 300.000քմ ունի վերանորոգման անհրաժեշտություն, առկա է 143 խաղահրապարակ և 19 մինի ֆուտբոլի դաշտ, տեղադրված են 315 խաղեր, 150 մարզասարքեր, 132 զրուցատաղավարներ, 2297 նստարաններ:

Նոր Նորք վարչական շրջանի կանաչ տարածքների մակերեսը 65,2 հա է, առկա է 23 զբոսայգի և պուրակ՝ 25.6 հա մակերեսով: Ոռոգման ցանցի երկարությունը 35.1 կմ է, որից նորոգված է 250գծմ, նորոգման է ենթակա 5կմ: Վարչական շրջանում հաշվառված է 681 բազմաբնակարան շենք, գործում է 593 վերելակ: Բազմաբնակարան շենքերի մուտքերի թիվը 2097 է, որից 533-ը վերանորոգված է, իսկ 1564-ն ունի վերանորոգման կարիք, հարթ տանիքների ընդհանուր մակերեսը՝ 150.000քմ է, որից վերանորոգված է 45.000քմ, վերանորոգման ենթակա է 70.000քմ իսկ թեք տանիքների ընդհանուր մակերեսը՝ 300.000քմ, վերանորոգված է 30.000քմ, վերանորոգման ենթակա՝ 100.000քմ:

Նոր Նորք վարչական շրջանում գործում է 22 մանկապարտեզ, որից 3-ը ամբողջությամբ վերանորոգված են, իսկ մնացած մանկապարտեզներում իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ: Նախատեսվում է Երևանի էներգաարդյունավետության ծրագրով իրականացնել 8 մանկապարտեզի և Երևան քաղաքի զարգացման ծրագրերով ևս 4 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ:

20 դպրոց, 4 մարզադպրոց, 1 ԲՈՒՀ, 1 արվեստի և 1 երաժշտական դպրոց, 1 գրադարան, 1 մշակույթի կենտրոն, 1 հայորդաց տուն, միջին մասնագիտական 2 քոլեջ, 1 ուսումնարան, 1 հատուկ դպրոց, 1 ճեմարան, 1 թանգարան, 1 բժշկական կենտրոն, 2 ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկ, 6 բարեգործական ճաշարան: Նոր Նորքում գործող բոլոր մարզական և մշակութային հաստատությունները վերանորոգված են, մասնակի վերանորոգման կարիք ունի մշակույթի կենտրոնը (Նոր Նորքի 6-րդ զանգվածի՝ Լյուքսեմբուրգի 2-րդ նրբանցք հասցեում տեղակայված մասնաշենքը):

Նոր Նորք վարչական շրջանում հաշվառված են թվով 37 Հայրենական Մեծ պատերազմի վետերաններ, 583 միայնակ տարեցներ, 59 արցախյան պատերազմի մասնակիցներ, 48 բազմազավակ անապահով ընտանիք, 45 սիրիահայ ընտանիք, 1781 սոցիալապես անապահով ընտանիք, 7686 հաշմանդամություն ունեցող անձիք:

Հիմնախնդիրներ

1. *Փողոցներում, շենքերի միջբակային տարածքներում ասֆալտապատման, լուսավորության ցանցի արդիականացման անհրաժեշտություն,*
2. *Բակային տարածքների բարեկարգման անհրաժեշտություն,*
3. *Մայթերի եզրաքարերի ու ասֆալտբետոնե ծածկույթի մասնակի և հիմնական վերանորոգման, հենապատերի հիմնանորոգման և նոր հենապատերի կառուցման անհրաժեշտություն,*
4. *Հանգստյան գոտիների համալրման անհրաժեշտություն,*

5. *Նոր խաղահրապարակների կառուցման և առկա խաղահրապարակներում մանկական խաղերի ու մարզասարքերի համալրման, պահպանման անհրաժեշտություն,*
6. *Ոռոգման ցանցի ընդլայնման, ներքին կոյուղագծերի և ջրագծերի նորոգման, անհրաժեշտություն,*
7. *Թեքահարթակների կառուցման անհրաժեշտություն,*
8. *Բազմաբնակարան շենքերում և հարակից տարածքների սանիտարական նորմերի պատշաճ մակարդակի ապահովման անհրաժեշտություն,*
9. *Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, արտաքին պատերի և կախովի պատշգամբների, շքամուտքերի վերանորոգման, պատուհանների փոխարինման անհրաժեշտություն,*
10. *Վերելակների ձեռքբերման և տեղադրման, վերելակային տնտեսության արդիականացման անհրաժեշտություն,*
11. *Միայնակ և անժառանգ, խնամքի կարիք ունեցող տարեցների, ծերերի, սոց. անապահով, կենսաթոշակառուների համար վարչական շրջանում ցերեկային համալիր կենտրոնի ստեղծում՝ լիարժեք մասնագիտական աշխատանքային խմբի առկայությամբ,*
12. *Համայնքում առկա, համայնքային ենթակայության չօգտագործվող շենք-շինություններում /հարմարեցված/ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, ինչպես նաև սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքների երեխաների համար կենտրոնի ստեղծում, որը կապահովի նրանց համար բարոյահոգեբանական աջակցություն, երկարօրյա դասապատրաստում, մշակութային և սպորտային միջոցառումներ,*
13. *Խոցելի սոցիալական խմբերի ընտանիքների դպրոցահասակ երեխաների շահերով առաջնորդվելով, և հաշվի առնելով վերջիններիս համակողմանի զարգացման անհրաժեշտությունը՝ պարբերաբար պատմամշակութային կենտրոնների (թատրոն թանգարան, պատկերասրահ) տոմսեր, ինչպես նաև ժամանցի կենտրոնների տոմսեր /կենդանաբանական այգի, կրկես, ջրաշխարհ, բուսաբանական այգի/,*
14. *Նոր Նորքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում վերանորոգման աշխատանքների իրականացում, շենքային պայմանների և բակային տարածքների բարելավման անհրաժեշտություն*:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

«Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում»

Ծրագրի նպատակը	Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում /10.850քմ/:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված թեք տանիքների նորոգում ազբոհերձաքարով:				
Համագործակցություն	Պայմանագիր՝ Երևանի քաղաքապետարան-մրցույթի արդյունքում հաղթած մասնակից կազմակերպություն, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ-համատիրություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	850քմ՝ թեք տանիքների նորոգում	2500քմ՝ թեք տանիքների նորոգում	2500քմ՝ թեք տանիքների նորոգում	2500քմ՝ թեք տանիքների նորոգում	2500քմ՝ թեք տանիքների նորոգում
Ծրագրի հիմնական	Բազմաբնակարան շենքերի բնակիչներ				

շահառուները	
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

«Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում»

Ծրագրի նպատակը	Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում, եղանակային անբարենպաստ պայմանների դեպքում՝ կաթոցների և հալոցների կանխում, վերջին հարկերում բնակվող բնակիչների համար ապահով տանիքների ստեղծում /67.5000 քմ./:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված հարթ տանիքների նորոգում իզոգամով:				
Համագործակցություն	Պայմանագիր՝ Երևանի քաղաքապետարան-մրցույթի արդյունքում հաղթած մասնակից կազմակերպություն, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ-համատիրություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	7500քմ՝ հարթ տանիքների նորոգում	15000քմ՝ հարթ տանիքների նորոգում	15000քմ՝ հարթ տանիքների նորոգում	15000քմ՝ հարթ տանիքների նորոգում	15000քմ՝ հարթ տանիքների նորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Բազմաբնակարան շենքերի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի				

«Վերելակային տնտեսության արդիականացում և հիմնանորոգում»

Ծրագրի նպատակը	Վերելակային տնտեսության արդիականացում, հիմնանորոգում				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը նախատեսում է ապահովել վերելակային տնտեսության նորոգում և անվտանգ շահագործումը:				
Համագործակցություն	Վարչական շրջանի համատիրություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Վերելակների նորոգում	Վերելակների նորոգում	Վերելակների նորոգում	Վերելակների նորոգում	Վերելակների նորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Վարչական շրջանի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Ավարտին հասցնել բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքները /275 շքամուտք/:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը նախատեսում է բնակելի ֆոնդի շենքային պայմանների բարելավում և բնակիչների համար հարմարավետ պայմանների ստեղծում:				
Համագործակցություն	Վարչական շրջանի համատիրություններ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում	բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում	բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում	բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում	բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Վարչական շրջանի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Փողոցների, մայթերի և միջբակային տարածքների վերանորոգում,ասֆալտապատում»

Ծրագրի նպատակը	Վարչական շրջանի փողոցների, մայթերի և միջբակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտբետոնե ծածկերի վերանորոգում՝ բնակիչների համար հարմարավետ բակեր, խաղահրապարակներ և երթևեկելի հարթ ճանապարհներ ու մայթեր ապահովելու նպատակով /105 000քմ/:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նոր Նորք վարչական շրջանի փողոցների, մայթերի, բակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտ-բետոնե ծածկի վիճակի ուսումնասիրություն, կլիմայական և այլ պատճառներից առաջացած փոսերի, ճաքերի և քանդված շերտերի ծավալների վերաբերյալ տեխնիկական պայմանների կազմում և վերանորոգման աշխատանքների իրականացում ըստ կազմված տեխ.պայմանների: Վերանորոգման աշխատանքները ներառում են ասֆալտբետոնե ծածկի վրա առաջացած փոսերից վնասված շերտերի հեռացում, նոր փոսերի ձևավորվում և ասֆալտապատվում: /				
Համագործակցություն	Պայմանագիր՝ Երևանի քաղաքապետարան-մրցույթի արդյունքում հաղթած մասնակից կազմակերպություն				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	21000քմ ասֆալտապատ բակային տարածքների և փողոցների վերանորոգում	21000քմ ասֆալտապատ բակային տարածքների և փողոցների վերանորոգում	21000քմ ասֆալտապատ բակային տարածքների և փողոցների վերանորոգում	21000քմ ասֆալտապատ բակային տարածքների և փողոցների վերանորոգում	21000քմ ասֆալտապատ բակային տարածքների և փողոցների վերանորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակիչներ, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի				

ժամանակացույց	

«Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում, հանգստի գոտիների ստեղծում»

Ծրագրի նպատակը	Նոր Նորք վարչական շրջանի բնակիչների `մեծահասակների և փոքրերի համար հանգստի և խաղերի համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում , միջբակային տարածքների լուսավորում, կանաչապատում, ինչպես նաև խաղահրապարակների ասֆալտապատում և ընդարձակում /25 բակային տարածք/:				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը նախատեսում է բակային տարածքների կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ բակերում մայթերի եզրաքարերի վերանորոգում, սալիկների , նստարանների, զրուցատաղավարների, աղբամանների, գիշերային լուսավորության հենասյուների տեղադրում: Ծրագիրը ներառում է նաև երեխաների համար խաղահրապարակներում սպորտային մարզագույքի, մանկական խաղերի տեղադրում, հնացած և վնասված խաղերի վերանորոգում և նորերով փոխարինում: Բակերն ավելի գեղեցիկ ու հարմարավետ դարձնելու նպատակով՝ սիզամարգերի կանաչապատում , ծառատունկ, ծաղկապատում, ջրագծերի վերականգնում:				
Համագործակցություն	Պայմանագիր՝ Երևանի քաղաքապետարան-մրցույթի արդյունքում հաղթած մասնակից կազմակերպություն				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	5 և ավելի բակային տարածքների հիմնանորոգում	5 և ավելի բակային տարածքների հիմնանորոգում	5 և ավելի բակային տարածքների հիմնանորոգում	5 և ավելի բակային տարածքների հիմնանորոգում	5 և ավելի բակային տարածքների հիմնանորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Նոր Նորք վարչական շրջանի բնակիչներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի				

«Կանաչ տարածքների ավելացում և պահպանում, ծաղկապատում և ծառատնկում»

Ծրագրի նպատակը	Նոր Նորք վարչական շրջանի տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում, բնակիչների լիարժեք հանգիստը կազմակերպելու համար բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովում				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում, կանաչապատում և ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգում: Կիրականացվի բակային տարածքների և փողոցների կանաչապատում: Կանաչապատ տարածքներից և սիզամարգերից կիրականացվի աղբի հավաքում, էտած ծառերի տեղափոխում: Ծառատունկ կիրականացվի Թ. Կրպեյանի, Ֆ. Նանսենի և Տիգրան Մեծի այգիներում, ինչպես նաև բակային տարածքներում: 2019-2023 թթ. (յուրաքանչյուր տարի) իրականացվելու են 3500 ծառերի և թփերի ծառատնկման, ծաղկատնկման աշխատանքներ: Նախատեսվում է չոր և հիվանդ ծառերի մասնակի և խոր էտ, ծառերի սնուցում հանքային պարարտանյութերով, բուժում՝ թունաքիմիկատներով, կրապատում, ջրող մեքենաներից ոռոգում ռետինե խողովակներով:				
Համագործակցություն	<<Ավան>> կանաչապատում				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Ծաղկապատ ում և ծառատունկ (3500 ծառ և թուփ)	Ծաղկապատ ում և ծառատունկ (3500 ծառ և	Ծաղկապատ ում և ծառատունկ (3500 ծառ և	Ծաղկապատ ում և ծառատունկ (3500 ծառ և	Ծաղկապատ ում և ծառատունկ (3500 ծառ և

		թուփ)	թուփ)	թուփ)	թուփ)
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնքի բնակիչներ, զբոսաշրջիկներ				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի				

«Նոր Նորք վարչական շրջանում մշակութային միջոցառումների անցկացում»

Ծրագրի նպատակը	Նոր Նորք վարչական շրջանում մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների զանգվածային միջոցառումների կազմակերպում: Վարչական շրջանի երաժշտական և արվեստի դպրոցների, մշակույթի կենտրոնի և գրադարանի գործունեության արդյունավետությանն ուղղված ծրագրերի իրականացում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մշակութային միջոցառումների կազմակերպում:				
Համագործակցություն	ԱՀԹ, ՀԿ-եր				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակիչներ, զբոսաշրջիկներ:				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Սպորտային միջոցառումների կազմակերպում»

Ծրագրի նպատակը	Նոր Նորք վարչական շրջանի տարբեր տարիքային անձանց ընդգրկում մարզական օրացուցային պլանով նախատեսված սպորտային միջոցառումների ծրագրերում: Վարչական շրջանի մարզադպրոցների գործունեության արդյունավետությանն ուղղված ծրագրերի իրականացում:				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ուսումնամարզական ծրագրերի իրականացման միջոցով բնակչության շրջանում առողջ ապրելակերպի քարոզում, տարբեր տարիքային խմբերի բնակիչների ընդգրկում մարզական մրցույթներում:				
Համագործակցություն	-				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Ուսումնամարզական ծրագրերի իրականացում, առողջ ապրելակերպի քարոզում	Ուսումնամարզական ծրագրերի իրականացում, առողջ ապրելակերպի քարոզում	Ուսումնամարզական ծրագրերի իրականացում, առողջ ապրելակերպի քարոզում	Ուսումնամարզական ծրագրերի իրականացում, առողջ ապրելակերպի քարոզում	Ուսումնամարզական ծրագրերի իրականացում, առողջ ապրելակերպի քարոզում

Ծրագրի հիմնական շահառուները	Նոր Նորք վարչական շրջանի բնակիչներ:
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

‹‹Մանկապարտեզների հիմնանորոգում»

Ծրագրի նպատակը	Ստեղծել շենքային հարմարավետ պայմաններ՝ նախադպրոցական կրթությունը կազմակերպելու համար /13 մանկապարտեզ/				
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախադպրոցական տարիքի երեխաների համար հարմարավետ միջավայրի ստեղծում, շենքային պայմանների բարելավում, նախադպրոցական կրթությունը պատշաճ կազմակերպելու նպատակով՝ գույքի արդիականացում:				
Համագործակցություն	ՄԱԿ				
Ծրագրի անմիջական նպատակ	2019	2020	2021	2022	2023
	Մանկապարտեզներում շենքային հարմարավետ պայմանների ստեղծում	Մանկապարտեզներում շենքային հարմարավետ պայմանների ստեղծում	Մանկապարտեզներում շենքային հարմարավետ պայմանների ստեղծում	Մանկապարտեզներում շենքային հարմարավետ պայմանների ստեղծում	Մանկապարտեզներում շենքային հարմարավետ պայմանների ստեղծում
Ծրագրի հիմնական շահառուները	Նոր Նորք վարչական շրջանի նախադպրոցական տարիքի երեխաներ:				
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ. համաձայն սահմանված ժամանակացույցի:				

«Սոցիալական ծրագրեր»

Ծրագրի նպատակը	Սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ֆինանսական աջակցության տրամադրում, սննդի և կենցաղային տեխնիկայի տրամադրում, բարեգործական ճաշկերույթների կազմակերպում, երեխաների համար սննդի և նվերների տրամադրում, երեխաների համար էքսկուրսիաների կազմակերպում, հաշմանդամություն ունեցող անձանձ համար միջոցառումների կազմակերպում, Մեծ հայրենական և Արցախյան պատերազմի մասնակիցների համար միջոցառումների կազմակերպում, զինծառայողներին նվերների տրամադրում, կանանց համար միջոցառումների կազմակերպում և այլն:
Ծրագրի հիմնական շահառուները	Սոցիալապես անապահով ընտանիքներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2019-2023թթ.

ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Շենգավիթ վարչական շրջանը սահմանակից է Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն վարչական շրջաններին և Արարատի մարզին: Վարչական շրջանը գտնվում է երկրաշարժերի օջախի Արարատյան տարածքում: ՈՒնի շուրջ 6000-ամյա պատմություն:

Շենգավիթ վարչական շրջանի տարածքը կազմում է 4060 հա, բնակչությունը՝ 140.7 հազ. մարդ:

Շենգավիթը համարվում է արդյունաբերական շրջան: Այստեղ են տեղակայված արտադրական մի շարք ձեռնարկություններ՝ «Գրանդ Տորակո», «Արաքս Գոլդ» և «Գրանդ Քենդի» համատեղ ձեռնարկությունները, «Հայ-էլեկտրամեքենա», «Նաիրիտ», «Էլեկտրոն», «Արմեն-Կարպետ», «Երևանի ՋԷԿ» պետական փակ բաժնետիրական և այլ ընկերություններ:

Շրջանն ընդգրկում է Նոր Խարբերդ, Չարբախ, Ն. Չարբախ, Վ.Շենգավիթ, Ն.Շենգավիթ, Աէրացիա, Նորագավիթ թաղամասերը, Արշակունյաց պողոտա, Գ.Նժդեհ, Բագրատունյաց, Արտաշիսյան և հարակից փողոցներով ճյուղավորված բնակելի զանգվածները:

Վարչական շրջանն ունի 633 բազմաբնակարան բնակելի շենք, 138-ը՝ բարձրահարկ (9-16 հարկանի), 272 վերելակ, 14 վթարային շենք:

Հաշվառված է 5 գետնանցում, 3 վերգետնյա անցում: Փողոցների թիվը՝ 212, երկարությունը՝ 147,7կմ, մակերեսը՝ 210,9հազ. քմ: Շրջանում հաշվառված է թվով 124 թեքահարթակ:

Վարչական շրջանի ջրամատակարարումը իրականացվում է 5 աղբյուրներից, շրջանում գործում է 1 ջրամբար:

Շրջանի կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը 30հա է, գործում է ընդհանուր 33931 գմ երկարությամբ ոռոգման ցանց:

Սոցիալական ապահովության և առողջապահության ոլորտն ուղղված է շրջանի անապահով և խոցելի խավի կենսապայմանների բարելավմանը, ինչպես նաև իրականացվող սոցիալական ծրագրերի առավել արդյունավետ իրագործմանը: Վարչական շրջանի տարածքում գործում են առողջապահական կազմակերպություններ, այդ թվում՝ 5 պոլիկլինիկա, 2 բժշկական կենտրոն («Շենգավիթ», «Սուրբ Աստվածամայր»), 2 ատամնաբուժական կլինիկա: Կան բժշկական ծառայություններ մատուցող այլ մասնավոր կլինիկաներ: Շրջանում «Առաքելություն Հայաստան» ՀԿ ենթակայությամբ գործում է բարեգործական ճաշարան, որից օգտվում են շուրջ 120 շահառուներ: Մի շարք հասարակական և բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում ապահովվում է սոցիալական ծրագրերի առավել հասցեականությունը, հաշմանդամ երիտասարդների զբաղվածությունն ու մասնագիտական ուսուցումը:

Շրջանում գործում է 29 դպրոց (4 ավագ, 25 հիմնական), 22 մանկապարտեզ, որից 1-ը՝ քաղաքային ենթակայության, 4 գրադարան, 4 մարզադպրոց («Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, «Երևանի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, «Երևանի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, «Երևանի Շենգավիթի նետաձգության մարզակումբ» ՀՈԱԿ), 2 երաժշտական դպրոց («Երևանի Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ, «Երևանի Ստ. Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ) և 3 կրթամշակութային հիմնարկ (Թիվ 5 մշակույթի, Պատանեկան ստեղծագործական և Կ.Նիկողոսյանի անվ. մանկապատանեկան արվեստի կենտրոններ:)

Շրջանի մանկապարտեզներից 3-ը (հ.հ. 126, 134, 139 մանկապարտեզներ), գրադարանները, երաժշտական դպրոցներն ու մշակութային հիմնարկները վերանորոգված են: Թվով 2 մանկապարտեզ (հ.հ. 129, 138) նախատեսվում է վերանորոգել Երևանի էներգաարդյունավետության ծրագրի շրջանակներում:

Հիմնախնդիրներ

1. *Նոր հանգստի գոտիների, խաղահրապարակների ստեղծման անհրաժեշտություն,*
2. *Փողոցների (այդ թվում՝ մայթերի) հիմնանորոգում, հողային ծածկույթով ճանապարհների վերակառուցման, ասֆալտապատման (Ն.Չարբախ, Նոր Խարբերդ) անհրաժեշտություն,*
3. *Հենապատերի հիմնանորոգման, անվտանգության աստիճանի բարձրացման անհրաժեշտություն,*
4. *Կամուրջների և ուղետարերի հիմնանորոգման անհրաժեշտություն ,*
5. *Ջրոսայգիների բարեկարգման և ընդլայնման անհրաժեշտություն,*
6. *Վերելակային տնտեսության արդիականացման անհրաժեշտություն,*
